# ԳՐԱԲԱՐԻ

## ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. ԱԲԱՋՅԱՆ, Ն. ԴԻԼԲԱՐՅԱՆ, Ա. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ,
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Գ 870

*Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:*

***Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի «Գրաբարյան դարձվածքների ձևաիմաստային և կառուցվածքային քննություն. դրանց դրսևորումները արդի արևելահայերենում» 18T-6B138 գիտական թեմայի շրջանակներում:***

**Խմբագիր՝**

բ. գ. դ., պրոֆեսոր *Լալիկ Խաչատրյան*

**Գրախոսներ՝**

բ. գ. թ., դոցենտ *Սուսաննա Գրիգորյան*

բ. գ. թ., դոցենտ *Նաիրա Պարոնյան*

Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հարությունյան Ք.
Գ 870 Գրաբարի դարձվածաբանություն/Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ք. Հարությունյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 302 էջ:

Մենագրության մեջ քննված են հայերենի պատմական դարձվածաբանության հիմնահարցերը, սահմանված է դարձվածքի տարաժամանակյա ըմբռնումը, բացահայտված է հին հայերենի դարձվածային հարստությունը թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական բազմաժանր գրականության մեջ: Կատարված է գրաբարյան դարձվածքների ինչպես իմաստակառուցվածքային, այնպես էլ ոճական քննություն, որը հիմնավոր նյութ է տալիս նաև պատմական ոճագիտության համար: Գրաբարի դարձվածքների բազմակողմանի քննությունը գրաբարով մատենագրության տարբեր ժանրերի երկերում հիմք է տալիս գնահատելու դրանք իբրև խոսքի կառուցման կարևոր բաղադրիչներ, ինչպես նաև ներկայացնելու գրաբարի և արդի հայերենի դարձվածքների ժառանգորդական կապը, ընդհանրություններն ու տարբերությունները: Գրաբարի դարձվածաբանությունը առայսօր նման համակողմանի քննության չի ենթարկվել, իսկ աշխատանքում քննված ավելի քան 3000 դարձվածքներից շուրջ 400-ը նշված չեն գրաբարի բառարաններում և ներկայացվում են առաջին անգամ:

Մենագրությունը նախատեսված է լեզվաբանների, գրականագետների, թարգմանիչների, ինչպես նաև դարձվածաբանությամբ հետաքրքրվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2458-6

© ԵՊՀ հրատ., 2020
© Հեղ. խումբ, 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ....5

1.1 Հարցի պատմությունից....5

1.2 Դարձվածքը գրաբարում....21

1.3 Գրաբարի դարձվածքների զուգադրահամեմատական պատկերը V- XIII դդ. սկզբնաղբյուրներում....38

ԳԼՈՒԽ 2. ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ, ՀԱՄԱՆՈՒՆ, ՀԱՐԱՆՈՒՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ V- XIII Դ.Դ. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ....77

ԳԼՈՒԽ 3. ԳՐԱԲԱՐՅԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ....90

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ....173

4.1. Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքի հայերեն թարգմանության դարձվածքների իմաստային դասակարգումը....173

4.2 Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոցի» գրաբար թարգմանության դարձվածքների իմաստակառուցվածքային բնութագիրը....190

ԳԼՈՒԽ 5. ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ՆՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ....203

ԳԼՈՒԽ 6. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ....210

6.1. Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները վարքագրական երկերում և վկայաբանություններում ....219

6.2. Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները դավանաբանական թղթերում....240

ԳԼՈՒԽ 7. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ ..................................254
7.1. Դարձվածքները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում ..........................................254
7.2. Դարձվածային արտահայտությունները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում......................275
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ........................................294

# ԳԼՈՒԽ 1
# ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## 1.1 Հարցի պատմությունից

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքների գիտական համակարգված ուսումնասիրման սկիզբն ընդունված է համարել XX դ. 50-ական թվականները, թեպետ դեռևս Ա. Այտընյանն իր «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ անդրադառնում է դարձվածքներին՝ դրանք կոչելով «ոճեր»: Մեծանուն հայագետը ոճը (իմա՝ դարձվածքը) բնորոշում է իբրև «երկու բառէ բաղադրութիւն մը՝ որ ի սովորութենէ որոշ նշանակութիւն մ'առած է, զորօրինակ. ունկն կամ ականջ դնել, որ մըտիկ անել կը նշանակէ», ապա զուգահեռ է տանում աշխարհաբարի և գրաբարի ոճերի (դարձվածքների) միջև, երկուսից օրինակներ բերում և նշում. «Որչափ որ նշանաւոր է գրաբար հայերէնն անթիւ ոճերու առատութեամբը, նոյնչափ աղքատ և գրեթէ ի սպառ զուրկ է նոր լեզուն: Բայց կրնան գրաբարի ոճերն ալ վայելչապէս և զգուշութեամբ գործածուիլ»[1]:

Խ. Բադիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» աշխատության մեջ հայերենի դարձվածքների ուսումնասիրման համառոտ պատմությունն ուրվագծելիս Ա. Այտընյանին համարում է *դարձված* եզրույթն առաջին անգամ կիրառած լեզվաբան. «Հայ լեզվաբանության մեջ *դարձված* տերմինին առաջին անգամ հանդիպում ենք անվանի հայագետ Արսեն Այտընյանի «Քննական քերականություն» գրքում, որն օգտագործվում է որպես ոճին զուգահեռ (հոմանիշ) տերմին»[2]: Այսինքն՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Արսեն Այտընյանը հայ դարձվածաբա-

---

[1] **Այտընյան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 317-318:
[2] **Բադիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 29:

նության հիմնադիրն է, նրանից հետո, սակայն, տևական ժամանակ բառապաշարի այդպիսի կարևորագույն միավորին, ինչպիսին դարձվածային միավորներն են՝ իրենց ենթատեսակներով, առանձին անդրադարձներ գրեթե չեն կատարվել:

«Հայոց լեզվի տեսության» մեջ Մանուկ Աբեղյանն առանձին վերնագրով համառոտ անդրադառնում է հայերենի բայական դարձվածքներին՝ իբրև հարադրական բայերից առաջացած և նոր իմաստ ձեռք բերած կապակցություններ[3]:

Դարձվածքների մասին առաջին համեմատաբար ծավալուն ուսումնասիրությունների հեղինակը Ա. Մուրվալյանն է՝ իր երկու աշխատություններով՝ «Հայոց լեզվի բառային կազմը» (Երևան, 1955) և «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (Երևան, 1959): Այնուհետև լույս են տեսնում զուտ դարձվածաբանությանը նվիրված առանձին կարևոր հետազոտություններ՝ Ե. Գևորգյանի «Հայերենի դարձվածքները» (Երևան, 1969), Պ. Բեդիրյանի «Ժամանակակից հայերենի դարձվածաբանությունը» (Երևան, 1971), Խ. Բադիկյանի «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» (Երևան, 1986): Այս աշխատությունները հայոց համաժամանակյա դարձվածաբանության զարգացման հիմքն են դառնում, տեսական աշխատություններից հետո կազմվում են արդի արևելահայերենի դարձվածային բառագանձն ամփոփող մեծարժեք բառարաններ՝ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (Երևան, 1975), Խ. Բադիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարան» (Երևան, 2002), Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան» (Երևան, 2011):

Մինչ օրս կատարված այս բոլոր ուսումնասիրություններում, ինչպես նաև բուհական դասագրքերում, համակողմանի քննության են ենթարկվել ժամանակակից հայերենի դարձվածքները, իսկ մեր լեզվի պատմության նախորդ փուլերի՝ գրաբարի և միջին հայերենի դարձվածաբանությունը նման բազմակողմանի քննության առարկա

[3] Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Զ, Եր., 1974, էջ 124-126:

չի դարձել: Ուսումնասիրողները անդրադարձել են գրաբարի և միջին հայերենի դարձվածքներին, սակայն ուսումնասիրությունների նպատակակետն ու ելակետը եղել են աշխարհաբարի դարձվածքները: Այսպես, Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի բառային կազմը» աշխատության մեջ[4] դարձվածքները քննում է իբրև հարադիր բայերի յուրահատուկ դրսևորումներ, որոշում դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, տալիս այն բայերը, որոնք առավել հաճախ են հանդես գալիս հարադիր բայերի կազմում, զուգահեռաբար բերում օրինակներ գրաբարից, ցույց տալիս դրանց փոփոխությունները արդի հայերենում: Սակայն պետք է նշել, որ նա հաճախ հստակորեն չի սահմանազատում հարադիր բայերն ու դարձվածքները, այս եզրույթները գործածում է իրար փոխարեն, օրինակներում բերում նաև այնպիսի հարադիր բայեր, որոնք դարձվածքներ չեն (օրինակ՝ *պալ* բայով կազմված հարադիր բայերից մի քանիսը դարձվածքներ չեն՝ *բարև պալ, թիկն պալ, հեռագիր պալ, վնաս պալ, խմաց անել*)[5], իսկ գրաբարից բերված նրա օրինակներն էլ չեն օգնում որոշակի օրինաչափությունների վերհանմանը կամ պարզապես նման նպատակով չեն բերվում:

Ա. Մուրվալյանի մյուս աշխատությունում՝ «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն», տարաժամանակյա դարձվածաբանության հարցերն ավելի մանրամասնորեն են քննված: Առանձին ենթաբաժնով՝ «Գրաբարի դարձվածքները և գրական նոր հայերենը»[6], նա անդրադառնում է գրաբարի դարձվածքներին, սակայն հիմնականում խոսում է այն դարձվածքների մասին, որոնք գրաբարից անցել են աշխարհաբարին: Այս քննության ժամանակ նա առանձնացնում է գրաբարից աշխարհաբարին նույնությամբ անցած դարձվածքները փոփոխություններով անցածներից, ապա՝ օրինակներով բերում փոփոխությունների տեսակները՝ զուտ ձևաբանական (ի վաճառ հանել – վաճառքի հանել, ի վարձու տալ – վարձով

[4] Տե՛ս **Մուրվալյան Ա.**, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 199:
[6] Տե՛ս **Մուրվալյան Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., 1959, էջ 57-62:

տալ, ի կորուստ մատնել – կորուստի մատնել և այլն), հնչյունաբանական և ձևաբանական (ի քուն մտանել – քուն մտնել, իմաց առնել – իմաց անել, ի վեր կացուցանել – վեր կացնել), դարձվածքի կազմում բառի փոփոխությամբ (ակն ունել – աչք ունենալ, կալ ի գլուխ – գլուխ կանգնել, ի կենաց արկանել – կյանքից զրկել): Իսկ վերջում բերում է այնպիսի օրինակներ, որոնք, գործածվելով գրաբարում, ժամանակի ընթացքում մոռացվել և չեն անցել ժամանակակից հայերենին:

Հայերենի դարձվածներին՝ որպես հարադրավոր բայերի մի տեսակի, անդրադառնում է նաև Ա. Մարգարյանը «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ. «Հարադրավոր բայերի դարձվածաբանական և իմաստաոճաբանական արժեքը» գլխում[7] արժեքավոր դիտարկումներով ներկայացնում է հայերենի դարձվածքները, հիմնականում ճշգրտում հարադրավոր բայերի հետ ունեցած ընդհանրությունները ու տարբերությունները, կատարում կառուցվածքային և իմաստաբանական քննություն: Որոշ գրաբարյան դարձվածքներ ներկայացնում է ծանոթությունների տեսքով՝ արդի հայերենի համապատասխան դարձվածքի կամ դարձվածային խմբի համար տալով գրաբարյանը և նշելով տեղի ունեցած փոփոխությունը:

Վ. Քոսյանը «Գրաբարի բառակապակցությունները» աշխատության մեջ[8] մանրամասն քննում և ներկայացնում է գրաբարի բառակապակցական կաղապարները, որոնք նույնական են նաև դարձվածքների համար և կարևոր կարող են լինել գրաբարի դարձվածքների կազմության կաղապարների քննության ժամանակ, սակայն որպես այդպիսին՝ դարձվածքի կազմության քննությունը նրա ուսումնասիրության նյութ չէ:

Ինչպես տեսնում ենք, դարձվածաբանական քննության սկզբնական փուլում ուսումնասիրողներին գրաբարյան դարձվածքները հետաքրքրում են որպես արդի դարձվածքների աղբյուրներից մեկը, և ուսումնասիրության հիմնական շեշտը դրվում է համեմատության վրա, թե դարձվածքների այս կամ այն խումբը ինչ փոփոխու-

---

[7] Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայերենի հարադրավոր բայերը , Եր., 1966, էջ 198-241:
[8] Տե՛ս **Քոսյան Վ.**, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980:

թյուններով է անցել ժամանակակից հայոց լեզվին: Համեմատական քննությունը միանգամայն տրամաբանական է սկզբնական փուլի համար, բայց արդի հայերենի դարձվածաբանության քննության զարգացման հետ այս մոտեցումը չի փոխվում, զարգացում չի ունենում:

1973 թ. հրատարակված «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ Պ. Բեդիրյանն արդի հայերենի դարձվածքների առաջացման աղբյուրների մասին խոսելիս նախ նշում է «կենդանի ընդհանուր լեզուն՝ իր կիրառության բոլոր ոլորտներով»[9], ապա՝ «լեզվի նախընթաց գոյավիճակները՝ գրաբարը, միջին հայերենը»[10], ինչպես նաև «խոսակցական լեզուն և բարբառները»[11] և «շփվող լեզուներից փոխառությունները»[12]: Նա ընդամենը մի քանի օրինակով ցույց է տալիս, որ գրաբարից և միջին հայերենից դարձվածքները աշխարհաբարին անցել են կա՛մ նույն կերպ՝ պահելով քերականական և բառային ձևերը, կա՛մ որոշ փոփոխությունների ենթարկվելով, սակայն ամբողջական ցանկով չի ներկայացնում գրաբարից աշխարհաբարին փոփոխված կամ անփոփոխ ձևով անցած դարձվածքները, փոփոխությունների օրինաչափությունները և այլն:

Գրաբարի դարձվածքներին անդրադարձել են նաև գրաբարյան որևէ մասնավոր երկի լեզվաոճական քննություն կատարելիս, ինչպես Վ. Համբարձումյանը՝ «Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» աշխատության մեջ, որտեղ առանձին ենթագլխում՝ «Դարձվածային միավորները»[13], մանրամասն ներկայացրել և քննել է երկում գործածված դարձվածքները՝ ծագումը, գործառական-ոճական և կառուցվածքային առանձնահատկությունները:

---

[9] Տե՛ս **Բեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 49:
[10] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[11] Տե՛ս նույն տեղում, էջ 62:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 63:
[13] Տե՛ս **Համբարձումյան Վ.**, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Եր., 2013, էջ 59-75:

Ժամանակակից հայերենի դարձվածքներին վերաբերող ուսումնասիրությունները վերը նշվածներով չեն ավարտվում, մինչ օրս կատարվում են արդի հայերենի դարձվածքներին, ինչպես նաև հայերեն և որևէ օտար լեզվի դարձվածքների համեմատական քննություններ, հրատարակվում են ուսումնասիրություններ, հոդվածներ, որոնք, սակայն, գրաբարյան դարձվածքներին չեն առնչվում:

Փաստորեն, XX դ. կեսերից սկսած՝ հայ լեզվաբանության մեջ բավականին համակողմանի քննության է ենթարկվում հայերենի արդի դարձվածաբանությունը, ճշտվում են բազմաթիվ տեսական հարցեր, վեր են հանվում արդի հայերենի դարձվածքների կառուցվածքային օրինաչափություններն ու իմաստային յուրահատկությունները, կազմվում են դարձվածաբանական բառարաններ, գրվում աշխատություններ, մենագրություններ և հոդվածներ. նույնը չենք կարող ասել գրաբարի և միջին հայերենի դարձվածքների քննության դեպքում:

Գրաբարի դարձվածքներին արդի հայերենի դարձվածաբանության խնդիրներով զբաղվող լեզվաբանները հիմնականում անդրադարձել են այն պատճառով, որ թեև արդի դարձվածքների ստվար մասը ժողովրդախոսակցական ծագում ունի, կապվում է աշխարհաբարի հետ, այնուամենայնիվ որոշ մասն էլ փոփոխություններով կամ անփոփոխ ժառանգել է լեզվի պատմության նախորդ շրջաններից:

Գրաբարյան դարձվածային միավորներին արդի հայերենի մասնագետները, որպես կանոն, անդրադարձել են խիստ համառոտ, որևէ առանձին իրողության կամ տարբեր հեղինակների դարձվածքներին վերաբերող հարցեր քննելիս այդ անդրադարձները համակարգային բնույթ չեն կրել, և մինչ օրս չի կատարվել գրաբարի դարձվածքների լուրջ համալիր ուսումնասիրություն, որը վեր կհաներ գրաբարյան դարձվածքների կառուցվածքային հիմնական օրինաչափություններն ու կաղապարները, իմաստաբանական առանձնահատկությունները, ոճական արժեքը, մի խնդիր, առանց որի թերի է թե՛ գրաբարի բառագանձի մի չափազանց յուրօրինակ ու տվյալ դարաշրջանի լեզվամտածողությունը ներկայացնող կարևոր հատվածի ուսումնասիրությունն ու ներկայացումը, թե՛ արդի դարձվածաբանու-

թյունը քննող այն մասը, որն անմիջականորեն պայմանավորված է նրանով: Այդուհանդերձ, արդի հայերենի դարձվածաբանությունն ուսումնասիրողները իրենց աշխատություններում երբեմն շատ կարևոր դիտարկումներ, մոտեցումներ և համեմատություններ են կատարում գրաբարյան դարձվածքների վերաբերյալ, որոնք արժեքավոր և կողմնորոշիչ են կամ ելակետ գրաբարի դարձվածքների քննությամբ զբաղվողների համար:

Նկատի ունենալով գրաբարի դարձվածքի մասին հայ լեզվաբանության մեջ ամբողջական քննության մեկնակետը՝ նախ և առաջ պարզենք, թե ինչ է գրաբարյան դարձվածքը, ինչով է այն տարբերվում ժամանակակից հայերենի դարձվածքից: Մեր այս հետազոտության մեջ քննված դարձվածքներն իրենց իմաստային և կառուցվածքային հատկանիշներով նկարագրել և դասակարգել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» (ԳԴԲ , «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (ՆՀԲ), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի» (ՄՀԲ), Ս. Մալխասյանի «Հայերէն բացատրական բառարանի», Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանի (Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր)», Խ. Բադիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանի» տվյալների հետ համեմատության մեջ: Տարբեր դարերի ինքնուրույն և թարգմանական հայ մատենագրության բնագրերից առանձնացված բոլոր դարձվածքները համեմատել ենք նախ Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» տվյալների հետ՝ բացահայտելով այս կամ այն պատճառով չգրանցված դարձվածքները, որից հետո դրանք համեմատել ենք վերոնշյալ բառարանների դարձվածային միավորների հետ՝ պարզելու դրանց տարածվածության աստիճանը:

Լեզվական հաղորդակցումն իրականանում է խոսքի միջոցով՝ արտահայտված ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասություններով՝ պայմանավորված խոսքային իրավիճակով ու հաղորդակցման բնույթով, ինչպես նաև առանձին բառերով ու արտահայտություններով:

Հաղորդակցման ժամանակ մարդիկ իրենց խոսքը սովորաբար կառուցում են լեզվում առկա բառերի ազատ կապակցություններով, հիմնվում են տվյալ լեզվի ձևաբանական և շարահյուսական օրենքների ու կանոնների վրա, երբեմն էլ իրենց խոսքի ուժը սաստկացնելու, այն ավելի դիպուկ ու պատկերավոր դարձնելու նպատակով դարձյալ իրավիճակի թելադրանքով իրենց խոսքում գործածում են լեզվում արդեն իսկ առկա, հասարակության կողմից ընդունված ու արժևորված այնպիսի կապակցություններ՝ դարձվածքներ, որոնք հաղորդակցման արժեք ունեն՝ չնայած բառերի ազատ կապակցություններից կազմված չլինելուն: Այդ կայուն, պատրաստի և վերարտադրելի լեզվական միավորի՝ դարձվածքի ուսումնասիրությամբ է զբաղվում դարձվածաբանությունը՝ լեզվաբանության հիմնական, զարգացումների մեջ գտնվող բնագավառներից մեկը: Լեզվաբանության մեջ այն այսօր համարվում է ինքնուրույն գիտաճյուղ:

Ըստ Հ. Պետրոսյանի՝ դարձվածքները ժողովրդական լեզվամտածողության արդյունք են, ձևավորվում են հիմնականում լեզվի խոսակցական տարբերակում, ապա՝ աստիճանաբար թափանցում գրական լեզու: Դրանք խոսքի ոճավորման կարևորագույն միջոց են: «Սրանց կազմավորման հիմքում,– գրում է գիտնականը, – ընկած են այլևայլ (օրինակ՝ հոգեբանական, տրամաբանական) գործոններ, ինչպես՝ նմանակումը, համեմատությունը, առընթերության զուգորդումը, չափազանցումը, տարամիտումը՝ հակադրումը ևն»[14]:

Հ. Աճառյանը «դարձված» անվան տակ հավաքում է մի խումբ ձևեր, որոնք ժողովրդական ստեղծագործության արդյունք են, այսպես՝ զվարճալի դարձվածքներ, պատկերավոր բացատրություններ, առածներ, առակներ ևն: Այս բոլորը, ըստ նրա, ազգագրության, հատկապես բանահյուսության նյութ են կազմում, իսկ դրանց գլխավոր տարբերակիչ հատկանիշը համարում է հանգավորությունը: «Հանգավորության հետ համընթաց և անբաժան չէ դարձվածի կար-

[14] **Պետրոսյան Հ.,** Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 175:

ճությունը, որով ամփոփվում է մի իմաստում միտք՝ առանց երկարաբանության»[15]:

Լ. Եզեկյանը շեշտում է դարձվածքի բաղադրիչների վերաիմաստավորումը, այսինքն՝ այն, որ «դարձվածի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն… Եվ անշուշտ, դարձվածի համար կարևորը նաև նրա փոխաբերական-այլաբանական իմաստ արտահայտելն է: Մեր կարծիքով, եթե դարձվածը չունի փոխաբերական իմաստ, ապա այն սովորական, ազատ, ոչ կայուն բառակապակցություն է»[16]:

Ըստ Խ. Բաղիկյանի՝ «դարձվածները իմաստավորվել են ժողովրդի դարավոր փորձով, դարձել պատկերավոր ու կուռ արտահայտություններ, այդ պատճառով էլ հանդես են գալիս կյանքի բոլոր բնագավառներում և խոսքը դարձնում պատկերավոր ու արտահայտիչ՝ նրան տալով դիպուկություն ու սեղմություն»[17]: Դարձվածքներում, ըստ լեզվաբանի, արտահայտվում են նաև այդ լեզուն կրող ժողովրդի պատմությունը, սովորությունները, կենցաղն ու աշխարհաճանաչումը:

Ա. Մուրվալյանը, իր «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» աշխատությունում մանրամասն խոսելով դարձվածքների մասին, գրում է. «Լեզվին աղ ու համ տվողը նրա դարձվածներն են, որոնք ընդհանրապես խոսքը դարձնում են պատկերավոր ու արտահայտիչ, ազդեցիկ ու դիպուկ»[18]: Ըստ նրա՝ հայոց լեզուն, լինելով աշխարհի ամենահարուստ լեզուներից մեկը, բովանդակում է դարձվածքների անհուն ծով՝ երեք տասնյակ հազարից ավելի դարձվածքներ՝ գրեթե բացառած առածներն ու ասացվածքները, որոնց թիվը խիստ մեծ է:

---

[15] **Աճառյան Հ.,** Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005, էջ 91:
[16] **Եզեկյան Լ.,** Ոճագիտություն, Եր., 2007, էջ 178:
[17] **Բաղիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 6:
[18] **Մուրվալյան Ա.,** Հայերենի դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., 1959, էջ 5:

Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած: Դարձվածքը իր իմաստաքերականական առանձնահատկություններով ու տարբերակված հատկանիշներով լեզվական առանձնահատուկ միավոր է, իսկ դարձվածաբանությունը լեզվաբանության ինքնուրույն համակարգ, գիտաճյուղ[19]: Որպես լեզվական երևույթ՝ դարձվածը հատուկ է գրեթե բոլոր լեզուներին, բայց յուրաքանչյուր լեզվում այն ունի իր առանձին, միայն տվյալ լեզվին հատուկ դրսևորումն ու ձևավորումը, որի համար շատ կարևոր նշանակություն ունեն ինչպես արտալեզվաբանական, այնպես էլ ազգալեզվաբանական գործոնները[20]: Դարձվածաբանությունը սերտորեն կապված է տրամաբանության, ազգահոգեբանության հետ, որովհետև դարձվածքի առաջացումը արդյունք է փոփոխված տարբեր ընկալումների:

Ակներև է, որ դարձվածքների տարբերակման չափանիշները, դարձվածաբանության ընդգրկման հարցերի վերաբերյալ եղած կարծիքները բավական ընդհանրական են, և դարձվածային միավորներն ու հարադրավոր կապակցությունները հաճախ դրվում են նույն հարթության վրա, ուստի դեռևս մշակված չեն այն հստակ չափորոշիչները, որոնք թույլ կտան տարբերակել ԴՄ-ներն[21] ու հարադրավոր կայուն կապակցությունները: Դարձվածքների քննությանն անդրադարձած լեզվաբանները համակարծիք են միայն դարձվածքների՝ պատկերավորման անփոխարինելի միջոց լինելու հարցում:

Քննենք դարձվածքի սահմանումները նախ ժամանակակից հայերենում, որպեսզի դրա սկզբնաղբյուրը բացահայտենք հին հայերենում՝ գրաբարում: Ա. Այտընյանի ըմբռնումների առաջին իսկ անդրադարձից ակնհայտ դարձավ դարձվածքի և հարադրավոր սովորական կապակցության տարբերակման՝ վերջնական լուծում չստացած

[19] Հմմտ. **Բաղիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, **Բաղիկյան Խ.**, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000:

[20] Տե՛ս **Բեդիրյան Պ. Ս.,** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 216:

[21] Այսուհետ դարձվածային միավորը կնշենք ԴՄ:

հարցադրումը, որը տիրապետող խնդիր է նաև ռուս լեզվաբանության մեջ: Այս հարցով փորձել է զբաղվել Ս. Մելքոնյանն իր «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության» գրքում: Լեզվաբանի համոզմամբ՝ դարձվածքների և սովորական հարադիրների հիմնական տարբերությունը դրանց իմաստային բաղադրիչն է: «Ի տարբերություն սովորական հարադիրների, որոնց համար հատկանշական է ուղղակի նշանակությունը, դարձվածները վերաիմաստավորված միավորներ են: Սովորական հարադիրների իմաստը գոյանում է դրանց բաղադրիչների իմաստների գումարից: Իսկ դարձվածների իմաստը բաղադրիչների իմաստից տարբեր է և ավելի լայն»[22]:

ԴՄ-ները զուտ հարադրական բայերից կազմված կապակցություն է համարում նաև Մ. Աբեղյանը: Ըստ այդմ՝ փոփոխության են ենթակա ինչպես առանձին բառերի, այնպես էլ դրանց կապակցությունների իմաստները: ԴՄ-ները՝ որպես իմաստափոխված կառույցներ, գիտնականի բնորոշմամբ մի բառի նշանակություն են ձեռք բերում և կարող են դիտարկվել նաև իբրև մեկ բարդ բառ: Մ. Աբեղյանն անդրադառնում է «Ձեռքդ քաշի՛ր սեղանից» և «Ձեռք քաշի՛ր սեղանից» կապակցություններին՝ մատնանշելով, որ առաջին դեպքում խոսքն ունի հասցեատեր, երկրորդում՝ ոչ, այսինքն՝ «չենք մտածում իսկական նշանակությամբ, թե ձեռքը սեղանի վրա դրված է, և լսողը պետք է ձեռքը ետ տանի, այլ այդ նշանակում է՝ թողնել, լքել մեկ բան, դադարել մի բան անելուց…»[23]:

Դարձվածքի և հարադրավոր սովորական կապակցության տարանջատման հարցը, ըստ էության, անմիջականորեն բխում է դարձվածքի լայն և նեղ ըմբռնումների հակադրությունից:

Դարձվածքը լայն իմաստով ընկալող տեսաբանների դիտանկյունից ԴՄ կարող ենք համարել լեզվում վկայված բոլոր կայուն կապակցական միավորները, այդ թվում՝ հարադրավոր բայերն ու վերաբերականները, թևավոր խոսքերն ու առած-ասացվածքները, անեծքներն ու օրհնանքները: Դարձվածքի սահմանման առավել նեղ շրջա-

---

[22] **Մելքոնյան Ս.,** Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 187:
[23] **Աբեղյան Մ.,** Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 151:

նակների որոշման կողմնակիցները դարձվածք համարում են միայն իդիոմները, այսինքն՝ զուտ տվյալ լեզվին բնորոշ այն չտրոհվող կապակցությունները, որոնց բաղադրիչ բառերը, տվյալ կապակցության մեջ զրկվելով իրենց անկախ բառային իմաստներից, որպես անբաժանելի ամբողջություն՝ արտահայտում են նոր իմաստ:

Ելնելով դարձվածաբանության մեջ արդեն առկա պնդումներից՝ փորձենք ճշտել, թե համաժամանակյա քննության մակարդակում ինչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն ԴՄ-ները և շարահյուսական տարբեր կապակցությունները:

Ըստ Խ. Բադիկյանի՝ դարձվածքները «փակ կառույցներ» են, պատրաստի վերարտադրելի միավորներ, որոնց միջև բնականորեն գործում են քերականական այն բոլոր հարաբերությունները, որոնք առկա են խոսքում, նախադասությունների մեջ, օրինակ՝ խնդրառություն, համաձայնություն, շարադասություն, հոլովման և խոնարհման հարաբերություններ, բայց դարձվածային միավորներում այս հարաբերությունները հիմնականում քարացած են: Խ. Բադիկյանի ուշագրավ բնութագրությամբ ԴՄ-ները յուրօրինակ «դարձվածային նախադասություններ» են: Թեև «դարձվածային նախադասությունները» կազմվում են տվյալ լեզվի մեջ գործող այն նույն քերականական օրենքներով ու կաղապարներով, ինչ սովորական նախադասությունները, այդուհանդերձ դրանք ունեն մի շարք կարևոր տարբերակիչ հատկանիշներ:

Ա. Դարձվածային նախադասությունները խոսողության ընթացքում առանձին բաղադրիչներից չեն կազմվում, ինչպես սովորականները, այլ խոսողի կողմից վերարտադրվում են որպես խոսքային ամբողջական պատրաստի կառույցներ:

Բ. Դարձվածային նախադասություններն օժտված են իրենց բաղադրիչների քանակական և որակական կայուն կազմով, իմաստային կայունությամբ, բառային կազմի կայունությամբ, ինչպես նաև գործառության կայունությամբ:

Գ. Դարձվածային նախադասությունները սովորականներից տարբերվում են նաև նախադասության կազմիչների շարադասությամբ, որը սերտորեն առնչվում է դարձվածի միջարկելիությանը:

Դ. Դարձվածային նախադասությունների քերականական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ի տարբերություն սովորական նախադասությունների՝ սրանց՝ բայով արտահայտված ստորոգյալը մեծ մասամբ զուրկ է ամբողջական հարացույցից:

Ե. Եվ վերջապես դարձվածային և սովորական նախադասությունների տարբերակիչ հատկանիշ կարելի է համարել նաև այն, որ սովորական նախադասությունների դեպքում հնարավոր է փոխակերպման փաստը[24]:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքի լայն ըմբռնման դավանորդներից է անվանի լեզվաբան Վ. Առաքելյանը: «Դարձված տերմինը մենք վերցնում ենք ընդարձակ առումով,– նշում է նա,– և համարում ենք երկու կամ ավելի բառերի խիստ սերտ կամ պակաս սերտ միասնությունը՝ իմաստային մի ամբողջության մեջ, որպես մի կայուն կապակցություն»[25]: Ըստ նշված սահմանման՝ դարձվածքը՝ իբրև բառապաշարային միավոր, ունի անվանական (բառական) գործառույթ, իսկ կառուցվածքով էլ առավել համադրելի է բառի, քան նախադասության հետ, անգամ այն պարագաներում, երբ դարձվածային կապակցությունը հանդես է գալիս որպես ամբողջական նախադասություն: Դարձվածքի վերաբերյալ լայն մոտեցման կողմնակից լինելով՝ Վ. Առաքելյանը դրանք հստակորեն տարանջատում է բառերի ազատ կապակցություններից հետևյալ հատկանիշի հիման վրա. անհնար է դարձվածքի որևէ բաղադրիչ փոխարինել իր հոմանիշով: Այսպես՝ «քավության նոխազ» հնագույն դարձվածքը, որն առկա է աշխարհի բազմաթիվ լեզուներում և ծագում է մեղքերի թողության հին հրեական ծեսից, այնպիսի համաձույլ կառույց է, որը չի փոխարինվել «քավության այծ» կամ «թողության նոխազ» տարբերակներով:

ԴՄ-ների լայն ընկալման դավանորդ է նաև Ա. Մուրվալյանը, որը դարձվածք է համարում առած-ասացվածքները, անեծքներն ու

---

[24] Հմմտ. **Բադիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, էջ 10-20:

[25] **Առաքելյան Վ.,** Ա. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Եր., 1954, էջ 109:

օրհնանքները, սպառնալիքի և փաղաքշանքի արտահայտությունները, թևավոր խոսքերը, քանզի նման կապակցություններում ուղիղ իմաստի հետ միաժամանակ այս կամ այն չափով դրսևորվում է բաղադրիչների անուղղակի կամ փոխաբերական իմաստը: Դրանց մեջ, լեզվաբանի համոզմամբ, ամփոփված են ժողովրդական աշխարհընկալումը, սովորույթներն ու ծեսերը:

Հայ դարձվածաբանության և բառագիտության մեջ հստակ արտահայտված ԴՄ-ների լայն և նեղ ըմբռնումների այս հակադրամիասնությունը, մեր համոզմամբ, վերհայկական է, այն կարող ենք բխեցնել հայտնի ռուս լեզվաբան Վ. Վինոգրադովի դասակարգումներից, որոնց հիմքում դարձվածքի բաղադրիչների սերտության աստիճանի որոշումն է: Քանի որ մեր ուսումնասիրությունը շատ հարցերում առնչվում է նաև ռուս լեզվաբանների հայացքներին, համառոտ անդրադառնանք ռուսական դարձվածաբանության պատմությանը, ավելի ստույգ՝ դարձվածքի ըմբռնմանը՝ ի ցույց դնելով այն իրողությունը, որ ԴՄ-ները տարբեր լեզուներում դրսևորում են ընդհանրական հատկանիշներ, որովհետև դարձվածքի ստեղծումը մարդկային մտածողության ընդհանրական կարողություն է:

Ռուս լեզվաբանության մեջ դարձվածաբանության հիմնախնդիրներով զբաղվել են դեռևս XVIII դ. կեսերից, իսկ զարգացման գագաթնակետը խորհրդային շրջանում էր՝ անցյալ դարի 60-80-ական թվականները:

Տաղանդաշատ ռուս լեզվաբան Վ. Վինոգրադովի աշխատությունները դարձվածաբանության պատմության մի նոր շրջան սկզբնավորեցին: Իր «Ռուսական դարձվածաբանության՝ որպես լեզվաբանական գիտակարգի հիմնական հասկացությունները» աշխատության մեջ գիտնականը դարձվածաբանության հարցերին վերաբերող մի բանավեճ նախաձեռնեց, որը, մեր համոզմամբ ևս, ծավալվում է ցայսօր[26]: Վինոգրադովը լեզվի բառապաշարում եղած բոլոր կայուն բառակապակցությունները, որոնց դարձվածքի արժեք էր

[26] Տե՛ս **Виноградов В. В.,** Лексикология и лексикография: Избранные труды, М., «Наука», 1977, էջ 140-161:

տալիս, ըստ բաղադրիչների միջև եղած իմաստային հարաբերության՝ բաժանեց երեք հիմնական խմբերի՝ դարձվածային սերտաճումներ, միասնություններ և կապակցություններ: Նա *դարձվածային սերտաճումներ* անվանեց այնպիսի կայուն կապակցությունները, որոնց բաղադրիչները իմաստային ամենասերտ կապերով են կապված, *դարձվածային միասնության* իմաստը համարյա թե բխում է առանձին բաղադրիչների իմաստների գումարից, իսկ *դարձվածային կապակցություններ* Վ. Վինոգրադովը համարում էր այնպիսի կառույցները, որոնց բաղադրիչները թեև հիմնականում պահում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, այդուհանդերձ իրենց կապերով մնում են կախյալ վիճակում:

Ն. Շանսկին Վ. Վինոգրադովի տված իմաստային դասակարգմանն ավելացրեց նաև չորրորդ խումբը՝ դարձվածային արտահայտությունները, որոնց շարքին դասեց առածները, ասացվածքները, բաղադրյալ եզրույթներն ու սովորական արտահայտությունները: Շանսկին առաջին լեզվաբանն է, որ դարձվածքները դասակարգեց նաև ըստ կառուցվածքային տիպերի՝ դրանցում առանձնացնելով 12 կաղապար: Շանսկին, ըստ էության, դարձվածքի լայն ըմբռնման դավանորդն էր և տեսական հիմնավորողներից մեկը[27]:

Ռուս լեզվաբանության մեջ ի վերջո ձևավորվում է ընդհանրական մոտեցում՝ դարձվածային բոլոր միավորները դասակարգելու երկու մեծ խմբերի միջև՝ բառակապակցության և նախադասության կառուցվածքային տիպերի համապատասխան:

Դարձվածքի նեղ ըմբռնման տեսական հիմնավորողներից հիշատակենք Ն. Ամոսովային, Ա. Բաբկինին, որոնք դարձվածքը գրեթե նույնացնում են իդիոմների հետ՝ ԴՄ համարելով զուտ կայուն, վերաիմաստավորված բառակապակցությունները, որոնք կարող են լինել ինչպես բայական, այնպես էլ անվանական[28]:

---

[27] Հմմտ. **Шанский Н. М.,** Фразеология современного русского языка, М., «Высшая школа», 1985, էջ 125-150:

[28] Տե՛ս **Бабкин А. М.,** Русская фразеология, ее развитие и источники, М., «Либроком», 2009 և **Амосова Н. Н.,** Основы английской фразеологии, Ленинград, ЛГУ, 1963:

Ընդհանրացնելով ռուս լեզվաբանների տեսական պնդումները ռուսերենի ու նաև անգլերենի դարձվածքների վերաբերյալ՝ կարող ենք նշել, որ դարձվածքի լայն ընկալումը հիմնված է «դարձվածային կապակցությունների» կամ հարադրավոր կապակցությունների, առածների, ասացվածքների, թևավոր խոսքերի արտահայտած փոխաբերական իմաստի և ժողովրդախոսակցական ծագման վրա:

Դարձվածաբանության վիճահարույց հարցերն այսքանով բնավ չեն սահմանափակվում. երկրորդ և ոչ պակաս կարևոր հարցը վերաբերում է դարձվածքի կայուն կամ «ոչ կայուն», փոփոխական միավոր լինելուն:

Արդի հայ բառագիտության և դարձվածաբանության մեջ ամրակայված է այն դրույթը, որ դարձվածքները կայուն կապակցություններ են: Թեև ակնհայտ է, որ այս հարցը այնքան էլ միանշանակ պատասխան չունի: Նախ պետք է ճշտել, թե ինչ հատկանիշներով ենք օժտում «կայուն կապակցությունը»: Կայունությունը, ըստ էության, պետք է վերաբերի ԴՄ-ների և՛ ձևի, և՛ իմաստի կայունությանը: Այս տեսանկյունից, մեր կարծիքով, արդի արևելահայերենի և գրաբարի միջև տարբերություններ կան:

Արդի արևելահայերենում ԴՄ-ների ձևիմաստային կայունությունը հստակ է, գրաբարում իմաստի տեսանկյունից կայուն լինելով՝ դարձվածքները ձևի, այսինքն՝ շարադասական առումով շատ ավելի մեծ ազատություն են դրսևորում և՛ դասական, և՛ հետդասական գրաբարով ավանդված մատենագիտական երկերում, դարձվածքները կարող են միջարկվել նախադասության ուրիշ անդամներով, որոնք ԴՄ բաղադրիչ չեն:

Այսպիսով, ամրագրենք, որ արդի արևելահայերենում դարձվածքը երկու և ավելի բառերի կայուն, անմիջարկելի, փոխաբերական, պատկերավոր իմաստ արտահայտող բառակապակցություն է, որի բաղադրիչներից որևէ մեկը կամ բոլորը վերաիմաստավորված են:

## 1.2 Դարձվածքը գրաբարում

Գրաբարում դարձվածքի նպատակաուղղված քննություն, ինչպես վերը նշեցինք, դեռևս չի կատարվել, և դա բավականին բարդացնում է այդ բնագավառի հետազոտությունը և մեծացնում այն ուսումնասիրողի պատասխանատվությունը, քանի որ դարձվածքները, լինելով լեզվի բառային կազմը հարստացնող կարևորագույն միջոց, մեծ դեր են կատարում բանավոր և գրավոր խոսքի կազմության և նրա ոճական ձևավորման տեսանկյունից: ԴՄ-ները, ծագելով տարբեր ժամանակաշրջաններում ժողովրդական խոսքից և ապա՝ գրավոր հուշարձաններից, դառնում են պատմական յուրօրինակ վավերագրեր, որոնք արտացոլում են դրանք ստեղծող ժողովրդի կենսակերպն ու ավանդույթները, աշխարհընկալումը:

Գրաբարի դարձվածքի ուսումնասիրությունը սկսենք մեր հետևյալ սահմանումից. դարձվածքը երկու և ավելի բառերից կազմված կապակցություն է, որի բոլոր կամ նվազագույնը մեկ բաղադրիչն ունի վերաիմաստավորում, ընդհանուր կապակցությունն օժտված է փոխաբերական և ոչ թե ուղիղ իմաստով:

Գրաբարի դարձվածքի ուսումնասիրությունը մեզ ցույց տվեց, որ դրանք հիմնականում կայուն կապակցություններ չեն՝ ի տարբերություն ժամանակակից հայերենի դարձվածքների: Պարզաբանենք, թե ինչ նկատի ունենք՝ ասելով, որ գրաբարի դարձվածքը կայուն կապակցություն չէ:

Եթե դարձվածքը կայուն կապակցություն է, ապա նրա բաղադրիչի կամ բաղադրիչների փոփոխություն չի կարող լինել (արտահայտության պլանը կայուն է), այսինքն՝ «սկզբնաձևը» անփոփոխ է. նրա այս կամ այն բաղադրիչները չեն կարող հեռացվել, նրանց չեն կարող կցվել նորերը, դարձվածքը չի կարող միջարկվել: Բայց գրաբարում այդ միջարկում-հավելումը բավական հաճախադեպ է, այսպես, օրինակ՝ ***ի սուր մաշել // ի սուր սուսերի մաշել, մարփ դնել // մարփ ընդ ումեք դնել, մարփ պալ // մարփ պատերազմի պալ, զանչն ի մահ դնել // զանչն ի մէջ մահուան եւ կենաց***

***դնել, գրով սահմանել // ընդ գրով սահմանել, ի սուր մատնել // ի բերան սրոյ մատնել*** են:

Ինչպես օրինակներն են հավաստում, նման միջարկությունների շնորհիվ անգամ համատեքստից դուրս իբրև դարձվածք ընկալվող նոր և լիարժեք դարձվածքներ ենք ստանում,, որոնց բաղադրիչները փոփոխական են, սակայն դրանց վերաիմաստավորումը և փոխաբերական իմաստը աներկբա են:

Գրաբարի դարձվածքի անկայունությունն է ապացուցում նաև նրա բաղադրիչների ազատ շարադասությունը, բայց «ազատ շարադասություն» ասելով չպետք է հասկանալ դարձվածքի ցանկացած բաղադրիչի՝ մյուսի տեղը ազատորեն զբաղեցնելու և իմաստային կայունություն պահելու երևույթը: Ազատ շարադասությունը հիմնականում վերաբերում է բայի ազատ «տեղաշարժին»: Հատկապես նկատի առնենք այն հանգամանքը, որ գրաբարի դարձվածքների զգալի մեծամասնությունը բայական կառույցներ են, և եթե ավելանում է բաղադրիչների քանակը, եռանդամ, քառանդամ, հնգանդամ և այլ դարձվածքներում բայի շարադասական ազատությունը դառնում է առավել ընդգծված: Մեր համոզմամբ՝ բայի դիրքային նման ազատությունը պայմանավորված է խոսքի, հաղորդակցության մեջ նրա վճռորոշ դերակատարմամբ. բայը հիմնական խոսքակազմիչ միավորն է:

Այսպիսով, եթե ժամանակակից հայերենում ունենք *ջեռք մեկնել*, բայց չունենք *մեկնել ջեռք* կամ *գլուխ պալ*, բայց ոչ *պալ գլուխ*, ապա գրաբարում ունենք ինչպես *ահափեպ առնել*, այնպես էլ *առնել ահափեպ*, *ջիարջակ լինել* և *լինել ջիարջակ* հավասարազոր դարձվածքները:

Փոխաբերական վերաիմաստավորումը լեզվի դարձվածային բառագանձի հարստացման կարևորագույն աղբյուրն է և հիմնված է երկու առարկաների, երևույթների ու հասկացությունների միջև նմանության վրա:

Փոխաբերական վերաիմաստավորումը կարող է լինել լրիվ կամ մասնակի: Լրիվ վերաիմաստավորված են, օրինակ, հետևյալ դարձվածքները՝ **ակն ունել** – աչք դնել, ցանկանալ, **ձեռս ի գլուխ եդանել** –

խուճապի մատնվել, **ձեռներէց առնել** – եռանդագին գործել, աշխատել և այլն:

Մասնակի փոխաբերական վերաիմաստավորման հետևանքով են առաջացել հետևյալ դարձվածքները՝ **կտուրն ի միմեանց լինել, ի լոյս ածել** և այլն:

Փոխանվանական վերաիմաստավորման հիմքում ընկած են առարկաների միջև եղած կցորդական զուգորդությունները, այն է՝ պարունակողի օգտագործումը պարունակյալի փոխարեն, գործողությունը՝ արդյունքի փոխարեն, հատկանիշը՝ առարկայի փոխարեն և այլն: Օրինակ՝ **արեան ճապաղիս հեղուլ, արկանել զսուր թշնամութեան, բառնալ նինջ արտեւանաց, ծածուկ Արութիւն, տալ կերակուր սրոյն** և այլն:

Ժամանակակից հայերենում դարձվածքները հաճախ պատճենվում են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, իսկ գրաբարում դրանք հիմնականում պատճենումներ էին հին հունարենից, ասորերենից և պարսկերենից:

Այսպիսով, դարձվածակազմության տիպերը տարբեր լեզուներում մոտավորապես նույն ծագումնաբանությունը կամ նախապատմությունն ունեն, առավել հաճախ դարձվածքներ են կազմվում ազատ բառակապակցությունների և հարադրությունների հիման վրա: Սա ընդհանուր լեզվաբանական օրինաչափություն է: Հայերենում դարձվածքները առաջանում են նույն հիմունքներով նախ բանավոր խոսքում, ապա՝ կայունանում գրավոր լեզվում:

Դարձվածքները գեղարվեստական խոսքի կառուցման կարևորագույն բաղադրիչներ են՝ օժտված ոճական մեծ ներուժով, որի միջոցով շարադրանքը դառնում է տպավորիչ և ներազդու ընթերցողի հոգուն ու մտքին: Գրաբարով ավանդված մատենագրությունն առանձնանում է դարձվածքների հարուստ բառագանձով, ինչպես արդեն նշեցինք, այդ բառագանձի քննությունը նոր է ծավալվում: Հին հայերենի դարձվածքների իմաստային, կառուցվածքային և ոճական վերլուծությունը ինքնուրույն և թարգմանական մատենագրության մեջ՝ պատմագրական, ժամանակագրական երկերից մինչև դավանաբանական թղթեր, մեկնություններ, արձակ և չափածո ստեղծա-

գործություններ, կնպաստի գրաբարյան լեզվամտածողության խորքային առանձնահատկությունների բացահայտմանը և դրանց տեղայնացմանը ցանկացած երկում:

Եթե ամփոփենք գրաբարի դարձվածքի մասին ասվածը, կստանանք այս պատկերը. այն երկու և ավելի բառերի ոչ կայուն, միջարկելի և բաղադրիչների ազատ շարադասությամբ կապակցություն է: Սովորական բառակապակցության և դարձվածքի միջև հստակ անջրպետ լինելու համար, բնականաբար, դարձյալ պիտի շեշտենք դարձվածքի փոխաբերական իմաստը, նրա արտահայտած պատկերավոր գաղափարը և բաղադրիչների վերաիմաստավորումը՝ չմոռանալով, սակայն, համատեքստի անփոխարինելի դերը դարձվածքի որոշման հարցում: Օրինակ՝ Ղ. Փարպեցին իր երկում երեք անգամ գործածում է «ի մէջ առնուլ» կապակցությունը՝ մի դեպքում իբրև դարձվածք՝ «մեջբերել» իմաստով (370), մյուս երկու դեպքերում՝ որպես սովորական բառակապակցություն՝ «շրջապատել» նշանակությամբ (18, 168):

Գրաբարյան դարձվածքի ուսումնասիրության խնդիրները այսքանով չեն սահմանափակվում. այստեղ հաճախ հանդիպում են փոխաբերական իմաստ չունեցող, բայց պատկերավոր միտք արտահայտող կապակցություններ՝ դարձվածքներ, որոնք միայն այդ պատկերավորության շնորհիվ են դարձվածք համարվում: Մեր համոզմամբ՝ վիճելի է այն պնդումը, թե պատկերավորությունը պայմանավորված է միմիայն փոխաբերական իմաստով: Քննենք հետևյալ բայական հարադրությունները՝ *բրածեծ լինել, փախստական լինել//առնել, հրակէզ լինել// առնել, հալածական լինել// առնել* և նման այլ դարձվածքներում փոխաբերական իմաստ չկա, քանի որ *բրածեծ լինել*-ը իսկապես բրերով ծեծվելն է՝ առանց վերաիմաստավորման, *հրակէզ լինել*-ը իրոք հրկիզվելն է, *հրակէզ առնել*-ը՝ հրկիզելը նև, բայց քանի որ այս կապակցությունները բրերով ծեծվելու, փախչելու, փախուստի մատնելու, հրկիզելու, հրկիզվելու և այլ մտքերն արտահայտում են ոչ թե մեկ, այլ երկու և ավելի բառերի պատկերավոր կապակցությամբ, դրանք կարող ենք համարել դարձվածք, և գրաբարի

դարձվածաբանական բառարանում նման հարադրությունները դիտարկված են իբրև ԴՄ-ներ:

Գրաբարում դարձվածային միավորների մեջ պետք է շեշտել առաջին հերթին պատկերավորությունը, ոչ թե լոկ փոխաբերությունը՝ ելնելով դարձվածքների՝ ժողովրդական լեզվամտածողության արդյունք լինելու հանգամանքից: Ժողովրդական խոսքը պարզ է, բայց պատկերավոր, դրա շնորհիվ էլ հաճախ երկրորդաբար հանգում է փոխաբերության:

Գրաբարի դարձվածաբանության մյուս էական հարցը լայն և նեղ ընկալման խնդիրն է, որը գրաբարում փոքր-ինչ տարբեր ձևակերպում ունի, քան արդի արևելահայերենում, եթե հարադրավոր սովորական կազմությունների և դարձվածքների տարանջատման հարցում վճռորոշ է համատեքստը, առանց որի դժվար է դրանք սահմանազատել, ապա, այսպես կոչված, դարձվածային նախադասությունները լեզվական բացարձակ տարբեր միավորներ են, քանի որ դրանք նախ և առաջ իրոք կայուն կապակցություններ են: Այսպես՝ անհնար է «Աստված մի արասցէ» կապակցության բաղադրիչների շարադասությունը փոխել կամ միջարկել այլևայլ բաղադրիչներով կամ էլ հանել այս կամ այն բաղադրիչ(ներ)ը՝ առանց իմաստի աղճատման: Մյուս կողմից՝ գրաբարի դարձվածքներին բնորոշ հաջորդ հատկանիշի համաձայն՝ չենք կարող այս կապակցության բաղադրիչներից որևէ մեկը փոխելով ստանալ նոր, սրան համարժեք կապակցություն, ուստի գրաբարի դարձվածքի նկատմամբ լայն ըմբռնումը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ, այն էլ միայն համատեքստից դուրս եղած հարադրավոր կապակցությունների և դարձվածքների տարբերակման առումով:

Հավարտ կարևորենք գրաբարի դարձվածքների կաղապարներում նախդիրների նշանակությունը՝ պատասխանելով կարևոր մի հարցադրման՝ դարձվածքի կազմությանը մասնակցող նախդիրները համարել դարձվածքի ինքնուրո՞ւյն բաղադրիչ, թե՞ ոչ:

Գրաբարի եռանդամ, քառանդամ, հնգանդամ և ավելի մեծաքանակ բաղադրիչներով դարձվածքները, գրեթե առանց բացառության, ձևավորվում են գրաբարյան նախդիրների շնորհիվ՝ բացառած *ց*

նախդիրը, որով կազմված ոչ մի դարձվածք չենք հայտնաբերել մեր ուսումնասիրած բնագրերում: Հարցի հետագա մեր դիտարկումը պարզեցնելու համար յուրաքանչյուր նախդրով կազմված դարձվածքների մեկական օրինակ բերենք: Այսպես՝ **ի** խոշտանգանս արկանել, **զ**միմեամբք ելեւելս առնել, **ընդ** ծառայութեամբ արկանել, **ըստ** հրամանաւ անցանել, **առ** ոտն կոխել են:

Մեր պնդումը, որ նախդիրը դարձվածքի ինքնուրույն և լիարժեք բաղադրիչ է, հիմնավորվում է մի շարք փաստերով:

1.Նախդրավոր դարձվածքների հսկայական քանակը գրաբարում վկայում է դարձվածակերտման ընթացքում նախդիրների ունեցած բացառիկ կարևորությունը, հատկապես որ նախդիրների կիրառումը դարձվածքների ստեղծման գործում ինքնանպատակ չէ և բխում է հոլովական տարբեր իմաստների, տարաժամանակային հարաբերություններ արտահայտելու պահանջից: Ընդսմին, նախդիրները առանձին բաղադրիչներ չդիտելը բարդացնում է կառուցվածքային սկզբունքով կատարված դարձվածքների դասակարգումը՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ և ավելի բաղադրիչներով կաղապարների առանձնացմամբ: Խնդրահարույց է երկանդամ դարձվածքներ համարել և՛ *զլուխն խեւլազարել-ը,* և՛ *թափել ի մփաց*-ը կամ *աչք զայթակղեցուցանել*-ը և *նայել ընդ ակամբ*-ը:

2. Ռուսերենում և գերմաներենում նախդիրները դարձվածքի ինքնուրույն բաղադրիչներ են: Օրինակ՝ *с глаз долой из сердца вон,* за семь верст киселя хлебать*, бить в одну точку* և այլն:

***Mit** dem linken Bein aufgestanden sein*, ***Seit** Adams Zeiten (oder Tagen)*, ***Auf** Biegen und Brechen* usw.

3. Նախդիրները տարբեր հոլովաձևերի հետ տարբեր իմաստներ են արտահայտում: Օրինակ՝ *յապաշխարութիւն դառնալ* և *ի ապաշու կալ, զմփաւ ածել* և *զփրփս հանել* են: Եթե *յապաշխարութիւն դառնալ*-ում **ի**-ն ուղղության իմաստի արտահայտիչ է, ապա *ի ապաշու կալ*-ում՝ ներգոյականի իմաստի արտահայտման բաղադրիչ, եթե *զմփաւ ածել*-ում **զ**-ն պարառականի իմաստ է արտահայտում, ապա *զփրփս հանել*-ում հայցականի իմաստի դրսևորմանն է ծառայում:

4. Դարձվածքներում նախդիրները երբեմն կրկնվում են, որը դարձյալ դրանց ինքնուրույնության մասին է խոսում՝ *ի յանչն առնուլ* (Ուռհ., 322), *ի յերկիր կործանել* (402) ևն:

5. Նախդիրը դարձվածքի բաղադրիչ չհամարելու դեպքում «նախդրիվ բառը», առանց դարձվածքի մյուս բաղադրիչի կամ բաղադրիչների, հաճախ անիմաստ է: Այսպես՝ նախդիրը ինքնակա բաղադրիչ չդիտարկելու դեպքում *ընդ միտ մտանել* դարձվածքում <u>ընդ միտ + մտանել</u> կաղապարն ենք ստեղծում, սակայն ինքնին *ընդ միտ* բաղադրիչը առանց *մտանել* բաղադրիչի իմաստակիր չէ: Ուստի այս դարձվածքի կառուցվածքը պետք է կաղապարել երեք բաղադրիչով՝ <u>ընդ + միտ + մտանել</u>, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ, առանձին վերցրած, իմաստակիր է: Ուստի համոզված ենք, որ նախդիրը դարձվածքի ինքնակա, լիիրավ բաղադրիչ է:

Մինչ գրաբարով ավանդված հայ մատենագրության սկզբնաղբյուրներում դարձվածքների կառուցվածքային և իմաստային քննությանը անցնելը համառոտ բնութագրենք ԴՄ-ների այն հիմնական տեսակները, որոնք կառանձնացնենք մեր քննած երկերում՝ հստակեցնելով քննության շրջանակները:

Դարձվածքը փոխաբերական վերաիմաստավորման ենթարկված կայուն բառակապակցության տեսակ է, որի կազմում բաղադրիչներն ունեն սերտաճման տարբեր աստիճան: Այն բովանդակային մակարդակում, այսինքն՝ իմաստաբանորեն անտրոհելի է, արտահայտում է նոր, ամբողջացած գաղափար՝ առանձին բաղադրիչների որոշակի վերաիմաստավորմամբ, իսկ կառուցվածքային մակարդակում բոլոր բաղադրիչները (կամ դրանցից գոնե որևէ մեկը) անփոխարինելի են: Ի տարբերություն ազատ կամ շարահյուսական կապակցությունների (որոշիչ - որոշյալ, հատկացուցիչ - հատկացյալ, ստորոգյալ - խնդիր, ստորոգյալ - պարագա)՝ դարձվածքները տվյալ խոսքային իրադրության մեջ ամեն անգամ ինքնին չեն կազմավորվում, այլ իբրև բառապաշարային արդեն պատրաստի միավոր վերարտադրվում են, անտրոհելի միավորներ են, շարահյուսական մակարդակում հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ՝ անկախ իրենց կազմում առկա բառային միավորների քանակից,

ձևաքանորեն բնութագրվում են իբրև մեկ խոսքի մաս: Ընդոշ է, որ գրաբարյան շատ դարձվածքներ արդի հայերենում անմիջաբար դարձել են բառեր, ինչպես, օրինակ՝ **հալածական առնել** – հալածել, **կալ ի հնազանդութիւն** – հնազանդվել, **հիմն արկանել** – հիմնադրել, **արգելական առնել** – արգելել, **ի պատուհաս արկանել** – պատուհասել, **վնաս առնել** – վնասել, **առնել տօն** – տոնել, տոնախմբել, **ցաւ հասանել** – հիվանդանալ, **երկայնել զբանս -** երկարաբանել և այլն: Ինչպես արդեն նշել ենք, դարձվածքները, օժտված լինելով փոխաբերական իմաստով, ունեն հուզարտահայտչական մեծ լիցք, դրսևորում են խոսողի հուզազգացական վերաբերմունքը, ոճականորեն չեզոք չեն, պատկանում են բառապաշարի որոշակի շերտերի և գործառական հստակ ոլորտներ ունեն[29]:

Կախված դարձվածքի բաղադրիչների սերտության աստիճանից՝ լեզվաբանության մեջ ընդունված է տարբերակել հետևյալ միավորները.

Ա) դարձվածքային սերտաճումներ կամ միակցություններ. այս տիպի կապակցություններում դարձվածքի իմաստը զգալիորեն հեռու է իր բաղադրիչների բառային իմաստներից, զորօրինակ՝ **բարձրավիզ գոլ** – ամբարտավան լինել, **գալ ի խոստ** – ցույց տալ, **ի կեր սրոյ լինել** – սպանվել, **ի խսար արկանել** – նեղություններ պատճառել, **թուլութիւն սրտի** – թուլամորթություն, վախ, **վճարել ի կենցաղոյս** – վախճանվել, **մտանել յաւերաբանութիւն** – դատարկաբանել, զազրախոսել, **պախուրցաքափ լինել** – անզուսպ դառնալ, գազազել, **վերացուցանել զսուր** – պատերազմը դադարեցնել, **վէմ ադամանդեայ** – կարծր, գերսկզբունքային մարդ, **զբռամբ ածել** – տիրանալ, **տալ տեղի բանիցն –** համաձայնել, **ճեռս լքանել** – փիատվել, թևաթափ լինել և այլն:

Բ) Դարձվածային միասնություններ. այս դեպքում դարձվածքի իմաստը հնարավոր է վերականգնել՝ ելնելով բաղադրիչների իմաստից, այսպես՝ **ազգ օձից** – չար, արյունարբու ազգ, **ի բաց թողուլ զա-**

---

29 Հմմտ. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 175-176, **Բեդիրյան Պ.,** նշվ. աշխ., էջ 5-12:

**թոռն** – հրաժարվել գահից, **հանել ոգին** – հոգին ավանդել, **հեղումն արեան առնել** (336) – արյուն թափել, **ի մի ական քթթել –** աչքը չթարթած, **խաւարեցուցանել զաչս** (460) – կուրացնել, **հոգին աւանդել** – վախճանվել, **ընթանալ զհետ ցանկութեան մարմնոյ** – տրվել մարմնական ցանկություններին, **ի տիղմն թաւալել** – ստոր կյանքով ապրել, **գինեմխեալ լինել** – հարբել, զգոնությունը կորցնել, **սեղան արկանել** – սեղան բացել, հացկերույթ կազմակերպել, **մատնել ի բերան սրոյ** – սրի քաշել, **հատանել մարդ** – մարդաթափ լինել, **սուր ի գործ արկանել** – սրի քաշել, **տատասկով լնուլ** – անապատ դառնալ, **ցնդել յարտասուս** – արտասվախառն ողբալ, կոծել, **փոխել զեաւ զգեստն** – սգահան լինել, **ի գլուխ ելանել** – ավարտվել, ամբողջանալ, **զսիրտ կակղել** – գութը շարժվել և այլն: Դարձվածային միասնությունները դարձվածքների ամենատարածված տեսակն են, և մեր ուսումնասիրած երկերի բառապաշարում դրանք ակնհայտ մեծամասնություն են կազմում:

Գ) <u>Դարձվածային կապակցություն.</u> տվյալ արտահայտություններում սերտաճման աստիճանը բավական թույլ է, և դարձվածքի իմաստը բխում է բաղադրիչների պահպանած ուղիղ իմաստից: Դարձվածային կապակցություններ անմիջաբար կարող է ստեղծել գրողը, կրկնությունների շնորհիվ դրանք ձեռք են բերում կայուն կապակցության արժեք, օրինակ՝ **նետիւ հարկանել** – նետահարել, **ջանս եւ աշխատութիւնս հասուցանել** – ջանք ու եռանդ թափել, **զաղտնագնաց լինել** – ծածուկ գնալ, **ի տան հանգուցանել** – օթևան տալ, **սրով սատկել** – սրով սպանվել, **սէր հաստատել** – բարեկամանալ, **ամօթով դարձուցանել** – խայտառակ, ամոթալի փախուստի մատնել, **ժրանալ ի պահպանութիւն** – աչալուրջ հսկել, **ի հնարս սիրոյ մտանել** – բարեկամություն հաստատել, **յարմատոյ հատանել** – արմատախիլ անել, **զիտենալ հոգւով** – ներշնչմամբ հասկանալ, **գրգռել աղմուկ** – աղմուկ, խռովություն առաջացնել, **կեանս շնորհել** – կյանք պարգևել և այլն: Նման դարձվածքներ գրաբարագիր հեղինակները հաճախ են կիրառում, որոնց շնորհիվ ողբերգական դեպքերի ու փաստերի ժամանակագրության շարադրանքը դառնում է զուսեղ ու տպավորիչ, հուզազգացական ապրումակցում առաջացնող:

Իբրև յուրահատուկ տեսակ՝ ընդունված է առանձնացնել նաև <u>դարձվածային արտահայտությունները</u>, որոնք ակնհայտ փոխաբերական, այլաբերական ու պատկերավոր իմաստ ունեցող կայուն կապակցություններ են, դրանց բաղադրիչների սերտաճումը, սակայն, գրեթե բացակայում է: Դարձվածային արտահայտություն ասելով՝ սովորաբար հասկանում ենք առածները, ասացվածքները, մաղթանք-օրհնանքներն ու անեծքները, թևավոր խոսքերը, սպառնալի կամ փաղաքշական արտահայտությունները[30]:

- Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտութունները, ինչպես՝ **Աստուծային գիր** (74) – Աստվածաշունչ, **հօտ Տեառն** – Աստծո հոտը, հավատացյալները, **մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն** – անգիտակից մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն, **կոյր զրկի ի ճառագայթից արեգական, տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց** – կույրը զրկված է արեգակի ճառագայթներից, տգետը՝ կատարյալ կյանքից և այլն:
- Ժողովրդախոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ **ի բերան դժոխից երթալ** – դժոխքի բաժին դառնալ, **լոյս արեգական ոչ տեսանել** – խավարում տոչորվել, **ի մէջ լուսոյ Աստուծոյ գոլ-** աստծո լույսի մեջ լինել և այլն:
- Առածաասացվածքային արտահայտությունները, որոնք վերածվել են դարձվածքների, ինչպես՝ **ի գառանցն լինելոց են գայլք –** անմեղներն են դառնում գիշատիչներ, **արջք օրհասականք հզօրագոյնս կռուին –** վտանգում հայտնվածներն ավելի հզոր են կռվում և այլն:

Մեր մատենագրության տարբեր էջերում գտել ենք հիմնականում աստվածաշնչյան տարբեր գրքերի կամ մեկնությունների թևավոր խոսքերի նրբաճաշակ վերաշարադրումներ, երբեմն նաև իմաստային յուրօրինակ զարգացումներ, ինչպես նաև բանահյուսական

[30] Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 172-173:

աղբյուրներից ծագող այլևայլ դարձվածային արտահայտություններ, զորօրինակ՝ **բանավոր ոչխարք զգեցան զբնութիւն շանց եւ անին զսիրտ գազանաց, համարձակեցան հաչել յերեսս հովուացն** – մտածող խոնարհները շան բնություն ստացան, գազանի սիրտ և համարձակվեցին խոսել տերերի առջև, **բուսանել ի սրտի բոյս չարութեան** – սրտում չարության հունդը ծլել, **գայլ եղեն պահապանք հօտին Քրիստոսի** – սրիկաները դարձան Քրիստոսին հավատացողների պահապանները, **գնալ ընդ ճանապարհս մեղաց** – մեղսագործ լինել, **զկորիւն առիւծու մի՛ արհամարհեսցես, մինչեւ տեսանիցես** – առյուծի ձագին չտեսած՝ մի՛ արհամարհիր, **ճաշակել զճաշակ բաժակին, որ լցեալ էր մրրով դառնութեան** – կյանքի դառնություններին ու փորձություններին ենթարկվել, **մտանել ի յօրինեալ հող գերեզմանի** – պատվով թաղվել, **յաղագս արծաթոյ ի բաց թողուլ զհաւատ**) – արծաթասիրության պատճառով հավատն ուրանալ, **նմանել Կայենի սպանողին** – եղբայրասպան լինել, **ուտել եւ ըմպել գուսանօք եւ թմբկօք եւ երգօք** – հեթանոս խրախճանք կազմակերպել, **մեծամեծս գերանս անտես առնել, փոքրագոյն շիւղ անուանել** – սեփական մեծ արատները միտումնավոր նվազեցնել, աննշան համարել և այլն: Վերջին դարձվածքը հատկապես ուշագրավ է. այն Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից» է: Մատթէոսի Ավետարանի հանրահայտ կոչի՝ «Կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, ապա հայեսցիս հանել զշիղն յականէ եղբօր քո» (է. 5) փոխաբերությունները վարպետորեն օգտագործելով՝ նոր ասույթ է ստեղծում, որն արտացոլում է մարդկային վարքի դատապարտելի դրսևորումներից մեկը՝ սեփական սխալները անտեսումը՝ իբրև աննշան «**փոքրագոյն շիւղ**»**:**

Դարձվածաբանական միավորները բառապաշարում համադրելի են բառերի հետ. դրանք պատրաստի և վերարտադրելի միավորներ են, որոնք, ի տարբերություն մնացյալ բառակապակցությունների, չեն կազմվում տվյալ խոսքային իրադրության պահանջով, այլ արդեն առկա են բառապաշարում և ամեն անգամ կարող են վերարտադրվել՝ ոճական գունավորում հաղորդելով խոսքին: Ամենակայուն դարձվածային միավորները կոչվում են հատկաբանություններ (իդիոմներ): Հատկաբանությունները առանձին լեզուներին բնորոշ

յուրահատուկ բառային կապակցություններ են, որպես կանոն, դժվար թարգմանելի: Գրաբարյան բնագրերում հատկաբանություն կարող ենք համարել նույնարմատ գոյականների և բայերի զուգադիր կիրառությունները, որտեղ բայարմատը հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր՝ բառիմաստի խտացում ստեղծելով՝ **կոծել զկոծս, լաց լալ, բովանդակել անբովանդակելին**, **տօն տօնել**, **խորհել խորհուրդ, հաւատովն հաւատացեալ, ճաշակ ճաշակել** և այլն, ինչպես նաև սեռականով ավելադրությունները՝ *զկեանս ցանկութեան, զթիկունս օգնականութեան, սուր սուսերի, պարի պարկառանաց, այպն կատականաց* և այլն:

Դարձվածքների բաղադրիչների սերտության կամ տրոհելիության աստիճանների մասին խոսելիս պետք է անդրադառնալ մի կարևոր հանգամանքի. զգալի թվով դարձվածքների բաղադրիչներից որևէ մեկը կարող է փոխարինվել համարժեք բառով կամ բառաձևով:

Պ. Բեդիրյանը մանրակրկիտ վերլուծում է դարձվածային տարբերակների առաջացման հիմունքները[31], մենք անդրադառնանք դրանցից ամենագործուն եղանակներին.

ա) դարձվածքի բաղադրիչներից մեկը փոխարինվում է հոմանիշ կամ իմաստով առնչակից բառով. այս ճանապարհով առաջացած բազմաթիվ դարձվածային տարբերակներ կան գրաբարյան բնագրերում՝ **սուգ առնել → կոծ առնել, ի հնազանդութիւն առնել → կալ ի հնազանդութիւն → գալ ի հնազանդութիւն, խաւար ունիլ → խաւար կալնուլ, ի բերան սրոյ կոտորել → մատնել ի բերան սրոյ → ի բերան սրոյ հաշել, բարուք խոնարհ → բարուք հեզ**,

բ) իրար փոխարինում են նույն բառի ձևաբանական տարբեր կառույցները, ընդսմին՝ այս պարագայում տարբերակային կազմություններ կարող են առաջանալ և՛ բայական ձևերի փոխատեղմամբ, և՛ անվանական՝ **սրով *անցանել* → սրով *անցուցանել***: Տվյալ օրինակում ներգործական սեռի բայը փոխարինվել է նույն բայի պատճառական տարբերակով, երկու դեպքում էլ դարձվածքը նշանակում է *սրի քաշել,* ունենք նաև հոլովական ձևերի փոփոխությամբ կամ նույ-

---

[31] Տե՛ս **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ, էջ 214-216:

նիմաստ նախդրավոր կառույցների շնորհիվ առաջացած տարբե-րակներ՝ ***ի գիր*** **արկանել → արկանել** ***գրով*** **/** ***գրով*** **արկանել,** բոլորը *նկարագրել, արձանագրել* իմաստներով, **ըստ կամացն Աստուծոյ → կամօքն Աստուծոյ** և այլն: Կան նաև հոդերի միջոցով ստեղծվող դարձվածային տարբերակներ, ինչպես Ուռհայեցու «Ժամանա-կագրության» մեջ վկայված ***ս*** հոդով տարբերակվող կաղապարները՝ **առնել սէր եւ միաբանութիւն → առնել սէր*ս* եւ միաբանութիւն*ս*՝** *բա-րեկամանալ, միաբանվել, դաշնակիցներ դառնալ* նշանակությամբ: Եզակի և հոգնակի հակադրութեամբ կազմված նույնական դարձ-վածքներ ևս կան՝ **արեամբ ծածկել → արեամբ*ք* ծածկել** – *արյամբ ողողել* իմաստով կամ **գրով առնել → գրով*ք* առնել** – գրի առնել և այլն: Եզակի և հոգնակի հակադրությունը կարող է արտահայտվել ոչ միայն ուղղականի **ք** հոգնակերտով, այլև հայցականի **ս** ձևույթով, այսպես՝ ունենք **քարայատակ*ս* առնել** – հիմնահատակ կործանել ձևը և նրա **քարայատակ առնել** տարբերակը:

Ինչպես վերը նշեցինք, նախդիրները գրաբարում իմաստատար-բերակիչ և բառակազմական մեծ դեր ունեին, ինչի շնորհիվ գործուն մասնակցում էին դարձվածքների կազմությանը, հին դարձվածքի նոր տարբերակների առաջացմանը: Աշխարհաբարում նախդիրների վերացումը հանգեցրեց դարձվածային տարբերակների զգալի նվազ-ման:

Դարձվածքները աներկբա կայուն բառակապակցություններ են, բայց այդ կայունությունը միանշանակ չի տարածվում դարձվածքի կազմում գտնվող բաղադրիչների շարադասության վրա, բառակա-պակցության ներսում հնարավոր է դարձվածքի և՛ գերադաս, և՛ կա-մընտիր անդամների ազատ շարադասություն: Անգամ մեկ հեղինակի առանձին երկի դարձվածքների բառաշերտի մեր քննությունը ցույց է տալիս, որ գրաբարում դարձվածքների շարադասությունը բավական ազատ է. խոսքային հաղորդակցման շղթայում նրանք ազատորեն կարող են փոփոխել իրենց դիրքը՝ պահպանելով միասնական իմաս-տը և կառուցատիպը: Ուռհայեցին իր «*երկրապատմության*» (պատ-միչն այս հետաքրքիր նորակազմությամբ է կոչում իր ժամանա-կագրությունը) տարբեր հատվածներում, ըստ ամենայնի ելնելով

նյութի մատուցման տրամաբանական և զգայական շեշտադրումնե-րից, հաճախ դարձվածքների ներսում փոփոխում է բաղադրիչների շարադասությունը՝ ամեն անգամ առաջադաս դարձնելով այն բա-ռային միավորը, որն այդ խոսքային իրադրության մեջ նշանակու-թյան հիմնական կրողն է: Այսպես՝ մեր ուսումնասիրած երկում կիրա-ռական մեծ հաճախականություն ունեցող **մաշել ի սուր սուսերի** դարձվածքը գրեթե հավասար վիճակագրությամբ հանդես է գալիս մերթ բայի առաջադաս դիրքով՝ **մաշել ի սուր սուսերի**, մերթ անվա-նական բաղադրիչի՝ **ի սուր սուսերի մաշել:** Բերենք բնագրային օրի-նակներ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից»՝ շարա-դասության բավանդակային արժեքն ակներև դարձնելու համար[32]:

*Իսկ ի թուականին Հայոց ՆԿ զօրաժողով արար թագաւորն Վա-սիլ եւ գնայր ի վերայ աշխարհին Բուլղարաց եւ յաղթեաց թագաւո-րութեան նոցա եւ **մաշեաց ի սուր սուսերի** զբազումս զաւառս մեծաւ քաջութեամբ…*(52)

*Եւ ահա անդ էր պեւսանել զաւրուածաաաւր քաջութիւնն ի վե-րայ հաւատացելոցն Քրիստոսի, վասնզի առհասարակ մեծամեծք եւ աղքատք զնի ճաշակ դառնութեան ճաշակէին յանողորմ զազանէն ի չարաշունչ ազգէն Թուրքաց, եւ առհասարակ **ի սուր սուսերի** մաշեալ լինէր վայելուչ զաւառն այն…*(202)

Պ. Բեդիրյանը, համեմատելով գրաբարյան դարձվածքները աշ-խարհաբարյանների հետ, նշում է, որ գրաբարում երկանդամ դարձ-վածքները հաճախ կարող են ընդմիջարկվել դարձվածքից դուրս գտնվող բառով կամ բառերով, ըստ այդմ էլ եզրակացնում է. «… Գրաբարյան դարձվածքներն իրենց կուռությամբ զգալի չափով զիջում են աշխարհաբարյաններին»[33]: Բեդիրյանը իբրև օրինակ բե-րում է V դ. մատենագրությունից (Մովսես Խորենացուց և Ղազար Փարպեցուց) նախադասություններ: Ուռհայեցու կիրառած դարձ-վածքների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ գրաբարում դարձվածքների բաղադրիչները կարող են ընդմիջարկվել իրենց

---

[32] Էջերը նշված են ըստ հետևյալ հրատարակության՝ **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամա-նակագրութիւն, Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1991:
[33] Նույն տեղում, էջ 218:

լրացնող նախադասության տարբեր անդամներով, սակայն դրանից դարձվածքի կուռ լինելու աստիճանը չի փոխվում, դարձվածքը բնավ չի տարրալուծվում, այլ նրա նշանակությունը մասնավորեցվում է, իսկ բաղադրիչների իմաստային կապը անմիջականորեն զգալի է: Բերենք մի օրինակ՝ ցույց տալու համար, որ գրաբարում դարձվածքի բաղադրիչների փոխաբերական նշանակությունն ավելի ընդգծված է, քան աշխարհաբարում, այսպես՝ «Եւ զկնի այսորիկ դնէր Տափարն յաքոռ թագաւորութեանն իւրոյ զաւագ որդին իւր զՄահմունտն եւ **տայր *զամենայն Պարսիկս* ի ձեռս** նորա. եւ զկրտսեր որդին զՄելքն դնէր զսուլտան ի Գանձակ քաղաքն Հայոց եւ ***զայլ զամենայն արեւելս*** **ի ձեռս** նորա…» (372): **Տալ ի ձեռն** կամ **ի ձեռս** դարձվածքը նշանակում է *«հանձնել»,* մեջբերված հատվածում, դարձվածքի բաղադրիչներն իրարից զատելով, մենք բնավ չենք կորցնում միասնական դարձվածային իմաստը: Այսինքն՝ իմաստաբանական տեսանկյունից գրաբարում դարձվածքները՝ որպես փոխաբերական կամ վերաիմաստավորված կապակցություններ, շատ ավելի կուռ կառուցվածքներ են:

Դարձվածքների քննության ժամանակ, հատկապես գրաբարյան, ակնհայտ է մի կարևոր յուրահատկություն. դարձվածքների կազմում միշտ առկա են պարտադիր բաղադրիչներ, առանց որոնց կապակցությունը դադարում է գոյություն ունենալ որպես կայուն և միասնական իմաստ ունեցող միավոր, բայց շատ անգամ այդ պարտադիր բաղադրիչները կարող են ստանալ լրացումներ՝ կախված անդամի խոսքիմասային բնույթից, այսինքն՝ գոյական անդամները ձեռք են բերում բնութագրական որոշիչներ, հատկացուցիչներ, իսկ բայ բաղադրիչները՝ պարագաներ կամ խնդիրներ: Բերենք բնութագրական օրինակներ «Ժամանակագրությունից»: Այսպես՝ ունենք **լինել ի գինարբութեան** «*գինարբուքի դրվել»* նշանակությամբ դարձվածքը, որը Ուռհայեցին լրացնում է ***մեծ*** որոշչով՝ արբեցողությամբ զբաղվելու իմաստն առավել խորացնելու նպատակով՝ **լինել ի գինարբութեան մեծ** (28): Նույն կերպ ունենք **կոծ ածել** (136) → ***մեծ*** **կոծ ածել** (138), **ընկալնուլ զմահ→ ընկալնուլ զմահս *դառնաշունչս***: Կամ՝ **գալ ընդ իշխանութեան** (*հնազանդվել*) դարձվածքի «իշխանութիւն»

բաղադրիչը կարող է ստանալ հատկացուցիչ, **գալ ընդ *մերոյ* իշխա-նութեան** (26), այսինքն՝ *հնազանդվել մեզ, մեր իշխանության ներքո անցնել*: Նույնը **կոյս առնել** (*հարել*) դարձվածքի դեպքում միշտ հնարավոր են լրացումներ→**ի *մեր* կոյս առնել** (28) – *մեզ հարել, մեր կողմն անցնել* (138): **Ի տան *պարտույ* հանգուցանել** (318) դարձվածքի կազմում հիմնայինը **ի տան հանգուցանել** բաղադրիչներն են՝ «օթևան, իջևան տալ» նշանակությամբ, որտեղ բայական անդամը դարձվածքի նշանակած գործողությունը բնորոշող կամընտիր ձևի մակբայ է ստացել՝ ***պարտույ հանգուցանել***:

Դարձվածաբանության մեջ գերադաս (դոմինանտ) և կամընտիր (ֆակուլտատիվ) անդամների[34] նման տարբերակումը սկզբունքորեն կարևոր է, որովհետև դրա շնորհիվ բացահայտվում է դարձվածքների ձևավորման ընթացքը, առանձնացվում են միջուկային միավորները հետագա ճյուղավորումներից: Գերադասությունը որոշվում է թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային բեռնվածության աստիճանով, այսինքն՝ դարձվածքի գերադաս անդամ կամ անդամներ կարող ենք համարել միայն այն բառերը, որոնց միջոցով արտահայտվում է դարձվածքի հիմնական իմաստը, և որոնք կապակցում են կամընտիր բառերը: Այսպես՝ ***ի բաց* թողուլ զաքոռն** դարձվածքի մեջ (հրաժարվել գահից) **թողուլ զաքոռն** բաղադրիչներն են գերադաս, իսկ ***ի բաց***-ը կամընտիր է: Նույն մակարդակում վերլուծելով **ի սուր *սուսերի* մաշել** դարձվածքը՝ տեսնում ենք, որ գերադասը **ի սուր մաշել** բաղադրիչների կապակցությունն է, **սուր** բաղադրիչի մահաբեր նշանակությունը ուժգնացնելու համար հավելել են նույն՝ զենք-զինատեսակի իմաստային դաշտին պատկանող ***սուսերի*** բառը՝ որպես կամընտիր: Կամ **տաղտկալից առնել *մպաց*** – *ձանձրացնել, պաղպուկ պարճառել* դարձվածքը, որտեղ գերադաս անդամներն են **տաղտկալից առնել** բաղադրիչները, իսկ ***մպաց***-ը՝ կամընտիր, այն լրացնում է տաղտուկ պատճառելու գաղափարը՝ ցույց տալով, որ տաղտուկը հատկապես մարդկային մտքին է վնասում:

[34] Հմմտ. **Բեդիրյան Պ.,** նշվ. աշխ., էջ 89-99:

Դարձվածքների գերադաս անդամների բառային իմաստների միջոցով էլ հնարավոր է առանձնացնել այն իմաստային դաշտերը, որոնց միավորներն ավելի հաճախ են դարձվածքներ ստեղծում, այսինքն՝ ունեն դարձվածաստեղծ ներուժ: Ժամանակակից հայերենի դարձվածաբանական բառարանի[35] տվյալների հիման վրա Պ. Բեդիրյանը և Ե. Գևորգյանը առանձնացնում են այն հիմնական իմաստային դաշտերը, որոնց պատկանող բառերը արդի դարձվածքներում ամենակիրառականն են[36]: Առաջին տեղում մարդու մարմնամասերի իմաստային դաշտն է, որին պատկանող հասկացությունները գործուն դարձվածակազմիչ են: Այնուհետև կենդանանունների իմաստային դաշտն է, ապա բնության, աշխարհի, բուսանունների, մարդկային կենցաղի և հասարակական հարաբերությունների, մտքի ու գիտելիքի դաշտերը:

Իմաստային դաշտերի այս դասակարգումը բնորոշում է լեզվակիր հանրույթի աշխարհընկալման առաջնահերթությունները. ժամանակի հետ դրանք փոփոխվում են:

---

[35] Տե՛ս **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

[36] Տե՛ս **Բեդիրյան Պ.,** նշվ. աշխ., էջ 91-92, **Գևորգյան Ե.**, Հայերենի դարձվածքները, Եր., 1969 , էջ 91-99:

## 1.3 Գրաբարի դարձվածքների զուգադրահամեմատական պատկերը V- XIII դդ. սկզբնաղբյուրներում

Գրաբարի դարձվածքի մասին ընդհանուր դիտողություններից հետո անցնենք 12 բնագրերի հիման վրա կատարած մեր ուսումնասիրությանը՝ սկսելով զուգադրահամեմատական քննությունից, հետայդու անդրադառնալով դարձվածքների իմաստակառուցվածքային վերլուծությանն ու հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն դարձվածքների վերհանմանը: Բնագրերից դուրս բերված 2881 դարձվածքները համեմատել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» (ԳԴԲ), «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (ՆՀԲ), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի» (ՄՀԲ), Ս. Մալխասեանի «Հայերէն բացատրական բառարանի», Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանի (Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր)», Խ. Բադիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանի» հետ:

Հաշվի առնելով Ռ. Ղազարյանի՝ իր տեսակի մեջ անդրանիկ «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» անկրկնելիությունը՝ մեր հետազոտությունը կատարել ենք՝ հիմնվելով այդ բառարանի վրա: Դուրս բերած մեր բոլոր դարձվածքները համեմատել ենք բառարանում առանձին հոդվածներով ամրագրված միավորների հետ՝ վերլուծության ընթացքում կարևորել ենք գրաբարի դարձվածաբանական առայժմ միակ բառարանում այս կամ այն պատճառով տեղ չգտած բավականին մեծ թվով՝ գրեթե 900 դարձվածքները, որոնք իրենց իմաստակառուցվածքային յուրահատկություններով առանձնանում են: Բառարանում չվկայված բավական մեծաքիվ դարձվածքների առկայությունը կարող ենք բացատրել բառանագրի որդեգրած ընտրության սկզբունքով, մեր ուսումնասիրած դարձվածքների քննությունը վկայում է, որ Ռ. Ղազարյանը գերապատվությունը տվել է հիմնականում կիրառական մեծ ներուժ ունեցող, այսինքն՝ նաև ժողովրդական խոսքում տարածված դարձվածային միավորներին, նրանց արտահայտած իմաստներին, որոնց բացահայտմանն էլ

միտված էր նրա, ցավոք, անավարտ մնացած բառարանը, որը տպագրվեց հետմահու, այլոց խմբագրմամբ:

**Ագաթանգեղոսի** պատմությունը, որ նկարագրում է IV դ. բախտորոշ իրադարձությունները, հատկապես քրիստոնեության մուտքը Հայաստան, աչքի է ընկնում պատկերավոր և պերճաբան ոճով բազմաթիվ դարձվածքների առատ և դիպուկ կիրառման շնորհիվ: Պատմության երկու հարյուրից ավելի դարձվածքներից 42-ը վկայված չեն ԳԴԲ-ում: Բերենք կիրառական կառուցվածք և տարածված բաղադրիչների կազմ ունեցող ԴՄ-ների օրինակներ՝ *ընդ յարգանօք արկանել (էջ 8), զականչս ջգպել (14), ի դրունս մահու մպանել (18), ի թիկունս գալ (26), չարախպավապ վապնել (26), մպրակ ի կուշպ առնել (36), յունկն մպանել (86), յաղօրս մապուցանել (86), ի վերայ աստոզոյն շինել (88), ինքնապես լինել (176 )* են: Մի քանի օրինակներ էլ բերենք ԳԴԲ-ում վկայվածներից՝ *ջիարջակ լինել (6), զանջն ի մէջ մահուան և կենաց դնել (8), նախանջաբեկ լինել (24), ընդ առաջ ելանել (30), պապուհասակոծ առնել (34)* են:

Անցնենք հաջորդ բառարանին. ՆՀԲ-ում երկի դարձվածքներից ներառված են 8-ը, ընդ որում՝ ոչ մեկը Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված `*զկարօպս լցուցանել (12), յերկիր կործանել (30), ի հարուածս հարկանել (78), ի մահ մապնել (134), ինքնապապում լինել (160), անպապում լինել (182), ի միպս անկանել (296), ազդումն առնել (368):*

Ագաթանգեղոսի երկի հետևյալ դարձվածքներն են տեղ գտել ՄՀԲ-ում՝ *ի սուր սուսերի մաշել (32)՝ի սուր մաշել (ՄՀԲ), ջերբակալ առնել* (36)՝ *ջերպակալ առնել, ծունր դնել (112)՝ ծունդր դնել, աղօրս առնել (256)՝ աղօթք անել, վկայ ածել (272)՝ վկայ բռնել, դիմադարջ լինել (294)՝ դիմադարջ կանգնել, միպ դնել (492)՝միպք դնել, ի շար արկանել (492)՝ի շար դնել*: Մեկ դարձվածք թեպետ ձևով համընկնում է ՄՀԲ-ում ներառվածին, այդուհանդերձ իմաստային տարբերակում ունի: Այսպես՝*ի վեր բերել (230)*-ը, եթե երկում ունի «առաջ բերել, ներկայացնել» իմաստը, ապա բառարանում կրում է «փսխել» նշանակությունը, իսկ մեկ այլ դարձվածք՝*ի քուն լինել (414)*-ը, որ ՄՀԲ-ում ներկայացված է *ի քուն լինալ* ձևով, դարձյալ իմաստային

տարբերություն ունի. երկում առկա է «քնած լինել» իմաստը, բառարանում՝ «քնել»: Այս դարձվածքներից ԳԴԲ-ում վկայված չեն միայն երկուսը՝ *վկայ ածել (272)* և *ի չար արկանել (492):*

Ս. Մալխասյանի բառարանում երկի 256 դարձվածքներից տեղ են գտել 147-ը, որոնցից միայն մեկը գրանցված չէ ԳԴԲ-ում՝ *ազդումն առնել (368)*, որը կար նաև ՆՀԲ-ում: Եվս մի քանի օրինակներ՝ վկայված Ս. Մալխասյանի բառարանում՝ *ի մտի դնել (68), յաղօթս մատուցանել (86), ցուց բառնալ (106), ի բերան բան դնել (108), ի դէպ ելանել (268)* են, իսկ ինչ վերաբերում է Լ. Հովհաննիսյանի բառարանին, ապա ԳԴԲ-ում չվկայված այդ 41 դարձվածքներից այստեղ գրանցվել է ընդամենը մեկը՝ *վկայ ածել (272)*-ը, իսկ երկում օգտագործված 256 դարձվածքներից սույն բառարանում, բացի վերը նշված մեկից, տեղ են գտել ևս չորսը՝ *մտրակ ի կուշտ առնել (36), զալ զմտօք (300), ճարպ զալ զակամբ (320), զանձն ի գործ կացուցանել (322):*

Խ. Բադիկյանի դարձվածաբանական բառարանում այդ 41 դարձվածներից շուրջ 14-ին համարժեք դարձվածքներ ենք կարողացել գտնել, մինչդեռ երկի մյուս դարձվածքներից, որոնք վկայված են ԳԴԲ-ում, մոտավորապես համարժեք 30 դարձվածք ենք գտել՝ այդու ցույց տալու, թե գրաբարի դարձվածքները ժամանակակից հայերենում ինչպիսի փոփոխություններ են կրել կամ որքան են պահպանվել: Ըստ այսմ՝ նպատակահարմար ենք գտել այդ բառարանից դուրս բերված դարձվածքները (ԳԴԲ-ում չվկայված) ներկայացնել այսպիսի խմբերով՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *յունկն մտանել (86) – ականջը մտնել,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածներ՝ *ի կենդանութիւն փոխել (12) – կյանքի կոչել, զականջս ձգտել (14) – ականջները սրել, մտանել ի դրունս մահու (18) – մահվան դուռը հասնել, կապել ընդ զարշապարս մեղաց (20) – մեղքերի մեջ թաղվել, ի թիկունս զալ (26) – թիկունք կանգնել//թիկունքին կանգնել//թիկունք դառնալ (լինել), յերկիր կործանել(30) – գետին զարկել (փապալել), ի մահ վիրավորել (110) – մահվան դուռը*

*հասցնել//մահու (մահվան) բերան ուղարկել, ի վայր կործանել (126) – զեփին զարկել (փապալել), ի մահ մատնել (134) – մահվան դուռը հասցնել// մահու (մահվան) բերան ուղարկել, առ ակամ դիպենալ (240) – աչքի ընկնել, ի մահ վարել (254) – մահվան դուռը հասցնել//-մահու (մահվան) բերան ուղարկել, գալ զմտօք (300) – մտքով անցնել, զանձն ի գործ կացուցանել (322) – գործ բռնել:*

Այսպիսով, Ագաթանգեղոսի Պատմության դարձվածքների զուգադրահամեմատական պատկերը ներկայացնենք ստորև:

**ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (223) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (42) |
|---|---|---|
| ՆՀԲ | 0 | 8 |
| ՄՀԲ | 8 | 2 |
| Հայերեն բացատրական բառարան | 146 | 1 |
| Գրաբարի բառարան | 4 | 1 |

Փավստոս Բուզանդը հայ մատենագրության ինքնատիպ դեմքերից է՝ վիպասան-պատմիչ, բառաստեղծ ու դարձվածակերտ հեղինակ, որը պատմական անցքերը, հերոսներին ու հակահերոսներին նկարագրում է ոչ միայն պատմական փաստերի, այլև գեղարվեստական հնարանքների թևավոր միջոցներով: Բուզանդի երկն աչքի է ընկնում հեղինակային տարբեր կառուցվածք, բաղադրիչների կազմ, վերաիմաստավորման աստիճան ունեցող դարձվածքներով: V դ. հայ պատմագրության այս պերճաքան ստեղծագործությունից դուրս ենք գրել շուրջ չորս հարյուր դարձվածք, որոնցից 170-ը տեղ չեն գտել ԳԴԲ-ում: Դիցուք՝ *եռանդ ածել (24), արփաբեկ կացուցանել (38), յապաշխարութիւն դառնալ (52), ընդ ծակ ասղան մտանել (124), ի սուգ ընկղմիլ (166), ընդ կրուկ թողուլ (222), զմիտս հանել (248), քար ի քարի վերայ ոչ թողուլ (264), ընդ այս ընդ այն գնալ (272), ի կարի առնել (394)* են: ՆՀԲ-ում երկի դարձվածքներից ամրագրվել են 7-ը,

ընդ որում՝ 7-ն էլ ԳԴԲ-ում չվկայված՝ *պահս պահել (28), ընդ առաջ երթալ (32), հեծուկս առնել (40), թոպամահ լինել (52), պապկառուկս արկանել (54), համոյ թուալ (114), ճակատս տալ (244):*

ՄՀԲ-ում 165-ից ոչ մեկը վկայված չէ: Այստեղ ընդգրկված են Ռ. Ղազարյանի բառարանում վկայված դարձվածքներից 20-ը՝ երբեմն նույնությամբ, երբեմն ձևի կամ իմաստի փոփոխությամբ: Նախ վերջինների մասին. բնագրում *դարձ լինել (158)*-ը ունի «վերադառնալ» իմաստը, իսկ ՄՀԲ-ում այն ներկայացված է «վերադարձվել» նշանակությամբ՝ թեպետ ձևային նույնությամբ: *Միրփ դնել (252)*-ը Բուզանդը գործածում է «համարձակվել» նշանակությամբ, մինչդեռ բառարանում այն «սփոփել» իմաստն է արտահայտում: ՄՀԲ-ում տեղ գտած մնացյալ դարձվածքներից են՝ *ջերպակալ առնել՝ ջերբակալ առնել (34)*-ի, *ի հաւան բերել-ը՝ ի հաւան ածել (138)*-ի, *ունկն առնել//բանալ//մատուցանել*-ը՝ *ունկն դնել (358)*-ի փոխարեն են:

Ս. Մալխասյանի բացատրական բառարանում 165 դարձվածքներից վկայված են 6-ը՝ *ընդ առաջ երթալ (32), թոպամահ լինել (52), պապկառուկս արկանել (54), նախանձուկս արկանել (192), ժամակալ լինել (206), ընդ առաջ գալ (232),* մինչդեռ ԳԴԲ-ում վկայվածների թիվը այս բառարանում 136 է:

Լ. Հովհաննիսյանի բառարանում վկայված են Փ. Բուզանդի երկի 8 դարձվածքներ՝ մեկը Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված՝ *մահն առաջի դնել (196):* Մնացյալներն են՝ *զմիփս գողանալ (80), ադիողորմ գործել (84), պինդ կալ (144), անկանել ի գաղփագողօնս (182), ջեռն ջգել (306), զանձն ի մահ դնել (316), նախանձ վարել (348):*

Ինչ վերաբերում է Խ. Բադիկյանի բառարանին, ապա ԳԴԲ-ում չգրանցված դարձվածքներից այստեղ տեղ են գտել շուրջ 31 համարժեք դարձվածքներ, իսկ ԳԴԲ-ում վկայված և Խ. Բադիկյանի բառարանում իրենց համարժեքը գտած դարձվածքների մոտավոր քանակը 45 է: Տվյալ դեպքում առանձնացրել ենք հետևյալ խմբերը՝

**ա)** գրաբարից նույնությամբ փոխառված կամ պատճենված դարձվածք՝ *թիկունք լինել (86) – թիկունք լինել,*

**բ)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *զմեղս քաւել (122) – մեղքերը քավել, ի ծունկս ածել (256) – ծնկի բերել, քար ի քարի վերայ ոչ թողուլ (264) – քարը քարին (քարի վրա) չթողնել* ևն,

**գ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *սրտաբեկ կացուցանել (38) – սիրտը կոտրել, ի ջեռանէ թողուլ (174) – ձեռք քաշել, առ ոտն կոխել (392) – ոտքի կոխան անել (դարձնել)* ևն: Այսպես՝

**ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (277) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (170) |
|---|---|---|
| ՆՀԲ | 0 | 7 |
| ՄՀԲ | 20 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 136 | 6 |
| Գրաբարի բառարան | 7 | 1 |

Ժամանակագրորեն հաջորդ պատմիչը, որին անդրադարձել ենք, **Եղիշեն** է՝ իր «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» պատմագաղափարական երկով, որի հիմքում V դարում հայ ժողովրդի ազգային-ազատագրական սրբազան պայքարն էր Սասանյան Պարսկաստանի դեմ հանուն ազգային, կրոնական և մշակութային ինքնության պահպանման: «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկի հեղինակն օգտագործել է երկու հարյուրից ավելի դարձվածք, որոնցից 70-ը ներառված չեն մեր ուսումնասիրության հիմք բառարանում: Պատմիչը, ստեղծելով այս երկը, սոսկ ժամանակագրական տեղեկություններ հաղորդելու նպատակ չի ունեցել, այլ ընթերցողին գեղարվեստական հիանալի երկ է նվիրել, որը նրան հաջողվել է, անշուշտ, դարձվածքների հաճախադեպ և նպատակային կիրառման շնորհիվ: Նախ դիմենք ԳԴԲ-ում չներառված դարձվածք-

ների օրինակներին՝ *հողմն հանել (12), ընդ օրհնօք մտանել (18), ի չարչարանս տալ (26), ջայնս բառնալ (36), օտարախորթս առնել (220), հրոյ ճարակ տալ (256), ի պաշտամանն կալ (290), ըստ հրամանաւ անցանել (344), ակնանկապ լինել (346), ընդ վայր հաջել (372)* են:

ՆՀԲ-ում այդ 51 դարձվածքներից վկայված են 11-ը՝ *սատար լինել (8), համարս տալ (52), դարասարան առնել (54), երահիկ լինել (166), արտաքս ելանել (168), իշխան լինել (170), ի ջեռս անկանել (250), ի ջեռս մատնել (254). գերի վարել (268), ջայնակից լինել (300), ծախս առնել (308)*: Ռ. Ղազարյանի բառարանում վկայված դարձվածքներից ոչ մեկը ՆՀԲ-ում ներառված չէ:

ՄՀԲ-ում այդ 51-ից ամրագրված է մեկը՝ *ի դուրս ելանել (48)*, իսկ ԳԴԲ-ում տեղ գտած դարձվածքներից այստեղ վկայված են 11-ը: Ս. Մալխասյանի բառարանում 51 չվկայվածներից ընդգրկված են 2-ը՝ *համարս տալ (52)* և *ի ջեռս մատնել (254)*, իսկ վկայվածներից այստեղ տեղ են գտել 89-ը: Իր բառարանում Լ. Հովհաննիսյանը ԳԴԲ-ում չվկայվածներից արձանագրել է 3-ը՝ *երահիկ լինել (166), զմիտս հարկանել (168)* և *երթալ զկնի կամաց (184)*, ընդ որում՝ այստեղ հետաքրքրականն է այն, որ Լ. Հովհաննիսյանի բառարանը, ներառելով Հայկազյանում չվկայված բառերը, իր բառարանում ամրագրել է նաև <u>երահիկ լինել</u>-ը, որը վկայված է նաև Հայկազյանում՝ պարզապես այլ իմաստով. եթե վերջինում այն կրում է «ուրախանալ» իմաստը, ապա Լ. Հովհաննիսյանի բառարանում՝ «հեռանալ»: Բացի այդ երեքից՝ Գրաբարի բառարանում ներառված են Եղիշեի օգտագործած դարձվածքներից ևս 3-ը՝ *յանջն լինել (22), ի հաւանութիւն ածել (124), ի միտս հապաղել (150)*:

Եվ վերջապես Խ. Բաղիկյանի բառարանում 51 չվկայվածներից ներառված են մոտ 9-ը, իսկ վկայված 157 դարձվածքներից՝ մոտ 20-ը: Այդ ինը դարձվածքները ներկայացնում ենք հետևյալ խմբերով՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ջայնս բառնալ (36) – ջայն բարձրացնել, յերկիր կործանել (154) – գետին զարկել (փապալել), ի ջեռս անկանել (250) – ջեռքն ընկնել* են,

**բ)** գրաբարյան դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *ի միլս մլանել (28) – միլրք հղանալ, բալ ձեռն ելանել (144) – ձեռքից գալ, զմիլս հարկանել (168) – սիրլը կոլրել* են: Այսպես՝

**ԵՂԻՇԵ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (165) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (70) |
|---|---|---|
| ՆՀԲ | 0 | 11 |
| ՄՀԲ | 11 | 1 |
| Հայերէն բացատրական բառարան | 89 | 2 |
| Գրաբարի բառարան | 3 | 3 |

Քերթողահայր **Մովսես Խորենացու** մատենագիտական երկը, որը հայոց ազգաբանության եզակի և գիտական հիմքերի վրա կառուցված առաջին պատմությունն է, մեր համոզմամբ, գրվել է ի պատասխան հիմնարար այն երեք հարցերի, որոնք ամրագրված են Աստվածաշնչում՝ «ո՞յր ես դու», «ուստի՞ գաս» և «յո՞ երթաս»: Աղբյուրագիտական հարուստ հիմքեր ունեցող քննական այս պատմությունը, որտեղ կան բանահյուսական և գեղարվեստական բազմաթիվ դրվագներ, պատմական փաստաթղթեր, ժամանակագրություն, հարուստ է ու հանրահայտ թևավոր խոսքերով, դարձվածքներով, առածներով ու ասացվածքներով, հատկաբանություններով: «Պատմութիւն հայոցը» սկսվում է հայ ժողովրդի ազգածագման պատմությամբ և ժամանակագրությամբ հասնում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահին ընկած ժամանակաշրջանը: Երկը հարուստ է պատկերավոր ու ինքնատիպ երկու հարյուրից ավելի դարձվածքներով, որոնցից 41-ը ներառված չեն Ռ. Ղազարյանի բառարանում, զորօրինակ՝ *աղմուկ ի մէջ արկանել (32), ի հաշտութիւն ածել (133), ի բուռն ածել (163), ի կալանս ըմբռնել (197), ի կամս թողուլ (265), զքէն խնդրել (294), զհրամանս սայթաքել (298), ընդդիմամարտ լինել*

*(307), առատագիտս առնել (344)* են: Այդ 35-ից ՆՀԲ-ում ներկայացված են 15-ը, որոնցից են՝ *ի ճահ գալ (13), պատարագ մատուցանել (14), զոգին փչել (36), ի բաց քեցել (109), միջակտուր առնել (230), ջեռս արկանել (235), ի կենաց լուծանիլ (285)* են: ԳԴԲ-ում վկայված դարձվածքներից ՆՀԲ-ում գրանցվել է միայն մեկը՝ *պաշտօն տանել (345)*:

ՄՀԲ-ում այդ 35 դարձվածքներից ոչ մեկը վկայված չէ, մինչդեռ Ռ. Ղազարյանի բառարանում վկայված դարձվածքներից այստեղ տեղ են գտել 6-ը՝ *պէտ անել*-ը՝ *պէտ առնել (8)*-ի փոխարեն, *ջերպակալ առնել*-ը՝ *ջերքակալ առնել (44)*-ի, *պատասխան առնել*-ը՝ *պատասխանի առնել (80)*-ի, *ի վրայ բերել*-ը՝ *ի վերայ բերել (245)*-ի, *ունկն առնել//բանալ//մատուցանել*-ը՝ *ունկն դնել (348)*-ի փոխարեն:

Ս. Մալխասյանի բացատրական բառարանում 35 դարձվածքներից ոչ մեկը տեղ չի գտել, մինչդեռ մնացյալ 185 դարձվածքներից այստեղ ամրագրվել են 107-ը: Օրինակ՝ *փոյթ յանձին ունել (8), բուռն հարկանել (11), ի մտի դնել (30), ի դէպ ելանել (33), խարդաւանակ լինել (84), թեկն ածել (121), ծայրաքաղ առնել (158)* են:

Լ. Հովհաննիսյանն իր բառարանում Մ. Խորենացու գործածած դարձվածքներից զետեղել է ընդամենը մեկը՝ *ի մտի ունել (44),* այն էլ՝ Ռ. Ղազարյանի բառարանում վկայված, իսկ Խ. Բադիկյանի բառարանում երկի բոլոր դարձվածքներից շուրջ 30-ին ենք համարժեքներ գտել, իսկ այդ 35-ից՝ մոտավորապես 9-ին, որոնք էլ հետևյալ պատկերն են ներկայացնում՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *զջեռն ամբառնալ (32) – ջեռք բարձրացնել, զոգին փչել (36) – շունչը փչել, ի բուռն առնուլ (78) – բուռն (բռի մեջ) առնել (հավաքել),*

**բ)** գրաբարյան դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *ի կալանս ըմբռնել (197) – կալանք անել, տալ ճակատ (208) – ճակատ(ը) դեմ անել, տալ, լուծանել ի կենաց (285) – կյանքի թելը կտրել, զմուտն առնել (287) – մուտք գործել, զանձն ի ջանս արկանել (317) – ջանք թափել (անել, գործադրել)*: ԳԴԲ-ում տեղ գտածներից այստեղ համարժեք ենք համարել կամ աշխարհաբարի վերածված շուրջ 30-ը: Այսպես՝

**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ**

| | ԳԴԲ-ում վկայ-ված դարձվածք-ներ (190) | ԳԴԲ-ում չվկայ-ված դարձվածք-ներ ( 41) |
|---|---|---|
| ՆՀԲ | 1 | 15 |
| ՄՀԲ | 6 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 107 | 0 |
| Գրաբարի բառարան | 1 | 0 |

V դ. հայ պատմագրության խնկարկելի մեծություններից է Ղազար Փարպեցին, որի պատմությունն իր ստուգապատում բովանդակությամբ, տրամաբանական կառուցվածքով և գաղափարախոսությամբ համադրելի է քերթողահայր Խորենացու երկին: Փարպեցու «Պատմութիւն հայոց» երկը սկսվում է 387 թ. պատմական անցքերի նկարագրությունից և ավարտվում Վահան Մամիկոնյանի՝ պարսից արքունիքի կողմից հայոց մարզպան ճանաչվելու բախտորոշ իրադարձության պատկերմամբ: Փարպեցու դարձվածային բառագանձը, մեր գնահատմամբ, երկու հարյուրից ավելի ԴՄ-ներն են, որոնցից 70-ը չեն ամրագրվել Ռ. Ղազարյանի բառարանում: Բերենք Փարպեցու երկում կիրառական դարձվածքների բնութագրական օրինակներ՝ *յանջին կրել (20), ի հնազանդութիւն կալ (26), զանձն արկանել (36), վճիռ փալ (42), ի սուգ ընկղմիլ (46), յայպանումն մափնել (50), շնորհ առնել (52), ի զարհուրումն ընկղմիլ (70), յեփս դառնալ ընդ կրունկն (92), ի նախանձ գրգռել (96)* են: ՆՀԲ-ում Ղ. Փարպեցու գործածած դարձվածքներից տեղ են գտել 6-ը՝ ոչ մեկը Ռ. Ղազարյանի բառարանում չգրանցված՝ *շնորհ առնել (52), զուշ դնել (132), դեսպան արձակել (156), գրոհ փալ (308), դուլ փալ (364), կազմ և պատրաստ կալ (426):*

ՄՀԲ-ում այդ 229 դարձվածքներից ներառված են 8-ը, որոնցից մեկը՝ Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված և ՄՀԲ-ում ձևափոխության չենթարկված՝ *ի ճանապարհ գալ (96),* իսկ մնացյալ 7 դարձվածքներն են՝ *պատրասխան առնել՝ պատրասխանի առնել (46)-*

ի փոխարեն, *ի գլուխ ելանել (58)*՝ բառարանում նույնությամբ վկայված, *ի գլուխ ելանել՝ ի գլուխ երթալ (134)*-ի փոխարեն, *ի քուն լինալ՝ ի քուն կալ (164)*-ի, *ջերպակալ առնել՝ ջերքակալ առնել (170)*-ի, *ունկն առնել//բանալ//մատուցանել՝ ունկն դնել (200)*-ի, *յոգոց//ոգոց հանել-ը՝ յոգւոց հանել (318)*-ի փոխարեն, *ժամ առնել (416)*-ը՝ ձևական նույնությամբ պահպանված, սակայն իմաստափոխված. եթե բնագրում այն «ժամ նշանակել» իմաստն է կրում, ապա ՄՀԲ-ում՝ «պատարագ մատուցել»:

Ս. Մալխասյանի բառարանում այդ 70-ից ներառված են 5-ը՝ *քուռն հարկանել զոփից (62), համար փալ (94), պարիս փալ (270), գրոհ փալ (308), դուլ փալ (364)*, թեպետ ԳԴԲ-ում տեղ գտած մնացյալ 159 դարձվածքներից այստեղ ներառվել են 90-ը: Գրաբարի բառարանում Ղ. Փարպեցու օգտագործած դարձվածքներից ոչ մեկը վկայված չէ, իսկ Խ. Բաղիկյանի բառարանում երկի դարձվածքներին որպես համարժեքներ դիտել ենք շուրջ 35-ը, թեև ԳԴԲ-ում չգրանցվածներից այստեղ տեղ են գտել համարժեք և աշխարհաբարի վերածված շուրջ 14 դարձվածքներ՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *զմիմս պղպորել (70) – միմյանց պղպորել, համար փալ (94) – հաշիվ փալ, ի միջոյ կորուսանել (110) – մեջտեղից հանել (վերացնել), յոփս անկանել (222) – ոտքերն ընկնել,*

**բ)** գրաբարյան դարձվածներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *մեղս առնել (120) – մեղք գործել, ի մահ խնդալ (210) – ջերպակալ առնել մահվան դուռը հասնել, ըստ ափփիս անկանել (216) – ցավի մեջ ընկնել, զմիմս սայթաքեցուցանել (228) – միմյանց պղպորել* են: Այսպես՝

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (159) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (70) |
|---|---|---|
| ՆՀԲ | 6 | 0 |
| ՄՀԲ | 7 | 1 |
| Հայերէն բացատրական բառարան | 90 | 5 |
| Գրաբարի բառարան | 0 | 0 |

V դարը մեզանում նշանավորվում է ոչ միայն պատմագրության, այլև վարքագրական գրականության սկզբնավորմամբ, որի հիմնադիրն ըստ արժանվույն համարվում է Մաշտոցի կրտսեր աշակերտ **Կորյունը**՝ իր «Վարք Մաշտոցի» երկով, որի դարձվածային բառագանձը նշանակալի է. ոչ մեծածավալ այս վարքագրության մեջ վկայված են 50 դարձվածային միավորներ՝ 20-ը ԳԴԲ-ում չվկայված: Բերենք Կորյունի երկում բազմակի կիրառություններ ունեցող ԴՄ-ների օրինակներ՝ *ի նախանձուկս արկանել (82), սկիզբն դնել (98), յերկիր կործանել (100), յանձն լինել (108), ի գործ բերել (110), յանկ ելանել (118), ի ճշմարտութեանն կալ (120), յանձին կրել (126), ի թիկունս իջանել (130), զծառայութիւն հարկանել (132)* են:

ՆՀԲ-ում գրանցված են այդ 62 դարձվածքներից 6-ը՝ ոչ մեկը Ռ. Ղազարյանի բառարանում տեղ չգտած՝ *ընդդէմ լինել (94), յերկիր կործանել (100), ի գործ բերել (110), յանկ ելանել (118), ապնջական լինել (120), ի թիկունս իջանել (130):*

ՄՀԲ-ում ընդամենը մեկ դարձվածք ենք գտել՝ կիրառված Կորյունի երկում և գրանցված «Գրաբարի դարձուածաբանական բառարանում»՝ *աղօթք անել-ը*՝ *աղօթս առնել (130)*-ի փոխարեն:

«Հայերէն բացատրական բառարանում» Կորյունի դարձվածքներից գրանցված են 24-ը, որոնցից 2-ը՝ չվկայված ԳԴԲ-ում: Դրանք են՝ *հաւանութիւն առնել (109)* և *ապնջական լինել (120)*: Լ. Հովհաննիսյանի բառարանում Կորյունի դարձվածքներից ոչ մեկը չի վկայվել, իսկ Խ. Բադիկյանի բառարանում ԳԴԲ-ում չվկայվածներից

տեղ են գտել մոտավորապես 2-ը՝ մեկը իբրև աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածք՝ *յերկիր կործանել (100)-գետին զարկել (պապալել),* իսկ մյուսը՝ որպես գրաբարի դարձվածքին համարժեք աշխարհաբարյան դարձվածք՝ *ի թիկունս իջանել (130) – թիկունք կանգնել, թիկունքին կանգնել, թիկունք դառնալ (լինել),* իսկ երկի բոլոր դարձվածքներից այստեղ իրենց համարժեքները և թարգմանությունները ունեն գրեթե 10 դարձվածքներ: Այսպես՝

**ԿՈՐՅՈՒՆ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (50) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (20) |
|---|---|---|
| ՆՀԲ | 6 | 0 |
| ՄՀԲ | 1 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 22 | 2 |
| Գրաբարի բառարան | 0 | 0 |

V դ. հայ մատենագրության բացառիկ երկերից է դասական գրաբարի կատարյալ ոճի նախատիպ համարվող **Եզնիկ Կողբացու** «Եղծ աղանդոցը», որտեղ քրիստոնեության վարդապետության անբեր տարամաբանությամբ հերքվում են հեթանոսական բազմաստվածության հիմնասյուները, պարսից զրադաշտական կրոնը, այն ամենը, ինչ մրցակից ու ժամանակից էր քրիստոնեական գաղափարաբանությանը: Դարձվածքների թիվը այստեղ զգալի է՝ մոտ երկու հարյուր, որոնցից 57-ը՝ ԳԴԲ-ում չվկայված, բերենք բնութագրական օրինակներ՝ *հարցուածս մատուցանել (3), ի միջոյ կորուսանել (15), ի հուպ գալ (19), զպատուիրանաւն անցանել (20), մահկանացու առնել (21), ի պայքար մատչել (33), ի կենաց պակասել (34), արտաքոյ առնել (39), յաշխարհ գալ (77), խունկ արկանել (77)* են:

ՆՀԲ-ում Ե. Կողբացու բոլոր դարձվածքներից գրանցված են 13-ը՝ ոչ մեկը Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված, դիցուք՝ *զհրամանաւն անցանել (12), խունկ արկանել (77), պատարագ մա-*

*պուցանել (77), լուծանել զաւրէնսն (90), դէպ մպանել (91), ի մահ պալ (93)* են:

ՄՀԲ-ում երկի բոլոր դարձվածքներից ընդգրկված են 5-ը՝ բոլորը, ի դեպ, Ռ. Ղազարյանի բառարանում զետեղված: Դրանք են՝ *պապախան առնել՝ պապախանի առնել-ի (19), միտք դնել*-ը՝ *միտ դնել-ի (26)* փոխարեն*, ի վեր հանել-ը (42)* նույնությամբ է վկայված, սակայն իմաստային փոփոխությամբ. երկում այն կրում է «երևան հանել» իմաստը, մինչդեռ ՄՀԲ-ում այն «փսխել» իմաստն ունի, *յոգոց//ոգոց հանել-ը՝ յոգւոց հանել-ի (57)* փոխարեն, *ի վեր ելնել-ը՝ ի վեր ելանել-ի (70)* փոխարեն և իմաստափոխությամբ՝ «բարձրանալ» իմաստի փոխարեն դարձյալ «փսխել» նշանակությամբ:

Ս. Մալխասյանի բառարանում երկի բոլոր դարձվածքներից ներառված են 73-ը՝ 4-ը Ռ. Ղազարյանի բառարանում տեղ չգտած: Դրանք են՝ *աչս ունել (71), խունկ արկանել (77), պատարագ մատուցանել (77), յաշխարհ գալ (77)*:

Լ. Հովհաննիսյանն իր բառարանում ներառել է այս դարձվածքներից ընդամենը մեկը՝ *ի սուգ նստել (79)*՝ վկայված նաև Ռ. Ղազարյանի բառարանում, իսկ Խ. Բադիկյանի բառարանում, թեև ԳԴԲ-ում վկայվածների թիվը մոտավորապես 20 է, սակայն Ռ. Ղազարյանի բառարանում չվկայվածների համարժեքների քանակը շուրջ 9 է՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ի միջոյ կորուսանել (15) – մեջտեղից հանել (վերացնել), յաշխարհ գալ (77) – աշխարհ գալ,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *մահ գործել (12), մահ առնել (23) և ի կենաց պակասել (34) – մահվան դուռը հասցնել//մահու (մահվան) բերան ուղարկել, ի սպասաւորութիւն առնել (79) – ի սպաս դնել, արեան գնոց (93) – արյան գնով, հանել ի կեանս (93) – կյանքի կոչել:*

Վիճակագրական բաշխումը կունենա հետևյալ պատկերը:

**ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ**

| | ԳԴԲ-ում վկայ-ված դարձվածք-ներ (121) | ԳԴԲ-ում չվկայ-ված դարձվածք-ներ (57) |
|---|---|---|
| ՆՀԲ | 0 | 13 |
| ՄՀԲ | 5 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 69 | 4 |
| Գրաբարի բառարան | 1 | 0 |

VII դ. պատմիչ **Սեբեոսի** երկը մի յուրօրինակ ամբողջական հայոց պատմություն է՝ Մ. Խորենացու պատմության հետ զուգահեռվող, հայ ժողովրդի սկզբնավորումից մինչև 661 թվականը՝ հագեցած լեզվական կուռ կաղապարներով, թևավոր խոսքերով և դարձվածքներով: Վերջիններիս քանակը երկում բավականին մեծ է՝ 200-ից ավելի, որոնցից շուրջ 60-ը չեն վկայվել ԳԴԲ-ում: Այսպես՝ *ի խոնարհ ընկենուլ (53), անձեւր առնել (70), զմիփս հասրարել (81), ի բաց լուծանել (81), կասկած ի սիրտ անկանել (82), ուր հարկանել (86), յունկն հասուցանել (92), յաչս հաճոյանալ (96), գիր և թասալ կացուցանել (108), ի փախուստ ելանել (126)* են:

ՆՀԲ-ում վկայված են երկի 12 դարձվածքներ՝ ոչ մեկը ԳԴԲ-ում չգրանցված: Այսպես՝ *ձերբակալ ունել (69), դէմս առնել (88), ի ծառայութիւն կացուցանել (96), զհետ գնալ (99), զերի վարել (147)* են:

ՄՀԲ-ում երկի դարձվածքներից ներառված են 7-ը՝ բոլորն էլ ԳԴԲ-ում վկայված՝ *ձերպակալ առնել*-ը՝ *ձերբակալ առնել (53)*-ի, *ի սուր մաշել*-ը՝ *ի սուր սուսերի մաշել (68)*-ի, *ժամ անել*-ը՝ *ժամ առնել (70)*-ի, *պարսախան առնել*-ը՝ *պարսախանի առնել (78)*-ի, *ի վերայ ընկնիլ*-ը՝ *ի վերայ անկանել (135)*-ի, *աղօթք անել*-ը՝ *աղաւթս առնել (148)*-ի փոխարեն, նույնությամբ է վկայվել *ի վեր հանել (83)*-ը, սակայն իմաստային տարբերակմամբ. երկի «երևան բերել» իմաստի փոխարեն ՄՀԲ-ում այն «փսխել» իմաստն է արտահայտում:

Ս. Մալխասյանի բառարանում երկի դարձվածքներից ընդգրկված են 38-ը՝ բոլորն էլ ԳԴԲ-ում վկայված, օրինակ՝*աղդ առնել*

*(49), խոյս տալ (49), տալ պատերազմ (51), ի բաց կալ (52), հուր հարկանել (68), չու առնել (77), դիաթաւալ կացուցանել (79)* են, մինչդեռ Լ. Հովհաննիսյանի բառարանում տեղ են գտել Սեբեոսի պատմության 2 դարձվածքներ՝ երկուսն էլ ԳԴԲ-ում ներառված՝ *արքաչունչ առնել (53)* և *տարահալած լինել (160):*

Խ. Բաղիկյանի բառարանում երկի դարձվածքներից տեղ են գտել համարժեք կամ աշխարհաբարի վերածված գրեթե 20 դարձվածքներ, որոնցից 8-ը վկայված չեն ԳԴԲ-ում.

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ի ջեռս անկանել (49) – ջեռքն ընկնել, յերկիր կործանել (50) – գետին զարկել (տապալել), յունկն հասուցանել (92) – ականջին հասցնել, ի վերայ երեսաց անկանել (170) – երեսի վրա թողնել,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *յաչս հաճոյանալ (96) – աչք մտնել, գալ ի թիկունս օգնականութեան (101) – թիկունք կանգնել, թիկունքին կանգնել, թիկունք դառնալ (լինել), ընդ մէջ արկանել (126) – զանց առնել, առաջի ունել (155) – առաջն առնել:* Այսպես՝

**ՍԵԲԵՈՍ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (161) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (60) |
|---|---|---|
| ՆՀԲ | 12 | 0 |
| ՄՀԲ | 7 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 38 | 0 |
| Գրաբարի բառարան | 2 | 0 |

**Մովսես Կաղանկատվացու** մատենագիտական երկը Արցախ և Ուտիք նահանգների պատմական ժամանակագրությունն է, բանասիրական, աղբյուրագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ Մովսես Կաղանկատվացուն վերագրվող այս երկը Աղվանքի պատմության յուրօրինակ մի ժողովածու է, որն ընդգրկում է V-X դդ. տարբեր հեղինակների գործերից փոխլրացնող դրվագներ: «Պատ-

մութիւն Աղուանից աշխարհի» երկում տեղ են գտել շուրջ 400 դարձվածքներ, որոնցից 87-ը վկայված չեն ԳԴԲ-ում, զորօրինակ՝ *դնել գլուխն (12), ի հապարս ածել (14), նուաճել ի ծառայութիւն (16), երդումն կնքել (17), ի թարքուպ մպանել (24), ընդ պարմութեամբ արկանել (26), համաչինչ առնել (43), ի կենցաղոյս վերանալ (45), զգլուխն ընդ երկիր ածել (53), ի փորձ առնուլ (53)* են:

ՆՀԲ-ում երկի դարձվածքներից ներառված են 92-ը, որոնցից ԳԴԲ-ում չվկայվածների թիվը 18 է: Դիցուք՝ *փախճան առնել (10), ահ անկանել (18), չարչարակից լինել (28), քուն առնուլ (58), հեղձամահ առնել (153), արպյորդոր լինել (174), հիմն դնել (278)* են:

ՄՀԲ-ում երկի դարձվածքներից ներառվել են 15-ը, որոնցից միայն մեկը չի վկայվել ԳԴԲ-ում՝ *ի միտն ընկնիլ*-ը՝ *ի միտ անկանել (20)*-ի փոխարեն: Մնացյալ դարձվածքներից են՝ *ծունդր դնել*-ը՝ *ծունր դնել (34)*-ի, *ի միտ առնել*-ը՝ *ի միտ առնուլ (34)*-ի, *ելանել ի կենաց*-ը՝ *ելանել ի կենցաղոյս (56)*-ի, *ի քուն լինալ*-ը՝ *ի քուն լինել (289)*-ի փոխարեն են:

Երկից «Հայերէն բացատրական բառարանում» վկայված դարձվածքների թիվը 155 է, որոնցից ԳԴԲ-ում չներառվածները 7-ն են՝ *յայց ելանել (9), փախճան առնել (10), խորամուխ լինել (18), միջակտուր լինել (29), հեղձամահ առնել (153), վապակաբեկ լինել (205), ի մէջ անցանել (224):*

Գրաբարի բառարանում երկի բոլոր դարձվածքներից ներառված են 5-ը, որոնցից մեկը՝ *մեծահայց լինել (281)*-ը, ներառված չէ ԳԴԲ-ում, իսկ մնացած չորս դարձվածքներն են՝ *ի զարմացումն ածել (18), մահ ի վերայ դնել (92), սրոյ ճարակ առնել (114), զերեսս ցածուցանել (158)*:

Խ. Բաղիկյանի բառարանում երկի բոլոր դարձվածքներից առանձնացրել ենք համարժեք կամ աշխարհաբար թարգմանված շուրջ 30 դարձվածքներ, որոնցից 12-ը ներառված չեն ԳԴԲ-ում՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *յերկիր կործանել (30) – գետին զարկել (փապալել), ի բերանս անկանել (72) – բերանն ընկնել, զերեսս դարձուցանել (142) – երես թեքել, ի ձեռն անկանել (349) – ձեռքն ընկնել,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *երդումն կնքել (17) – երդում ուխել (փալ), վերանալ ի կենցաղոյս (45) – կյանքի թելը կտրվել, մահ ի վերայ դնել (98), մահ հասուցանել (101) – մահվան դուռը հասցնել, մահու (մահվան) բերան ուղարկել, ի թիկունս կոչել (146) – թիկունք դարձնել, մուխ առնել (244) – մուխք գործել, հասանել ի մահ (256), ի փախման հասանել (274) – մահվան դուռը հասնել։* Այսպես՝

## ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (260) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (87) |
|---|---|---|
| ՆՀԲ | 74 | 18 |
| ՄՀԲ | 14 | 1 |
| Հայերէն բացատրական բառարան | 148 | 7 |
| Գրաբարի բառարան | 4 | 1 |

**Արիստակես Լաստիվերցու** պատմությունը XI դ. իրադարձությունների անուրանալի փաստական և գեղարվեստական արժեք ունեցող սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների համար։ Լաստիվերցու երկը պատմական անցքերի սովորական ժամանակագրություն չէ, այլ հուզական-քնարական ստեղծագործություն, որտեղ հեղինակը նկարագրում է XI դ. ողբերգական իրողությունները, մեր ազգին բաժին ընկած հարվածները, որոնց ուժը ծնել է պատմության մեջ ողբի ժանրի նշանակալի հատվածներ, իսկ ողբի ժանրը, որպես կանոն, հարուստ է նորաբան կազմություններով, ինչպես բառային, այնպես էլ դարձվածային։ Լաստիվերցու պատմությունից դուրս ենք գրել երկու հարյուրից ավելի դարձվածք, որոնցից 27-ը տեղ չեն գտել ԳԴԲ-ում։ Բերենք բնութագրական հաճախադեպ կաղապարների օրինակներ՝ *ի մրի արկանել (11), ընդ ոտիւք կոխել (11), ջաղ և ծանակ առնել (12), թքակոծ առնել (12), ընդ ջեռամբ ունել (12), յապականութիւն դարձուցանել (16), ջեռն ի վերայ ծանրա-*

*ցուցանել (23), արակոպոր առնել (36), ի գունս առնել (45), ի մայրն դառնալ (55)* են:

ՆՀԲ-ում վկայված են երկի դարձվածքներից 9-ը՝ ոչ մեկը ԳԴԲ-ում չգրանցված: Օրինակ՝ *արգելական լինել (14), կարծական լինել (23), գուժարկու լինել (33), դաշն առնել (41), մուտ առնել (50)* են, իսկ ՄՀԲ-ում երկի բոլոր դարձվածքներից վկայված են 11-ը՝ բոլորն էլ ԳԴԲ-ում ներառված, ինչպես՝*ի վերայ ընկնել*-ը *ի վերայ անկանել (12)*-ի, *ի գլուխ ելնել*-ը *ի գլուխ ելանել (13)*-ի, *ի միտք բերել*-ը *ի միտս բերել (29)*-ի, *խրախուս տալ*-ը՝ *խրախոյս տալ (35)*-ի, *յաղերս ընկ-նել*-ը *յաղերս անկանել (47)*-ի *փոխարեն* են: Նույնությամբ է վկայ-ված միայն *ի վեր առնուլ (36)*-ը:

Ս. Մալխասյանի բառարանում երկի դարձվածքներից 95-ն են վկայված, որոնցից ԳԴԲ-ում տեղ չգտածների թիվը 2 է՝ *ի մտի ար-կանել (11)* և *թքակոծ առնել (12):*

Գրաբարի բառարանում երկի բոլոր դարձվածքներից ներառ-ված են 4-ը՝ բոլորը, ի դեպ, ԳԴԲ-ում վկայված՝ *վազ առնել (2), ար-տասուս շարժել (27), ծուփս առնուլ (46), ի յիշումն ածել (51):*

Խ. Բաղիկյանի դարձվածաբանական բառարանում երկի բոլոր դարձվածքներից համարժեք կամ աշխարհաբարի վերածված շուրջ 20 տարբերակների ենք հանդիպել՝ 5-ը ԳԴԲ-ում չվկայված, որոնք ներկայացրել ենք նույն խմբերով՝

**ա**) աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ի ջեռն անկանել (17) – ջեռքն ընկնել, ընդ ջեռամբ անկանել (61) – ջեռքն ընկնել,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբար դարձ-վածքներ՝ *ընդ ոտիւք կոխել (11) – ոտքի կոխան անել (դարձնել), ջեռն ի վերայ ծանրացուցանել (23) – ջեռքը (թաթը) վրան դնել, մուտ առնել (50) – մուտք գործել:* Այսպես՝

**ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (184) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (27) |
|---|---|---|
| ՆՀԲ | 0 | 9 |
| ՄՀԲ | 11 | 0 |
| Հայերէն բացատրական բառարան | 93 | 2 |
| Գրաբարի բառարան | 4 | 0 |

**Մատթեոս Ուռհայեցու** երկը ժամանակագրություն է, պատմական անցքերի հաջորդականության վրա հիմնված գեղարվեստական ոգու պատում: Ուռհայեցին իրադարձությունների, հերոսացած կամ անկում ապրած, հրեշ դարձած դեմքերի պարզ նկարագրող չէ, այլև դեպքերի թաքնված պատճառահետևանքային կապերը բացահայտող, քարոզիչ և գաղափարախոս: Երկի դարձվածքների թիվը մոտ երեք հարյուր է, որոնցից 165-ը տեղ չեն գտել ԳԴԲ-ում: Բերենք Ուռհայեցու դարձվածքների բնութագրական կազմությունների օրինակներ՝ *դաշինս առնել (10), փոկակապս առնել (10), ի բերան սրոյ կոտորել (26), յաւարի առնուլ (28), քմինս դնել (30), մահու երկիւղն ի վերայ անկանել (34), սրով անցուցանել (40), բնաջինջ բառնալ (52), ականջալուր լինել (84), արեան ջաղխիս առնել (200)* են:

ՆՀԲ-ում երկի բոլոր դարձվածքներից ներկայացված են 20-ը, որոնցից միայն 2-ն են ներառված ԳԴԲ-ում՝ *փալ պարերազմ (210)* և *յամօթ առնել (212),* իսկ ՆՀԲ-ում վկայված մնացած դարձվածքներից են՝ *հարցուկ լինել (38), ի ձեռաց փրկել (42), զհետ զնալ (104), ծովահեղձ առնել (156), կառափնաբեկ առնել (242)* են:

ՄՀԲ-ում երկի դարձվածքներից վկայված են 15-ը, որոնցից ԳԴԲ-ում տեղ են գտել միայն 5-ը՝ *աւանդել զհոգի (12), ձերբակալ առնել (14), յոզւոց հանել (104), աղօթս առնել (128), խրախոյս փալ (314):*

Ս. Մալխասյանի բառարանում երկի բոլոր դարձվածքներից գրանցված են 88-ը, որոնցից 7-ը զետեղված չեն ԳԴԲ-ում, դիցուք, *ի քմին կալ (38), յայտ լինել (190), ոտնակոխս առնել (242)* են:

Գրաբարի բառարանում 288-ից ընդամենը 3 դարձվածք ենք գտել, ընդ որում՝ մեկը ԳԴԲ-ում չվկայված՝*զմահ առաջի դնել (18),* իսկ մյուս երկու դարձվածքներն են՝ *ժողով առնել (8)* և *ի վերայ սուր դնել (230):*

Խ. Բաղիկյանի բառարանում այս դարձվածքներից գտել ենք շուրջ 25-ը, որոնցից գրեթե 10-ը վկայված չեն ԳԴԲ-ում: Ներկայացնենք դարձյալ խմբերով՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ի ձեռս անկանել (114) – ձեռքն ընկնել, ձեռամբ առնել (ումեք) (196) – ձեռքով անել, յուր անկանել (208) – ոտքը (ոտքերն) ընկնել (մեկի),*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *ականջալուր լինել (84) – ականջը դեմ անել, ջան յանձին կրել (150) – ջանք թափել* են: Այսպես՝

**ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (150) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (165) |
|---|---|---|
| ՆՀԲ | 2 | 18 |
| ՄՀԲ | 5 | 10 |
| Հայերէն բացատրական բառարան | 81 | 7 |
| Գրաբարի բառարան | 2 | 1 |

**Կիրակոս Գանձակեցին** նկարագրել է IV-XIII դդ. հայաստանյան քաղաքական, եկեղացական հարաբերությունների, մշակութային ու ժողովրդական շարժումների պատմությունը՝ բացահայտելով մեր իշխանական տների և եկեղեցական հայրերի հարաբերությունների բարդ ու խոտոր ընթացքը, որից միշտ օգտվել են հարևան երկրները, մեր ներքին անմիաբանությունից նրանք հզորացել են և հարձակվել: Գանձակեցու երկում վկայված են երկու հարյուրից ավելի դարձվածքներ (249), որոնցից 95-ը ԳԴԲ-ում ամրագրված չեն: Գանձակեցու երկում ամենահաճախադեպ դարձվածային միավորների հետևյալ օրինակները բերենք՝ *լռութեան փալ (8), ի գերութիւն*

*խաղացուցանել (34), ի մահ պնդել (39), զփրփս դարձուցանել (64), դաշնագիր լինել (87), յուխտի կալ (92), մտահաս լինել (105), զքէն վրիժուց խնդրել (106), ընդ միմեանս հարկանել (205), ի խայտառականս մատնել (259)* են:

ՆՀԲ-ում երկի բոլոր դարձվածքներից գրանցված են միայն 4-ը, որոնցից ոչ մեկը ԳԴԲ-ում վկայված չէ՝ *նշաւակ լինել (ումեք) (196), օժանդակ լինել (215), ջան տանել (306), երաշխաւոր լինել (320):*

ՄՀԲ-ում երկի դարձվածքներից տեղ են գտել 12-ը, որոնցից ԳԴԲ-ում չվկայվածների թիվը 2 է՝ *ունկն մատուցանել*՝ *զունկն մատուցանել (4)*-ի փոխարեն և *դարձ լինել (209)*՝ նույնությամբ պահպանված:

Ս. Մալխասյանի բառարանում երկի դարձվածքներից տեղ են գտել 63-ը, որոնցից ԳԴԲ-ում միայն 4-ն են վկայված՝ *ջրասոյզ առնել (160), զհետ պնդել (229), ջան տանել (306) և ի սպասու կալ (326):* Գրաբարի բառարանում միայն *զմիտս համել (157)*-ն է ներառված, որ առկա է նաև ԳԴԲ-ում: Խ. Բադիկյանի բառարանում շուրջ 25 դարձվածք ենք գտել, որոնցից 10-ը վկայված չեն ԳԴԲ-ում: Դրանք են՝

**ա)** աշխարհաբարի վերածված գրաբարյան դարձվածքներ՝ *ընդ ձեռամբ անկանել (67) – ձեռքն ընկնել, յոտն յառնուլ (114) – ոտքի ելնել (կանգնել), ի ձեռս անկանել (236) – ձեռքն ընկնել, ի կեանս կոչել (338) – կյանքի կոչել,*

**բ)** գրաբարի դարձվածքներին համարժեք աշխարհաբարյան դարձվածքներ՝ *զունկն մատուցանել (4) –ականջ անել (դնել), զանձն ի մահ տալ (245) – մահու (մահվան) բերան գնալ, ի դուռն գերեզմանի հասանել (298) – մահվան դուռը հասնել, ջան տանել (306) – ջանք թափել:* Այսպես՝

**ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ**

| | ԳԴԲ-ում վկայված դարձվածքներ (160) | ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ (95) |
|---|---|---|
| ՆՀԲ | 4 | 0 |
| ՄՀԲ | 10 | 2 |
| Հայերէն բացատրական բառարան | 4 | 59 |
| Գրաբարի բառարան | 1 | 0 |

Արդ, տեղին ենք համարում բնագրային մեջբերումների օգնությամբ հստակեցնել ու պարզաբանել գրաբարի դարձվածքի մասին մեր պատկերացումները, իսկ այդ մեջբերումները կանենք Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված դարձվածքներից՝ յուրաքանչյուր երկից հնգական օրինակներ դուրս բերելով: Այսպես՝

**Ագաթանգեղոս**

1. Ընդ յարգանօք արկանել (8) – Նա և զաղքատս մեծացուցանեն՝ զփոքր ինչ ընդ յարգանօք արկեալ, և զաշխարհ պսակեն նոր և չքնաղ գիւտիւք:

2. Չարախտավատ վատնել (26) – Զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին և չարախտավատ վատնէին և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին:

3. Յաղօթս մատուցանել (86) – Ճգնութեամբ մատուցեալ յաղօթս՝ խնդրել ի բազումողորմ Տեառնէն օգնականութիւն՝ փրկել զնոսա ի փորձութենէն, որ հասեալ էր ի վերայ նոցա:

4. Զունկն խոնարհեցուցանել (114) – Լո՛ւր, դուստր, և տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո, մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քոյ…

5. Արկանել յուղիղ ճանապարհէն (134) –… և ո՛չ կալեալ ընդ մեզ ոխս, և ո՛չ չարակնիցես զմեզ, և ո՛չ արկանիցես զմեզ յարդարեւ յուղիղ ճանապարհէն:

**Փավստոս Բուզանդ**

**1.** Թոպամահ լինել (52) – Եւ յետ այսր անցեալ ժամանակաց, զկնի թոպամահն լինելոյ երանելոյն Յուսկան, առաջնորդ եղեալ՝ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհի:

**2.** Յանքի հարկանել (74) – Եւ անդ դիպեալ Արտաւազդ և Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զորավարք ամենայն զորացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանքի հարեալք՝ ի դուրս գնացին:

**3**. Ընդ անձամբ բառնալ (110) – Անօրէնք էք և պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ բառնալ:

**4**. Ի կենդանութիւն դարձուցանել (124) – Սոյնպէս և զԱյծեմնիկն իւր ողորմածութիւնքն և խանդակաթ այրեացն ողբումն, ի ձեռն մեծին Պետրոսի, և զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միաանգամ այսրէն դարձուցանէր ի կենդանութիւն:

**5**. Նախանձուկս արկանել (192) – Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն:

**Եղիշե**

1. Զմիտս հարկանել (168) – Մի՛ նեղեալ տագնապիր յանձն քո և հարկանէր զմիտս մեր ամենեցուն:

2. Օտարախորթս առնել (220) – Մի՛ ոք զձեր բաժինն ի ձէնջ հատանիցէ, և զձեզ օտարախորթս արարեալ՝ տարաբաժին համիցէ:

3. Հրոյ ճարակ տալ (256) – … և զգինուածսն աշխարհին դամբար ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային:

4. Ի քարշ առնել (322) – Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա, և երկու երկու լծեցան և առին ի քարշ:

5. Ըստ հրամանաւ անցանել (344) – Այլ զոր ասացերդ՝ եթէ յինէն անսամ ձեզ և ոչ հրամանաւ թագաւորին, եթէ դուք սովոր էք անցանել ըստ հրամանաւ թագաւորին ձերոյ, զայդ բարիոք առնէք…

**Մովսես Խորենացի**

1. Ձձեռն ամբառնալ (33) – Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց:

2. Զոգին փչել (36) – Եւ այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին:

3. Ի փախուստ յորդորել (267) – Այսպիսի դիպուած ի փախուստ յորդորեաց զքշնամիսն, և ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց:

4. Պաղատանս մատուցանել (292) – Նա և եպիսկոպոսացն ժողովեալ՝ պաղատանս մատուցանէին, զի մի՛ անփոյթ արասցէ զկորստենէ իւրոյ վիճակին:

5. Զանձն ի ջանս արկանել (317) – Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս, և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր:

**Ղազար Փարպեցի**

1. Զմիտս պղտորել (70) – Վասն է՞ր ես տրտում, և կամ ընդէ՞ր զքաղմունք նանրութեան պղտորեն զմիտս քո…

2. Ի ճանապարհ գալ (96) – … եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ եկեսցեն՝ այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհս…

3. Զմիտս ինչ տանել (98) – Արդ՝ լուեալ ձեր զմեր հրամանսդ՝ կամաւ և սիրով յանձն առէք, և բնաւ ամենևիմբ զմիտս ընդ այլ ինչ մի՛ տանիք:

4. Ի միջոյ կորուսանել (110) – Ապա եթէ այլազգազոյն ինչ խորհիք…, առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձէնջ օգուտս և զվաստակս, այլ կնաւ և որդւովք և ազգաւ կորուսանեմ ի միջոյ:

5. Զմիտս սայթաքեցուցանել (228) – Բայց զմիտս լսողացն առ վայր մի սայթաքեցուցանէր այսր անդր…

**Կորյուն**

1. Ի Նախանձուկս արկանել (82) – … ոչ ի պարծանս անձանց, այլ առ ի նախանձուկս միմեանց արկանելոյ, զի միմեամբք քաջալերեալք՝ հասանիցեմք ի բարեացն կատարումն…

2. Յանկ ելանել (118) – Իսկ իբրև հրամանն այն արդեամբք և գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր…

3. Ի թիկունս իջանել (130) – Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցօք իջեալ ի թիկունս դիպացն պատահելոյ…

4. Զծառայութիւն հարականել (132) – … քանզի առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր զբօսանաց առանձինն սահմանել և միայն աստուածապաշտութեանն պարապել, զոր և մարգարէքն գործէին, որք ի լերինս…զաստուածեղէն կրօնիցն զծառայութիւն հարկանէին:

5. Ի գործ բերել (110) – …իբրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր:

**Եզնիկ Կողբացի**

1. Հարցուածս մատուցանել (3) – Դարձեալ՝ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն. ուստի՞ իսկ բնաւ են, ասեն, այդպիսի անհարթութիւնք:

2. Ի քննութիւն ածել (7) – Դարձեալ հարցցուք զհիւղեայն. պա՞րզ ինչ բնութիւն իցէ, եթե յաւդուածով. զի ազգի գործուածք իրացն յայսպիսի քննութիւնս ածեն զմեզ:

3. Պատուհաս ի վերայ ածել (9) – Յորժամ զըմբռնեալն ի շնութեան որ սպանանիցէ, պատուհաս ի վերայ ածեալ վասն յանդգնութեանն, չառնէ չար ինչ:

4. Զհրամանաւ անցանել (12) –…որ ոչ եթե անպիտան ինչ ի կերակուրս մարդոյ էր, եւ ոչ բնութեամբ տունկն մահաբեր, եւ վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն ի ճաշակելոյ ինչ ի նմանէ, այլ անսաստու-

թիւնն եղեւ պատճառ մահուան մարդոյն, իբրեւ յանցաւորի՝ որ անցանիցէ զհրամանաւ հրամանատուի՝ որ նմա կարգեալ իցէ:

5. Մահկանացու առնել (21) – … կամէր ունկնդրութեամբ պատուիրանին զնա անմահ պահել, եթե միւսոյն՝ որ պատրանաւք ջանայր զնա մահկանացու առնել:

**Սեբեոս**

1. Ի խոնարհ ընկենուլ (53) – Եւ ոչ կարէին զաւրել. սպառեն զզաւրն. զարկանեն և ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ և սպանանեն:

2. Անճետ առնել (70)- … և հրաման յարքայէն՝ զի անճետս արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել, յատակել և անխնայ յերկիր կործանել:

3. Սուր սուր հարկանել (86) – Եւ դարձեալ անդրէն յանկարծակի բռնաբար սուր սուր հարկանելով զամբոխն պատառեցին և զգունդն բռնութեամբ:

4. Ի հաշտութիւն ածել (92) – Եւ զաւրուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, և այնպէս ողոքեալ ածէ ի հաշտութիւն:

5. Յաչս հաճոյանալ (96) – Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունւոյ յաչս Խոսրովու արքային:

**Մովսես Կաղանկատվացի**

1. Դնել զլուխն (12) – Եւ տեսլեամբ յայտնեալ սրբոյն Եղիշայի տարան հանգուցին զնշխարս նորա, ուր եդաւ զլուխն յաւանին Ուռեկան՝ ի ձեռն սրբոյ քահանային Ստեփաննոսի:

2. Ահ անկանել (18) – Եւ ահ անկաւ ինձ մեծ և ահագին և բարձրագոյն քան զերկինս երկնից և խորագոյնս քան զներքին կիսագունդն:

3. Ընդ պատմութեամբ արկանել (26) – Այլ որչափ միտքս իմ այժմ զքեզ սիրեն, և մարթ էր զայն բանիւ ընդ պատմութեամբ արկանել…

4. Զգլուխն ընդ երկիր ածել (53) – Եւ մանկանն սկսեալ և զգլուխն ընդ երկիր ածեալ՝ պատմէր զխորհուրդ չար աղանդոյն:

5. Յանպատրաստ ունել (131) – Եւ խորհէր ի մտի իւրում յան-պատրաստ ունել զմեծ թագաւորն Խոսրով:

**Արիստակես Լաստիվերցի**

1. Ի մտի արկանել (8) – Սա ի մահուան թագաւորին խորհուրդ վատ ի մտի արկեալ, դաշնակից լինի Գէորգեայ թագաւորել յարե-ւելս:

2. Ճաղ և ծանակ առնել (9) – Որ և զԱսորւոյ եպիսկոպսն տա-րեալ ի Կոստանդնուպօլիս, ճաղ և ծանակ արարեալ, հրամայէ խու-ղել զմօրուսն…

3. Ի ծուփս անկանել (27) – Վասն որոյ ի ծուփս անկեալ, միոյ բանից ոչ հաւանէին, քանզի եբարձ Աստուած զիմաստութիւն ի խորհրդոց, նոցա վասն չխնդրելոյ նոցա զնա:

4. Սրակոտոր առնել (34) – Իսկ Սուլտանն իբրեւ ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել:

5. Յանհոգս կալ (34) – … եւ քաղաքացիքն յայս ապաստան եղեալք ի ծովն եւ յամրոցն, յանհոգս կային:

**Մատթեոս Ուռհայեցի**

1. Դաշինս առնել (10) – … և ի ծածուկ արար ընդ նմա դաշինս սպանանել զՆիկիփօռ թագաւորն…

2. Ոխս ի սիրտ առնուլ (16) – Յայնժամ ոխս առեալ ամիրային ի սիրտ իւր, և գաղտ յայլ զօրացն ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն…

3. Ի բերան սրոյ կոտորել (26) – … և բազմութիւնք զօրաց մերոց հալածական արարին զնոսա և ի բերան սրոյ կոտորեցին:

4. Ի գերութիւն մատնել (30) – Եւ անտի յարուցեալ գնացաք ի Բիբղոն հին և ամուր բերդն և զայն ևս պատերազմեալ առաք և զբնա-կիչս նորա ի գերութիւն մատնեցաք:

5. Քմինս ղնել (30) –… և հրամայեցաք քմինս ղնել և դարանս մահու գործեցաք նոցա:

**Կիրակոս Գանձակեցի**

1. Չկենցաղս լնուլ (34) – … և նա ի նոյն ամի <u>ելից զկենցաղս</u>՝ յիշատակ բարի թողեալ ապագայիցս…

2. Ընդ վայր թողուլ (39) – Իսկ մարդասէրն աստուած <u>ոչ եթող</u> զյուսացեալսն իւր <u>ընդ վայր</u>…

3. Զսիրտս դարձուցանել (64) – … և <u>դարձուցէ</u> աստուած <u>զսիրտս</u> զօրաց քոց ոչ առնել զկամս քո:

4. Ի նոյն միտս կալ (86) – Իսկ նա <u>ի նոյն միտս</u> ամբարշտութեան <u>կացեալ</u>՝ քամահէր զամենեքումբք:

5. Հանել ի մտաց (102) – Եւ այրն <u>ոչ հանէր ի մտաց</u> իւրոց զիրսն, զոր գործեցին հոռոմք ընդ թագաւորն Գագիկ…

Գրաբարի դարձվածքների քննության հետաքրքրական կողմերից մեկն էլ բնագրերում տեղ գտած իմաստափոխված դարձվածքների վերհանումն է, այսինքն՝ այն դարձվածքների, որոնք հեղինակը գործածել է այնպիսի իմաստներով, որոնք վկայված չեն Ռ. Ղազարյանի դարձվածաբանական բառարանում: Սույն երևույթը վերաբերում է հատկապես V դ. պատմագրության մեջ վկայված դարձվածքներին: Դիցուք՝ Ագաթանգեղոսն իր երկում 7 դարձվածքներ կիրառել է այնպիսի իմաստներով, որոնք նշված չեն Ռ. Ղազարյանի բառարանում: Դրանք են՝ «ընդ միտ ածել» (6), որ բառարանում ունի «մտածել, խորհել» իմաստները, սակայն Ագաթանգեղոսը կիրառում է «հիշել» իմաստով: «Ի մտի դնել» (116)-ը բառարանում ունի «մտքում դնել, մտադիր լինել» իմաստները, իսկ երկում «մտածել» իմաստն է արտահայտում, «ի մտաց անկանել» (116)-ը բառարանում ունի «խելքը կորցնել, ցնորվել» իմաստը, բայց երկում «մոռանալ» իմաստն է կրում, «զմիտս հաճել» (118)-ը Ռ. Ղազարյանը ներկայացնում է «հաճոյանալ» իմաստով, երկում, սակայն, այն «համոզել» իմաստն ունի, «ի վերայ հասանել» (126)-ն ունի «հասկանալ» և «հարձակվել» իմաստները, մինչդեռ Ագաթանգեղոսն այն գործածում է իմաստային այլ նրբերանգով՝ «գալ, հասնել» (վտանգի հասնելը): «Առաջի դնել» (248)-ն ունի «մտքում դնել» և «սկսել» իմաստները, բայց պատմիչը գործածում է «առաջադրել» իմաստով, «ձգել զձեռս» (112)-ն ունի «ձեռք բարձրացնել, վնասել» իմաստը, մինչդեռ երկում

գործածվում է «օգնություն խնդրելու համար ձեռք մեկնել» իմաստով: Մեկը ներկայացնենք մեջբերումով՝ «Եւ զայն ոչ էր եղեալ ի մտի զամօթն նախատանացն, այլ ի տեսիլ սիրոյ նորա ջեռեալ՝ տրտմեալ ընդ մահ աղջկանն, տխրացեալ սգայր»:

Փ. Բուզանդը 6 դարձվածք գործածում է այնպիսի իմաստներով, որ Ռ. Ղազարյանի բառարանում հիշատակված չեն: Այսպես՝ «առաջի ածել» (34)-ը բառարանում կրում է «աչքի՝ մտքի առաջ բերել, մտածել» իմաստը, երկում հանդես է գալիս «մոտ բերել» իմաստով, «յայտ առնել» (42)-ը բառարանում ունի «հայտնել, հայտնի դարձնել» իմաստները, բայց Բուզանդը այն կիրառել է «բացատրել» իմաստով, «ի մտի դնել» (58)-ը բառարանում կրում է «մտադիր լինել» իմաստը, սակայն պատմիչը «հիշել, մտաբերել» իմաստով է գործածում, «ի բաց կալ» (76)-ը բառարանում ունի «հեռու մնալ, հետ կանգնել» իմաստը, իսկ երկում՝ «բացված մնալ», «խանգար առնել» (198)-ն ունի «խռովություն գցել» իմաստը, որ երկում փոխվել և ներկայանում է «խանգարել» իմաստով, «հանգիստ առնել» (350)-ն ունի «հանգստանալ» իմաստը, որը երկում փոփոխվել և արտահայտում է «հանգիստ տալ» իմաստը: Այսպես՝ «Եւ դրունք տաճարին ի բաց կային, և ոք հուպ չիշխէր երթալ»:

Եղիշեն 3 դարձվածք երկում գործածել է այնպիսի իմաստներով, որ Ռ. Ղազարյանի բառարանում չեն վկայվել: Դրանք են՝ «միտ դնել» (64), որ բառարանում ունի «ուշադրություն դարձնել» իմաստը, իսկ երկում «միտ դնել» իմաստն է արտահայտում, «յանձն առնուլ» (174)-ը բառարանի «հանձն առնել» իմաստի փոխարեն երկում կրում է «վստահել» իմաստը, «բուռն հարկանել» (178)-ը «բռնել» իմաստի փոխարեն երկում գործածված է «ձեռնարկել» իմաստով, օրինակ՝ «Եւ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսայր. որոյ և ձախող իրացն իսկ բուռն հարեալ էր նորա»:

Մ. Խորենացու պատմության մեջ առկա է ընդամենը 1 դարձվածք, որ երկում գործածված է Ռ. Ղազարյանի բառարանում չվկայված իմաստով: Խոսքը «ի վերայ հասանել» (264) դարձվածքի մասին է, որը թեև բառարանում ունի «հասկանալ» և «հարձակվել» իմաստ-

ները, երկում գործածված է «գալ, հասնել» նշանակությամբ՝ «Եւ ոչ ինչ յամեցին դատաստանքն Աստուծոյ <u>հասանել ի վերայ</u>»:

Դ. Փարպեցու երկում 8 դարձվածքներ կիրառված են այդ բառարանում չվկայված իմաստներով: Դրանք են՝ «յանձն առնուլ» (44), որ բառարանում ունի «հանձն առնել» իմաստը, երկում, սակայն, տարբեր համատեքստերում այլ իմաստներ է արտահայտում, մի դեպքում՝ «հանդուրժել», մյուս դեպքում՝ «վստակել», «ի միտս հաստատել» (52), որ բառարանում ունի «որոշել» իմաստը, բայց երկում ներկայացված է «մտադրվել» իմաստով, «ի բաց մերժել» (52)-ը, որ ունի «հեռանալ, փախչել» իմաստները, երկում գործածված է «հեռացնել» նշանակությամբ, «զմտաւ ածել» (116)-ը բառարանում ունի «մտածել» իմաստը, բայց երկում այն հանդես է գալիս նաև «հիշել» իմաստով, «սպաս մատուցանել» (206)-ն ունի «ծառայություն մատուցել» իմաստը, բայց այստեղ՝ երկում, գործածված է «շահել» իմաստով, «յայտ առնել» (134)-ը «հայտնի դարձնել» իմաստն ունի, բայց Փարպեցին օգտագործում է «ընտրել» նշանակությամբ, «դնել զանձն» (136) դարձվածքը բառարանում ունի «տապալել» իմաստը, սակայն պատմիչը օգտագործում է «նվիրվել» իմաստով, «ի բաց դառնալ» (158)-ն ունի «վերադառնալ» իմաստը, բայց երկում կիրառվել է «հեռանալ» նշանակությամբ: Օրինակ՝ «…բնաւ և յիշեմ իսկ ոչ, միայն թէ <u>ի բաց դառնայք</u> ի խրատուէ և ի բանից Վարդանայ, և մի՛ կորնչիք ընդ դմա»:

Աշխատության այս հատվածում անդրադառնանք պատմագրական բնույթ չունեցող մի երկի, որը պատկանում է դատաիրավական ոլորտին, միջնադարյան օրենսգիրք է՝ ցույց տալու համար գրաբարյան բառապաշարի դարձվածային հարստությունը նաև մասնագիտական նեղ ոլորտներում եզրաբանության մակարդակով: XI-XII դդ. հայ մատենագրության նշանակալի և եզակի գործերից է Դավիթ վարդապետ Ալավկա Որդու կանոնագիրքը, որը հայ իրավագիտության առաջին աշխարհիկ օրենսդրությունն է: Դավիթ Ալավկա Որդու կենսագրության վերաբերյալ տեղեկությունները սուղ են: Հայտնի է, որ ծնվել է 1065 թ. Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում: Ստացել է հիմնարար կրթություն, հմտացել աստվածաբանության

բնագավառում, զբաղվել մանկավարժությամբ, արժանացել վարդապետի աստիճանի: Կիրակոս Գանձակեցին Դավթին անվանել է «սուրբ լուսավորիչ», իսկ ավելի ուշ շրջանի մատենագիր Ազարիա վարդապետ Սասնեցին՝ «կանոնատառս սուրբ վարդապետ Դաւիթ»[37]:

Դավիթ Ալավկա Որդին իր հեղինակած կանոնագիրքը՝ «Կանոնական աւրենսդրութիւնը», շարադրել է 1130 թ.՝ ի պատասխան Արքայութիւն անունը կրող քահանայի հարցումների: Կանոնագիրքն անմիջապես մտել է շրջանառության մեջ և տարածվել՝ կանոնակարգելով հայ կյանքի տարբեր բնագավառները: Այս իրողությունը հավաստում են Դավթի կրտսեր ժամանակակիցներ Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Մխիթար Այրիվանեցին և այլք[38]:

«Կանոնական աւրէնսդրութիւն» երկը բաղկացած է «Նախադրութիւնից» և 97 հոդվածներից: Հեղինակը դրանք շարադրել է վաղուց ի վեր գործածության մեջ գտնվող սովորութային իրավունքի նորմերի խստագույն և մանրակրկիտ հաշվառմամբ: «Աւրէնսդրութեան» սկզբնաղբյուր են եղել Աստվածաշունչը, մասնավորապես՝ Մովսես մարգարեին վերագրվող Հին կտակարանի Հնգամատյանը, հայ կանոնական և սովորութական իրավունքը, եկեղեցու հայրերի համապատասխան երկասիրություններն ու ժողովրդական ավանդությունները[39]:

Կանոնագիրքը բացառիկ ու արժեքավոր վկայություններ է պարունակում ժամանակի հայոց կենցաղի, վարքուբարքի, սովորույթների, քրեական ու քաղաքացիական իրավունքի նորմերի ըմբռնումների մասին:

Դավիթ Ալավկա Որդին պարզ, հստակ և անհրաժեշտ դեպքում մանրամասն բացատրություններով անդրադարձել է ժամանակի

---

[37] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 116:

[38] Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, Եր., 2012, էջ 675:

[39] **Սաֆարեան Գ. Հ.**, Դաւիթ Ալաւկայ Որդու իրաւաքաղաքական հայացքները, «Պատմաբանասիրական հանդէս», 1988, № 4 , էջ 115 և հտ.:

մեղսագործություններին, դատապարտել հմայություններն ու սնահավատությունները, աղանդավորականությունը, անառակությունը և կեղծ բարեպաշտությունը: Այսինքն՝ այս երկը ժամանակի լեզվամտածողության բացահայտման հույժ արժեքավոր աղբյուր է, իսկ դարձվածքները լեզվամտածողության յուրահատկությունների դասական վկայություններ են:

«Կանոնական աւրէնսդրութեան» դարձվածային միավորները նախ բնութագրենք ըստ բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ գերադաս անդամների իմաստային բովանդակության: «Կանոնական աւրէնսդրութիւնից» դուրս ենք գրել մոտ 110 դարձվածք և դարձվածային արտահայտություն:

Գրաբարյան դարձվածքներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք խորքային մակարդակում արտահայտում են հայության մտածողության մեջ կատարված տեղաշարժերը:

Ըստ դարձվածային միավորների (ԴՄ) բաղադրիչների քանակի՝ ընդունված է տարբերակել նվազագույնը երկանդամ կառույցներ, որովհետև դարձվածքը նախ և առաջ կայուն բառակապակցություն է՝ վերաիմաստավորված բաղադրիչներով, ապա՝ եռանդամ, քառանդամ և ավելի՝ տվյալ լեզվում հնարավոր շարահյուսական հարաբերություններին համապատասխան[40]:

Վերլուծելով «Կանոնական աւրէնսդրութիւն» երկի դարձվածքներն ըստ բաղադրիչների քանակի՝ պարզ է դառնում, որ այստեղ ևս գերակշռում են երկանդամ և եռանդամ բայական կամ անվանական ԴՄ-ները: Բերենք բնութագրիչ օրինակներ՝ նշելով, որ նախդիրները համարել ենք ԴՄ-ների ինքնուրույն բաղադրիչներ, որոնք ունեն և՛ ձևային, և՛ բովանդակային տարբերակիչ դեր:

*Երկանդամ անվանական դարձվածքներ՝* **երկիւղ Աստուծոյ** (էջ 679) – երկնայինի հանդեպ վախ**, ծնունդ փրկական** (էջ 679) – Աստծո ծնունդ, **կառուցումն մտաց** (էջ 679) – խորհրդածություն, **մասունք բանի** (էջ 679) – ասված խոսքեր**, կամք Աստուծոյ** (էջ 679) – Աստծո

---

[40] **Գիլբարյան Ն.**, Բարսեղ Կեսարացու «Գիրք Պահոցի» գրաբար թարգմանության դարձվածքների իմաստակառուցվածքային բնութագիրը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, N 1 (31), էջ 41-42:

կամքը, **մարմնաւոր կեանք** (էջ 686) – աշխարհիկ կյանք, **սուրբ խոր-հուրդ** (էջ 689) – Աստծո կամք և այն: Նշենք, որ անվանական դարձ-վածքներն իրենց քանակով և կիրառությամբ էապես զիջում են բա-յական ԴՄ-ներին:

*Երկանդամ բայական դարձվածքներ*՝ **անծնունդ մնալ** (էջ 679) – անպտուղ, ամուլ լինել, **խելամուտ լինել** (էջ 679) – ողջախոհ լինել, **նշանակ տալ** (էջ 680) – նշան տալ, ակնարկել, **յանձն առնել** (էջ 680) – ստանձնել պատասխանատվությունը, **սեղանն մատուցանել** (էջ 680) – սեղան բացել և հրավիրել, **յաղ արկանել** (էջ 680) – իմաստ հա-ղորդել, **անհամութիւն համեմել** (էջ 681) – հարթել լարված, տհաճ վի-ճակը, **անփոյթ առնել** (էջ 681) – անտեսել, արհամարհել, մոռանալ, **գիտութեամբ լինել** (էջ 681) – իմաստնանալ, կրթվել, **պէտս առնուլ** (էջ 683) – կիրառել, օգտագործել, **սիրտն առնել** (էջ 683) – սիրաշահել, **հուպ լինել** (էջ 684) – հասու լինել, **մերձ հասուցանել** (էջ 685) – մո-տեցնել, **կին առնուլ** (էջ 686) – ամուսնանալ, **տեսանել աչաւք** (էջ 687) – ականատես լինել, **խորհուրդս խառնել** (էջ 687) – խորհրդակցել, **առնել յանգէտս** (էջ 688) – հիմար ձևանալ, **հաղորդ տալ** (էջ 689) – իրազեկել, **վերաբերութիւն առնուլ** (էջ 690) – վերաբերմունքի արժա-նանալ, **աղաւթս առնել** (694) – աղոթել, **շնորհուկս առնել** (694) – մե-ծարվել, **արտաքս ելանել** (էջ 696) – ծնվել, **մերձ կալ** (էջ 698) – մոտ, մտերիմ լինել, **դեպ լինել** (էջ 718) – պատահել և այլն:

Եռանդամ ԴՄ-ները հիմնականում բայական են, անվանական կառույցները խիստ սակավ են: Բերենք բազմակի կիրառություն ու-նեցող նման կաղապարների հետաքրքիր օրինակներ:

*Եռանդամ դարձվածքներ*՝ **ունել ի գիտութիւն** (էջ 680) – հասու լինել, **ի բաց հանել** – բացահայտել, մերկացնել, **ընկենուլ ի սպաս** (էջ 681) – ծառայության դնել, գործարկել, **ի բաց ընկենուլ** (էջ 681) – դեն նետել, հեռացնել, **քակել ի հիմանց** (էջ 681) – հիմնահատակ քանդել, **ի բաց կորել** (էջ 682) – վանել, հեռացնել, **ի ներքո կալնուլ** (էջ 682) – ներսից բացահայտել, **ի չափ հասանել** (էջ 684) – չափահաս դառնալ, **ի պէտս բերել** (էջ 684) – ծառայեցնել, օգտագործել, **ի բաց խորտա-կել** (էջ 685) – ջարդուփշուր անել, **դնել ի պէտս** (էջ 685) – կիրառել, **ի բաց կալ** (էջ 686) – հեռու մնալ, **ի բաց խոտել** (էջ 684) – մերժել, **ի**

**ներքս մտանել** (էջ 690) – ներթափանցել, խորամուխ լինել, **ի բաց կալ** (էջ 690) – հեռու մնալ, ձերբազատվել, **ի բաց թողուլ**, (էջ 690) – ազատել, ներել, **արկանել ի բերան** (էջ 692) – բերանը գցել, **գնալ ի գինըմպութիւն** (էջ 694) – զբաղվել հարբեցողությամբ, **անկանել ի քունն** (էջ 696) – քնել, **հաւանեցուցել բանիւ** (էջ 696) – խոսքով հավանել, **ի գիրկս առնուլ** (էջ 696) – գրկել, փաղաքշել, **ի մարմնի հաղորդել** (էջ 699) – մարմնապես շփվել, **այրն կին առնել** (էջ 700) – կնաբարո դառնալ, **զսողոմացոցն գործել** (էջ 700) – սոդոմական մեղք գործել, բղջախոհությամբ զբաղվել, **զպսակն ապականել** (էջ 701) – դավաճանել ամուսնուն կամ կնոջը և այլն:

Մեր քննած բնագրում վկայված են նաև որոշ քառանդամ դարձվածքներ՝ հիմնականում *զ* և *ի* նախդիրների կիրառությամբ ստեղծված, ինչպես՝ **վերստին ածել իւղովն սրբութեան** (էջ 685) – մաքրագործել, **առնուլ ի պէտս խորհրդոյն** (էջ 685) – խորհուրդ հարցնել, **զշնութիւն զսողոմական** (էջ 686) – անառակություն, բղջախոհություն, **խորհուրդ բանին առաջի արկանել** (էջ 687) – խորհուրդ տալ, **ի միմյանց բերան ածել** (էջ 692) – իրար բերան գցել, **Աստուած ի սիրտն հայի** (էջ 695) – Աստված մարդուն սրտով է գնահատում:

«Կանոնական աւրէնսդրութիւն» երկում վկայված են նաև գրաբարին բնորոշ դարձվածային այնպիսի բայական հարադրություններ, որտեղ բայը և նրա լրացումը նույնարմատ են՝ **երկնել երկ** (էջ 679) – հիանալի ստեղծագործություն ստեղծել: Բայց նշենք, որ նման կառույցի ԴՄ-ներ «Կանոնական աւրէնսդրութեան» մեջ եզակի են, քանի որ երկի լեզուն խիստ տարբերվում է դասական գրաբարից:

Արդի հայերենի դարձվածքների վիճակագրական պատկերը նկարագրելիս Խ. Բադիկյանը նշում է. «Ինչքան ավելանում է դարձվածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիվը»[41] :

---

[41] **Բադիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 206:

Գրաբարի առումով գրեթե համարժեք հարաբերակցություն ունենք նաև «Կանոնական աւրէնսդրութեան» ԴՄ-ների կառուցատիպերի նկարագրության ժամանակ:

Երկում թվով գերակշռում են եռանդամ դարձվածքները, բայց նրանց քանակը համադրելի է երկանդամ միավորներին, ընդ որում՝ երկանդամ դարձվածքները հիմնականում կազմված են ***առնել, լինել, ունել*** բայերով և անուն կամ մակբայ խոսքի մասերի միջոցով, որոնք արտահայտում են բայ-ստորոգյալ և խնդիր կամ պարագա շարահյուսական կապը: Անվանական դարձվածքների դեպքում որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ կայուն փոխաբերական կապակցություններ ունենք: Եռանդամ դարձվածքները հիմնականում կազմված են ***ի*** նախդրից և գոյականների թեքված ձևերից:

Դավիթ վարդապետ Ալաւկայ որդու «Կանոնական աւրէնսդրութիւն» երկից առանձնացված ԴՄ-ի իմաստաբանական դասակարգումը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում: Բնութագրենք ԴՄ-ները՝ ըստ իմաստային դաշտերի՝ հաշվի առնելով դրանց գերակա բաղադրիչի իմաստային բովանդակությունը և արտահայտվող ընդհանուր նշանակությունը: Դատաիրավական այս հնագույն փաստաթղթում գերակայում են հետևյալ իմաստային դաշտերին պատկանող միավորներից կազմված կառույցները՝

1. մարմնամասեր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ **տեսանել աչաւք** (էջ 687), **ականջաւք լսել** (էջ688), **արկանել ի բերան** (էջ 692), **ի միմյանց բերան ածել** (էջ 692), **աքոյ տալ** (էջ 694), **ոտն ոչ շարժել (**էջ 694), **ի գիրկս առնուլ** (էջ 696), **արկանել զլեզուն ի բերան** (էջ 699), **ի մարմնի հաղորդեսցի** (էջ 699) և այլն,

2. ֆիզիկական գործողություններ արտահայտող բառերից կազմված ԴՄ-ներ՝ **դիւրագիր առնել** (էջ 679), **սեղանն մատուցանել** (էջ 679), **յաղ արկանել** (էջ 679), **թոյլ տալ** (էջ 680), **ածել ի պէտս** (էջ 683), **ի բաց շրջել** (էջ 683), **պէտս առնուլ** (էջ 683), **հուպ լինել** (էջ 684), **արտաքոյ կալ** (էջ 691), **աշխատ առնել** (էջ 694), **այրն կին արասցել** (էջ 700), **անկար գոլ** (էջ 708), **այց առնել** (էջ 720) և այլն,

3. միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ՝ **ի խորհուրդ ածել** (էջ 679), **ունել ի գիտութիւն** (էջ 679), **ընկալնուլ**

**մտի** (էջ 679), **գիտութեամբ լինել** (էջ 682), **խորհուրդս խառնել** (էջ 687), **առնել յանգէտս** (էջ 688), **գիտութեամբ ուտել** (էջ 704) և այլն,

4. շարժում, տեղափոխություն, փոխադրում նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ **ի բաց ընկենուլ** (էջ 682), **ի բաց հանել** (էջ 683), **ի բաց խոտորել** (էջ 683), **մերձ հասուցանել** (էջ 685) և այլն,

5. տուն, տեղ, բնակավայր նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ՝ **արտաքոյ կացուցանել** (էջ 687), **մտանել յաշխարհս** և այլն:

Ընդհանրացնելով մեր այս հետազոտության արդյունքները՝ նշենք, որ ամենամեծ թիվն են կազմում մարմնամասերից և ֆիզիկական գործողություններ ու միտք, մտածողություն, խոսք արտահայտող բառերից բաղադրված ԴՄ-ները:

Դավիթ Ալավկա Որդին որոշ դարձվածքներ տարբեր օրենքներում և համատեքստերում երբեմն կիրառում է այլազան նշանակություններով: Դարձվածքի բովանդակային պլանի փոփոխությունները, մեր կարծիքով, պայմանավորված են խոսքն ավելի ազդու և բազմանշանակ դարձնելու հանգամանքով: «Կանոնական աւրէնսդրութեան» մեջ վկայված դարձվածքների իմաստային հարստությունը ցույց տալու համար բերենք բնագրային բնութագրիչ օրինակներ.

ա) «Իսկ եթէ ոք գիտաց եւ **անփոյտ արար** աներկեղութեամբ, խաւր պահեսցէ Ճ ծնդրաւ» (էջ 681):

«Ապա եթէ արհամարհէ եւ **անփոյթ առնէ** զայս, նզովի ի կեանս եւ ի մահ» (էջ 687):

«Ապա թէ գիտուն էր եւ ի ծուլութենէ կամ յոխ պահելոյ **անփոյթ արար** կամ արտաքոյ կամ ի պատարագին, զայսցանէ որ դրեցաւ, լուծցի ի կարգէ քահանայութեան» (էջ 693):

*Անփոյթ առնուլ* դարձվածքը մեր բերած նախադասություններում արտահայտում է իրար հետ կապակցված, սակայն տարբերվող հետևյալ երեք իմաստները՝ 1) *միջումնավոր անհարգալից վերաբերմունք ցուցաբերել, 2) անտեսել, 3) մոռանալ*:

բ) «Այլ թէ պղծեալ կերակրոց կամ յըմպելեաց ոք յանգէտս կերիցէ կամ ըմպիցէ, քահանայ ութ աւր **արտաքոյ կայցէ** ի սրբութենէ խորհրդոյ եւ ապա հաղորդեսցի» (էջ 682):

«Այլ թէ երկուաւրեայ ննջխարաւ ոք մատոյց յանգէտս, Գ շաբաթ **արտաքոյ կացցէ** նովին կարգաւն» (էջ 688):

Առաջին նախադասության մեջ *արտաքոյ կալ* դարձվածն ունի «զրկվել» իմաստը, երկրորդում՝ «պատժվել» իմաստը: Սրանք երկուսն էլ ունեն բովանդակային փոխկապակցվածություն, բայց և միևնույն ժամանակ որոշակի տարանջատում, որն էլ երևան է գալիս տարբեր համատեքստերում:

գ) «Այլ թէ ջրախառն մատուցանէ յանգէտս, մինչեւ ցքաշխումն, ուր եւ գիտասցէ, **ի բաց թողեալ** եւ այլ մի մատուսցէ» (էջ 688):

«Իսկ եթէ սովորութեամբ արասցէ զայս, զժամն ամենեւին **ի բաց թողցէ** մինչեւ ապաշխարեալ զղջասցի» (էջ 690):

*Ի բաց թողուլ* դարձվածքը մեր բերած հատվածներում արտահայտում է հետևյալ երկու իմաստները՝ *1) ների, 2) բաց թողնել*:

դ) «Իսկ **ի ներքս անկեալ** փայտն այրեսցին եւ խեցին խորտակեսցի, իսկ երկաթեղէնք պղինձն, արծաթն, ոսկեղէքն մի՛ խորտակեսցին, այլ ջեռցին միայն հրով եւ սուրբ են» (էջ 681):

«Իսկ թէ գինի ունելով նաւն **ի ներքս անկանի**, գինին հեղցի եւ նաւքն քակտի եւ զքարինսն յայլ պէտս առցեն» (էջ 683):

Առաջին նախադասության մեջ *ի ներքս անկանել* դարձվածքը ունի «*ներս գցել, լցվել*», իսկ երկրորդում՝ «*խորասուզել, կործանել*» իմաստը:

ե) «Եթէ ի լեսածն անկցի ցամաք, եթէ պակաս իցէ չափ լղեր չորից կամ հնգից, ամանաւն **ի բաց հանցեն**» (էջ 681):

«Եթէ ի վերայ չոր բանջարի սատակի մուկն, թէ յոլով է, զվերայն **ի բաց հանեալ** եւ այլն սուրբ է» (էջ 682):

«Ապա թէ ի միս կամ ի պանիր կամ յիւղ ըմբռեալ իցեն, զըմբռնեալն կտրեսցեն եւ **իբաց հանցեն** եւ զայլն լուասցեն եւ կերիցեն» (էջ 684):

*Ի բաց հանել* դարձվածքը կարող է արտահայտել երեք իմաստ՝ *1) դուրս թողնել, 2) բացահայտել, 3) նշել, արչանագրել:*

Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ «Կանոնական աւրէնսդրութեան» մեջ մեզ հանդիպած ԴՄ-ներից դարձվածաբանական բառարանում վկայված է մի փոքր մասը՝ մոտ 20 տոկոսը:

Եզրափակելով Դավիթ վարդապետ Ալավկա որդու «Կանոնական օրենսդրության» երկում կիրառված դարձվածքների մեր քննությունը՝ նշենք, որ XI-XII դդ. գրաբարը, որը համարվում է իր մայրամուտը թևակոխած գրական լեզու, իրականում ոչ միայն պահպանել է դարձվածաստեղծ իր ներուժը, այլև բազմապատկել: Երկում վկայված են այնպիսի դարձվածքներ, որոնք արտահայտում են տարբեր իմաստներ, այսինքն՝ դարձվածային բազմիմաստությունը XI-XII-րդ դդ. գրաբարում խորանում էր:

Դատաիրավական գրականության լեզվում գրաբարյան դարձվածքների կիրառումը բնավ արհեստական չէ, ոչ էլ հասարակաբան, դրանց շնորհիվ քաղաքացիական, քրեական և աշխատանքային օրենսդրության մեր քննած հոդվածները դարձել են ավելի դյուրընկալ և ազդեցիկ՝ հաճախ ձեռք բերելով եզրույթի արժեք:

## ԳԼՈՒԽ 2
## ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ, ՀԱՄԱՆՈՒՆ, ՀԱՐԱՆՈՒՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ V- XIII ԴԴ. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Սույն գլխում ներկայացված են մեր ուսումնասիրած աղբյուրներում տեղ գտած հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն դարձվածքները, որոնք, իսկապես, այդ երկերի բառապաշարի հարստության վկայությունն են: Այս խմբերի դարձվածքների քննությունը կամբողջացնի մեր պատկերացումը մի կողմից դարձվածքների, մյուս կողմից՝ տվյալ հեղինակի լեզվամտածողության մասին:

Բոլոր աղբյուրներում մեծամասնություն են կազմում հոմանիշ, ապա՝ հականիշ դարձվածքները, իսկ համանուն և հարանուն դարձվածքները բավականին սակավադեպ են, սակայն դրանց քննությունը նույնպես կարևոր ենք համարում մեր աշխատանքի բուն նյութի նախապատրաստման ճանապարհին:

Արդ միջստմիջե ներկայացնենք յուրաքանչյուր հեղինակի օգտագործած հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն դարձվածքները:

### ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն հայոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ժամ դնել (6) – ժամ տալ (36 ) – ժամադիր առնել (266):
2. Ահափետ առնել (6) – ահաբեկ առնել (80):
3. Զանձն ի մահ դնել (8) – զանձն ի մէջ մահուան և կենաց դնել (10) – մտանել ի դրունս մահու (18):
4. Ի բաց կորուսանել (24) – հիմն ի վեր առնել (24) – հատ ընկենուլ (330) – ի բաց բառնալ (376) – ի միջոյ բառնալ (436) – ի բաց քերել (466):
5. Ունկնդիր լինել (16) – զունկնդրութիւն մատուցանել (226):
6. Դիաթաւալ կացուցանել (30) – յերկիր կործանել (30):
7. Զհետ մտանել (26) – զկնի լինել (30)- զհետ երթալ (396):
8. Զղէմ ունել (26) – ի դիմի հարկանել (160):

9. Ի բաց առնել (110) – ի բաց մղել (306) – ի բաց անցուցանել (306):

10. Յանձին ունել (10 ) – յանձին պահել (182) – փոյթ ի վերայ ունել (444) ևն:

**Դարձվածքների հականշային շարքեր**

Ի ձեռն տալ (18) – ի ձեռն առնուլ (426):

1. Յանձին ունել (10) – անտես առնել (388):
2. Անտես առնել (388) – ուշ դնել (480):

**Համանուն դարձվածքներ**

1. Ի մտի դնել – ա) մտադիր լինել (68), բ) մտածել (116):
2. Ի վերայ հասանել – ա) հասկանալ, հասկանալ (258), բ) հարձակվել (120):

## ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Պատմութիւն հայոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ընդ առաջ երթալ (32) – ընդ առաջ ելանել (40):
2. Հալածական տանել (30) – հալածական առնել (184) – հալածանս հարուցանել (198):
3. Հուպ լինել (40) – հուպ երթալ (76) – մերձ լինել (186):
4. Այպն առնել (76) – ծաղր առնել (80):
5. Զանց առնել (12) – առ ոչինչ համարել (22) – անփոյթ առնել (60) – ընդ ոտն հարկանել (68):
6. Փախստական լինել (88) – ի փախուստ դառնալ (228) – փախստական գնալ (388):
7. Փախստական առնել (226) – փախստական արկանել (228) – փախստականս տանել (236):
8. Աղօթս մատուցանել (16) – յաղօթս կալ (22) – աղօթս առնել (38) – յաղօթս մտանել (166):
9. Ընդ միտ ածել (22) – ընդ միտս խորհել (154) – խորհուրդ առնել (184) – խորհուրդ խորհել (210) – զմտաւ ածել (250):

10. Աղիողորմ գործել (84) – ի սուգ մտանել (86) – ի սուգ ընկղմիլ (166) – կոծ դնել (394) – ի կարի առնել (394) են:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Ի մահուանէ թափել (144) – չարամահ առնել (138)//մահուան վճարել (144)// անմի առնել (244)// ի մահ անկանել (340):
2. Ակն առնուլ (50) – այպն առնել (40)// ծաղր առնել (80):
3. Ի ձեռանէ թողուլ (174) – յանքի հարկանել (74):
4. Սրտաբեկ կացուցանել (38) – զմիտս հաճել (164):
5. Ի բաց գնալ (74) – հուպ լինել (40)// հուպ երթալ (76)// մերձ լինել (186):
6. Ի կենդանութիւն դարձուցանել (124) – ի մահ անկանել (340) են:

**Համանուն դարձված**

Ի վերայ հասանել – ա) համոզվել, հասկանալ (184), բ) հարձակվել (82):

**Դարձվածքների հարանունային շարքեր**

1. Ի բուռն արկանել (234) – ի բուռն անկանել (234):
2. Զմիտս հանել (248) – զմիտս հաճել (164):
3. Յանձն առնել (46) – յանձն առնուլ (50):

## ԵՂԻՇԵ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Սպաս ունել (36) – ի ծառայութիւն կալ (44) – ի սպասու կալ (322) – սպաս տանել (370):
2. Աիաբեկ առնել (14) – սրտաթափ առնել (128) – ահ արկանել (192):
3. Ձղէմ ունել (58) – դիմակաց լինել (118) – ընդդէմ կալ (170) – առաջի կալ (180) – ի դիմի հարկանել (256) – դիմադարձ լինել (342):
4. Ի ձեռս տալ (130) – ի ձեռս մատնել (254):

5. Ի բաց գնալ (74) – ի բաց ելանել (82) – ի բաց կալ (84):

6. Ի բաց բառնալ (210) – ի բաց առնել (314) – ի բաց մերժել (324):

7. Սկիզբն առնել (12) – բուռն հարկանել (178):

8. Աղօթս առնել (56) – յաղօթս կալ (302):

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Հուպ երթալ (370) – ի բաց գնալ (74) – ի բաց ելանել (82):

2. Սկիզբն առնել (12) – ի գլուխ տանել (314):

3. Եղջեւր ածել (12) – զմիտս հաճել (168):

4. Սատար լինել (8) – առ ոչինչ համարել (122):

**Հարանուն դարձվածք**

Յանձն առնել (22) – յանձն առնուլ (52):

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն հայոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ձեռնտու լինել (177) – զօրավիգն լինել (208):

2. Փոյթ յանձին ունել (8) – պէտ առնել (8) – պէտ յանձին ունել (10) – խնամ տանել (30) – փոյթ առնել (175):

3. Բուռն հարկանել (11) – ձերբակալ առնել (44) – զբռամբ ածել (49) – ի բուռն առնուլ (78) – ի բուռն ածել (163) – ի կալանս ըմբռնել (197):

4. Հաւ առնել (23) – սկիզբն առնել (75) – ձեռն արկանել (327):

5. Ի բաց թողուլ (108) – ի բաց քեցել (109) – ի բաց ընկենուլ (112):

6. Կոծ առնուլ (284) – նստել ի սուգ (285) – ի սգի լինել (330) – յարտասուս հարկանել (354):

7. Հալածական արկանել (45) – թեկն ածել (121) – հետամուտ լինել (127) – զհետ մտանել (172) – զհետ երթալ (192) – զհետ գալ (263) – ի թիկունս ընկենուլ (266):

8. Թիկունս դարձուցանել (270) – առ ոչինչ համարել (170) – զանց առնել (336):

9. Ընդդէմ ունել (127) – ի դիմի հարկանել (45) – ընդդիմակաց լինել (132) – ընդդիմամարտ լինել (307):

10. Քաջարշաւ լինել (330) – արփայազնաց լինել (331) ևն:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Խնամ տանել (30) – առ ոչինչ համարել (170):
2. Փոյթ առնել (175) – զանց առնել (336):
3. Յուղարկ երթալ (183) – ընդ առաջ լինել, գնալ (133):

**Համանուն դարձվածք**

Ի վերայ հասանել – ա) հասկանալ (31), բ) հարձակվել (44):

**Դարձվածքների հարանունային շարքեր**

1. Յանձն առնել (38) – յանձն առնուլ (79):
2. Փախստական արկանել (46) – փախստական անկանել (55):

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Պատմութիւն հայոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ձեւս իրացն գտանել (44) – հնարս իրացն գտանել (44):
2. Ի գլուխ հանել (52) – ի գլուխ տանել (92):
3. Դէտ ակն ունել (24) – ակն ունել (226):
4. Ի բաց բառնալ (44) – ի բաց հանել (276) – ի բաց տանել (390):
5. Տալ փառս (212) – շքեղ առնել (396):
6. Ի միտ առնուլ (34) – իրազգած լինել (132):
7. Առաջի կալ (320) – զդէմ ունել (384) – ընդդէմ կալ (402):
8. Ի բաց ընկենուլ (14) – ի բաց թողուլ (288) – ի բաց մերժել (336):
9. Փախստեայ լինել (154) – ի փախուստ դառնալ (168) – փախստական լինել (292):

10. Փախստական առնել (154) – ի բաց փախուցանել (354) եւն:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Ուրախ լինել (32) – ի սուգ ընկղմիլ (46):
2. Կալ ի հնազանդութիւն (26) – յուրաստ լինել (56):
3. Առնուլ դուլ և դադար (138) – հալածական առնել (316):
4. Տեղի տալ (368) – ի վերայ հասանել (308):
5. Ի կոր կործանել (304) – ընդդէմ կալ (402):

**Համանուն դարձվածք**

Ի մէջ առնուլ – ա) շրջապատել (18), բ) մեջբերել (370):

**Դարձվածքների հարանունային շարքեր**

1. Արտասուս արկանել (62) – յարտասուս հարկանել (82):

Ի բաց բառնալ (44) – ի բաց դառնալ (158):

## ԿՈՐՅՈՒՆ, Վարք Մաշտոցի

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ի կիր արկանել (74) – ի մէջ առնուլ (88) – ի գործ բերել (110) – ի գործ արկանել (116):
2. Փոյթ առնել (84) – փոյթ ի վերայ ունել (108):
3. Յայտ առնել (74) – ազդ առնել (90):
4. Միջամուխ լինել (84) – թեւամուխ լինել (84):
5. Ընդ առաջ ելանել (88) – ընդ առաջ լինել (120):
6. Զմտաւ ածել (70) – խորհուրդ առնել (112):
7. Ի թիկունս իջանել (130) – ի թիկունս հասանել (132):
8. Սպասաւորութիւն հարկանել (84) – զծառայութիւն հարկանել (132):
9. Յանձն առնուլ (110) – յանձին կրել (126):
10. Ինքնատես լինել (142) – ականատես լինել (144) եւն:

**Համանուն դարձվածքներ**

1. Առաջի դնել – ա) մտադրվել (112), բ) բացատրել (118), գ) տրամադրել (121):

2. Առաջի արկանել – ա) ներկայացնել (98), բ) առաջարկել (110):

3. Ի ձեռն առնուլ – ա) սկսել (102), բ) վերցնել (118):

4. Յայտ առնել – ա) հայտնել (74), բ) նշանակել (145):

**Դարձվածքների հարանունային շարքեր**

1. Ի կիր արկանել (74) – ի գիր արկանել (82):
2. Ընդ առաջ ելանել (88) – ընդ առաջ լինել (120):
3. Յանձն առնուլ (110) – յանձն առնել (114):

## ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ աղանդոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ի բաց պարզել (1) – ի բաց ընկենուլ (13):
2. Առաջի դնել (1) – ի մտի դնել (3) – ի միտ արկանել (16):
3. Ի միջոյ բառնալ (7) – ի միջոյ կորուսանել (15):
4. Երկրպագութիւն մատուցանել 92) – երկիր պագանել (10):
5. Վնաս առնել (12) – վնաս գործել (12):
6. Միտ դնել (26) – զմտաւ ածել (33) – ի մտի խորհել (38) – ի միտս հայել (76) – ընդ բերան ածել (157):
7. Պատասխանի առնել (19) – տալ պատասխանի (34):
8. Ձեռջ և ապաշաւ լինել (38) – արկանել ընդ ապաշխարութեամբ (97) – ընդ ապաշխարութեամբ մտանել (98) – ի զղջումն գալ (21):
9. Մահ առնել (23) – ի կենաց պակասել (34):
10. Մահապարտ լինել (79) – գլխապարտ գտանել (84):

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Հակառակ կալ (13) – զկամս առնել (26):
2. Յաշխարհ գալ (77) – ի կենաց պակասել (34):

3. Յետս կալ (14) – չունկնդիր լինել (14):
4. Յանձն առնուլ (16) – զանց առնել (94) են:

## ՍԵԲԵՈՍ, Պատմութիւն

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ձերբակալ առնել (53) – ձերբակալ ունել (69) – բուռն հարկանել (92) – ի բանտ դնել (96):

2. Զանց առնել (68) – առ ոչինչ համարել (91) – ընդ մէջ արկանել (126):

3. Անձնատուր լինել (107) – ի ձեռն գալ (50):

4. Աւար առնուլ (89) – յաւարի առնուլ (100):

5. Ի մէջ արկանել (125) – շրջափակ առնել (126):

6. Մաշել ի սուր սուսերի (68) – ի վերայ սուր դնել (70) – սուր սուր հարկանել (86) – հարկանել ի սուր սուսերի (135):

7. Սրբաջունջ առնել (53) – ի միջոյ բառնալ (57):

8. Յաղաւթս կալ (140) – աղաւթս առնել (148):

9. Ահաբեկ լինել (93) – զահի հարկանել (144):

10. Դարան գործել (97) – դարանամուտ լինել (125) – դարանակալ լինել (138) են:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Ի դիմի հարկանել (49) – տեղի տալ (53):
2. Տալ պատերազմ (5) – անձնատուր լինել (107):
3. Ի բաց հատանել (75) – անքակ առնել (155):
4. Ապաստան լինել (68) – առ ոչինչ համարել (91) են:

**Համանուն դարձվածք**

Ի վերայ հասանել – ա) վրա հասնել (գլխին գալ) (66), բ) հասկանալ (133), գ) հարձակվել (108):

**Դարձվածքների հարանունային շարքեր**

1. Ի բաց կալ (52) – ի բաց տալ (128):

2. Ի բաց դառնալ (89) – ի բաց բառնալ (114):

**ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի**

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Հնազանդ կալ (8) – հնազանդ լինել (161) – կալ ի հնազանդութիւն (180):
2. Ի հնազանդութիւն ածել (167) – նուաճել ի հնազանդութիւն (182):
3. Ընդ հակառակս լինել (15) – ընդդէմ կալ (16) – հակառակ կալ (56) – ընդդէմ հարկանել (130):
4. Առ ոտն կոխել (26) – առ ոտն հարկանել (81) – ընդ ոտս առնել (193):
5. Պատերազմակից լինել (278) – մարտակից լինել (289):
6. Չիք լինել (287) – աներևոյթ լինել (332):
7. Խնդալից լինել (71) – ուրախ լինել (179) – ծափս հարկանել (348):
8. Վրէժխնդիր լինել (141) – վրէժ առնուլ (349):
9. Պաշտօն մատուցանել (104) – փառս տալ (332) – պատիւ առնել (346):
10. Ծունր դնել (34) – ծունր կրկնել (151) ևն:

**Հականիշ դարձվածքներ**

1. Հնազանդ կալ (8) – հակառակ կալ (56):
2. Փոյթ յանձին ունել (96) – զանց առնել (312):
3. Յանդիման լինել (19) – ի թաքուստ մտանել (24):
4. Յերկիր անկանել (11) – յոտն կալ (64):
5. Աներևոյթ լինել (72) – ի յայտ ելանել (85):

**Համանուն դարձվածք**

Ի վերայ հասանել – ա) հարձակվել (17), բ) (վրա) հասնել (44):

**Հարանուն դարձվածքներ**

1. Յանձն առնուլ (26) – յանձն առնել (116):
2. Ձեռն տալ (39) – ի ձեռն տալ (113):

## ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, Պատմութիւն

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ի կենաց բառնալ (1) – վճարել ի կենաց (45):
2. Մահու վճարել (1) – զկեանս լուծանել (4) – ի կեանս ելանել (7):
3. Զետղ առնուլ (24) – զկայ առնուլ (27):
4. Ի դէպ ելանել (2) – ի դէպ գալ (47):
5. Ի վերայ հասանել (5) – ի վերայ անկանել (12):
6. Ի դատ կալ (4) – մեղադիր լինել (39):
7. Սուր դնել ի վերայ (5) – ի սուր հարկանել (8) – սրամահ առնել (25) – սրակոտոր առնել (36):
8. Բողոք բառնալ (28) – դժկամակ լինել (39):
9. Յերկիւղի լինել (15) – զահի հարկանել (43):
10. Ատենախօս լինել (41) – զճառս արկանել (47) են:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Դէմ դնել (1) – ընդ կրունկն դառնալ (5):
2. Ընդ միմեանս անկանել (1) – ի խաղաղութիւն գալ (8):
3. Զանգ առնել (1) – հոգ տանել (19) – միտ դնել (34):
4. Ողբս առնուլ (14) – ուրախ լինել (30):

**Համանուն դարձվածքներ**

1. Դարձ առնել – ա) վերադառնալ (6), բ) վերադարձնել (48):
2. Ի վերայ հասանել – ա) հարձակվել (5), բ) (վրա) հասնել, գլխին գալ (47):

**Հարանուն դարձվածքներ**

1. Յանձն առնուլ (3) – յանձն առնել (14):
2. Ի սուր հարկանել (8) – ի սուր անկանել (29):

**ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն**

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Աւար հարկանել (12) – յաւար(ի) առնուլ (28) – աւար առնուլ (46) – աւար արկանել (74) – ալափ տալ (214) – ալափ առնել (270) – յալափ մտանել (280):

2. Աւեր առնել (24) – քարայատակս առնել (24) – քարայատակ կործանել (30) – յաւեր դարձուցանել (30) – հիմն ի վեր առնել (98) – յաւեր և յապականութիւն դարձուցանել (370):

3. Ի սուր սուսերի մաշել (26) – ի բերան սրոյ կոտորել (26) – սրով անցուցանել (40) – ի սուր մատնել (88) – մատնել ի ձեռս սրոյ (94) – ի սուր անկանել (108) – սրոյ անցուցանել (112) – ի սուր սուսերի կոտորել (136) – սրախողխող առնել (152) – ի սուր մաշել (200) – ի բերան սրոյ մատնել (200) – ի բերան սրոյ հաշել (202) – ի վերայ սուր դնել (230):

4. Անտես առնել (42) – առ յոչինչ համարել (134) – զանց առնել (196):

5. Կոծ առնուլ (34) – սուգ զգենուլ (60) – սուգ առնուլ (74) – լալականութիւն առնել (88) – կոծ դնել (106) – ողբս առնուլ (120):

6. Յաղօթս կալ (28) – աղօթս մատուցանել (44) – աղօթս առնել (128):

7. Ի վերայ կոտորած ածել (10) – ի վերայ հասանել (24) – գալ ի վերայ (36):

8. Փախստական լինել (18) – ի փախուստ դառնալ (20) – ի փախուստ ելանել (88) – ի փախուստ լինել (160) – ի փախուստ գնալ (170) – փախստեայ լինել (208):

9. Ի փախուստ դարձուցանել (14) – փախստական առնել (30):

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Ուրախ լինել (8) – կոծ առնուլ (34):
2. Ի փախուստ դառնալ (20) – ի դիմի հարկանել (224):
3. Անտես առնել (42) – միտ դնել (112) են:

**Համանուն դարձվածքներ**

1. Ի վերայ հասանել – ա) հասկանալ (168), բ) հարձակվել (24), գ) (վրա) հասնել (202):

2. Հասու լինել – ա) հաջողվել (124), բ) հասկանալ (400):

**Հարանուն դարձվածքներ**

1. Ի վտանգի արկանել (26) – ի վտանգ արկանել (206):
2. Յանձն առնել (16) – յանձն առնուլ (50):
3. Աւար հարկանել (12) – աւար արկանել (74):
4. Ընդ մէջ անցանել (94) – ընդ մէջն անցանել (224):

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն հայոց

**Դարձվածքների հոմանշային շարքեր**

1. Ձեռն տալ (4) – օժանդակ լինել (215) – նպաստ լինել (276):

2. Փոյթ լինել (8) – փոյթ առնել (17) – ի հոգս մտանել (26) – փոյթ տանել (91) – հոգ տանել (105) – փոյթ յանձին ունել (279) – ջան տանել (306):

3. Մեծարանս առնել (11) – պատիւ առնել (87) – մեծարանս դնել (209) – մեծապատիւ առնել (359):

4. Լուծանել ի կենցաղոյս (16) – ի կենացս լուծանել (373):

5. Ի գերութիւն խաղացուցանել (34) – գերի վարել (207) – ի գերութիւն վարել (258):

6. Արգելական առնել (37) – բանտարգել առնել (79) – դնել ի բանտի (173) – յարգելս առնել (189) – ի կալանս առնել (319):

7. Ի վերայ հասանել (155) – ի վերայ անկանել (161):

8. Պատ առնուլ (85) – ի մէջ առնուլ (203):

9. Դաշինս կռել (11) – դաշնագիր լինել (87):

10. Պատասխանի տալ (12) – պատասխանի առնել (157) ևն:

**Դարձվածքների հականշային շարքեր**

1. Ի գլուխ ելանել (8) – խափան լինել (120):
2. Փոյթ լինել (8) – անտես առնել (26):

3. Ի սուր անկանել (9) – ապրեալ լինել (200):
4. Բուռն հարկանել (9) – ի բաց թողուլ (174):
5. Ուրախ լինել (26) – սուգ զգենուլ (240):

**Հարանուն դարձվածք**

Ընդ միմեանս հարկանել (205) – ընդ միմեանս անկանել (356):

Ակներև է, որ դարձվածքների իմաստաբանական այս խմբերում հիմնականում ընդգրկված են կրկնվող միավորներ, այսինքն՝ տարբեր հեղինակներն իրենց ստեղծագործություններում գործածել նույնատիպ կամ համահունչ դարձվածային կաղապարներ: Դարձվածային բառապաշարի նույնականությունը տարբեր հեղինակների երկերում նախ և առաջ բացատրելի է նրանց ստեղծագործությունների ժանրային ընդհանուր բնույթով. բոլորը պատմագրական երկեր են, իսկ պատմագրությունը ենթադրում է ընդհանրական կաղապարներ, ձևակերպումներ և ոճեր: Դարձվածային միավորների իմաստաբանական հարբերություններում գերակշռում է հոմանշությունը, ինչպես նաև հականշությունը: Համանուն դարձվածքները եզակի են, որովհետև այս պարագայում մեծ է հնարավորությունը ամեն ինչ հանգեցնելու դարձվածքների բազմիմաստության: Դարձվածային հարանունության օրինակները ևս մեծաքիվ չեն:

Դարձվածքների իմաստաբանական հետազոտությունից անցնենք ԴՄ-ների բաղադրիչների իմաստային բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև կաղապարների կառուցվածքին:

# ԳԼՈՒԽ 3
# ԳՐԱԲԱՐՅԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գրաբարում դարձվածքների իմաստակառուցվածքային յուրահատկությունների բացահայտումը թույլ կտա վերհանել այն հիմնական կաղապարները, որոնց միջոցով ստեղծվում էին հին հայերենի ԴՄ-ները, ինչպես նաև առանձնացնել այն իմաստային խմբերի բառային միավորները, որոնք կարող էին դարձվածաստեղծ ներուժ ունենալ: Քանի որ մեր ուսումնասիրությունն ունի ժանրային սահմանափակում, մատենագիտական երկերի գերակշիռ մասը պատմագրություններ են, այստեղ դարձվածային բազմազանությունը մեծ չէ:

Դարձվածքների գերադաս բաղադրիչները դասակարգել ենք իմաստային-թեմատիկ տասնմեկ խմբերի միջոցով՝ յուրաքանչյուր երկի դարձվածքների իմաստային և կառուցվածքային բնութագրիչները ներկայացնելով առանձին, ըստ հնարավորության՝ բերել ենք տասական օրինակ, տասն ու ավելի նման իմաստային կաղապարների առկայությունը նշանակում է, որ տվյալ իմաստային դաշտի բառերն օժտված են վերաիմաստավորման և պատկերավոր մտքեր արտահայտելու նկատելի հատկանիշներով, այսինքն՝ դարձվածքներ կազմելու յուրահատկությամբ, նվազմանը զուգընթաց՝ այդ ունակության կամ դարձվածաստեղծման կորը նվազում է, անկում ապրում:

Սկսենք **Ագաթանգեղոսի** պատմագրության դարձվածքների իմաստային բնութագրից: Բերված այն օրինակների համար, որոնց իմաստային բովանդակությունն ակնհայտ չէ, կից ներկայացնում ենք նրանց բառային նշանակությունը:

**Ա. Մարմնամասերի անվանումներից (կամ մարմնամաս + այլ արմատ) բաղադրված դարձվածքներ** ՝ ունկնդիր լինել (էջ 16), կապել ընդ զարշապարս մեղաց (20)՝ մեղքերի ճանապարհը բռնել, ձեռն արկանել (28)՝ ձեռքը գցել, ի թիկունս հասանել (24), սրտաթափ լինել (34)՝ վախենալ, ձերբակալ առնել (36), ակն ունել (30), ի բերան բան դնել (108)՝ պատվիրել, ի ծունր իջանել (126), յակն առնուլ (126)՝ հա-

վանել, սրտի մտօք (138), ի ձեռն մատնել (178), ի լուր ականջաց (184), զմէջ պնդել (184)՝ զոտեպնդվել, ձեռն ի ձեռն (186)՝ դեմ առ դեմ, զթիկունս դարձուցանել (188), զունկնդրութիւն մատուցանել (226), առ ական դիպենալ (240), ընդ ոտս անկանել (436), ընդ կրունկն դառնալ (464), յական թօթափել (468) են:

Արդ, աղյուսակով ցույց տանք, թե մարմնամասի որ անվանումը քանի անգամ է օգտագործվել դարձվածակերտման գործում՝

| | |
|---|---|
| Ձեռն | 10 |
| Ակն | 9 |
| Ունկն | 5 |
| Թիկունք, ծունր, բերան | 3 |
| Ականջ, ոտն, սիրտ | 2 |
| Գարշապար, ուս, բուռն, գլուխ, կրուկ | 1 |

**Բ. Ռազմական գործին առնչվող դարձվածքներ**՝ ի բաց կորուսանել (24), հիմն ի վեր առնել (24), փախստեայ լինել (26), զհետ մտանել (26), ասպատակ սփռել (28), զկնի լինել (30), դիաթաւալ կացուցանել (30), մաշել ի սուր սուսերի, (32), արեան ճապաղիս հանել (424), մարտ դնել (436) են:

Այս խումբը կազմող դարձվածքները բազմազան են, և անհնար է աղյուսակի տեսքով հանդես բերել դարձվածակերտման ներում ունեցող բառերի ցանկ, ինչպես մարմնամասերի անվանումներից բաղադրվածների դեպքում, ուստի այստեղ սահմանափակվում ենք՝ միայն նշելով, որ մեկ-երկու օրինակով *փախուստ*, *փախստական* բառերով կազմված դարձվածքները առավելություն ունեն մնացյալի նկատմամբ:

**Գ. Զենքերի անվանումներից բաղադրված դարձվածքներ**՝ մաշել ի սուր սուսերի (32), մտրակ ի կուշտ առնել (36), ի վերայ սուր դնել (114):

| | |
|---|---|
| Սուր | 2 |
| Մտրակ | 1 |

**Դ. Պետություն, պետական կառավարում, օրենք**՝ աւար առնուլ (24), աւար հարկանել (440), դաշինս կռել (488):

Այս խումբը կազմող դարձվածքները գրեթե նույնն են բոլոր աղբյուրներում, ուստի նկատի ունենալով դա և միաժամանակ այն, որ խիստ սակավաթիվ դարձվածքներ են ներգրավված այս խմբում բոլոր աղբյուրների դեպքում, աղյուսակ չենք ներկայացնում:

**Ե. Շարժում և տեղափոխություն ցույց տվող դարձվածքներ**՝ ի վերայ հասանել (26)՝ հարձակվել, ի թիկունս գալ (26), չու առնել (30), ընդ առաջ ելանել (30), զմիմեամբք ելանել (96)՝ շտապել, ի վեր բերել (230), թափ անցանել (354)՝ ճեղքել, ի փախուստ դառնալ (438), զհետ երթալ (396), ճանապարհորդ լինել (452) ևն:

Զորօրինակ՝

| | |
|---|---|
| Լինել | 10 |
| Առնել | 7 |
| Դնել | 4 |
| Հասանել, ելանել | 2 |
| Գալ, գնալ, մտանել. իջանել, բերել, դառնալ, երթալ | 1 |

Աղյուսակում չենք ընդգրկել այն դարձվածքների բաղադրիչ միավորները՝ բառերը, որոնք, առանձին վերցրած, որևէ կապ չունեն շարժման, տեղափոխության հետ, բայց ամբողջության մեջ կարող են ձևավորել շարժման, տեղափոխության իմաստ արտահայտող կազմություններ: Այս մոտեցումն ընդհանուր է բոլոր իմաստային-թեմատիկ խմբերի պարագայում: Առաջնայինը դարձվածային միավորի գերադաս անդամի իմաստային դաշտն որոշելն է:

**Զ, Միտք, մտածողություն արտահայտող դարձվածքներ** – Ընդ միտ մտանել (6), ի միտ արկանել (30), ի մտի ունել (38) – մտքում պահել, հիշել, զմտաւ ածել (48), ի մտի դնել (68), ի միտ առնուլ (112) – հասկանալ, ի միտս անկանել (296) – հիշել, գալ զմտօք (300) – մտքով անցնել, խելամուտ լինել (434), միտ դնել (492) ևն:

Այս խումբը ձևավորող դարձվածքները, առանց բացառության, կազմված են *միտ(ք)* բառով:

**Է. Վիճակ, դրություն ցույց տվող դարձվածքներ** – Նկուն լինել (120) – ընկճվել, ինքնատես լինել (176) – անձամբ երևալ, ի միջի լինել (180) – գոյություն ունենալ, առ ական դիպենալ (240) – աչքի ընկնել, գազանակուր լինել (254), հակառակ կալ (316), կոխան լինել (408), կցորդ լինել (408), ի քուն լինել (414), յանձն լինել (452) – ապավինել են:

Այս խմբի դարձվածքները իրենց խիստ բազմազանության և բաղադրիչների՝ վիճակի, դրությանն առնչություն չունենալու պատճառով դարձյալ չենք ներկայացնում աղյուսակով:

**Ը. Կրոն, հավատալիք, պաշտամունք** – Երկիր պագանել (42), յաղօթս մատուցանել (112), ծունր դնել (112), աղօթս մատուցանել (126), ի ծունր իջանել (126), աղօթս առնել (256), պաշտօն մատուցանել (324), ծունր կրկնել (348):

Այս խմբի դարձվածքներից երեքը բաղադրված են *աղօթք* բառով, իսկ մնացածին վերը նշված պատճառներով չենք անդրադառնում:

**Թ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ** – Ի մէջ բերել (12), հիմն ի վեր առնել (24), ի վերայ հասանել (26), ի վայր կործանել (120), սրտի մտօք (138), ի միջի լինել (180), ի միջոյ բառնալ (436), փոյթ ի վերայ ունել (444), խորհուրդ ի մէջ առնուլ (444), յական թօթափել (468) են:

| | |
|---|---|
| Մէջ | 9 |
| Վեր, վերայ | 3 |
| Վայր, առաջի, հուպ | 1 |

1. **Կենդանիներ** – Չիարձակ լինել (6):
2. **Ըմպելիք** – Ընդ գինիս մտանել (36):

| | **Իմաստային խմբեր** | **Քանակը** |
|---|---|---|
| 1. | Մարմնամասեր | 50 |
2. **Գոյական + ի + գոյական + բայ** – Կասկած ի սիրտ անկանել (82), ձեռն յանձին հարկանել (102), սուր ի գործ առնել (115), բերան ի բերան խօսել (168):

3. **Գոյական + բայ + ընդ + դերանուն** – Մարտ դնել ընդ ումեք (95), մարտ տալ ընդ ումեք (176):

4. **Բայ + ի + գոյական + գոյական** – Գալ ի թիկունս ազնականութեան (101):

5. **Բայ + ի + ածական + գոյական** – Մաշել ի սուր սուսերի (68), հարկանել ի սուր սուսերի (135):

6. **Բայահիմք + շաղկապ + բայահիմք + բայ** – Ցիր և թաւալ կացուցանել (108):

**Հնգանդամ դարձվածքների կաղապար**

1. **Զ + գոյական + ի + գոյական + բայ** – Զանձն ի ծառայութիւն տալ (123), զձեռն յարիւն արկանել (133):

**ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի**
**Իմաստային խմբեր**

**Ա. Մարմնամասեր** – Դնել գլուխն (12) – մահանալ, առ ականէ (32) – կողմնապահությամբ, ծունր դնել (34), զգլուխն ընդ երկիր ածել (53), ի ծունգս իջանել (71), ընդ կրունկն դառնալ (133), զերեսս հաստատել (143) – դիմել, գնալ դեպի…, ի թիկունս կոչել (146), ինքնաձեռն լինել (177) – համարձակվել, սրտաբեկ լինել (223), ի բերան սրոյ մատնել (323) ևն:

| | |
|---|---|
| Ձեռն | 12 |
| Ոտն | 7 |
| Դէմք | 6 |
| Ակն | 4 |
| Երես | 3 |
| Գլուխ, ծունր, բուռն, ունկն, բերան | 2 |
| Ծունգ, կրունկն, թիկունք, սիրտ | 1 |

**Բ. Ռազմին առնչվող դարձվածքներ** – Տալ պատերազմ (15), թափ անցանել (25), զօրաժողով լինել (29), համաջինջ առնել (43), բակ առնուլ (51), բնաջինջ առնել (55), ռազմ դնել (114), հրձիգ առնել (129), արիւնազանգ լինել (174) – արնաքամվել, պատերազմակից լինել (278) ևն:

Այս խումբը էական տարբերություն չունի նախորդ աղբյուրների դարձվածքների նույն խմբերի նկատմամբ:

**Գ. Ձեռքեր** – Ի սուր անկանել (39), սրոյ ճարակ առնել (114), ի սուր սուսերի արկանել (19), մաշել ի սուր սուսերի (142), սրայորդոր լինել (174), ի բերան սրոյ մատնել (323), ի սուր արկանել (326), ի սուր սուսերի մատնել (338):

| | |
|---|---|
| Սուր | 6 |
| Սուսեր | 2 |

**Դ. Պետություն, պետական կառավարում, օրենք** – Աւար առնուլ (29), աւար հարկանել (44), յաւարի առնուլ (141), դաշինս կնքել (293):

**Ե. Շարժում, տեղափոխություն** – Ճանապարհ առնել (10), սկիզբն առնել (10), ի բաց գնալ (11), ճախր առնուլ (30), չու առնել (70), վարակոխ գործել (73), զկնի լինել (105), ի վայր ցնդել (192) – իջնել, նախափախուստ լինել (224), չիք լինել (287) ևն:

| | |
|---|---|
| Մտանել | 3 |
| Գնալ | 2 |
| Ընթանալ, դառնալ, իջանել | 1 |

**Զ. Միտք, մտածողություն** – Ի միտ անկանել (20), զմտաւ ածել (24), ի միտ առնուլ (34), խելամուտ լինել (39), միտ դնել (88), ի մտի դնել (140), հաստատել ի միտս (173), խելամուտ առնել (202), մտախոհ լինել (203):

| | |
|---|---|
| Միտ(ք) | 7 |
| Խել(ք) | 2 |

**Է. Վիճակ, դրություն** – Հնազանդ կալ (8), ընդ հակառակս լինել (15), զահի հարկանել (21), ի հաստատուն կալ (26), միջակտուր լինել (29), հակառակ կալ (56), խնդալից լինել (71), ի չքմեղս լինել (108) – անմեղ ձևանալ, յամօթ լինել (258) ևն:

| | |
|---|---|
| Լինել | 9 |
| Կալ | 5 |

**Ը. Կրոն, հավատալիք, պաշտամունք** – Ածել ի հաւատս (14), ծունր դնել (34), յաղօթս կալ (36), աղօթակից լինել (48), երկրպագութիւն մատուցանել (84), երկիր պագանել (90), ծունր կրկնել (151), ի պաշտօն առնուլ (269):

| | |
|---|---|
| Աղօթք | 2 |
| Հաւատ, երկրպագութիւն, պաշտօն | 1 |

**Թ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ** – Ընդ մէջ անցանել (11), ի վերայ հասանել (17), առաջի առնել (19), առ ականէ (32), ի վեր առնուլ (34), ի միջոյ բառնալ (191), ի վայր ցնդել (192), ընդ առաջ լինել (195), ի մէջ անցանել (224), վերընկէց լինել (318) են:

| | |
|---|---|
| Մէջ | 4 |
| Վերայ, առաջ | 3 |
| Վեր | 2 |
| Վայր | 1 |

| Իմաստային խմբեր | Քանակը |
|---|---|
| Մարմնամասեր | 46 |
| Ռազմական գործ | 69 |
| Զենքեր | 8 |
| Պետություն, պետական կառավարում, օրենք | 4 |
| Շարժում, տեղափոխություն | 53 |
| Միտք, մտածողություն | 9 |
| Վիճակ, դրություն | 16 |
| Կրոն, հավատալիք, պաշտամունք | 8 |
| Տարածական հարաբերություններ | 18 |

**Կառուցվածքային խմբեր**

**Երկանդամ** – Հնազանդ կալ (8), առնուլ վախճան (10), խոյս տալ (10), այց առնել (14), երդումն կնքել (17), խորամուխ լինել (18), մի-

ջակտուր լինել (29), բացընկեցիկ լինել (33), հիմն արկանել (35), հարցաքննին առնել (57) են:

**Եռանդամ** – Յայց ելանել (9), ածել ի հաւատս (14), նուաճել ի ծառայութիւն (16), ընդդէմ կալ (16), ի բաց գնալ (17), յուշ լինել ումեք (66), ի ծունգս իջանել (71), ի քուն մտանել (76), յանպատրաստ ունել (131), ցածուցանել զերեսս (158) են:

**Քառանդամ** – Փոյթ յանձին ունել (96), ի սուր սուսերի արկանել (119), դուլ և դադար տալ (134), մաշել ի սուր սուսերի (142), կերպս ի կերպս լինել (254), ձեռն ի գործ արկանել (257), ի բերան սրոյ մատնել (323), ցիր և ցան կացուցանել (326), ի սուր սուսերի մատնել (338) են:

**Հնգանդամ** – Զգլուխն ընդ երկիր ածել (53):

**Վեցանդամ** – Ի խոյզ և ի խնդիր անկանել (206):

Այսպես՝

| **Կառուցվածքային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Երկանդամ | 201 |
| Եռանդամ | 126 |
| Քառանդամ | 11 |
| Հնգանդամ | 1 |
| Վեցանդամ | 1 |

### Երկանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Գոյական + բայ** – Վախճան առնուլ (10), ահ անկանել (18), վրէժ խնդրել (39), ծաղր առնել (56), ունկն դնել (61), յուշ առնել (86), պատուհաս դնել (92), կցորդ լինել (116), բանս դնել (116), հանդէս առնել (131) են;

2. **Ածական + բայ** – Հնազանդ կալ (81), թոյլ տալ (22), տեղեակս առնել (51), անփոյթ առնել (52), հակառակ կալ (56), լսելի լինել (77), կարեկից լինել (123), անվրէպ առնել (138), լի առնել (166), մտախոհ լինել (203) են:

3. **Բայահիմք + բայ** – Չերբակալ առնել (16), խոստոված լինել (19), համաջինջ առնել (43), բնաջինջ առնել (55), հարցաքննին առնել (57):

4. **Մակբայ + բայ** – Յանդիման լինել (19), առաջի առնել (19), առաջի դնել (19), առաջի կալ (21), յանդիման առնել (173):

5. **Առ + գոյական** – Առ ական (32):

**Եռանդամ դարձվածքների կաղապարներ**

1. **Առ + գոյական + բայ** – Առ ոտն կոխել (280), առ ոտս անկանել (340):

2. **Զ + գոյական + բայ** – Զահի հարկանել (21), զմտաւ ածել (24), զհետ լինել (105), զհետ պնդել (137), զտեղի ունել (149), զերեսս ցածուցանել (158), զհետ ընթանալ (174), զդէմ ունել (229):

3. **Զ + դերանուն + բայ** – Զինքն խոնարհեցուցանել (240):

4. **Զ + բայահիմք + բայ** – Զանց առնել (312):

5. **Ընդ + գոյական + բայ** – Ընդդէմ կալ (16), ընդ պատմութեամբ արկանել (26), ընդ կրուկն դառնալ (133), ընդ թուով արկանել (135), ընդ գրով արկանել (142), ընդ ոտս առնել (193), ընդ քնով անկանել (223), ընդ ոտն անկանել (255), ընդ ծառայութեամբ արկանել (310), ընդ հարկաւ արկանել (317) ևն:

6. **Ընդ + ածական + բայ** – Ընդ հակառակս կալ (15):

7. **Ընդ + մակբայ + բայ** – Ընդ առաջ ելանել (60), ընդ առաջ լինել (195), ընդ առաջ գալ (282):

8. **Գոյական + բայ + դերանուն** – Զրաւ լինել իրիք (64):

**Քառանդամ դարձվածքների կաղապարներ**

1. **Ի + գոյական + գոյական + բայ** – Ի բերան սրոյ մատնել (323):

2. **Ի + ածական + գոյական + բայ** – Ի սուր սուսերի արկանել (119), մաշել ի սուր սուսերի (142), ի սուր սուսերի մատնել (338):

3. **Ի + ածական + դերբայ + բայ** – Ի բաց ածել տալ (17):

4. **Գոյական + ի + գոյական + բայ** – Փոյթ յանձին ունել (96), կերպս ի կերպս լինել (254), ձեռն ի գործ արկանել (257):

5. **Գոյական + շաղկապ + գոյական + բայ** – Դուլ և դադար տալ (134):

6. **Բայահիմք + շաղկապ + բայահիմք + բայ** – Ցիր և ցան կացուցանել (326):

### Հնգանդամ դարձվածքի կաղապար

1. **Ը + գոյական + ընդ + գոյական + բայ** – Զգլուխն ընդ երկիր ածել (53):

### Վեցանդամ դարձվածքի կաղապար

1. **Ի + գոյական + շաղկապ + ի + գոյական + բայ** – Ի խոյզ և ի խնդիր անկանել (206):

### ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, Պատմութիւն
### Իմաստային խմբեր

**Ա. Մարմնամասեր** – Ընդ ձեռամբ առնել (2) – գրավել, բուռն հարկանել (7), զգլուխ բառնալ (8), ի դիմի հարկանել (17), ձեռն ի վերայ ծանրացուցանել (23), ի թիկունս հասանել (37), սրտի մտօք (40), ի գումս առնել (45) – ծնկի բերել, յոտն կալ (60), ի ձեռանէ թողուլ (62) ևն:

| | |
|---|---|
| Ձեռն | 13 |
| Գլուխ | 5 |
| Ակն, դէմք | 4 |
| Թիկունք | 3 |
| Ոտն | 2 |
| Կրունկ, գումճ, բերան, երես, սիրտ | 1 |

**Բ. Ռազմական գործին առնչվող** – Ընդ միմեանս անկանել (1) – իրար բախվել, մարդահարկ արկանել (4), անմարդի առնել (6), խոյզ արկանել (8), զօրաժողով լինել (11), յաւարի առնուլ (12), կապուտ կողոպուտ առնել (29), մարտ պատերազմի դնել (35), անձնատուր լինել (44), դիաթաւալ կացուցանել (60) են:

Այստեղ ևս խմբի դարձվածքների խիստ բազմազանության պատճառով չենք տարբերակում ավելի փոքր խմբեր:

**Գ. Զենքեր** – Սուր դնել ի վերայ (5), ի սուր հարկանել (8), սրախողխող լինել (25), սրամահ առնել (25), ի սուր անկանել (29), սրակոտոր առնել (36), նետաձիգ լինել (52):

| | |
|---|---|
| Սուր | 6 |
| Նետ | 1 |

**Դ. Պետություն, պետական կառավարում, օրենք** – Մարդահարկ արկանել (4), յաւարի առնուլ (12), յաւարի տանել (29), դաշն առնել (41):

**Ե. Շարժում, տեղափոխություն** – Վազ առնել (2) – շտապել, անց և դարձ առնել (3), ի փախուստ դառնալ (3), ընդ առաջ երթալ (4), փախստական լինել (8), դափր հատանել (25) – հողը փորել, ելևելս առնել (27), զհետ մտանել (30), գիշերագնաց լինել (38), երթևեկս առնել (431) են:

| | |
|---|---|
| Դառնալ | 3 |
| Հասանել | 2 |
| Երթալ, գալ, ելանել | 1 |

**Զ. Միտք, մտածողություն** – Խորհուրդ ի մէջ առնուլ (7), զմտաւ ածել (8), ի մտաց անկանել (11), ի միտս բերել (29), միտ դնել (34), ի միտ արկանել (35), ի միտ առնուլ (57):

| | |
|---|---|
| Միտ(ք) | 6 |
| Խորհուրդ | 1 |

**Է. Վիճակ, դրություն** – Ընդ ձեռամբ ունել (2), արգելական լինել (14) – ամրանալ ամրոցում, ահաբեկ լինել (23), զդողի հարկանել (23),

ի մոռացօնս լինել (23) – մոռացվել, յարգի լինել (28), ի թաքստի լինել (29), հրայրեաց լինել (29), յանհոգս կալ (37), ի դողման լինել (55) են:

| | |
|---|---|
| Լինել | 9 |
| Կալ | 2 |

**Ը. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ** – Ընդ առաջ երթալ (4), ի վերայ հասանել (5), ի վերայ անկանել (12), բերել ի մէջ (23), ձեռն ի վերայ ծանրացուցանել (23), ի մէջ առնել (8), ի միջոյ բառնալ (9), ի վեր առնուլ (36), սրտի մտօք (40), ի վայր հարկանել (60) են:

| | |
|---|---|
| Վերայ | 4 |
| Առաջ, մէջ | 3 |
| Վեր | 1 |

| **Իմաստային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Մարմնամասեր | 39 |
| Ռազմական գործ | 49 |
| Զենքեր | 7 |
| Պետություն, պետական կառավարում, օրենք | 4 |
| Շարժում, տեղափոխություն | 37 |
| Միտք, մտածողություն | 7 |
| Վիճակ, դրություն | 20 |
| Տարածական հարաբերություններ | 13 |

**Կառուցվածքային խմբեր**

**Երկանդամ** – Տալ պատիւ (2), ահ արկանել (4), արգելական առնել (4), թքակոծ առնել (12), նորաձեւս առնել (12), ջրահեղձոյց առնել (13), ողբս առնուլ (14), կարծական լինել (23), գլաջարդ առնել (25), նախանձ արկանել (31) են:

**Եռանդամ** – Զանց առնել (1), ընդ ձեռամբ առնել (2), ի խնդրոյ թուլանալ (7), զետղ առնուլ (23), ի կարգ արկանել (28), ի ծուփս ան-

կանել (30), ըն䷀ գրով սահմանել (34), ի լոյս ածել (34), զճառս արկանել (47), արեան ճապաղիս հանել (50 ) ևն:

**Քառանդամ** – Անց և դարձ առնել (3), ձաղ և ծանակ առնել (12):

**Հնգանդամ** – Զանձն ի հնազանդութիւն տալ (16):

Այսպես՝

| Կառուցվածքային խմբեր | Քանակը |
|---|---|
| Երկանդամ | 101 |
| Եռանդամ | 103 |
| Քառանդամ | 2 |
| Հնգանդամ | 1 |

## Երկանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Գոյական + բայ** – Ակն ունել (1), պատասխանի տալ (8), զօրաժողով լինել (11), ձայն տալ (12), ապաստան լինել (16), ճառ արկանել (24), արտասուս շարժել (27), բողոք բառնալ (28), խիլ արկանել (32), հիմն արկանել (36) ևն:
2. **Ածական + բայ** – Հակառակ կալ (17), լի առնել (20), ահաբեկ լինել (23), յարգի լինել (28), անտես առնել (29), ուրախ լինել (30), դժկամակ լինել (39), ձեռնթափ լինել (40), ուրախ առնել (41), թոյլ տալ (59) ևն:
3. **Բայահիմք + բայ** – Զրահեղձոյց առնել (13), խոստովան լինել (18), ձերբակալ առնել (19), ամբաստան լինել (22), հրայրեաց լինել (29):
4. **Գոյական + գոյական** – Սրտի մտօք (40):

## Եռանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Զ + գոյական + բայ** – Զկեանս լուծանել (4), զդողի առնուլ (19), զետղ առնուլ (24), զմտաւ ածել (8), զգլուխ բառնալ (8), զերեսս դարձուցանել (25), զհետ մտանել (30), զմիտս գողանալ (56), զթիկունս դարձուցանել (59), զդիմի հարկանել (61) ևն:

2. **Զ + բայահիմք + բայ** – Զանց առնել (1)։

3. **Ընդ + գոյական + բայ** – Ընդ ձեռամբ առնել (2), ընդ կրունկն դառնալ (5), ընդ գրով արկանել (5), ընդ ոտիւք կոխել (11), ընդ ձեռամբ ունել (12), ընդ հարկիւ արկանել (31), ընդ գրով սահմանել (34), ընդդէմ կալ (44), ընդ ակամբ հայել (59), ընդ ձեռամբ անկանել (58)։

4. **Ընդ + դերանուն + բայ** – Ընդ միմեանս անկանել (1)։

5. **Ի + գոյական + բայ** – Ի կենացս բառնալ (1), յանձն առնուլ (3), ի փախուստ դառնալ (3), ի դատ կալ (4), ի բարկութիւն բրդել (4), յերկիւղի լինել (15), ի հենգն արկանել (51), ի մայրն դառնալ (55), ի գործ արկանել (58) ևն։

6. **Ի + ածական + բայ** – Ի բաց առնել (5), ի խայտառակս անկանել (5), ի բաց կալ (8), յաւեր դարձուցանել (15), ի բաց դնել (33), յանհոգս կալ (37), ի բաց դարձուցանել (56), ի բաց խլել (57)։

7. **Ի + մակբայ + բայ** – Ի վեր առնուլ (36), ի վայր հարկանել (60)։

8. **Գոյական + գոյական + բայ** – Կապուտ կողոպուտ առնել (29), մարտ պատերազմի դնել (35), արեան ճապաղիս հանել (50)։

### Քառանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Գոյական + շաղկապ + գոյական + բայ** – Ջաղ և ծանակ առնել (12)։

2. **Բայահիմք + շաղկապ + բայահիմք + բայ** – Անց և դարձ առնել (3)։

### Հնգանդամ դարձվածքի կաղապար

1. **Զ + գոյական + ի + գոյական + բայ** – Զանձն ի հնազանդութիւն տալ (16)։

## ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն
## Իմաստային խմբեր

**Ա. Մարմնամասեր** – Ոխս ի սիրտ առնուլ (16), ընդ ձեռամբ հնազանդեցուցանել (32) – հնազանդեցնել, զերեսս դարձուցանել (66), ականջալուր լինել (84), ճակատ զճակատ հարկանել (90), ընդ կրունկն դարձուցանել (94), ականատես լինել (124), յերեսաց սրոյն զերծանել (152), բուռն հարկանել (168), կառափնաբեկ առնել (242) ևն:

| | |
|---|---|
| Ձեռն | 12 |
| Դէմք | 5 |
| Բերան, ոտն | 3 |
| Սիրտ, երես, ակն | 2 |
| Ունկն, ճակատ, կրունկ, ծունր, բուռն, կառափն | 1 |

**Բ. Ռազմական գործին առնչվող** – Զօրաժողով լինել (6), ի վերայ կոտորած ածել (10), փոկակապս առնել (10) – թուրը պինդ կապել, քարայատակս առնել (24) – հիմնահատակ անել, ի գերութիւն վարել (30), քմինս դնել (30) – դարանակալել, յաւեր դարձուցանել (30), ի պատերազմ ելանել (30), ի յառ ածել (170) – գրավել, կալ ի դիմի (198) ևն:

| | |
|---|---|
| Փախստական | 5 |
| Ալափ | 3 |
| Զօրաժողով, աւեր, բնաջինջ | 2 |
| Նետաձիգ, տարագիր, ապականութիւն | 1 |

**Գ. Զենքեր** – Փոկակապս առնել (10), ռումբ դնել ումեք (18), ի սուր սուսերի մաշել (26), ի բերան սրոյ կոտորել (26), սրով անցուցանել (40), ի սուր մատնել (88), մատնել ի ձեռս սրոյ (94), ի սուր անկանել (108), սրոյ անցուցանել (112), ի սուր սուսերի կոտորել (136) ևն:

| | |
|---|---|
| Սուր | 16 |
| Սուսեր | 2 |
| Փոկ, նետ | 1 |

**Դ. Պետություն, պետական կառավարում, օրենք** – Աւար հարկանել (12), յաւար(ի) առնուլ (28), ընդ իշխանութեամբ առնել (28), աւար առնուլ (46), աւար արկանել (88), տարագիր առնել (368):

**Ե. Շարժում, տեղափոխություն** – Փախստական լինել (18), զմուտն առնել (22), շրջան առնել (24), ընդ առաջ ելանել (26), ի վերայ անկանել (36), ելս առնել (38), գալ ի վերայ (46), տնամուտ լինել (70), ընդ վայր շրջել (100), ջոլիր ջոլիր լինել (144) – քափառել են:

| | |
|---|---|
| Անկանել, ելանել, գալ, գնալ | 2 |
| Մտանել, հասանել | 1 |

**Զ. Միտք, մտածողություն** – Զմտաւ ածել (34), ի միտս գալ (36), միտ դնել (112), խորհուրդ խորհել (150):

**Է. Վիճակ, դրություն** – Անմարդաբնակ լինել (6), ի հնազանդութիւն կալ (14), լի լինել (22), ի քուն կալ (44), ի վտանգի կալ (72), հակառակ կալ (86), յահ և յերկիւղ լինել (110), յամօթ լինել (94), ընդ ձեռամբ լինել (338), յանմարդ լինել (340) են:

| | |
|---|---|
| Լինել | 6 |
| Կալ | 4 |

**Ը. Կրոն, հավատալիք, պաշտամունք** – Յաղօթս կալ (28), աղօթս մատուցանել (44), աղօթս առնել (128), ծունր կրկնել (152), երկիր պագանել (204):

**Թ. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ** – Ի վերայ կոտորած ածել (10), զմահ առաջի դնել (18), ի վերայ հասանել (24), ընդ առաջ ելանել (26), ի վերայ անկանել (36), որոտալ ի վերայ ուրուք (42), ընդ մէջ անցանել (94), հիմն ի վեր առնել (98), ի միջոյ բառնալ (102), ի վայր կործանել (134) են:

| | |
|---|---|
| Վերայ | 10 |
| Առաջ | 4 |
| Մէջ, վայր, վեր | 1 |

Վիճակագրական պատկերը հետևյալն է:

| **Իմաստային խմբեր** | **Քանակը** |
| --- | --- |
| Մարմնամասեր | 36 |
| Ռազմական գործ | 99 |
| Զենքեր | 20 |
| Պետություն, պետական կառավարում, օրենք | 6 |
| Շարժում, տեղափոխություն | 35 |
| Միտք, մտածողություն | 4 |
| Վիճակ, դրություն | 10 |
| Կրոն, հավատալիք, պաշտամունք | 5 |
| Տարածական հարաբերություններ | 22 |

**Կառուցվածքային խմբեր**

**Երկանդամ** – Դաշինս առնել (10), աւար հարկանել (12), ձայն տալ (18), քննայոյզ առնել (26), կալանականս առնել (30), արմատախիլ առնել (30), աղաչանս արձակել (42), սուգ զգենուլ (60), անդարձ առնել (62), լալականութիւն առնել (88) են:

**Եռանդամ** – Զօծումն տալ (8), աւանդել զհոգի (12), ի հնազանդութիւն կալ (14), զմուտն առնել (22), ընդ միմեանս հարկանել (42), լուծանել ի կենաց (72), յանմարդ դառնալ (80), արեան ճապաղիս առնել (116), յալափ մտանել (280), ի խոշտանգանս արկանել (348) են:

**Քառանդամ** – Առնել ընդ իշխանութեամբ իւրով (12), ոխս ի սիրտ առնուլ (16), զմահ առաջի դնել (18), զհետ հրամանաց գալ (46), մտանել ընդ լծով անիծից (78), մատնել ի ձեռս սրոյ (94), առ յոչինչ համարել (134), ջան յանձին կրել (150), ի բերան սրոյ հաշել (202), դուլ և հանգիստ տալ (216) են:

**Հնգանդամ** – Զանձն ի ծառայութիւն կացուցանել (314), ի կեր սրոյ խողխողեալ լինել (376), ծաղր և ծանակ լինել ումեք (402):

**Հնգանդամ** – Յահ և յերկիւղ լինել (110), յաւեր և յապականութիւն դարձուցանել (370):

Այսպես՝

| **Կառուցվածքային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Երկանդամ | 127 |
| Եռանդամ | 122 |
| Քառանդամ | 32 |
| Հնգանդամ | 3 |
| Վեցանդամ | 2 |

## Երկանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Գոյական + բայ** – Զորաժողով առնել (6), դաշինս առնել (10), վրէժխնդրութիւն առնել (22), քմինս դնել (30), կոծ առնուլ (34), անէծս կարդալ (36), սրով անցուցանել (40), աղաչանս արձակել (42), գերի առնուլ (46), ելս գտանել (68) ևն:

2. **Ածական + բայ** – Հնազանդ առնել (30), անդարձ առնել (62), լի առնել (64), հակառակ կալ (86), աներևոյթ լինել (86), թոյլ տալ (116), հասու լինել (124), միամիտ կալ (136), մերձ լինել (236), ուրախ լինել (370) ևն:

3. **Դերբայ + բայ** – Պնդեալ լինել (86), լրբեալ լինել (126):

4. **Մակբայ + բայ** – Յանդիման լինել (188):

## Եռանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Զ + գոյական + բայ** – Զօծումն տալ (8), զհոգի աւանդել (12), զմուտն առնել (22), զմտաւ ածել (34), զհետ մտանել (42), զերեսս դարձուցանել (66), զհետ գնալ (104), զտեղի առնուլ (116), զիջեւանս առնել (196), զհետ լինել (316):

2. **Զ + բայահիմք + բայ** – Զանց առնել (196):

3. **Զ + դերբայ + բայ** – Զարթեալ լինել (130):

4. **Ընդ + գոյական + բայ** – Ընդ ծառայութեամբ լինել (28), ընդ իշխանութեամբ առնել (28), ընդդէմ կալ (80), առնուլ ընդ ձեռամբ (94), ընդ կրունկն դարձուցանել (94), ընդ գրով արկանել (112), ընդ ձեռամբ լինել (338):

5. **Ընդ + դերանուն + բայ** – Ընդ միմեանս հարկանել (42):

6. **Ընդ + մակբայ + բայ** – Ընդ առաջ ելանել (26), ընդ վայր շրջել (100), ընդ առաջ գնալ (238):

7. **Ի + գոյական + բայ** – Ի փախուստ դարձուցանել (14), ի վտանգի արկանել (26), ի միտս գալ (36), յերկիր թաւալեցուցանել (100), ի հաւատոյ դարձուցանել (126), ի բարկութիւն շարժել (134), ի սուր մաշել (200), ի պատուոյ ընկենուլ (256), ի բարկութենէ լինել (270), ի գրի հաւաքել (302) ևն:

8. **Ի +ածական + բայ** – Ի բաց թողուլ (38), յաւեր մատնել (48), ի շտապս լինել (118), ի նեղ արկանել (168), յառաջապատրաստ լինել (376), ի բաց դնել (184), յանհոգս լինել (210), ի բաց մերժել (298), ի բաց վարել (370), ի բաց հանել (390) ևն:

9. **Ի + մակբայ + բայ** – Յառաջ բերել (102), ի վայր կործանել (134):

10. **Գոյական + գոյական + բայ** – Ձայն աւետեաց մատուցանել (42), արեան ճապաղիս առնել (116), արեան ջաղխիս առնել (200), վրէժ արեան առնուլ (230):

11. **Գոյական + բայ + դերանուն** – Սուգ ածել ումեք (194), ձեռամբ առնել ումեք (196):

12. **Ածական + գոյական + բայ** – Բարի մտօք կալ (64):

**Քառանդամ դարձվածքների կաղապարներ**

1. **Առ + ի + դերանուն + բայ** – Առ յոչինչ համարել (134):

2. **Զ + գոյական + գոյական + բայ** – Զհետ հրամանաց գալ (46):

3. **Գոյական + զ + գոյական + բայ** – Ճակատ զճակատ հարկանել (90):

4. **Զ + գոյական + մակբայ + բայ** – Զմահ առաջի դնել (18):

5. **Բայ + ընդ + գոյական + գոյական** – Մտանել ընդ լծով անհծից (78), մտանել ընդ լծով ծառայութեան (80):

6. **Բայ + ընդ + գոյական + դերանուն** – Առնել ընդ իշխանու-թեամբ իւրով (12), ընդ ձեռամբ ուրուք հնազանդեցուցանել (32), ընդ ձեռամբ իւրով առնել (332):

7. **Գոյական + ընդ + դերանուն + բայ** – Սէր ընդ ումեք հաստա-տել (152):

8. **Գոյական + ի + գոյական + բայ** – Ոխս ի սիրտ առնուլ (16), ջան յանձին կրել (150), սուր ի գործ արկանել (282):

9. **Բայ + ի + գոյական + գոյական** – Կոտորել ի բերան սրոյ (26), մատնել ի ձեռս սրոյ (94), կոտորել յերեսաց սրոյն (152), ի բե-րան սրոյ մատնել (200), ի բերան սրոյ հաշել (202):

10. **Գոյական + ի + մակբայ + բայ** – Հիմն ի վեր առնել (94):

11. **Ի + ի + գոյական + բայ** – Ի յառ ածել (170), ի յապրոյ ելանել (216), ի յանձն առնուլ (322), ի յերկիր կործանել (402):

12. **Ի + գոյական + բայ + դերանուն** – Յոտ անկանել ումեք (268):

13. **Ի + ածական + գոյական + բայ** – Ի սուր սուսերի մաշել (26), ի սուր սուսերի կոտորել (136):

14. **Գոյական + շաղկապ + գոյական + բայ** – Դուլ և հանգիստ տալ (216):

15. **Բայահիմք + շաղկապ + բայահիմք + բայ** – Ցիր և ցան ածել (92), ցիր և ցան հանել (398):

### Հնգանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Զ + գոյական + ի + գոյական + բայ** – Զանձն ի ծառայութիւն կացուցանել (314):

2. **Դերբայ + բայ + ի + գոյական + գոյական** – Խողխողեալ լի-նել ի կեր սրոյ (376):

3. **Գոյական + շաղկապ + գոյական + բայ + դերանուն** – Ծաղր և ծանակ լինել ումեք (402):

### Վեցանդամ դարձվածքների կաղապար

1. **Ի + գոյական + շաղկապ + ի + գոյական + բայ** – Յահ և յեր-կիւղ լինել, յաւեր (ած. և գոյ.) և յապականութիւն դարձուցանել (370):

**ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն հայոց**
**Իմաստային խմբեր**

**Ա. Մարմնամասեր** – Զունկն մատուցանել (4), ձեռն տալ (4), ի գլուխ ելանել (8), բուռն հարկանել (9), դիմադարձ լինել (18) – երես թեքել, ընդ ձեռամբ անկանել (67), զբռամբ ածել (105), ակն ունել (148), դէմ դնել (204), ձեռնտու լինել (216), ի ձեռս անկանել (236), զդէմ ունել (238), ի բերան բան դնել (242), առ ոտս անկանել (244), ականատես լինել (322), ծունր դնել (327), ձեռն արկանել (327), ունկնդիր լինել (353), ի ձեռաց թափել (391) – փրկել են:

| | |
|---|---|
| Ձեռն | 12 |
| Դէմք | 4 |
| Ունկն, բուռն, ակն, ոտն | 2 |
| Գլուխ, սիրտ, ծունր | 1 |

**Բ. Ռազմական գործին առնչվող** – Դաշինս կռել (11), դիմադարձ լինել (18), ի գերութիւն խաղացուցանել (34), դաշնագիր լինել (87), հալածական առնել (87), բնաջինջ առնել (92), ի պատերազմ ելանել (104), տալ պատերազմ (155), ի փախուստ դարձուցանել (203), ընդ միմեանս հարկանել (205) են:

Այս խմբի դարձվածքները գրեթե չեն տարբերվում նախորդներից. պատկերը գրեթե նույնն է:

1. **Զենքեր** – Ի սուր անկանել (9), նետաձիգ լինել (52), սրախողխող լինել (105), սուր ի գործ արկանել (151), ի սուր սուսերի մաշել (160), սրոյ ճարակ տալ (202), սուր ի վերայ դնել (202), ի բերան սրոյ կոտորել (205):

| | |
|---|---|
| Սուր | 7 |
| Նետ | 1 |

**Գ. Պետություն, պետական կառավարում, օրենք** – Դաշինս կռել (11), դաշնագիր լինել (87), աւար առնուլ (200):

**Դ. Շարժում, տեղափոխություն** – Այց առնել (39), ի բաց քեցել (44), ի մէջ անցանել (47), ի բաց գնալ (49), ընդ առաջ գալ (63), զմի-

մեամբք ելանել (92), յոտն յառնուլ (114), զհետ մտանել (225), ի վեր գալ (282), զմիմեամբք ելեւելս առնել (381) ևն:

| | |
|---|---|
| Անկանել, ելանել, դնել | 2 |
| Ընթանալ, երթալ, յառնուլ, անցանել | 1 |

**Ե. Միտք, մտածողություն** – Ի նոյն միտս կալ (86), ի մտի դնել (95), հանել ի մտաց (102), զմտաւ ածել (105), մտահաս լինել (105), մտախոհ լինել (293), յինքն ձգել զմիտս (325), միտ դնել (339):

**Զ. Վիճակ, դրություն** – Հասու լինել (3), անջինջ լինել (8) – ամրագրվել, ի բաց կալ (22), դեղակուր լինել (37), ահաբեկ լինել (71), յաղօթս կալ (74), խորասոյզ լինել (74), ի նոյն միտս կալ (86), յուխտի կալ (92), կալ ի հնազանդութեան (266) ևն:

| | |
|---|---|
| Լինել | 10 |
| Կալ | 5 |

**Է. Կրոն, հավատալիք, պաշտամունք** – Երկիր պագանել (48), յաղօթս ապաւինել (56), յաղօթս կալ (74), յուխտի կալ (92), ուխտ դնել (96), աղօթս մատուցանել (262), ծունր դնել (327):

| | |
|---|---|
| Աղօթք | 3 |
| Ուխտ | 2 |

**Ը. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ** – Ի մէջ անցանել (47), ընդ առաջ գալ (63), ի վեր յառնուլ (101), նզովս ի վերայ դնել (135), ի միջոյ բառնալ (138), ի վերայ բարուրս արկանել (161), ընդ առաջ ընթանալ (191), ի մէջ առնուլ (203), ի վեր հանել (208), ընդ առաջ երթալ (283) ևն:

| | |
|---|---|
| Վերայ | 6 |
| Առաջ | 4 |
| Մէջ | 3 |
| Վեր | 2 |

**Թ. Ըմպելիք** – Ընդ զինիս մտանել (100):

| **Իմաստային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Մարմնամասեր | 29 |

| | |
|---|---|
| Ռազմական գործ | 54 |
| Զենքեր | 8 |
| Պետություն, պետական կառավարում, օրենք | 3 |
| Շարժում, տեղափոխություն | 33 |
| Միտք, մտածողություն | 8 |
| Վիճակ, դրություն | 16 |
| Կրոն, հավատալիք, պաշտամունք | 7 |
| Տարածական հարաբերություններ | 16 |
| Ըմպելիք | 1 |

## Կառուցվածքային խմբեր

**Երկանդամ** – Լռութեան տալ (8), դառնամահ լինել (9), հրկէզ լինել (22), ամբաստան լինել (32), բարեբախտիկ լինել (46), ողջոյն տալ (64), խորասոյզ լինել (74), դաշնագիր լինել (87), գահավէժ առնել (172), նախանձաբեկ լինել (176) են:

**Եռանդամ** – Ի սուր անկանել (9), լուծանել ի կենցաղոյս (16), ի հոգս մտանել (26), զկենցաղս լնուլ (34), ի մահ դիմել (39), զսիրտս դարձուցանել (64), զամօթի հարկանել (95), ընդդէմ կալ (151), ընդ միտ մտանել (170), առ ոտս անկանել (244) են:

**Քառանդամ** – Ի նոյն միտս կալ (86) զվրէժ արեան առնուլ (103), զքէն վրիժուց խնդրել (106), սուր ի գործ արկանել (151), ի բերան սրոյ արկանել (205), ի կերպս կերպս լինել (227), ի ցասումն բարկութեան բրդել (236), ի դուռն գերեզմանի հասանել (298), ի դրունս մահու հասուցանել (374), զմիմեամբք ելեւելս առնել (381) են:

**Հնգանդամ** – Զանձն ի մահ դնել (6), զանձն յաշխատութիւն արկանել (10), զանձն ի մահ տալ (245), յինքն ձգել զմիտս (325):

Այսպես՝

| **Կառուցվածքային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Երկանդամ | 126 |
| Եռանդամ | 100 |
| Քառանդամ | 19 |

Հնգանդամ 4

**Երկանդամ դարձվածքների կաղապարներ**

1. **Գոյական + բայ** – Լռութեան տալ (8), բուռն հարկանել (9), դաշինս կռել (11), պատասխանի տալ (12), ձայն արկանել (42), երդումն տալ (63), պատ առնուլ (85), իջևանս առնել (100), ակն ունել (148), ահ արկանել (313) են:

2. **Ածական + բայ** – Հասու լինել (3), թոյլ տալ (17), անբնակ լինել (22), անփոյթ առնել (25), ուրախ լինել (26), բարեբախտիկ լինել (46), հասու առնել (132), ձեռնտու լինել (216), հակառակ կալ (277), մտախոհ լինել (293) են:

3. **Բայահիմք + բայ** – Ամբաստան լինել (32), խորասոյզ լինել (74), բնաջինջ առնել (92, 152), խոստովան լինել (138), ձերբակալ առնել (165):

**Եռանդամ դարձվածքների կաղապարներ**

1. **Առ + գոյական + բայ** – Առ ոտս անկանել (244):

2. **Զ + գոյական + բայ** – Զունկն մատուցանել (4), զկենցաղս լնուլ (34), զպէտս լնուլ (47), զհիրտս դարձուցանել (64), զկամս առնել (64), զամօթի հարկանել (95), զբռամբ ածել (105), զմիտս հաճել (157), զհետ մտանել (225), զմիտս շահել (255) են:

3. **Զ + դերանուն + բայ** – Զմիմեամբք ելանել (92):

4. **Ընդ + գոյական + բայ** – Ընդ ձեռամբ անկանել (67), ընդ գինիս մտանել (100), ընդդէմ կալ (151), ընդ միտ մտանել (170), ընդ գրով արկանել (249):

5. **Ընդ + դերանուն + բայ** – Ընդ միմեանս հարկանել (205), ընդ միմեանս անկանել (356):

6. **Ընդ + մակբայ + բայ** – Ընդ վայր թողուլ (39), ընդ առաջ գալ (63), ընդ առաջ ելանել (86), ընդ առաջ ընթանալ (191), ընդ առաջ երթալ (283):

7. **Ի + գոյական + բայ** – Ի գլուխ ելանել (8), ի հոգս մտանել (26), յաղօթս ապաւինել (56), հանել ի մտաց (102), ի հարուածս հար- կանել (155), յոտն յառնուլ (114), ի ձեռանէ թողուլ (205), ի նեղութիւն անկանել (250), ի խայտառականս մատնել (259), ի մահուանէ թափել (276) ևն:

8. **Ի + ածական + բայ** – Ի բաց կալ (22), ի բաց քեցել (44), ի բաց գնալ (49), ի նեղ արկանել (52), ի բաց հանել (66), ի բաց ընկե- նուլ (69), ի բաց կտրել (106), ի բաց թողուլ (174), ի բաց առնուլ (307):

9. **Ի + թվական + բայ** – Ի մի հաւաքել (112):

10. **Ի + մակբայ + բայ** – Ի վեր յառնուլ (101), ի վեր հանել (208), ի վեր գալ (282), ի շուրջ ածել (307):

11. **Գոյական + գոյական + բայ** – Սրոյ ճարակ տալ (202), մարտ պատերազմի տալ (203):

12. **Գոյական + բայ + դերանուն** – Զրաւ լինել ուրուք (259):

### Քառանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Զ + գոյական + գոյական + բայ** – Զվրէժ արեան առնուլ (103), զքէն վրիժուց խնդրել (106):

2. **Զ + դերանուն + գոյական + բայ** – Զմիմեամբք ելեւելս առնել (381):

3. **Ընդ + գոյական + գոյական + բայ** – Ընդ լծով ծառայութեան մտանել (314):

4. **Ի + գոյական + գոյական + բայ** – Ի բերան սրոյ արկանել (205), ի կերպս կերպս լինել (227), ի ցասումն բարկութեան բրդել (236), ի բերան բան դնել (242), ի դուռն գերեզմանի հասանել (298), ի դրունս մահու հասուցանել (374):

5. **Ի + ածական + գոյական + բայ** – Ի սուր սուսերի մաշել (160):

6. **Ի + դերանուն + գոյական + բայ** – Ի նոյն միտս կալ (86):

7. **Գոյական + ի + գոյական + բայ** – Ձեռն ի գործ արկանել (111), սուր ի գործ արկանել (151), փոյթ յանձին ունել (279):

## Հնգանդամ դարձվածքների կաղապարներ

1. **Զ + գոյական + ի + գոյական + բայ** – Զանձն ի մահ դնել (6), զանձն յաշխատութիւն արկանել (10), զանձն ի մահ տալ (245):

2. **Ի + դերանուն + բայ + զ + գոյական** – Յինքն ձգել զմիտս (325):

Առանձին անդրադառնանք Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունից առանձնացված դարձվածքների իմաստաբանական և կառուցվածքային դասակարգմանը, որը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում[42]: Հ. Դրասխանակերտցու դերը հայոց պատմության մեջ վճռորոշ է և կարևոր, բայց հակասական: Դրասխանակերտցին, իր կյանքը վտանգելով, հաշտություն է հաստատում թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական գժտությունների դեպքում, թեև հայ իրականության մեջ նրան երբեմն համարել են երկչոտ և թույլ կաթողիկոս:

Հ. Դրասխանակերտցու կարևորագույն աշխատությունը իր «Պատմութիւն Հայոց» երկն է, որը գրել է Աշոտ Ա Բագրատունու և Գագիկ Արծրունի «թագավորների» հրամաններով: Աշխատանքը կարելի է համարել երկրորդ լիարժեք հայոց պատմությունը Խորենացու աշխատությունից հետո: Պատմիչը իր պատմությունը սկսել է Նոյ նահապետից, ջրհեղեղից՝ հասցնելով մինչև իր ապրած օրերը՝ 925 թվականը:

Դրասխանակերտցին իր պատմությունը գրելիս օգտվել է Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Դիոնիսիոս Թրակացու, VII դ. Անանուն պատմիչների տարբեր վկայաբանություններից, զանազան այլ աղբյուրներից և իր ժամանակակից Շապուհ Բագրատունի «գեղջուկ բանիւ» գրված պատմությունից, այնուհանդերձ, իր աշխատության մեջ կան

---

[42] Տե՛ս **Դրասխանակերտցի Հ.**, Պատմութիւն Հայոց, Եր., 1996 (սույն աշխատությունից կատարված հետագա մեջբերումները նշել ենք համապատասխան օրինակների կողքին՝ փակագծերում գրելով էջերը):

վկայված որոշ տեղեկություններ, որոնք վկայված չեն վերոնշյալ աշխատություններում:

Պատմագրի հավաստմամբ՝ նա երկար տարիներ հավաքել է տարբեր աղբյուրների նյութերն ու վկայությունները և միայն կյանքի վերջին տարիներին է սկսել շարադրել իր կյանքի գլխավոր երկը: Տեղին է զուգահեռը Խորենացու և Դրասխանակերտցու գործունեության մեջ:

Խորենացին իր «Հայոց պատմութիւն» լայնածավալ երկը գրել է կյանքի վերջին տարիներին, ինչպես վերը նշեցինք, Դրասխանակերտցին ևս: Նա նշում էր, որ որքան էլ փորձել է ճշգրիտ պատմություն ներկայացնել և չենթարկվել պատվիրատուի ճնշումներին, միևնույնն է, տկարության պահերին իր գրիչը սկսել է ենթարկվել պատվիրատուին: Դրասխանակերտցու պատմության մեջ նույնպես նկատելի է պատվիրատուների անմիջական ազդեցությունը, քանի որ նա ստիպված է եղել Գագիկ Արծրունուն անվանել «թագավորն հայոց աշխարհի» և նրա մասին հյուսել որոշ գովաբանական-փառաբանական հատվածներ:

Դրասխանակերտցու աշխատության ամենակարևոր հատվածը իր ապրած ժամանակաշրջանի պատմագրությունն է, որը հեղինակը գրել է ականատեսի աչքերով և նկարագրել ամենայն մանրամասնություններով: Աշխատությունը աղբյուրագրական մեծարժեք գործ է, որը պատմագիտության մեջ արժանացել է լուրջ վերաբերմունքի: Դրասխանակերտցու աշխատությունը մանրամասն քննության է առել Գևորգ Տեր-Վարդանյանը[43] (աշխատությունը արժանացել է նաև մի շարք այլ պատմաբանների ուշադրությանը):

Պետք է արձանագրել, որ այստեղ ակնհայտ գերակայում են զենքի և ռազմական գործի, մարմնամասեր և ֆիզիկական գործողություններ արտահայտող իմաստային դաշտի բառերից կազմված կապակցությունները: Տվյալ իրողությունն ուղղակիորեն բացատրվում է

---

[43] Տե՛ս **Մատենագիրք հայոց,** ԺԱ. հատոր. Ժ դար. Պատմագրութիւն, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 317-631:

և՛ Դրասխանակերտցու ապրած ժամանակաշրջանով, և՛ երկի բովանդակությամբ:

***Ա. Զենք և ռազմական գործ նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ***

Բերենք զենքի և պատերազմի իմաստային դաշտին պատկանող բառերից կազմված դարձվածքների խորհրդանշական օրինակներ, որոնք հաստատում են այն ճշմարտությունը, որ հին և միջին դարերի ամենաժանտ ու կորստաբեր հայտնագործությունը սառը զենքն էր: Այս ժամանակաշրջաններում ի հայտ եկան տարբեր զինատեսակներ, որոնք կործանարար դեր ունեցան հետագա ներազգային և միջազգային հակամարտություններում, բայց և միաժամանակ յուրովի հարստացրին լեզուների բառապաշարը տարբեր դարձվածային միավորներով: Այս խմբին պատկանող դարձվածքների գերակշիռ մասը կազմված է «սուր» և «զենք», «հուր» գլխաբառերով դարձվածքներից, դարձվածաստեղծ ներուժ ունեն նաև «պատերազմ» և «մարտ», «նետ» բառերը: Բնորոշ է, որ այս իմաստային դաշտի դարձվածքներում *սուրը* հաճախ զուգորդվում է *հուր* և *գերություն* բառերի հետ, սուրը պատերազմի խորհրդանիշն էր, այն բարձրացնելը՝ հրաղաղարի նշան, իսկ *հուրը, հրդեհը*՝ պատերազմի և ավերման միջոց: Դրասխանակերտցու երկում 20-ից ավելի ռազմի և կոտորածի իրողություններ արտահայտող դարձվածքներ ենք գտել, բայց դրանց զգալի մասը հոմանշային հարաբերության մեջ են գտնվում, հատկապես *սուր* կամ *արիւն* բաղադրիչով կազմվածները:

Բերենք ռազմի և պատերազմի իմաստային դաշտին վերաբերող բառերից կազմված ամենակիրառական դարձվածքների օրինակներ՝ նշելով նրանց բացատրությունը՝ **վառել ի զէնս** (170) – սպառազինվել, **տալ կերակուր սրոյն** (254) – սրի մատնել, **սրոյ ճարակ տալ** – (354) սրի քաշել, **մարտիւ պատերազմի սրակոխ առնել** (354) – պատերազմելով սրահարել, **տնակոտորութիւն և հրացանութիւնս զեղել** (164) – ավերում և հրդեհներ սփռել, **հրդեհակէզ լինել** (100) – հրդեհից այրվել, **մարտ հարկանել**(308) – մարտնչել, կռվել, **մենամարտիկ(ս) լինել կամ ելանել** (312) – մենամարտել, մենամարտությամբ կռվել, **նետաձիգ առնել** (174) – նետահարել, նետի նման խոցել, **սրակոխ առնել**

(354) – սրակոտոր անել, **սրոյ ճարակ տալ** (354) – սրի քաշել, սրով կոտորել և այլն:

***Բ. Մարմնամասեր նշանակող բառերից սերեղծված ԴՄ-ներ***

Միջնադարյան հայ մատենագրության և պատմագրության մեջ լայն տարածում ունեն մարմնամասեր նշանակող բառերից կազմված դարձվածքները: Դրասխանակերտցին ևս վարպետորեն կիրառել է այս խմբին պատկանող դարձվածքներ՝ հարստացնելով իր աշխատության լեզուն և ոճը: Մարմնամասեր նշանակող բառերից «Պատմութիւն Հայոց»-ի մեջ հանդիպում են *արիւն, ակն/աչք, գլուխ, մարմին, ձեռն, երես, լեզու, ունկն* բառերից կազմված հայտնի և ևնրագյուտ դարձվածքներ: Բերենք բնութագրական մի քանի օրինակ՝ **նուաճել կարգել ընդ իւրով ձեռամբ** (28) – ձեռքի տակ գցել, նվաճել, **զբռամբ ածել**(20) – ձեռք գցել, տիրանալ, **զսիրտ կակղել** (170) – գութը շարժվել, սիրտը փափկել, մտապահել, **առ ոտն հարկանել** (290) – ոտնահարել, արհամարհել, **ձեռս լքանել** (290) – վհատվել – թևաթափ լինել, **յականջս հասուցանել** (34) – ականջին հասցնել, լսեցնել, **յական թօթափել** (164) – աչքին երևալ, **զաչս հարկանել** (186) – ուշադիր նայել, **ի գլուխ ելանել** (186) – ավարտվել, ամբողջանալ, **սիրտ ճմլել** (188) – խղճահարվել, **ակն ունել** (220) – աչք ունենալ, հուսալ, **ընդ կրունկն դառնալ** (100) – փախչել, նահանջել, **ստանալ ձեռն** (218) – ձեռք բերել, **ի գլուխ ելանել** (210) – գլուխ գալ, ավարտվել, **հոծեալ բերան** (154) – թանձրալեզու, դժվարախոս, **ձեռս ի գլուխ ելանել** (356) – գլխին տալ, փոշմանել, **ձեռնատուր լինել** (102) – անձնատուր լինել, **ձեռնթափ լինել** – (164) թևաթափ լինել, **յական թօթափել** (110) – աչքից աննկատ մնալ, վրիպել և այլն: Վկայված են նաև *կուռն* մարմնամասից բաղադրված դարձվածքներ, ինչպես՝ **կուռս վառեալս** (312) – լավ սպառազինված:

***Գ. Ֆիզիկական գործողություններ և լինելություն արտահայտող բառերից կազմված ԴՄ-ներ***

Բնական է, որ ֆիզիկական գործողություն արտահայտող բայերից կազմված դարձվածքները պետք է ստեղծագործության լեզվում գերակշիռ մաս կազմողներից լինեին, քանի որ Դրասխանակերտցու աշխատությունը Հայաստանում զարգացող պատմական դեպքերի

նկարագիրն է, իսկ դարձվածքները հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում մեծաւ մասամբ կազմվում են ֆիզիկական գործողություններ և լինելություն նշանակող բայերից, օրինակ՝ առնել, առնուլ, արկանել, բերել, թողուլ, մատնել, վճարել, տալ, լինել/իմ, գոլ և այլն:

Բերենք մեր եզրակացությունն ամրակայող նման մի շարք դարձվածքների օրինակներ՝ **տալ կերակուր սրոյն** (254) – սրի մատնել, **ի ներքս արկանել** (6) – խորամուխ լինել, **արտաքոյ բանից թողուլ** (8) – չհիշատակել, անտես առնել, **շոգմոգել շողոմութեամբ բանիւ** (254) – շողոքորթել դատարկախոսությամբ, կեղծավորաբար, **յանձն առնուլ** (306) – պատրաստ լինել, ստանձնել, **դէտակն ունել** (332) – ուշադիր սպասել, ակնկալել, **սրոյ ճարակ տալ** (354) – սրի քաշել, **մարտիւ պատերազմի սրակոխ առնել** (354) – պատերազմելով սրահարել, **կոշկոճամահ լինել** (354) – տանջամահ լինել, **մերկանալ մտօք** (364) – ձերբազատվել, մեկուսանալ, **հրաժարել ի կենաց** (92, 184) – մեռնել, վախճանավել, **դուռն բացել** (74) – հուսադրել, **ի դիւի մատնել** (150) – դիվահարել, զայրացնել, կատաղեցնել, **բերիլ ի կամս** (218) – հնազանդվել, **պէտսն վճարել** (186) կարիքները հոգալ, **հանգչել ի Քրիստոս** (186) – մեռնել, **դիմակ գոլ** (186) – հակառակվել, դիմադրել, **ունել զաթոռն** (186) – գահակալել, **լիզաջինջ առնել** (298) – բնաջնջել, **կապուտ կողոպուտ առնել** (298) – կողոպտել և այլն:

***Դ. Միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄներ***

Մեծ մտավորականն ու կաթողիկոսը չէր կարող անմասն մնալ միտք, գիտելիք և խոսք նշանակող դարձվածքների կիրառումից, չնայած դրանց թիվը շատ մեծ չէ, սակայն դրանք ունեն կարևորագույն նշանակություն և արժեք: Հայ մատենագրության մեջ կրթության և գիտելիքի դերը միշտ ընդգծված է եղել: Դրասխանակերտցին, պատմելով հայոց մեծերի վարքը, հատուկ շեշտադրում է նրանց գիտելիքների խորությունը, բանավիճային շնորհը, իմաստասիրությունը և իր պատմության մեջ բազմաթիվ դարձվածքներ է կիրառում, ինչպես, օրինակ՝ **ի միտս զետեղել** (208) – մտքում ունենալ, մտապահել, **ի մտի դնել** (254) – մտադրվել, **խորհուրդս խոր թևակոխել** (366) – մտածմունքների մեջ սուզվել, մտասույզ լինել, **լեզուս ածել** (150) –

չարախոսել, բամբասել, **ի միտս վառել** (254) – խանդավառվել, **ի մտի առնուլ** (218) – մտադրվել, **կարծիս ի մտի դնել** (360) – կարծել, **ջան ի մտի դնել –** (358) ջանալ, ջանք անել, ջանք թափել, **ուշ ի կուրծս առնել** (182) – լավ, լրջորեն մտածել և այլն:

Վերևում նշված իմաստային դաշտերին պատկանող դարձվածքները ամենակիրառականն են մեր ուսումնասիրած սկզբնաղբյուրում, սակայն գտել ենք նաև այլ իմաստային դաշտերին պատկանող գլխադաս բառերից կազմված ուշագրավ դարձվածքներ, որոնց բնութագրիչ կառուցատիպերը կներկայացնենք ստորև:

***Ե. Շարժում, տեղափոխություն, փոխադրում նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ*** **արտաքոյ կացուցանել** (178) – դուրս բերել, հեռացնել, **ի բաց ընկենուլ** (էջ 364) – դեն նետել, հեռացնել, **ի բաց հանել** (էջ 114) –կտրել, **ի բաց խոտորել** (էջ 284) – հեռացնել, վանել, **մերձ հասուցանել** (էջ 198 ) – մոտեցնել, բարեկամացնել և այլն:

***Զ. Տուն, տեղ, բնակավայր նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ*** **զշինութիւն աշխարհի տնօրինել** (10) – աշխարհաշեն գործեր կատարել, **շինանիստ շինուած** (8) – կատարյալ կառույց, շինություն, **մտանել յաշխարհս** (147) – գրավել և այլն:

***Է. Կրոնի և հավատալիքների դաշտին վերաբերող ԴՄ-ներ*** **հոտ Տեառն** (170) – Աստուծո հոտը, հավատացյալների հոտը, **Աստուծոյ այր** (116) – հոգևորական, **Աստուծային գիր** (74) – Աստվածաշունչ, **հոգեւոր առագաստ** (150) – մայր եկեղեցի, հանգչել ի Քրիստոս (186) – մեռնել, **երկիր պագանել** (34) – երկրպագություն անել, երկրպագել, **յետին թոշակ** (344) – հաղորդություն, որ տրվում է մահամերձ հիվանդին և այլն:

***Ը. Ժամանականիշ բառերից կազմված դարցվածքներ*** **ծախել զժամանակս** (8) – ժամանակը վատնել, զուր անցկացնել, **վճարել զօր կենաց** (110) – ավարտել կյանքի օրերը:

Մեր հետազոտության նյութ դարձած դարձվածքների ոճական կիրառությունների յուրահատկություններն ի ցույց դնելու համար Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից բերենք բնագրային գեղեցիկ օրինակներ:

1. Իսկ նոցա անարգել մոլեգնութեամբ զմառախուղ ստուերաց խաւարի զանձմբ արկեալ՝ զոր միանգամ գտանէին զճանապարհայն **սրոյճարակ տային**՝ զզգօն եւ զանապարտ քահանայսն, եւ զերկրա-գործ մշակսն, եւ զխաշնարածսն, եւ զճանապարհորդսն, և զաղ-քատսն եւս (354):

Իսկ ապա երկաքանչիւրքն կողմանք զօր գումարեալ գունդ կազ-մեալ՝ իբր հրոսանուէր իմնդ դրդմամբ **մարտ** ընդ միմեանս **հարկա-նէին** (308):

2. Եւ՝ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւ-րումն սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպէտս ամե-նեցունց. եւ անտի ելեալ գնացք՝ ի կողմանս Գուգարացւոց եւ անդ բնակեցաք՝ **ակն ունելով** փրկութեան մերոյ՝ ի Տեառնէ (220):

Ապա Ատրներսեհ եւ Հասանն տեսեալ, եթէ խորհուրդ սպան-մանն ոչ ել 'ի գլուխ' ահ երկիւրդի զնոսա պատեալ պաշարեալ էր. ստէպ ստէպ ապա յաւարի առեալ զորս **'ի ձեռն ըմբռնեցաւ**, այլ և զկարասի բազում թր եդեալ պահէր յամրոցին՝ Անի փախստեայ յա-մուրսն Տայոց չուեալ անդ անկանեին (210):

Եւ ապա թագաւորն **ընդ կրունկն դարձեալ** վաղվաղէ չուէ գնայ ընդ դուռն Դվին քաղաքին. եւ անդ բազում արեան ճապաղիս 'ի նո-ցանէն հեղեալ եւ առհասարակ յաւարի առեալ զնոսա՝ հնազանդե-ցուցանէր զամբարտաւան եւ զբիրտ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ (308):

3. Արդ՝ այս այսպէս իրագործեալ, քանզի որպէս նկանակն Գե-ղէռն դարձեալ հոլովեալ՝ ի բանակն այլազգեաց եւ **լիաջինջ** զնոսա **արարեալ**՝ ինքն Աշոտ եղբարբն իւրով դառնայ գնայ խնդութեամբ եւ յաղթութեամբ բազմաւ եւ մեծաւ աւարաւ զկողմամբք Վրաց աշխար-հին առ յավէտ սիրեցեալն իւրեանց իշխանն Գուրգէն (298):

Զոմանս ի սուր սուսերի եւ ի սլաքս նետից եւ ի տէգս նիզակաց հաշեալ մաշեալ սատակէին. զոմանս իսկ ձերբակալ արարեալ զՍա-ռակինոսսն սատակէին. եւ զոմանց զունչս եւ զականջսն կտրէին. իսկ՝ ի քրիստոնեայս խնայեալ **կապուտ կողոպուտ արարեալ** զնոսա թողուին երթալ գնալ ի բաց, և գրեթէ ոչ որք՝ ի նոցանէ ճողոպրեալ զնո-սա թողուին երթալ գնալ՝ ի բաց, եւ գրեթէ ոչ որք՝ ի նոցանէ ճողոպրեալ

գտանէր, բայց միայն Վասակն սակաւ արամբք փախստեայ անկեալ յամրոցն Ծամշուլդէ (298):

4. Եւ հանդերձեալ դահճացն զէրեց եղբայրն կատարել սրով, նա աղաչանս նոցա մատուցանէր՝ նախ զկրտսերն քան զինքն տալ կերակուր սրոյն. ՚**ի մտի եդեալ** եթէ գուցէ ՚ի վերջ քան զնա մնալով՝ ըստ մանուկ տիոցն զարհուրեսցի ինչ յԽսմայէլեան սրոյն սպառնալեացն,– վասնզի մրազարդ մորուքն ՚ի ծնօտսն դեռևս էր տիգեալ և ընծիւղեալ – եւ դարձեալ յեղբայրն կոյս ասէր (254):

Վասն որոյ ապա Հասանն խոհական իմացուածիւ՝ **ուշ ի կուրծս արարեալ** և գիտացեալ ոչ այլ ինչ իւրք փրկիլ նոցա յայնմանէ (որ բացեալ երևէր դուռն կորստեան) եւ կազդուրեալ ի կամս երկնաւոր այցելութեանն, խնդրէ յետկար երդման յԱփշնէ, զի տացէ նմա զամրոցն եւ առ ի նմանէ գտցէ աներկիւղութիւն արեան եւ ամենայն չար ամպրոպաց (182):

5. **Ի բաց ընկենուլ** զքազավորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս (364):

6. Սակայն ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ զայն ինչ զոր նախ քան զմեզ քաջք եւ բանաստեղծք արգոյակապք եւ զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուստ՝ ի վերուստ արձանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց և զպայազատութիւն իշխանաց և զհանգամանս պատերազմաց եւ **զշինանիստ շինուածս** քաղաքաց և գաւառաց, գեօղից և գերդաստանաց....(8):

7. Եւ այսպէս իբրև հրով զմիտս նոցա վառեալ՝ զամենեցուն լեզուս շարժէր յօրնութիւնս ամենեցունցն Աստուծոյ, պնդակազմ զնա առնելով ՚ի մշտնջենաւոր աղօթսն. եւ ապամատուցեալ զսարսափելի զպատարագն զառ ի Քրիստոս, եւ զխորհուրդն փրկական մարդկան բաշխէր առհասարակ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն չափու հասակի խորհրդականաւանդութեամբ՝ ըստ սակի **յետին քոշակի** (344):

8. Եւ արդ մի՛ եւս ինէ այլ յիրս յառաջաբանութեանս եղիցի **ծախել զժամանակս.** վասն զի ծերութիւն ցաւագին՝ մահ առ դուրս պատրաստ ունի, եւ տագնապ տարակուսցիս հապճեպ տայ պատմել

զանգս անցից աղետիցս եւ անհնարին խռովութեանց հասելոց կալեալց զմեզ (8):

Եզրափակելով մեր վերլուծությունը՝ անվարան արձանագրենք, որ Դրասխանակերտցու պատմության դարձվածքները ընդգրկում են հայերենի անվանական և բայական բառապաշարի հիմնական իմաստային դաշտերը, ըստ վիճակագրության՝ առաջին տեղում են ռազմի և պատերազմի իմաստային դաշտին պատկանող բառերից կազմված ԴՄ-ները, որովհետև հայոց պատմությունը հրի ու սրի պատմություն է եղել, կենաց ու մահու պատերազմների ժամանակագրություն, որի ընթացքում մեր ժողովուրդը արքաների ու նախարարների, կաթողիկոսների գլխավորությամբ պայքարել է իր կյանքի իրավունքի համար, իսկ խաղաղության կարճատև պահերին շենացրել է իր երկիրը, գրել գրքեր, կառուցել վանքեր ու ամրոցներ, շեներ ու ոստաններ: Մարմնամաս նշանակող բառերից կազմված դարձվածները, որոնք հայերենի զարգացման բոլոր փուլերում կիրառական են և հաճախադեպ, երկրորդ տեղում են, դրանց հաջորդում են ֆիզիկական գործողություն և լինելություն արտահայտող բայերից կազմված միավորները, ապա՝ միտք և մտածողություն նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ները: Պատմագրական այս երկում առավել նվազ քանակով և հաճախականությամբ վկայված են նաև ժամանականիշ, հավատալիքների և կրոնի իմաստային դաշտին պատկանող բառերից, տուն, բնակավայր նշանակող միավորներից բաղադրված կառույցներ, ինչպես նաև շարժում և տեղափոխություն արտահայտող բայերից ստեղծված յուրօրինակ դարձվածքներ:

Դարձվածքների կառուցվածքային դասակարգումը հնարավորություն է տալիս ուսումնասիրողներին ծանոթանալու հին հայերենում տարածված դարձվածային հիմնական կառուցատիպերին, ինչպես նաև հասկանալու, թե քանի բաղադրիչներից են դրանք սովորաբար կազմվել, բաղադրիչները ինչպիսի հարաբերությունների մեջ են գտնվել, որոնք են առավել կենսունակ և կիրառական, որոնք դիպվածային և ոչ կենսունակ:

Ըստ դարձվածային միավորների բաղադրիչների քանակի՝ ընդունված է տարբերակել նվազագույնը երկանդամ կառույցներ, որով-

հետև դարձվածքը նախ և առաջ կայուն բառակապակցություն է՝ վերաիմաստավորված բաղադրիչներով, ապա եռանդամ, քառանդամ և ավելի՝ տվյալ լեզվում հնարավոր շարահյուսական հարաբերություններին համապատասխան[44]:

Վերլուծելով «Պատմութիւն Հայոց» երկի դարձվածքներն ըստ բաղադրիչների քանակի՝ պարզ է դառնում, որ այստեղ գերակշռում են երկանդամ և եռանդամ բայական կամ անվանական ԴՄ-ները: Բերենք բնութագրիչ օրինակներ՝ նշելով, որ նախդիրները համարել ենք ԴՄ-ների ինքնուրույն բաղադրիչներ, որոնք ունեն և՛ ձևային, և՛ բովանդակային տարբերակիչ դեր:

*Երկանդամ անվանական դարձվածքներ՝*

1. **աներկիւղութիւն արեան** (204) – արյան կանչը, ցեղի քաջությունը,
2. **աւուրս պարէն** (262) – մեկ օրվա սնունդ, օրապահիկ,
3. **Աստուածային գիր** (74) – Աստվածաշունչ,
4. **արեգակն արդարութեան** (264) – արդարության արեգակը, հույսը,
5. **ծածուկ արութիւն** – առնանդամ,
6. **հօտ Տեառն** (170) – Աստծո, հավատացյալների հոտը,
7. **հոծեալ բերան** (154) – թանձրալեզու, դժվարալեզու,
8. **հարք հաւասարութիւն** (142) – ամեն բանով հավասարություն, միաբանություն,
9. **շինանիստ շինուած** (8) – կատարյալ կառույց, շինություն,
10. **պատրանց պատրող** (364) – խաբեբա, հմուտ սրիկա (*այստեղ ունենք գոյականական կիրառության ենթակայական դերբայ*) և այլն:

Նշենք, որ անվանական դարձվածքներն իրենց քանակով և կիրառությամբ էապես զիջում են բայական ԴՄ-ներին:

*Երկանդամ բայական դարձվածքներ՝*

1. **ակն ունել** (220) – աչքի առաջ ունենալ,

[44] Տե՛ս **Դիլբարյան Ն. Հ.,** Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» գրաբար բնագրի դարձվածքների քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2019, 2(29), էջ 63-69:

2. **առնուլ կին** (26) – ամուսնանալ,

3. **դուռն բացել** (74) – հուսադրել,

4. **դիմակ զոլ** (186) – հակառակվել, դիմադրել,

5. **խրախ լինել** (72) – ուրախանալ,

6. **խրախույս տալ** (350) – խրախուսել, ոգի տալ,

7. **յական թօթափել** (164) – աչքին երևալ,

8. **լիզաջինջ առնել** (298) – բնաջնջել,

9. **հարկ առնել** (194) – հարկադրել, պարտադրել,

10. **հոգ ածել** (28) – հոգ տանել, խնամարկել,

11. **հորդան տալ** – առաջ շարժվել, վարել, քշել զորքի բազմությունը,

12. **պէտսն վճարել** (186) – կարիքները հոգալ,

13. **ստանալ ձեռն** (218) – ձեռք բերել,

14. **սէր դնել** (162) – միաբանություն հաստատել,

15. **սիրտ ճմլել** (188) – խղճահարվել,

16. **տապախարշ լինել** (110) – այրվել, շոգախեղդ լինել,

17. **ունել զաթոռն** (186) – գահակալել և այլն:

Եռանդամ ԴՄ-ները հիմնականում բայական են, անվանական կառույցները խիստ սակավ են: Դրանց հետաքրքիր օրինակները ներկայացնում ենք գիրկընդխառն:

*Եռանդամ դարձվածքներ՝*

1. **արկանել զսուր թշնամութեան**(10) – խիստ թշնամանալ,

2. **արտաքոյ բանից թողուլ** ( 8) – չհիշատակել, անտես առնել,

3. **առ ոտն հարկանել** (290) – ոտնահարել, արհամարհել,

4. **առնել զահ երկյուղի** (354) – սարսափահար լինել,

5. **բառնալ նինջ արտեւանաց** (218) – քունը կտրվել,

6. **ի դիմի հարկանել** (18) – դիմահար բախվել,

7. **ի միտս զետեղել** (208) – մտքում ունենալ, մտապահել,

8. **ի ներքս արկանել**(6) – խորամուխ լինել,

9. **ի միտս վառել**(254) – մտքում փայլատակել, մտքով պայծառանալ,

10. **ի մտի առնուլ** (218) – մտադրվել

11. **ի մտի դնել** (254) – մտադրվել,

12. **ի միտս զետեղել** (208) – մտքում ունենալ, մտապահել,

13. **ի դիւի մատնել**(150) – դիվահարել, զայրացնել, կատաղեցնել,

14. **խորհուրդս խոր թևակոխել** (366) – մտածմունքների մեջ սուզվել, մտասույզ լինել,

15. **շոգմոգել շողոմութեամբ բանիւ** (254) – շողոքորթել դատարկախոսությամբ, կեղծավորաբար,

16. **հատանել յոյս կենաց** (354) – կյանքի հույսը կտրել,

17. **հրաժարել ի կենաց** (92, 184) – մեռնել, վախճանվել,

18. **հանգչել ի Քրիստոս**(186) – մեռնել

19. **սրոյ ճարակ տալ** (354) – սրի քաշել,

20. **վրիպել ի խնդրոյ** (148) – սխալվել

21. **վառել ի զէնս** (170) – սպառազինվել,

22. **տալ կերակուր սրոյն** (254) – սրի մատնել,

23. **տալ տեղի բանիցն** (190) – համաձայնել և այլն:

Մեր քննած բնագրում վկայված են նաև քառանդամ դարձվածքներ, որոնք գրաբարյան երկերում այնքան էլ հաճախ չեն կիրառվում: Դրանք հիմնականում *ի* նախդիրի կիրառությամբ են ստեղծված, ինչպես՝

1. **դնել ուխտ ընդ մահու** (332) – պատրաստ լինել զոհաբերության, մեռնելու,
2. **ի կալանս կապանաց արկանել** (130) – շղթայակապ անել,
3. **կարծիս ի մտի դնել** (360) – կարծել,
4. **կտուրն ի միմեանց լինել** (180) – իրարից անջատվել, երկպառակվել,
5. **կուրծս առնել** (182) – լավ, լրջորեն մտածել, **հարց և փորձ առնել** (40) – հարցնել, հետաքրքրվել,
6. **ձեռս ի գլուխ ելանել** (356) – գլխին տալ, փոշմանել,
7. **մարտիւ պատերազմի սրակոխ առնել** (354) – պատերազմում սրահարել,
8. **ջան ի վերայ դնել** (94) – ջանալ, ջանք անել, ջանք թափել,
9. **ջան ի մտի դնել** (358) – ջանալ, ջանք անել, ջանք թափել,

10. **տնակոտորութիւն և հրացանութիւնս զեղել** (164) – ավերում և հրդեհներ սփռել և այլն:

Բերենք քառաբաղադրիչ դարձվածային միավորների կիրառության բնագրային ուշագրավ օրինակներ ևս: Մեր ընտրած այս հատվածներում վկայված են նաև ոճական հարուստ բնութագիր ունեցող տարբեր այլ ԴՄ-ներ.

«Բայց բնակիչք ամրոցին Քեղեայ իբրեւ լուան զգալուստ ոստիկանին եւ՝ ի մտի եդին զյոյժ մոմռումն սպառնութեան առ՝ ի նմանէն նոցա, զահի հարեալք եւ ահիւ ըմբռնեալք եւ **կարծիս 'ի մտի եդեալ** անհաստատ խորհրդով, թէ գուցէ մատնեսցի ամրոցն՝ ի ձեռս ոստիկանին եւ այնպէս անհնարին տանջանաց եւ մահու մատնեսցին» (360):

«Եւ վասն զի յետ ամաց բազմաց սպանաւ արքայն Լահ ոմն եկեալ յԱլանաց դրանէ եւ՝ **ի խնդիր ելեալ** գրով վկայիցն եւ գտեալ զնոսա՝ ի Ջրաբաշխն կոչեցեալ լերին, եւ **հարց և փորձ առնեալ** զնոսա վասն առ՝ ի Քրիստոս հաւատոցն՝ սուր՝ ի վերայ եդեալ կոտորէ» (40):

«Վասն որոյ ապա Հասանն խոհական իմացուածիւ՝ **ուշ ի կուրծս արարեալ** եւ գիտացեալ ոչ այլ ինչ իւիք փրկիլ նոցա յայնմանէ (որ **բացեալ երեւէր դուռն կորստեան**)՝ եւ կազդուրեալ՝ **ի կամս երկնաւոր** այցելութեանն, խնդրէ յետ կար երդման յԱփշնէ, զի տացէ նմա զամրոցն եւ առ՝ ի նմանէ գտցէ **աներկիւղութիւն արեան** եւ ամենայն չար ամպրոպաց» (182):

«Իսկ իմ եկեալ առ մեծ թագաւորն Գագիկ, եւ նա ընդունէր ածէր եւ յանձանձէր զմեզ ամենայն հոգեւոր սիրոյ հարազատութեամբ եւ հաստատուն հավատու եւ աներկբայ յուսով, եւ աներկեւան սիրով պաշտպանեալ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ՝ անկարօտ **զհարկաւոր պէտս** մարմնոյ **լցուցանէր**, եւ ապա զսովորական իմաստութիւնն **քաղցրացուցեալ** իւր աներկբայ **մտօք** յուսացուցանէր զմեզ, զի ոգւով չափ ջան՝ **ի մտի եդեալ** հոգասցի վասն դարձի մերոյ՝ ի բնակութիւնս մեր. մանաւանդ եթէ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցեաց՝ որպէս եւ քրիստոնէից

իսկ կարգք պահանջեն ամբողջ **զհաւատոցն սրբոց** պահել զօրութիւն. այլ այս երբ Տէր կամեսցի» (360):

Խ. Բաղիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» աշխատության մեջ կատարել է ժամանակակից հայերենի իմաստային, քերականական դասակարգում և կառուցվածքային վերլուծություն: Հեղինակը ուսումնասիրություն կատարել է համաժամանակյա մոտեցմամբ, սակայն, ըստ անհրաժեշտության, օգտվել է նաև միջին հայերենի և գրաբարի դարձվածքային միավորներից՝ օգտագործելով փաստական հարուստ նյութ: Հայերենի դարձվածքների վիճակագրական պատկերը նկարագրելիս Խ. Բաղիկյանը նշում է. «Ինչքան ավելանում է դարձվածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիվը»[45]:

Խ. Բաղիկյանի այս դիտարկումը մասամբ համադրելի է նաև Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի դարձվածային միավորների կառուցատիպերի վիճակագրական նկարագրին:

Դրասխանակերտցին գրաբարի իր փայլուն իմացությամբ և ստեղծարար մտքով ծնել է գրաբարի համար բացառիկ տեսակով և ոճական գեղեցկությամբ դարձվածքներ, որոնց բաղադրիչների թիվը գերազանցում է չորսը: Դրանք մեծ թիվ չեն կազմում, սակայն հարստացնում են հայերենի եզակի դարձվածքների շարքը: Ներկայացնենք բնագրային օրինակներ:

**ա) Հնգաբաղադրիչ դարձվածքներ**

**Արժանի կալ յաթոռ սրբութեան** (10) – սրբության աթոռին արժանի դառնալ, սրբացվել. «Զկնի յարադրելով զորդիս եւ զթոռունս նորա, որք արժանի գտան կալ յաթոռ սրբութեան նորա, այլեւ զայլ եւս զյաջորդս նոցունց մինչև ցայսօր ժամանակի, և որ ինչ'ի նովանէն կան յայլոց ոմանց յաւուրս նոցա գործեալ իրակութիւք»:

**Մահ առ դուրս պատրաստ ունել/իմ** – (8) մահը պատրաստ պահել, մահվանը մոտ լինել. «Եւ արդ մի՛ եւս ինձ այլ յիրս յառաջաբանութեանս եղիցի ծախել զժամանակս. վասն զի ծերութիւն ցվազին՝ մահ առ դուրս պատրաստ ունի, եւ տագնապ տարակուսիցս հապ-

[45] **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 206:

ճեպ տայ պատմել զանգս անցից աղետիցս եւ անհնարին խռովութեանց հասելոց կալելոց զմեզ»:

**Ի գործ չարի մասանցն բերել** (208) – չար գործերի մասնակցել. «Եւ յիւր կորստեան կեղծաւորեւթիւն բերեալ բանս ծածուկս ընդ թագաւորին Վրաց՝ հաստատէին սպանանել զՍմբատ, եւ փոխանակ նորա զնա կառուցանել հրամանատար Հայաստանեայցս, միայն թէ ընդ նոսա 'ի գործ չարի մասանցն բերեցի»:

**Նուաճել կարգել ընդ իւրով ձեռամբ** (28) – նվաճելով՝ ձեռքի տակ գցել, տիրանալ. «Այլ եւ սպարապետ եւ իշխան բիւրուց եւ հազարաց զնա կացուցանէր. յետ որոյ քաջապէս վանեալ զՅունականսն եւս՝ նուաճեալ կարգէ ընդ իւրով ձեռամբ զՊոնտոս եւ զԿեսարիեայ, որ կոչի Միժակ՝ հանդերձ շրջագայեալ գաւառօքն»:

**բ) Վեցաբաղադրիչ դարձվածքներ**

**Հասանել ի կէտ վճարման ի կենացս** (92) – վախճանվել, կյանքի վերջնակետին հասնել. «Բայց Համազասպայ յետ երից ամաց առնլոյ զպատիւ կուրապաղատութեանն 'ի կայսերէ՝ հասանէ ի նմա կէտ վճարնաք ի կենացս, եւ վախճանեալ դնի ընդ հարս իւր»:

**Ի խոյզ եւ ի խնդիր լինել** (16) – պրպտել, որոնել. «Ապա ոմն յազգէ ասորի՝ Մար Աբաս Կատինայ անուն, հրամանաւ մերոյն Վաղարշակայ երթեալ ի դիւանս թագաւորացն Պարսից, որ ուշիմ եւ վարժ էր մտօք՝ քաղդէարէն եւ յունարեն դպրութեամբ, 'ի խոյզ եւ 'ի խնդիր եղեալ՝ գտանէ անդ մատեան մի վավերական, զոր հրամանաւ Աղէքսանդրի որդւոյ Նեքտանիբայ 'ի քաղդէացի գրոյ ի յոյն փոխարկեալ էր, որ թէպէտ զբազում ազգաց զրոյցս հարստապէս 'ի նմա ճոխացուցեալ էր»:

Աշխատության մեջ գերակշռում են եռանդամ դարձվածքները, բայց դրանց քանակը համադրելի է երկանդամ միավորների քանակին: Ընդ որում՝ երկանդամ դարձվածքները հիմնականում կազմված են ***առնել, լինել, ունել, դնել*** բայերով և անուն կամ մակբայ խոսքի մասերի միջոցով, որոնք արտահայտում են բայ-ստորոգյալ և խնդիր կամ պարագա շարահյուսական կապը:

Անվանական դարձվածքների դեպքում հանդիպում են որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ կայուն փոխաբերական

կապակցություններ: Եռանդամ դարձվածքները հիմնականում կազմ-
ված են ***ի*** նախդրով և գոյականների թեքված ձևերով:

Ամփոփելով Հ. Դրասխանակերտցու աշխատության մեջ կիրառված դարձվածքների կառուցվածքային վերլուծությունը՝ կարող ենք ներկայացնել վիճակագրական հետևյալ պատկերը. Դրասխանակերտցու կիրառած դարձվածքների զգալի մեծամասնությունն են կազմում եռաբաղադրիչ կապակցությունները (ըստ որում՝ դրանք բացառապես նախդրավոր կառույցներ են), որոնք կիրառության հաճախականությամբ գրեթե համադրելի են երկբաղադրիչ դարձվածային միավորների գործածությանը:

Ուշարժան է այն փաստը, որ Դրասխանակերտցու աշխատության մեջ թվով բավականին շատ են քառաբաղադրիչ դարձվածային միավորները, որոնք այլ հեղինակների երկերում այնքան էլ տարածված չեն և դիպվածային են: Նման կառույցների առատությունը Դրասխանակերտցու լեզվի և ոճի յուրահատկությունն է:

Գրաբարում հազվագյուտ են բազմաբաղադրիչ (հինգ և ավելի բաղադրիչ ունեցող) դարձվածային միավորները: Այս օրինաչափությունն ակնհայտ նկատվում է նաև քննության ենթակա մեր մատենագիտական երկում: Դրասխանակերտցու կիրառած որոշ բազմաբաղադրիչ դարձվածքներ տեղ են գտել Ռ. Ղազարյանի հայտնի բառարանում, մի քանիսն էլ մենք ենք գտել, ուստի կարող ենք համարել նորագյուտ:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ պատմաբան-կաթողիկոսի կիրառած դարձվածքների մեծամասնությունը կազմված է բայ խոսքի մասին պատկանող գերադաս անդամից, թեև սակավաթիվ չեն նաև անվանական խոսքիմասային պատկանելությամբ գերադաս անդամով երկանդամ, եռանդամ և քառանդամ կազմությունները: Առանձնացրել ենք նաև չորսից ավելի բաղադրիչ ունեցող ԴՄ-ներ, սակայն դրանք հույժ սակավաթիվ են, այսինքն՝ գրաբարի համար կիրառական կառուցատիպեր չեն. դրանք ակնհայտ զուտ գրավոր խոսքում ստեղծված և գործածվող միավորներ են եղել:

Ընդհանրացնելով մեր քննած սկզբնաղբյուրների ԴՄ-ների իմաստային քննությունը՝ նշենք, որ մեր ուսումնասիրած աղբյուրնե-

րում իմաստային ամենամեծ խումբը կազմում են ռազմական գործին առնչվող դարձվածքները: Եթե իրենց կաղապարային և հատկապես ներքին իմաստի բազմազանությամբ (մարմնամասերի անվանումնե- րը դարձվածքներում, թեև շատ են կրկնվում, սակայն իմաստային տարբերակումներ են առաջացնում) առաջին տեղը գրավում են մարմնամասերի անվանումներից բաղադրվածները, ապա քանակա- պես գերիշխում են (չնայած ոչ մեծ տարբերությամբ մարմնամասերի անվանումներից բաղադրված և շարժում ցույց տվող դարձվածքների նկատմամբ) ռազմական գործին վերաբերող դարձվածքները: Սա, իհարկե, պատահական չէ. մեր ուսումնասիրած աղբյուրները, լինե- լով պատմագրական գործեր, ռազմի բազմաթիվ նկարագրական հատվածներ են պարունակում, որոնցում, անշուշտ, դարձվածքներն իրենց անփոխարինելի մեծ դերն ունեն: Ինչպես արդեն վերը նշել ենք, մարմնամասերի անվանումներից բաղադրված, ռազմին առնչվող և շարժում, տեղափոխություն արտահայտող դարձվածքնե- րը շատ հաճախ ներթափանցված են մեկը մյուսի տարրերով, որի պատճառով էլ շարժում, տեղափոխություն արտահայտող դարձ- վածքների խումբ տարբերակել ենք որոշ վերապահությամբ՝ նրա- նում ամփոփելով միայն մյուս երկու խմբերում չներառված դարձ- վածքները:

Մարմնամասերի անվանումներից կազմված դարձվածքների մեծ մասը բաղադրված է *ձեռն* բառից, ինչպես վիճակագրությունն է փաստում, իսկ ամենասակավը *կառափն, ճակատ, աչք, կրունկ, գուճ, ունչ* բառերից կազմվածներն են: Պատճառը ակնհայտ է. *ձեռն* բառը բառապաշարի հիմնական բառաֆոնդին է պատկանում, ինչը չի կա- րելի ասել, օրինակ, *կառափն* կամ *գուճ* բառերի մասին, ինչպես նաև գրաբարում դեռևս կիրառման ոչ մեծ հաճախականությամբ օժտված *աչք* հոգնակի բառի մասին, որ *ակն* եզակի ձևով էր հիմնականում գործածվում:

Դարձվածքները, ժողովրդական լեզվամտածողության արդյունք լինելով, միևնույն ժամանակ հղկված և կառուցիկ միավորներ են: Այսպես, մարմնամասի յուրաքանչյուր անվանում գործածվում է դարձվածքներում միայն որոշակի բայերի հետ: Օրինակ՝ *ձեռն* բառը,

լինելով ամենահաճախ կիրառվողը, բացառությամբ երկու-երեք դարձվածքների, մնացյալ դեպքերում հանդես է գալիս ոչ թե երկանդամ, այլ ավելի բազմանդամ դարձվածքներում, այսինքն՝ *ձեռն* բառը երկանդամ դարձվածքներում կարող է կապակցվել, օրինակ, *պալ, արկանել* բայերի հետ, դրա համար էլ ունենք *ձեռն պալ, ձեռն արկանել* դարձվածքները, բայց չունենք, դիցուք, *ձեռն հանել, ձեռն լինել* և այլ դարձվածներ: Սա, մեր կարծիքով, ապացուցում է, որ գրաբարյան դարձվածքների համար փոխաբերական իմաստը երկրորդային է. դարձվածքներ կերտելիս կարող էին բայերի փոխաբերական իմաստների վրա հենվելով ստանալ նորանոր դարձվածքներ, օրինակ՝ ժամանակակից հայերենում **ձեռք քաշել**՝ *քաշել* բայի վերաիմաստավորմամբ, բայց քանի որ գրաբարյան դարձվածքների համար փոխաբերությունը երկրորդային է, մեծ թիվ են կազմում հատկապես եռանդամ դարձվածքները, որոնցում նախդիրների շնորհիվ շեշտված է պատկերավորությունը , ոչ թե փոխաբերությունը:

Դարձվածքների իմաստակառուցվածքային վերլուծությունը ի հայտ բերեց ևս մի հետաքրքիր իրողություն. գրաբարյան դարձվածքները, գրեթե առանց բացառության, լինելով բայական կազմություններ, ստեղծվում են հիմնականում *առնել* և *լինել* «հակադիր» իմաստներ արտահայտող բայերով: Օրինակ՝ *փախստական առնել* դարձվածն արտահայտում է *փախուստի մատնել* իմաստը, իսկ *փախստական լինել*-ը՝ *փախչել*, թեև Ագաթանգեղոսի երկում հանդիպում են երկու դարձվածքներ, որոնցում *առնել*-ը և *լինել*-ը հակառակ իմաստների արտահայտմանը չեն ծառայում, այլ նույն իմաստն են կառուցում՝ *ինքնապարում լինել* (160)-ը և *ինքնապարում առնել* (178)-ը երկուսն էլ նշանակում են *անձամբ պարտվել*: Սակայն սա միակ օրինակն է մեր ուսումնասիրած աղբյուրներում, որտեղ այդ երկու բայերը իմաստային տարբերակում չեն առաջացնում:

*Լինել* բայի հետ կապված ևս մեկ հետաքրքիր հանգամանք ենք նկատել, այս անգամ՝ Մ. Կաղանկատվացու երկում. *արայորդոր լինել (174)*-ը, ըստ **առնել-լինել** բայական հակադրության, պետք է որ արտահայտեր *արի քաշվել* իմաստը, մինչդեռ հակառակն է՝ *արի մատնել*:

Մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածքների առանձին վիճակագրությունը ցույց է տալիս, որ դարձվածքների այս խումբը ամենաբազմազանն է, և այդ պատճառով այն կարելի է առանձին քննության առարկա դարձնել:

Ռազմին առնչվող դարձվածքները, թեև քանակապես ամենամեծ խումբն են կազմում՝ պայմանավորված, ինչպես նշել ենք, երկերի բովանդակությամբ, այդուհանդերձ մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածքների բազմազանությունը չունեն: Եթե վերջինիս դեպքում դարձվածքները կազմվում են մարմնի գրեթե բոլոր անդամների անվանումներից, ապա ռազմին առնչվողները, թեպետ առաջին հայացքից թվում է՝ պետք է նույնպես բազմազան լինեն՝ պայմանավորված երկերի բովանդակությամբ, սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք կազմված են հիմնականում *փախուստ, փախստական, ասպարակ, քնաջինջ, աւեր* և այլ բառերի միջոցով, իսկ քանակական գերազանցությունն ապահովվում է կամընտիր անդամների շնորհիվ, այսինքն՝ առաջանում են նորանոր դարձվածքներ՝ այս կամ այն անդամի փոփոխությամբ, որը, ինչպես վերը նշել ենք, ոմանք անվանում են «դարձվածային տարբերակ»:

Զենքերի անվանումներից բաղադրված դարձվածքները խիստ սահմանափակ են. որքան էլ մեր ընտրած աղբյուրներում մեծամասնություն են կազմում ռազմի նկարագրությունները, այնուամենայնիվ, զարմանալի է, որ զենքերի անվանումները ընդամենը մի քանիսն են՝ *սուր, մրրակ, բիր, սուսեր, նիզ, նետ*, ընդ որում՝ դարձվածքների ճնշող մեծամասնությունը կազմված է *սուր* բառով, մնացյալներին առավելագույնը երկու անգամ ենք հանդիպել:

Միտք, մտածողություն արտահայտող դարձվածքները բոլոր աղբյուրներում գրեթե նույնն են՝ կազմված *միտ(ք)*, երբեմն էլ *խել(ք)* գերադաս անդամներից:

Վիճակ, դրություն արտահայտող դարձվածքների խումբը, եթե դնենք համեմատության մեջ շարժում, տեղափոխություն արտահայտող դարձվածքների խմբի հետ, ապա կնկատենք, որ եթե վերջիններս կարող են և՛ ներգործություն, և՛ կիր արտահայտել, և՛ չեզոք լինել, ապա վիճակ, դրություն արտահայտողները՝ որպես կայուն վի-

ճակների արտահայտիչներ, չեզոք են իրենց բաղադրիչ *լինել* և *կալ* բայերի շնորհիվ, որոնք կիրառության ակնհայտ առավելություն ունեն այլ բայերի նկատմամբ:

Կրոն, հավատալիք, պաշտամունք արտահայտող դարձվածքները նույնպես բաղադրիչների բազմազանությամբ աչքի չեն ընկնում. այս դարձվածքները բոլոր աղբյուրներում կապված են հատկապես աղոթելու, երկրպագելու, զոհելու (յաշտ առնել) իմաստների հետ՝ սահմանափակված մոտավորապես տասը դարձվածքներով, որոնք հիմնականում կազմված են *աղօթք, պաշտօն, երկրպագութիւն* բառերով:

Տարածական հարաբերություններ (տեղ, ձև, չափ) արտահայտող դարձվածքների խումբը, պայմանավորված իր ընդգրկման լայն շրջանակով, քանակական ակնհայտ առավելություն ունի մյուսների նկատմամբ առաջին երեք խմբերից հետո: Այս խմբում, իբրև տարածական հարաբերությունների արտահայտիչներ, հանդես են գալիս այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ դիցուք, *մէջ, առաջ(ի), վերայ, վեր* են:

Ուտելիքի, ըմպելիքի, կենդանիների անվանումներից կազմված դարձվածքների խմբերը ամենաքիչ հանդիպողներն են: Այս դեպքում *խումբ* անվանումը պայմանական է, քանի որ դրանցում դարձվածքներ ներառված լինելու դեպքում դրանց թիվը չի գերազանցում մեկերկուսը: Իբրև ըմպելիքի անվանում հանդես եկավ *գինի*-ն, ուտելիքի՝ *սնունդ*-ը, իսկ կենդանիների անվանումներից՝ *ձի*-ն, *գազան*-ը: Ճիշտ է, *սնունդ*-ը ուտելիքի և *գազան*-ը կենդանու անվանումներ համարել ենք պայմանականորեն՝ նկատի ունենալով դրանց՝ ընդհանուր առմամբ մեր առանձնացրած այդ խմբերին իմաստային առնչություն ունենալը:

Դարձվածքների կառուցվածքային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկանդամ և եռանդամ դարձվածքները քանակական մեծ տարբերություններ չունեն իրարից և մեծամասնություն են կազմում քառանդամ, հնգանդամ, վեցանդամ դարձվածքների նկատմամբ: Յոթանդամ ընդամենը մեկ դարձվածք ի հայտ բերվեց Ագաթանգեղոսի երկում (զանձն ի մէջ մահուան և կենաց դնել):

2881 դարձվածքներից միայն 6-ը ոչ բայական կազմություններ են՝ *սրտի մտոք, ի ճահ, արևան գնոց, ձեռն ի ձեռն, բերան ի բերան, գին արևան:*

Նախդիրները՝ որպես դարձվածքների կառուցվածքային բաղադրիչներ, ի հայտ են գալիս՝ հատկապես եռանդամներից սկսած: Երկանդամներում դրանք սովորաբար բացակայում են: Երկանդամների հիմնական կաղապարներն են՝ *գոյական+ բայ, ածական+ բայ, մակբայ+ բայ, բայահիմք+ բայ,* երբեմն էլ՝ *գոյական+ գոյական, բայ+ բայ:*

Բացի *ց* նախդրից՝ մնացածները ակտիվ մասնակցում են դարձվածակերտման գործին. հատկապես ակտիվ են *ի* և *զ* նախդիրները:

# ԳԼՈՒԽ 4
# ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## 4.1. Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքի հայերեն թարգմանության դարձվածքների իմաստային դասակարգումը

Այս հատվածում ներկայացված են Խիկար Իմաստունի երկից քաղած գրաբարյան դարձվածքների իմաստային դասակարգումները: Իմաստային դասակարգումը կառուցվածքային դասակարգման հետ մեկտեղ կարևորագույն դեր ունի դարձվածքների ուսումնասիրության գործընթացում: Դարձվածքների գերադաս անդամի բառային նշանակության միջոցով հնարավոր է առանձնացնել այն իմաստային դաշտերը, որոնց միավորներն ավելի հաճախ են դարձվածքներ ստեղծում, այսինքն՝ ունեն դարձվածք կերտելու ներունակություն:

Ժամանակակից հայերենի դարձվածաբանական բառարանի տվյալների հիման վրա Պ. Բեդիրյանն ու Ե. Գևորգյանն առանձնացնում են այն հիմնական իմաստային դաշտերը, որոնց պատկանող բառերը արդի դարձվածքներում ամենակիրառականն են[46]: Առաջին տեղում, Պ. Բեդիրյանի համոզմամբ, մարդու մարմնամասերի իմաստային դաշտն է, որին պատկանող հասկացությունները գործուն դարձվածակազմիչ են: Այնուհետև կենդանանունների իմաստային դաշտն է, ապա՝ բնության և շրջակա աշխարհի, բուսանունների, մարդկային կենցաղի և հասարակական հարաբերությունների, մտքի ու գիտելիքի դաշտերը:

Իմաստային այս դաշտերին պատկանող բառերից դարձվածքներ կերտելու օրինաչափությունները բնորոշում են լեզվակիր հանրույթի աշխարհընկալման առաջնահերթությունները, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել:

---

[46] Տե՛ս **Բեդիրյան Պ.,** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 91-92, **Գևորգյան Ե.,** Հայերենի դարձվածքները, Եր., 1969, էջ 91-99:

Դիտարկելով «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ» երկում վկայված գրաբարյան դարձվածքները՝ կարող ենք արձանագրել, որ այստեղ ակնհայտորեն գերակայում են շարժում և տեղափոխություն, վիճակ, դրություն, ապա՝ մարմնամասեր ցույց տվող բառերից կազմված դարձվածքները: Այնուհետ, ըստ հաճախականության, հաջորդում են կրոն, հավատալիք, պաշտամունք, միտք-մտածողություն ներկայացնող իմաստային դաշտերից կազմված միավորները: Մեկական օրինակով վերցված են զենքի ու ռազմական գործի, ուտելիքի և ըմպելիքի, պետության-պետական կառավարման իմաստային դաշտերին պատկանող հասկացություններից ծագած դարձվածքներ: Վիճակ-դրություն, շարժում-տեղափոխություն ներկայացնող դարձվածքների գերակայությունն ու ճնշող մեծամասնությունը, մեր համոզմամբ, պայմանավորված են այն հանգամանքով, որ Խիկար Իմաստունի երկը ուսուցանող, խրատական բնույթ է կրում. այստեղ մեծ նշանակություն է տրվում անձի կրթությանը:

Բերենք բնորոշ օրինակներ՝ ***յազեցուցանել ուսմամբ*** (76) – կրթել, ***ուղեղ դատել*** (86) – կշռադատել, ***յուսումն տալ*** (171) – կրթության տալ, բարոյականության ու մտածողությանը՝ ***համբերել միամտութեամբ*** (150) – միամտությամբ սպասել, ***ամօթով լինել*** (273) – ամօթահար լինել, ***զարթուցանել չարիս*** (276) – չարիքը բորբոքել, ***զգործս վճարել*** (76) – հատուցել, ***ի վնասու կորնչիլ*** (82) – փորձանքի ենթարկվել, **բարեկեցուցանել զմիտս** (89) – միտքը զարգացնել, ***զբարութիւնս ջամբել*** (171) – բարություն ցանկանալ և այլն:

Բնորոշ է այն փաստը, որ խրատական դարձվածքների մեջ պարտադիր առաջնահերթություն են համարվում ճշմարտախոս լինելը, ստախոսությունից հեռու մնալը, վատ արարքներից զերծ լինելու գաղափարները, ընդ որում՝ դրանք հանդես են գալիս փոխաբերական և ճկուն գունավորում ունեցող կայուն կաղապարներով՝ ***պահել զբերան ի ստութենէ*** (86) – ստից ձեռնպահ մնալ, ***պահել զլեզու ի չարախօսութենէ*** (144) – չարախոսությունից հեռու մնալ, ***պահել զլեզու ի շատախօսութենէ*** (147) – շատախոսությունից զերծ մնալ, ***պահել զձեռն ի գողութենէ*** (144) – գողությունից հեռու մնալ:

Մեծ թիվ են կազմում **որոգայթ** գերադաս անդամով դարձվածք-ները՝ ***որոգայթ խորհել*** (82) – որոգայթ լարել, ***որոգայթ մահու*** (284) – մահվան ծուղակ, ***որոգայթ ածել*** (285) որոգայթ, թակարդ լարել, ***յորոգայթ ննղութիւն*** (282) – խոր թակարդ: **Որոգայթ** բառը համարում ենք մարդկային կյանքն ու հարաբերությունները բնորոշող խորհրդանիշ: Որոգայթները բազմաթիվ ու բազմապիսի փորձություններ են, որոնց մարդը ենթարկվում է իր ողջ երկրային կյանքի ընթացքում, նաև դավերն ու խարդավանքները, որ նյութվում են մարդկային հարաբերությունների մեջ, և, ինչպես երևում է նաև երկի բովանդակությունից, ամենացավալի, դաժան ու ողբերգական որոգայթները միշտ լարվում են անսպասելի, հանկարծակի, սիրելի ու վստահելի համարված մարդկանց կողմից:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ կրոնական, պաշտամունքային բնույթի դարձվածքները խիստ սակավաթիվ են. պատճառը, ըստ երևույթին, երկի ստեղծման ժամանակն է: Դրանք հիմնականում կրում են հեթանոսական բնույթ՝ ***անեծք առնել*** (82), ***երկիր պագանել*** (136), ***զոհս զոհել*** (137), ***դնել ծունր*** (137), ***ասպուծոյ պաշտպանութենէ թուլանալ*** (289): Թեև հավաքական բնագրում՝ խրատներում, հատկապես հանդիպում ենք «Աստված» բառի եզակի ձևերին, միայն մի օրինակում՝ **ձայն չաստուծոցն**, նկատելի է հոգնակի, բայց ժխտական կիրառումն այդ բառի: Այս երևույթը ի վերջո կարելի է բացատրել այն հանգամանքով, որ երկը տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների և խմբագրումների, հատկապես քրիստոնեական շրջանում շատ է կրել քրիստոնեական գաղափարախոսության անմիջական ազդեցությունը:

**Մարմնամասերի անուններից բաղադրված դարձվածքներ**՝ ***աչս արջակել*** (97) – դեսուդեն նայել, ***աչք գայթակղեցուցանել*** (284) – գայթակղեցնել, ***համբառնալ զաչս*** (78) – վեր նայել, ***ցածուցանել զաչս*** (78) – ցած նայել, ***նայել ընդ ակամբ*** (78) – ակնդետ նայել, ***պեսանել յաչս*** (277) – ականատես լինել, ***արհամարհել յաչս*** (277) – խորը քամահրել, ***պահել յաչս յարապ հայելոյ*** (86) – արատներից հեռու մնալ, ***նեղ սրտի*** (101) – նեղսիրտ, ***առատ սրտի*** (101) – առատաձեռն, ***սիրտ առնուլ*** (151) – հանգչել, ***մխիթարել զսիրտ*** (274) –

սփոփել, ***բարկացուցանել զսիրտ*** (276) – զայրացնել, ***նեղել զսիրտս*** (288) – նեղսրտել, նեղվել, ***ի պանէ սիրտն առողջ լինել*** (152) – թիկունքում ամուր լինել, ***պանել զահ ի սրպայ*** (273) – քաջալերել, ***այր լեզուային*** (273) – լեզվանի, շատախոս մարդ, ***կակղացուցանել զլեզու*** (89) – խոսքը մեղմացնել, ***ի լեզուէ երկնչիլ*** (271) – խոսքից վախենալ, ***պահել զլեզու ի չարախօսութենէ*** (144) – չարախոսությունից հեռու մնալ, ***պահել զլեզու ի շպախօսութենէ*** (147) – շատախոսությունից զերծ մնալ, ***կրթել զլեզուի խօսսբարիս*** (101) – բարություն քարոզել, բարին տարածել, ***զլուխն խեյագարել*** (149) – գլուխը կորցնել, ***ի գլուխ դառնալ*** (122) – ավարտվել, ամբողջանալ, ***զմարդոյն երեսին ջուրն պանել*** (152) – վախեցնել, ***պանել զամօթյերեսաց*** (275) – անամոթ, ցինիկ դարձնել, ***ուղեղ*** *դալրել* (89) – կշռադատել, ***ունկն դնել*** (144) – ունկնդրել, ***դնել ծունր*** (137) – ծնրադրել, ***ընդ թիկունս լսեցուցանել*** (168) – ետևից լսել տալ, ***հեղուլ զարիւն*** (283) – արյուն թափել, ***առ ոտն հարկանել*** (285) – ոտնատակ տալ, ***պահել զբերան ի ստութենէ*** (86) – ստից հեռու մնալ, ***պահել զձեռն ի գողութենէ*** (144) – գողությունից հեռու մնալ:

Այժմ նյութի նկարագրության վիճակագրական մեթոդին համապատասխան՝ աղյուսակով ցույց տանք, թե մարմնամասի որ անվանումը քանի անգամ է օգտագործվել դարձվածակերտման ընթացքում՝

| | |
|---|---|
| **Ակն** | **9** |
| **Սիրտ** | **8** |
| **Լեզու** | **6** |
| **Գլուխ** | **2** |
| **Երես** | **2** |
| **Ուղեղ** | **1** |
| **Ծունր** | **1** |
| **Թիկունք** | **1** |
| **Արիւն** | **1** |
| **Ոտն** | **1** |
| **Բերան** | **1** |
| **Ձեռն** | **1** |

**Ունկն 1**

Մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածքների համապատկերում կարելի է արձանագրել հետևյալ հետաքրքրական փաստը, որ, օրինակ, **սիրտ** բաղադրիչով դարձվածքները հիմնականում ունեն բարության, բարեգթության, մաքրութան և ազնվության գաղափարներ արտահայտող իմաստներ: Սիրտը դիտվում է հավերժական բարու և անաղարտության խորհրդանիշ մարդկային հավերժական մնայուն պատկերացումներում: Եթե **սիրտը** զգայական, զգացողական կենտրոնն է մարդու հոգևոր դաշտի, **աչքը** կենտրոնն է իմացության արտաքին երևելի, ֆիզիկական կյանքի: Այս դարձվածքներներում արդեն արտահայտված են շրջահայաց, ուշադիր լինելու, աշխարհիկ վայելքներով ու գայթակղություններով չտարվելու, աչալուրջ լինելու գաղափարները: Լեզուն յուրօրինակ կամուրջ է աչքի և սրտի միջև. աչքը տեսնում է, սիրտը՝ զգում, իսկ լեզուն միավորում է այս երկուսի գործառույթներն ու տալիս բովանդակություն, իմաստ: Լեզու բաղադրիչով բաղադրվող դարձվածքներում լեզվին բնորոշ է երկակիության իմաստը. լեզուն կա՛մ կործանում է, կա՛մ փրկում, ուստի կարևորվում է լեզվին տիրապետելու, տեղին գործածելու, բարին խոսելու գաղափարները:

**Շարժում և տեղափոխություն**՝ ***յագեցուցանել հացի*** (138) – կերակրել, խորհուրդ առնել (172) – խորհրդածել, ***իջուցանել արպաւսիս*** (274) – հուզել արտասուքների աստիճանի, ***ջերմացուցանել կոծ*** (274) – ողբը թեժացնել, ***մերձակա լինել*** (279) – մոտենալ, ***որոգայթ ածել*** (285) – որոգայթ լարել, ***անեծք առնել*** (82) – անեծք գործել, ***փախիլ ի կապանս*** (81) – ձերբակալել, շղթայել, ***ածել ի բարկութիւն*** (87) – բարկացնել, ***զաւուրս կարճել*** (95) – ժամանակ վատնել, ***ի բաց կենալ*** (123) – հեռու մնալ, ***ի վեր հանել*** (140) – վեր հանել, ***ի զափ գնալ*** (144) – առանձնանալ, ***ընդ վայր ծիծաղել*** (145) – անպատեհ ծիծաղել, ***զբարիս առնել*** (170) – բարիք գործել, ***ընդ այլ գնալ*** (171) – ուրիշ ճանապարհով գնալ, ***կորացուցանել զկեանս*** (172) – կյանքը մաշել, ***զանց առնել*** (274) – անտեսել, ***կասեցուցանել զոյժն*** (275) – ուժահատ անել, ***բարկացուցանել զսիրտ*** (276) – զայ-

րացնել, ***առնել ընդունելութիւն*** (114) – ընդունվել, ***ընդունել զմեծութիւն*** (280) – ճանաչել, ***ընթանալ յանցս ճանապարհաց*** (283) – խառը կյանքով ապրել, ***ի բաց դարձուցանել*** (284) – հետ դարձնել, վերադարձնել, ***զխաղաղութիւն խօսիլ*** (286) – խաղաղությունից խոսել, ***կորուսանել զխելս*** (275) – խելքը կորցնել, ***լուծանել զկապն*** (287) – բաժանվել, ***ի մահ վարել*** (289) – մահվան տանել, ***քօքափել ի զգաստութենէ*** (290) – զգոնությունը կորցնել, ***փոշի ցանել ի վերայ հողմոյ*** (272) – անիմաստ գործով զբաղվել, ***ցրուել ի բազում տեղիս*** (289) – ցանուցիր լինել, ***անկանիլ ի բազում խօսս*** (289) – շատախոսության մեջ ընկնել, ***անտես առնել*** (105) – անտեսել, ***չարիք ածել*** (272) – չարիք գործել, ***զարթուցանել չարիս*** (276) – չարիքը բորբոքել, ***զերախտիք առնել*** (104) – շնորհակալ լինել, ***փառս յաւելուլ*** (276) – փառաբանել, ***զգործս վճարել*** (76) – հատուցել, ***յուսումն տալ*** (171) – կրթության տալ, ***ի սիրոյ տիրութիւն շապախօսիլ*** (152) – սիրո անունից խոսել, ***աղ և հաց ուտել*** (107) – բարեկամանալ, ***ծաղր կացուցանել*** (274) – շատ ծաղրել, ***ամօթալից կացուցանել*** (274) – վատ իրավիճակի մեջ դնել, ***ի բաց կենալ յընչից*** (153) – հարստությունից հրաժարվել, ***զսիրելութիւն յատելութիւն դարձուցանել*** (287) – սերը ատելություն դարձնել, ***զհաց ի հողոյ արգելել*** (123) – հողը խոպան դարձնել, ***յազեցուցանել ուսմամբ*** (76) – կրթել, ***անարգանս ածել*** (90) – անարգել, ***բողութիւն շնորհել*** (146) – ներել, ***ստւր զպանել*** (150) – սուտը հայտնաբերել, ***որոգայթ խորհել*** (82) – որոգայթ լարել:

Ներկայացնենք շարժում և տեղափոխություն ցույց տվող դարձվածքների վիճակագրությունը՝

| | |
|---|---|
| **Առնել** | **9** |
| **Ածել** | **4** |
| **Կենալ** | **2** |
| **Գնալ** | **2** |
| **Յազեցուցանել** | **2** |
| **Կացուցանել** | **2** |
| **Դարձուցանել** | **2** |

**Առնել** բայով բաղադրվող դարձվածքների առատությունը բացատրվում է այս բայի վաղնջական ծագմամբ, հարուստ իմաստային բովանդակությամբ, նաև բաղադրվող բառի հետ իմաստային բազմազան կապեր ստեղծելու ներուժով. մի դեպքում՝ «անել, կատարել»՝ առնել զչարն, «մտածել, հղանալ»՝ չարության խորհուրդ առնել, «հայտնել, ասել»՝ զերախտիք առնել և այլն:

**Վիճակ, դրություն՝** ***հանգստեան լինել*** (76) – հանգստանալ, ***բազմախօսութիւն լինել*** (95) – բազմակարծություն լինել, ***սովամահ կորնչիլ*** (143) – սովամահ լինել***, աւուրս պակասել*** (143) – ծերանալ, ***վրէժ հասանել*** (144) – վրեժխնդիր լինել, ***աղքատութիւն ժողովել*** (145) – աղքատանալ, ***կարող լինել*** (146) – կարողանալ, ***համբերել անմտութեամբ*** (150) – միամտությամբ սպասել, ***անմիտ բանիւ*** (150) – հիմարախոս մարդ, ***խաղաղական կենօք*** (171) – խաղաղ կյանքով, ***ամօթով լինել*** (273) – ամոթահար լինել, ***պատճառս պատճառել*** (276) – պատճառ դառնալ, ***ցանկութիւն աշխարհիս*** (280) – աշխարհիկ կյանք, ***որոգայթ մահու*** (284) – մահվան ծուղակ, ***ի վնասու կորնչիլ*** (82) – փորձանքի ենթարկվել, ***ի փառացըն կենուլ*** (122) – փառազուրկ լինել, ***ի գլուխ դառնալ*** (122) – ավարտվել, ամբողջանալ, ***վարել զկեանս*** (142) – ապրել, ***ի մեծութիւն ցրուել*** (145) – հղփանալ, ***զբարութիւն ջամբել*** (171) – բարությունը հասանեկի դարձնել, ***կորուսանել զխելս*** (275) – խելքը կորցնել, ***ի հանդիմանութիւն գալ*** (276) – համդիմանության արժանանալ, ***ի դժոխս համարել*** (280) – դժոխային համարել, ***մերժել զերկիւղն*** (275) – քաջանալ, ***բափել ի մտաց*** (282) – մոռանալ, ***յորոգայթ նեղութիւն*** (282) – խոր թակարդ, ***խօսք կակուղ ջուր է*** (103) – խոսքը արժեք չունի, ***հանգստեամբ վճարել զժամանակս*** (89) – խաղաղ ապրել, ***հասնել զափն զերեզմանին*** (105) – մահվան դուռը հասնել, ***բարեմիտ կանգնել զաշխարհս*** (281) – լավատես լինել, ***ի զգաստութենէ բափուր զտանիլ*** (287) – աչալրջությունը կորցնել, ***երկայն աւուրք կենալ յերկրի*** (86) – երկարակյաց լինել, ***ի բարուց դատարկ մնալ*** (149) – անհաղորդ լինել բարուն: Այս խմբի դարձվածքները իրենց խիստ բազմազան լինելու և որոշ բաղադրիչների՝ վիճակի, դրության բազ-

մազան առնչություններ ունենալու պատճառով չենք ներկայացնում աղյուսակով:

**Միտք, մտածողություն**՝ ***զմտաւ ածել*** (75) – մտածել, ***բարեկե-ցուցանել զմիտս*** (89) – միտքը զարգացնել, ***ի միտ կալել*** (273) – մտածել, ***կարծել ի միտս*** (276) – մտածել: Այս պարագայում հիմնական դարձվածքաստեղծ բառը **միտք**-ն է՝ տարբեր հոլովաձևերով:

**Կրոն, հավատալիք, պաշտամունք**՝ ***ձայն չաստուծոցն*** (81) – սատանայի ձայն, ***անձրք առնել*** (82) – անիծվել, ***երկիր պագանել*** (136) – պաշտել, ***զոհել զոհս*** (137) – զոհաբերություն անել, ***դնել ծունր*** (137) – ծնրադրել, ***աստուծոյ պաշտպանութենէ թուլանալ*** (289) – աստծո հովանուց զրկվել:

**Ռազմական գործ, զենքեր**՝ ***մարտուցելանել*** (82) – հաշտության ձգտել, ***ջգել նետ յերկինս*** (169) – մեծ-մեծ խոսել:

**Պետություն, պետական կառավարում, օրենք**՝ ***դատապարտան ու-տել*** (81) – պատժվել:

**Ըմպելիք**՝ **գինի հեղուլ** (79) – հարբեցողությամբ զբաղվել:

**Կենդանիներ**՝ ***խառնեալ շուն*** (288) – ստորին ծագման մարդ:

«Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ» երկում մեզ ավանդված խրատների մեջ նկատելի են մի շարք հետաքրքրական իմաստային շերտեր՝ կապված մարդկային կյանքի որոշակի երևույթների հետ: Օրինակ՝ մեծ թիվ են կազմում այն խրատները, որոնցով խրատատու իմաստունը կոչ է անում հեռու մնալ արատներից, հատկապես բղջախոհությունից՝ որպես վնասակար, մարդու միտքն ու հոգին թունավորող արատավոր երևույթից: Ահա մի քանի օրինակ՝

**Որդեակ, մի՛ մերձենար ի կին անզգամ և բամբասօղ, զի մի արհամարհիս և կատակիս դու ի նոցանէ, և նա յափշտակէ զքեզ:**

**Որդեակ, մի՛ շնար ընդ կնոջ ընկերի քո, զի մի բարկացի աստուած և այլքն շնան ընդ կնոջ քո:**

Ուշագրավ է նաև կնոջ կերպարի էության և դերի մեկնաբանությունը խրատներում: Բացասական վերաբերմունքն ու գնահատականը առաջին իսկ հայացքից նկատելի է, պախարակելի է հատկապես անհավատարիմ, անզգամ կինը: Կնոջ նկատմամբ նման վերա-

բերմունքը բացատրելի է ոչ միայն հեթանոսական, այլ նաև միջնադարյան քրիստոնեական արժեհամակարգի դիտանկյունից:

Ահա մի քանի օրինակ.

**Որդեակ, կինն, թուր, ձի ոչ են հաւատալի:**

**Զշունն բառէ և զկինն անզգամ ոչ, զի շունն ոչ մոռանայ զերախտիս մարդոյ, իսկ կին, թուր, ձի ոչ ճանաչեն զտէր իւրեանց:**

**Որդեակ, մի՛ առնուր կին այրի, զի յորժամ բանս ինչ լինի և ասիցէ. ավա՜ղ զառաջին այրն իմ, և դու տրտմիս:**

Սակայն միևնույն ժամանակ մի երկի մեջ ավանդված մի խրատում ամբարված է կնոջ կարևորության, նշանակության ողջ գեղեցիկ խորհուրդը.

**Որդեակ, սիրեա զկին քո, որպէս զմարմին քո զի անձն քոյ է և կցորդ կենաց քոց և յոյժ աշխատանօք սնուցանէ զորդին քո:**

Ստախոսության, ստորության, խաբեության խարդախության ու չարախոսության այպանումը մեծ տեղ է գրավում խրատների մեջ: Օրինակ՝

**Որդեակ, մի՛ երդնուր սուտ, զի մի աւուրս քո պակասեսցին:**

**Որդեակ, վասն չարախոսութեան ոսկի և արծաթ մի՛ առնուր. զի գործքն մահաբեր է չար յոյժ:**

**Որդեակ, բան սուտ և ստախոսութիւն որպէս արճիճ ծանր է, բայց յետ սակաւ աւուրց ի վերա ջրին գայ, որպէս տերև ծառի:**

Անդրադառնանք խրատագրքում տեղ գտած հոմանիշ և հականիշ դարձվածքներին, որոնք, ճիշտ է, մեծ թիվ չեն կազմում, սակայն յուրօրինակ երանգ են հաղորդում այս երկին և վերջինիս հարուստ բառապաշարի վկայություններից են: Ինչպես վերը արդեն նշել ենք, Խիկար Իմաստունին վերագրվող այս երկը խրատական-ուսուցանող բնույթ ունի, որի վկայությունն են նրանում առկա մի քանի տասնյակ առած-ասացվածքներն ու խրատները, ուստի և այստեղ առկա դարձվածքների մեծ մասը բարոյախրատական բնույթ է կրում:

**Դարձվածքների հոմանիշային շարքեր**

*Որոգայթ ածել – որոգայթ խորհել*

*Դնել ծունր – երկիր պագանել*

*Իջուցանել արփաւուս –– ջերմացուցանել կոծ*

*Չարիք ածել – զարթուցանել չարիս – չար առնել զչարն*

*Գլուխն խելագարել – կորուսանել զխելս – թափել ի մտաց – յիմաստութենէ թափիլ*

*Յուսումն փալ – յազեցուցանել ուսմամբ*

*Ածել ի բարկութիւն – բարկացուցանել զիրտ*

*Ի զատ գնալ – լուծանել զկապն*

*Ծաղր կացուցանել – ծաղր առնել – ընդ փայր ծիծաղել*

*Թօթափել ի զգաստութենէ – ի զգաստութենէ թափուր գտանիլ*

*Մերժել զերկիւղն – փանել զահ ի սրտաց*

*Նեղել զսիրտս – ի սրտի ներս առնուլ* են:

**Դարձվածքների հականիշային շարքեր**

*Առատ սրտիւ – նեղ սրտիւ*

*Համբառնալ զաչս – ցածուցանել զաչս*

*Չարիք ածել – զբարիս առնել*

*Զբարութիւնս ջամբել – չարութեան խորհուրդ առնել* են:

Այս դարձվածքներում ևս գերիշխող է բարության գործելու, չարից հեռու մնալուն հավերժական ձգտումը:

Մինչ Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքում վկայված դարձվածքների կառուցվածքային դասակարգումը անդրադառնանք նախդիրներին և հստակեցնենք դրանց դերն ու նշանակությունը դարձվածակերտման հարցում:

Գ. Մանուկյանը նախդիրները համարում է գրաբարի լեզվական կարևորագույն ատաղձը. «Նախդիրները գրաբարի ուշագրավ խոսքի մասերից են... Նախդրագործածությունը գրաբարի անբաժանելի գործոնն է: Գրաբարի և աշխարհաբարի բաժանարար գիծը նախդիրներն են: Իսկապես, երբ դադարեցին գործել նախդիրները, այդ ժամանակ վերջնականապես հաղթանակեց աշխարհաբարը»[47]:

Գրաբարի եռանդամ, քառանդամ, հնգանդամ և ավելի մեծաքանակ բաղադրիչներով դարձվածքները գրեթե առանց բացառության

---

[47] **Մանուկյան Գ.,** Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դդ.), Եր., 2002, էջ 3:

ձևավորվում են գրաբարյան նախդիրների շնորհիվ: Քննվող նյութում առկա են *ի, զ, առ, ընդ* նախդիրներով դարձվածքներ, որոնց անդրադարձ կկատարենք ստորև: Նախդրի՝ դարձվածքի ինքնուրույն և լիարժեք բաղադրիչ լինելը, ինչպես արդեն նշել ենք, կարելի է ապացուցել նրանով, որ գրաբարում հսկայական թիվ են կազմում նախդրավոր դարձվածքները, որն էլ վկայում է նախդիրների՝ դարձվածակերտման գործում ունեցած աննախադեպ կարևոր դերը: Բացի դրանից՝ նախդիրները ինքնուրույն բաղադրիչներ չդիտելը աղավաղում է դարձվածքների՝ կառուցվածքային սկզբունքով կատարված դասակարգման (կաղապարային դասակարգման) ընդհանուր պատկերը՝ շփոթ ստեղծելով երկանդամ, եռանդամ, քառանդամ և կառուցվածքային մյուս խմբերի միջև: Եվս մեկ փաստ. գրաբարում կան դարձվածքներ, որոնք առանց նախդրի այլ իմաստ են արտահայտում, նախդրով բովանդակությունը փոխվում է, օրինակ՝ պատիւ արկանել – պատվել, ի պատիւ արկանել – հանուն պատվի անել, որը նշանակում է, որ նախդիրը և՛ իմաստատարբերակիչ, և՛ ձևակազմիչ դեր ունի:

Այժմ բացահայտենք Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքի հայերեն թարգմանության դարձվածքների կառուցվածքային հիմնական կաղապարները:

**Դարձվածքների կառուցվածքային խմբերը**: Խիկար Իմաստունի երկում վկայված դարձվածքների կառուցվածքային պատկերը ներկայացնելու ենք երկանդամ, եռանդամ, քառանդամ, հնգանդամ և վեցանդամ կառույցների տեսքով: Խիկարի գրքի դարձվածքների կառուցվածքային նկարագիրն հետևյալն է.

**Երկանդամ դարձվածքներ** – *Հանգստեան լինել* (76), *յագեցուցանել ուսմամբ* (76), *դարաւորան ուտել* (81), *աչս արջակել* (97), *աւուրս պակասել* (143), *աղքատութիւն ժողովել* (145), *զոհել զոհս* (137), *ամօթով լինել* (273), *պարծառս պարծառել* (276), *զարթուցանել չարիս* (276), *փառս յաւելուլ* (276), *աչք զայթակղեցուցանել* (284)*են:*

**Եռանդամ դարձվածքներ** – *զմպաւ ածել* (75), *զգործս վճարել* (76), *համբառնալ զաչս* (78), *կակղացուցանել զբարբառ* (78), *փանիլ*

*ի կապանս* (81), *ածել ի բարկութիւն* (87), *զաւուրս կարճել* (95), *ի փառաց ընկենուլ* (122), *ի բաց կենալ* (123), *վարել զկեանս* (142), *ի զապր գնալ* (144), *ընդ այլ գնալ* (171), *յուսումն պալ* (171), *ի լեզուէ երկնչիլ* (271), *կորուսանել զխելս* (275), *ի յանդիմանութիւն գալ* (276), *թափել ի մրաց* (282):

**Քառանդամ դարձվածքներ** – *Հանգստեամբ վճարել զժամանակս* (89), *հասանել զափն զերեզմանին* (105), *ի բարուց դատարկ մնալ* (149), *յաչս թեթեւ թուել* (104), *բարեմիտ կանգնել զաշխարհս* (281), *ի զգաստութենէ թափուր գտանիլ* (287), *անկանիլ ի բազում խօսս* (289), *գրուել ի բազում տեղիս* (289) են:

**Հնգանդամ դարձվածքներ** – *պահել զբերան ի ստութենէ* (86), *պահել զջեռն ի գողութենէ* (144), *երկայն աւուրք կենակ յերկրի* (86), *ի պանէ սիրտն առողջ լինել* (152), *զմարդոյն երեսին ջուրն պանել* (152), *փոշի ցանել ի վերայհողմոյ* (272), *պանել զամօթ յերեսայ* (275), *զսիրելութիւն յատելութիւն դարձուցանել* (287) են:

**Վեցանդամ դարձվածքներ** – *պահել զաչս յարապ հայելոյ* (86), *կրթել զլեզու ի խօսս բարիս* (101):

Ներկայացնենք դարձվածքների կառուցվածքային խմբերի քանակային տարբերության աղյուսակը.

| **Կառուցվածքային խմբեր** | **Քանակը** |
|---|---|
| Երկանդամ | 52 |
| Եռանդամ | 60 |
| Քառանդամ | 13 |
| Հնգանդամ | 13 |
| Վեցանդամ | 2 |

Աղյուսակից երևում է, որ առավել շատ կիրառություն ունեն եռանդամ կառուցվածք ունեցող դարձվածքները, սակայն նկատելի է նաև մի հետաքրքիր փաստ. եռանդամ դարձվածքների կազմության ընթացքում դարձվածքի եռանդամությունը հիմնականում ապահովում են գրաբարյան նախդիրները: Մեր դիտարկած 60 եռանդամ դարձվածքներից միայն 3-ի դեպքում է, որ նախդիրները կազմությանը չեն մասնակցում: Դրանք են՝ **չարութեան խորհուրդ առնել** (154) – չար միտք հղանալ, **ընթանալ յանցս ճանապարհաց** (283) – զարտու-

դի ճանապարհով գնալ, **Աստուծոյ պաշտպանութենէ թուլանալ** (289) – Աստծու հովանուց զրկվել:

Անդամների ավելացմանը զուգահեռ նկատելի է, որ նվազում է դարձվածքների քանակը, ուստի ողջ երկից հնարավոր եղավ գտնել վեցանդամ դարձվածքի միայն երկու օրինակ:

Այժմ այս խմբերը ներկայացնենք ըստ կառուցվածքային կաղապարների:

**Երկանդամ դարձվածքների տարածված կաղապարները՝ ըստ խոսքիմասային պատկանելության**

**Գոյական + բայ** – հանգստեան լինել (76), դատաստան ուտել (81), ուղեղ դատել (89), անարգանս ածել (90), բազմախօսութիւն լինել (95), աչս արձակել (97), աւուրս պակասել (143), վրէժ հասանել (144), աղքատութիւն ժողովել (145), թողութիւն շնորհել (146), գլուխն խելագարել (149), որոգայթ խորհել (82), անեծք առնել (82), զինի հեղուլ (79), չարիս ածել (272), պատճառս պատճառել (276), փառս յավելուլ (276), աչք գայթակղեցուցանել (284) և այլն:

**Ածական + բայ** – սովամահ կորնչիլ (143), կարող լինել (146), սուտ գտանել (150), անտես առնել (105), մերձակա լինել (279) և այլն:

**Ածական + գոյական** – նեղ սրտիւ (101), առատ սրտիւ (101), անմիտ բանիւ (150), խաղաղական կենօք (171), խառնեալ շուն (278):

**Գոյական + գոյական** – ձայն չաստուծոյն (80), ցանկութիւն աշխարհիս (280), յորոգայթ նեղութիւն (282), որոգայթ մահու (284):

**Գոյական + ածական** – այր լեզուային (273), աղախին կաքաւող (82):

**Բայ + գոյական** – յագեցուցանել ուսմամբ (76), համբերել անմտութեամբ (150), յագեցուցանել հացիւ (138), զոհել զոհս (137), դնել ծունր (137), առնել ընդունելութիւն (114), իջուցանել արտասուս (274), ջերմացուցանել կոծ (274), զարթուցանել չարիս (276):

**Եռանդամ դարձվածքների բնութագրական կաղապարներ**

**Զ + գոյական + բայ** – զմտաւ ածել (75), զգործս վճարել (76), զաւուրս կարճել (95), զքարիս առնել (170), զքարութիւնս ջամբել (171), զխաղաղութիւն խօսիլ (286), զերախտիք առնել (104):

**Բայ + զ +գոյական** – համբառնալ զաչս (78), ցածուցանել զաչս (78), կակղացուցանել զբարբառ (78), քաղցրացուցանել զմիտս (89), կակղացուցանել զլեզու (89), վարել զկեանս (142), կորացուցանել զկեանս (172), մխիթարել զսիրտ (274), կասեցուցանել զոյժն (275), կորուսանել զխելս (275), մերժել զերկիւղն (275), քարկացուցանել զսիրտ (276), ընդունել զմեծութիւն (280), հեղուլ զարիւն (283), լուծանել զկապն (287), նեղել զսիրտս (288), հաստուցանել զանուն (138):

**Զ + բայահիմք + բայ** – զանց առնել (274):

**Ի + գոյական + բայ** – ի վնասու կորնչիլ (82), ի փառաց ընկենուլ (122), ի գլուխ դառնալ (122), ի մեծութիւն ցրուել (145), յուսումն տալ (171), ի լեզուէ երկնչիլ (271), ի միտ կալել (273), ի յանդիմանութիւն գալ (276), ի դժոխս համարել (280), յիմաստութենէ թափիլ (289), ի մահ վարել (289):

**Բայ + ի + գոյական** – տանիլ ի կապանս (81), ածել ի քարկութիւն (87), կարծել ի միտս (276), տեսանել յաչս (277), արհամարհել յաչս (277), թափել ի մտաց (282), թօթափել ի զգաստութենէ (290), երթալ ի պատիւ (146):

**Ի + ածական + բայ** – ի բաց դարձուցանել (284):

**Ի + մակբայ + բայ** – ի բաց կենալ (123), ի վեր հանել (140), ի զատ գնալ (144):

**Ընդ + գոյական + բայ** – ընդ թիկունս լսեցուցանել (168), ընդ վայր ծիծաղել (145):

**Ընդ + դերանուն + բայ** – ընդ այլ գնալ (171)

**Բայ + ընդ + գոյական** – նայել ընդ ակամբ (78):

**Առ + գոյական + բայ** – առ ոտն արկանել (285):

**Գոյական + գոյական + բայ** – աստուծոյ պաշտպանութենէ թուլանալ (289):

**Քառանդամ դարձվածքների կաղապարներ**

**Ի + գոյական + ածական + բայ** – ի բարուց դատարկ մնալ (149), յաչս թեթեւ թուել (104), ի զգաստութենէ թափուր գտանիլ (287):

**Ի + գոյական + գոյական + բայ** – ի սիրոյ տիրութիւն շատախօ-սիլ (152):

**Բայ + զ + գոյական + գոյական** – հասնել զափն գերեզմանին (105):

**Բայ + ի + ածական + գոյական** – անկանիլ ի բազում խօսս (289), ցրուել ի բազում տեղիս (289):

**Բայ + գոյական + ի + գոյական** – ձգել նետ յերկինս (169):

**Գոյական + բայ + զ + գոյական** – հանգստութեամբ վճարել զժամանակս (89):

**Ածական + բայ + զ + ածական** – չար առնել զչարն (278):

**Ածական + բայ + զ + գոյական** – բարեմիտ կանգնել զաշխարհս (281):

**Հնգանդամ դարձվածքների կաղապարներ**

**Բայ + զ + գոյական + ի + գոյական** – պահել զբերան ի ստութե-նէ (86), պահել զլեզու ի չարախօսութենէ (144), պահել զձեռն ի գողու-թենէ (144), պահել զլեզու ի շատախօսութենէ (147), տանել զահ ի սրտաց (274), տանել զամօթ յերեսաց (275):

**Ի + գոյական + գոյական + ածական + բայ** – ի տանէ սիրտն ա-ռողջ լինել (152):

**Ի + ածական + բայ + ի + գոյական** – ի բաց կենալ յընչից (153):

**Գոյական + բայ + ի + մակբայ + գոյական** – փոշի ցանել ի վե-րայ հողմոյ (272):

**Զ + գոյական + գոյական + գոյական + բայ** – զմարդոյն երեսին ջուրն տանել (152):

**Զ + գոյական + ի + գոյական + բայ** – զսիրելութիւն յատելութիւն դարձուցանել (287), զհաց ի հողոյ արգելել (123):

**Վեցանդամ դարձվածքների վկայված կաղապարներ**

**Բայ + զ + գոյական + ի + գոյական + դերբայ** – պահել զաչս յապառ հայելոյ (86):

**Բայ + զ + գոյական + ի + գոյական + ածական** – կրթել զլեզու ի խօսս բարիս (101):

Դարձվածքների կաղապարային խմբերի դասակարգումից կարելի է տեսնել, որ առավել շատ գործածելի են **գոյական+բայ**, **բայ+գոյական**, **բայ+զ+գոյական** և **ի+գոյական+բայ** կառույցները: Կաղապարների բազմազանությամբ աչքի են ընկնում հատկապես եռանդամ դարձվածքները, ինչը բնական է՝ հաշվի առնելով այն փաստը, որ դրանք մեր քաղած գրաբարյան դարձվածքների գերակշիռ մասն են կազմում: Դարձվածքների կառուցվածքային դասակարգումից նկատելի է նաև, որ Խիկար Իմաստունի երկը բավականին հարուստ է դարձվածային բազմապիսի կաղապարներով, որը, անշուշտ, անասելի հմայք ու պատկերավորություն, արտահայտչականություն և կենդանություն է հաղորդել երկի լեզվին: Այստեղ նշենք, որ նախդրային կիրառությունների պարագայում առավել գործուն են «ի» և «զ» նախդիրները («ի»-ն գրաբարում կազմում էր բացառական և ներգոյական հոլովները, իսկ «զ»-ն հայցական հոլովին որոշյալության առում էր հաղորդում):

Այժմ անդրադառնանք դարձվածքների դասակարգմանը՝ ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության: Ինչպես գիտենք, կայուն կապակցությունների խոսքիմասային դասակարգումը լինում է երկու տեսակ՝ անվանական և բայական, առաջինն էլ իր հերթին կարող է լինել գոյականական և ածականական:

Մեր ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքում վկայված դարձվածքներից միայն տասն են անվանական: Այժմ ներկայացնենք գոյական գերադաս անդամով դարձվածքները՝ **նեղ սրտիւ** (101) – նեղսիրտ, **առատ սրտիւ** (101) – առատաձեռն, **ձայն չաստուծոցն** (83) – սատանայի ձայն, **այր լեզուային** (273) – լեզվանի մարդ, **խառնեալ շուն** (288) – ստորին ծագման մարդ, **որոգայթ մահու** (284) – մահվան ծուղակ, **յորոգայթ նեղութիւն** (282) – խորը թակարդ, **աղախին կաքաւող** (82) –

պչրուհի, **անմիտ բանիւ** (150) – հիմարախոս մարդ, խոսքով անմիտ, **խաղաղական կենօք** (171) – կյանքով խաղաղ, հանդարտ:

Հարկ է ընդգծել, որ վերը նշված դարձվածքներից, ըստ բաղադրիչների թվի, առաջին տեղում են երկանդամ դարձվածքները (9), և միայն մեկն է եռանդամ՝ **յորոգայթ նենգութիւն:**

Ինչ վերաբերում է բայական գերադաս անդամով դարձվածքներին, ապա պետք է նշել, որ դրանք հույժ մեծաքիվ են, ունեն բազմազան կազմություն՝ խնդիր և պարագա լրացումներով: Այսպես՝*պարճառս պարճառել* (276), *զարթուցանել չարիս* (276), *փառս յաւելուլ* (276), *աչք գայթակղեցուցանել* (284), *փանիլ ի կապանս* (81), *ածել ի բարկութիւն* (87), *զաւուրս կարճել* (95), *ի փառաց ընկենուլ* (122*), հանգուրեամբ վճարել զժամանակս* (89), *հասանել զափն գերեզմանին* (105), *ի քարուց դարպարկ մնալ* (149) և այլն: Բայի գերակայությունը թերևս կարելի բացատրել այն հանգամանքով, որ յուրաքանչյուր խրատ, հորդոր, որի մեջ առկա են դարձվածքներ, առաջին հերթին ներազդելու, որևէ գործողության դրդելու, մղելու նպատակ ունի, ինչը հնարավոր է դառնում հատկապես բայական կառույցների միջոցով:

## 4.2 Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոցի» գրաբար թարգմանության դարձվածքների իմաստակառուցվածքային բնութագիրը

Բարսեղ Մեծը կամ Բարսեղ Կեսարացին (329-379 թթ.) քրիստոնեական ընդհանրական եկեղեցու հզորագույն գաղափարաբաններից է, տասներկու մեծ վարդապետներից մեկը՝ «մեծ կապադովկիացիների» երրորդության ավագ անդամը, հայոց եկեղեցու պաշտելի գործիչը, որի գործերի թարգմանությանը մեր եկեղեցական հայրերը ձեռնամուխ են եղել գրերի գյուտի և թարգմանչաց գործի ծավալման առաջին իսկ օրերից: Նրա քրիստոնեական ըմբռնումները և գաղափարները էապես ազդել են հայ մշակույթի և եկեղեցու հայրերի աշխարհընկալման վրա: Ինչպես նշում է Կեսարացու հայագիտական ժառանգության հայտնի ուսումնասիրող Կիմ Մուրադյանը, Կեսարացու ճառերի ազդեցությունը ուղղակի կամ անուղղակի՝ մեջբերումների և հղումների տեսքով բացահայտվում է Սահակ Պարթևի և Մովսես Խորենացու թղթերում[48]:

Կեսարացու երկերի ազդեցությունը նկատելի է նաև մեր նշանավոր այլ մատենագիրների՝ Ագաթանգեղոսի, Եզնիկի, Բուզանդի և Եղիշեի գործերում[49]: Այսինքն՝ ենթադրաբար «Գիրք պահոցի» թղթերն ու ճառերը պետք է թարգմանված լինեին դեռևս V դարավերջին և VI դարասկզբին՝ հայոց «թարգմանչաց շարժման» վերելքի տարիներին: Հետագայի հայ մատենագիրները և եկեղեցու հայրերը ևս քաջածանոթ են եղել Բարսեղ Կեսարացու ստեղծագործություններին, ի մասնավորի «Գիրք պահոց» ժողովածուին, որի տարբեր ճառերից պնդումներ, համեմատություններ և հիմնավորումներ են մեջ բերել Հովհաննես Մանդակունին, Հովհաննես Իմաստասեր Օձնե-

[48] Տե՛ս Եկեղեցական մատենագրություն, Բ. Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, Ս. Էջմիածին, 2017, էջ 9:

[49] Հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Մաշտոց-Գիրք ձեռնադրութեանց: Յօրինեցին **Հ. Բ. Սարգիսեան** եւ **Հ. Գ. Սարգսեան**, Վենետիկ - Ս. Ղազար, 1966:

ցին, Ստեփանոս Սյունեցին, Ստեփանոս Տարոնացի Ասողիկը և այլք[50]:

«Գիրք պահոցը» ճգնակեցական կանոնների, ճառական-մեկնողական գործերի, դավանական հարցումների, թղթերի ժողովածու է, որի ընդհանրական այս խորագիրը ծագել է առաջադիր ճառի վերնագրից՝ «Յաղագս պահոց»: Կ. Մուրադյանը գրում է, որ վերնագրման այս ավանդույթ-սկզբունքը ժամանակին տարածված է եղել. «Ճիշտ այնպես, ինչպես Գրիգոր Նազիազանցու չորս գիրք-ժողովածուների համար խորագրեր են սահմանվել ըստ համապատասխան առաջին ճառերի սկսվածքների»: Հայագետը մեջբերում է նաև տարբեր ձեռագրերի հիշատակարաններում իր գտած գեղարվեստական բացատրությունը. «…եւ ի հարկ բանին սպասաւորաց խաւսեցաւ զճառս Պահոց, ուստի եւ ճանաչի բովան[դ]ակ գիրք՝ որպէս կենդանի գլխոյն եւ ի դիմաց ճանաչի»[51]: Ձեռագիր և տպագիր գրականության մեջ վկայված են այս ժողովածուի այլ անվանումներ ևս՝ «Վասն պահոց» կամ կարճառոտ՝ «Պահոց»:

Իբրև գրաբարյան դարձվածքների սկզբնաղբյուր՝ մեր քննած ժողովածուն ենթադրաբար խմբագրվել է 650-660 թթ.: Այն բովանդակում է 33 բնագիր՝ թարգմանված հունարենից: Հայ թարգմանական գրականության փայլուն այս գործի՝ «Գիրք պահոցի» քննական հրատարակությունը Կիմ Մուրադյանի աշխատասիրությամբ տպագրել է Մայր աթոռ Ս. Էջմիածինը:

Գրաբարի դարձվածքների իմաստակառուցվածքային յուրահատկությունների բացահայտման տեսանկյունից «Գիրք պահոցի» հայերեն բնագիրը հարուստ սկզբնաղբյուր է, քանզի Բարսեղ Մեծն իր ճառերում մարդկային տարբեր արատներն ու որակներն է բացահայտում, իր խրատափիլիսոփայական ուղերձները հղում նյութապաշտ-ընչեղներին, վաշխառուներին, բարկացողներին, նախանձամիտներին, ապաշխարողներին ու գոհացողներին, ինքնասույզ քննադատներին, վերլուծում է Սուրբ երրորդությունը, Փրկչի ծնունդը, չա-

---

[50] Տե՛ս **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, էջ 12-37:

[51] Նույն տեղում, էջ 7:

րիքի պատճառները, շարժիչ ուժը, այսինքն՝ աշխարհիկն ու հոգևորը, նյութեղենն ու աստվածայինը անքակտելի միասնության մեջ: Փոխաբերություններն ու այլաբանությունները, պատկերավոր ու վերաիմաստավորված արտահայտությունները, թևավոր խոսքերն առատ են «Գիրք պահոցի» բոլոր էջերում:

Ժողովածուի բազմաշնորհ թարգմանիչները բազմապիսի լեզվական հնարներ են կիրառել՝ ցույց տալով հին հայերենի դարձվածային հարստությունը:

«Գիրք պահոցի» դարձվածային միավորները մենք քննել ենք նախ ըստ բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ գերադաս անդամի իմաստային բովանդակության: Այնուհետև դարձվածքները համեմատել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» միավորների հետ՝ բացահայտելու դրանց վկայվածության աստիճանը, հնարավոր իմաստային տեղաշարժերը, նորակազմ կամ նորագյուտ լինելու հանգամանքները: «Գիրք պահոցից» դուրս ենք գրել մոտ 220 դարձվածք և դարձվածային արտահայտություն:

Ըստ դարձվածային միավորների (ԴՄ) բաղադրիչների քանակի՝ ընդունված է տարբերակել նվազագույնը երկանդամ կառույցներ, որովհետև դարձվածքը նախ և առաջ կայուն բառակապակցություն է՝ վերաիմաստավորված բաղադրիչներով, ապա եռանդամ, քառանդամ և ավելի՝ տվյալ լեզվում հնարավոր շարահյուսական հարաբերություններին համապատասխան: Վերլուծենք «Գիրք պահոց» թարգմանական երկի դարձվածքներն ըստ բաղադրիչների քանակի: Ակնհայտ գերակշռում են երկանդամ և եռանդամ բայական կամ անվանական ԴՄ-ները: Բերենք բնութագրիչ օրինակներ՝ նշելով, որ նախդիրները համարել ենք ԴՄ-ների ինքնուրույն բաղադրիչներ, որոնք ունեն և՛ ձևային, և՛ բովանդակային տարբերակիչ դեր:

***Երկանդամ անվանական դարձվածքներ***՝ **աստղ տուընջեան, արեգակն արդարութեան** (էջ 271), **Աստծո որդին՝ Հիսուսը, երեւակ մշտնջենաւոր** (էջ 314) – արեգակ, **գիշերոյ մխիթարութիւն** – լուսին (էջ 314), **երկնային գանձք** (էջ 358) – բարձրագույն առաքինություններ, **երկնային արքայութիւն** (էջ 183) – Աստված, **ընչեղութեան ծաղիկ** (էջ 161) – նյութապաշտության արդյունք (էջ 161), **կենաց լու-**

**ծումն** (էջ 315) – մահ, **կենաց միաւորութիւն** (էջ 315) – ամուսնություն, **ճաճանչ փառաց** (էջ 268) – Հիսուսը, **մահու աւրէնք** (էջ 358) – նախախնամություն, **մահու ստուէր** (էջ 315) – **քուն յառել ական** (էջ 116) – աչքը բևեռել, **յարկանել ձեռաց** (էջ 116) – ձեռքից բաց թողնել, **տնօրէն կենաց** (էջ 367) – Աստված, **փրկութիւն ժողովրդեան** (էջ 358) – Հիսուսը, **Քրիստոսի ոչխար** (էջ 401) – հավատացյալ և այն:

Նշենք, որ անվանական դարձվածքներն իրենց քանակով և կիրառությամբ էապես զիջում են բայական ԴՄ-ներին:

***Երկանդամ բայական դարձվածքներ*** **ականջս ունել** (էջ 236) – հասու, ընկալունակ լինել, **աւձին զգենուլ** (էջ 398) – մեղսագործ, հանցակից դառնալ, **արկանել սերմանս** (էջ 95) – կրթել, դաստիարակել, **ապարընկեց լինել** (էջ 82) – վահանազուրկ, անպաշտպան դառնալ, **բաղձանս առնուլ** (էջ 73) – երազել, **դնել գարշապարս** (էջ 208) – ոտք դնել, կրնկակոխ անել, **ընդդիմակն դառնալ** (էջ 208) – հակառակորդ դառնալ, թշնամանալ, **ծայրակոտուր լինել** (էջ 150) – խեղվել, ջախջախվել, **ծայրայայտագոյն լինել** (էջ 101) – ծայրահեղ քայլերի դիմել, **բառնալ արտաքս** (էջ 164) – վերացնել մեջտեղից, **կերպարանս զգենուլ** (էջ 270) – տեսք ստանալ, **հասակս անցանել** (էջ 258) – տարեց, հասակավոր դառնալ, **հրապարակագոյժ առնել** (էջ 274) – վատ լուրը հրապարակել, բարձրաձայնել, **հրապարակայայտ առնել** (էջ 169) – բարձրաձայնել, բացահայտել, **ձայնակից լինել** (էջ 285) – պաշտպանել, սատարել, **ճաշակել բանն** (էջ 95) – հասու լինել խոսքին, **միտ դնել** (էջ 275) – նպատակադրվել, **վախճանն գտանել** (էջ 121) – վախճանվել, **ոտք կապել** (էջ 101) – ոտքը կապել, ազատությունից զրկել և այլն:

Բերած օրինակներից իսկ ակնհայտ է, որ ԴՄ-ներ կազմվել են բառապաշարի իմաստային ամենատարբեր դաշտերի միավորներից՝ մարմնամասեր, զենք, տեղ, տարածական հարաբերություններ, մտածական, ֆիզիկական ու զգայական գործողություններ ցույց տվող բառերից, կենդանանուններից և այլն:

Եռանդամ ԴՄ-ները գերազանցապես բայական են, անվանական կառույցները հույժ սակավ են. հիմնականում Աստծո կամ

Աստծո որդու անվանումներն են, ուստի դրանց հետաքրքիր օրինակները ներկայացնում ենք միասին:

***Եռանդամ դարձվածներ***՝ **անկանել ի գլուխ** (էջ 101) – գլուխը մտնել, **առ վրէժն առնուլ** (էջ 180) – վրեժխնդիր լինել, **արգելուլ զլեզու** (էջ 121) – լեզուն կծել, **զակն դարձուցանել (**էջ 116**)** – հայացքը շրջել, աչքը թեքել, **զգենուլ զծանաւթութիւն** (էջ 267) – իրազեկվել, համակվել գաղափարով, **զմտաւ ածել** (էջ 370) – մտքով անցնել, **ընդ խոռովք բերել** (էջ 100) – գաղտնածածուկ գործել, **ընդ հարկաւ կենալ** (էջ 220) – հպատակ լինել, ծառայել, **ի բաց բառնալ** (էջ 81) – վերացնել, թողնել, **ի բաց դնել** (էջ 63) – հեռացնել, վանել, **ի բացընկեց երեւալ** (էջ 82) – մերժված, լքված երևալ, **ի բաց հալածել** (էջ 258) – հեռու վանել, **ի գործ ածել** (էջ 148) – կիրառել, **ի լաւութիւն ածել** (էջ 442) – բարեգործություն անել, **ի կացուրդ լինել** (էջ 103) հանդիսության, ժողովի մասնակցել, **ի հրապարակս բերել** (էջ 205) – հրապարակել, **ի մեղս մատնել** (էջ 430) – մեղքի տրվել, **ի միտս գոլ** (էջ 211) – հիշել, **ի միտս դնել** (էջ 439) – մտադրվել, **խոնարհեցուցանել զունկն** (էջ 237) – անսալ, ենթարկվել, **յաքռոս նստել** (էջ 209) – ընկերակից լինել, **յառաջատութեան լինել** (էջ 95) – առաջընթաց ապրել, **ձգել յարբեցութենէն** (էջ100) – հարբեցողությամբ տարվել, **իշխան կենաց եւ մահու** (էջ 383) – Աստված, **Փրկիչ ազգի մարդկան** (էջ 100) – Հիսուսը և այլն:

Մեր քննած բնագրում վկայված են նաև մի քանի քառանդամ դարձվածքներ՝ հիմնականում *առ* և *ի* նախդիրների միացյալ կիրառության կաղապարներով ստեղծված, զորօրինակ՝ **առ ի հակառակամարտն լինել** (էջ 116) – թշնամաբար մարտնչել, **առ ի մեղսն անկանել** (էջ 241) – մեղքերի մեջ խորասուզվել, **աչսն ի բաց դարձուցանել** (էջ 359) – աչքերը հեռու տանել, անտեսել, չնկատելու տալ, **իշխան կենաց եւ մահու** (էջ 383) – Աստված:

*Ի* նախդրի և ձայնավորով սկսվող բառերում նրա կրկնակ *յ* ձևի շնորհիվ հնարավոր են դարձել նաև հնգանդամ ԴՄ-ների կազմության օրինակներ, ինչպես՝ **առ ի յարտաքոյս յառնել** (էջ 155) – առաջին հայացքից երևալ, **առ ի յուղղութիւնսն ձգել** (էջ 123) – ճիշտ ուղղության վրա դնել, **առ ի յաւգուտ դնել** (էջ 117) – շահի համար օգտագործել**:** Մի դարձվածք էլ գտել ենք *ընդ* նախդրով և *յ*-ով ՝ **ընդ վայր**

**յառաջ անկանել** (էջ 179) – զուր, անպատեհ առաջ ընկնել: Հնգաբաղադրիչ գեղեցիկ այլ դարձվածքներ էլ կան՝ **զմեղս ի բաց մերկանալ** (էջ 399) – մեղքերից իսպառ ձերբազատվել, **գողանալ զաշխատութիւնն պտղոցն յոյս** (էջ 207) – գողանալ աշխատանքի պտուղների հույսը, ապագայի ակնկալիքը:

«Գիրք պահոցում» գտել ենք նաև գրաբարին բնորոշ դարձվածքի արժեք ունեցող այնպիսի բայական հարադրություններ, որտեղ բայը և նրա լրացումը նույնարմատ են կամ նույնիմաստ՝ **ախտ ախտանալ** (էջ 100) – չարաչար հիվանդանալ, **դողումն դողալ** (էջ 102) – դողէրոցքի մեջ ընկնել, **զինուորել զինուորութիւն** (էջ 116) – ստանձնել ծառայություն, զինվորագրվել, **պարել անպարելին** (էջ 100) – կատարել անհնարինը կամ անթույլատրելին, **զուրճանալ ի հրճուանս** (էջ 106) – բուռն ուրախանալ, **ցրտանալով ցրտացուցանել** (էջ 106) – սաստիկ սառեցնել, **քաղցրացուցանել զքաղցունսն** (էջ 125) – անչափ քաղցր դարձնել: Նման կառույցներն ունեն ոճական մեծ բեռնվածություն, պատկերավոր են և ցույց են տալիս բայական գործողության բազմապատիկ լինելը:

Արդի հայերենի դարձվածքների վիճակագրական պատկերը նկարագրելիս Խ. Բադիկյանը նշում է. «Ինչքան ավելանում է դարձվածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիվը»[52]:

Գրաբարի առումով գրեթե համարժեք հարաբերակցություն ունենք նաև «Գիրք պահոց»-ի ԴՄ-ների կառուցատիպերի նկարագրության ժամանակ: Գերակշռում են երկանդամ դարձվածքները, բայց նրանց քանակը համադրելի է եռանդամ միավորների հետ՝ 85-70, քառանդամ են 4-ը, հնգանդամ՝ 6-ը: Ընդ որում՝ երկանդամ դարձվածքները հիմնականում կազմված են ***առնել, արկանել, լինել, ունել*** բայերով և անուն կամ մակբայ խոսքի մասերի միջոցով, որոնք արտահայտում են բայ-ստորոգյալ և խնդիր կամ պարագա շարահյուսական կապը: Անվանական դարձվածքների դեպքում ունենք որո-

---

[52] **Բադիկյան Խ.,** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 206:

շիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ կայուն փոխաբերական կապակցություններ:

Եռանդամ դարձվածքները մեծավ մասամբ կազմված են ***ի, առ, ընդ*** նախդիրներից և գոյականների թեքված ձևերից: Նախդիրները լայնորեն կիրառվել են ոչ միայն գոյական անունների, այլև տեղի մակբայական բովանդակություն ունեցող բառային միավորների հետ՝ ***բաց, բացուստ, ներքս, վերայ, վայր,*** ինչպես, օրինակ՝ *ի բաց արհամարհել (էջ 199), ի բաց բաժանել (էջ 264), ի բաց բառնալ (էջ 81), ի բաց դառնալ (էջ 55), ի բաց թքանել (էջ 70), ի բաց լսել (էջ 56), ի բաց ծախել (էջ 130), ի ներքոյ առնուլ (էջ 56), ի ներքոյ դնել (էջ 336), ի ներքս ածել (էջ 89), ի ներքս ունենալ (էջ 85), ի ներքս փակել (էջ 344), ի վեր առաքել (էջ 74), ի վերայ ածել (էջ 77), ի վերայ գալ (էջ 60), ի վերայ յառնել (էջ 88), ի վերայ յարուցանել (էջ 59), ի վերուստ ունենալ (էջ 207):* Իսկ քառաբաղադրիչ կամ հնգաբաղադրիչ դարձվածքները կարծես նախորդ երկուսի միավորումը լինեն. հիմնականում կազմված են ***ի, առ*** նախդիրների և անուն խոսքի մասերի ու բայի համադրությամբ:

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկի գրաբարյան թարգմանությունից առանձնացված ԴՄ-ները բնութագրենք նաև ըստ իմաստային դաշտերի՝ հաշվի առնելով դրանց գերակա բաղադրիչի իմաստային բովանդակությունը և արտահայտվող ընդհանուր նշանակությունը: Գերակայում են հետևյալ իմաստային դաշտերին պատկանող միավորներից կազմված կառույցները.

1. մարմնամասեր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ ***ականջս* ունել** (էջ 236), ***ակն* ունել** (էջ 400), **արգելուլ *զլեզու*** (էջ 121), **անկանել ի *գլուխ*** (էջ 101), ***աչսն* ի բաց դարձուցանել** (էջ 359), ***բուռն* հարկանել** (էջ 327), ***գոգ* գգուել** (էջ 399), **դնել *զարշապարս*** (էջ 208), ***դիմաւք* գալ** (էջ 327), ***զակն* դարձուցանել** (էջ 116), **խոնարհեցուցանել *զունկն*** (236), ***ձեռք* կապել** (էջ 101), **յառել *ակն*** (էջ 116), **յարկանել *ձեռաց*** (էջ 116), ***ոտք* կապել** (էջ 101), **տալ *զթիկունս*** (399) և այլն,

2. ֆիզիկական գործողություններ արտահայտող բառերից կազմված ԴՄ-ներ՝ **աւձին *զգենուլ*** (էջ 398), **բաղձանս *առնուլ*** (էջ 73), ***զգենուլ* զծանաւթութիւն** (էջ 267), **ի գործ *ածել*** (էջ 148), **ի վայր *կոր-***

***ծանել** (էջ 126),* **յաքոռս *նսպել*** (էջ 209), **ի վերայ *բերել*** *(էջ 133),* **ի բաց *բառնալ*** (էջ 81), **ի բաց *դնել*** (63), **ի վայր *ընկղմել*** (էջ 59), **ի վերայ *արկանել*** *(էջ 112)* և այլն,

3. միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ՝ ***բանն* կատարել** (էջ 213), ***զմիտս* ածել** (էջ 370), **ի *խորհուրդ* ածել** (էջ 76), **ի *միտս* դնել** (էջ 439), ***միտ* դնել** (էջ 275), **ի *միտս* գոլ** (էջ 211) – մտքում լինել, **կալնուլ *խորհուրդս*** (էջ 95), **ճաշակել բանն** (էջ 95), **յապաղել *զուսումնն*** (էջ 431) – անտեսել կրթությունը և այլն,

4. շարժում, տեղափոխություն, փոխադրում նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ՝ **առ ի *յուղղութիւնն* ձգել** (էջ 123), **ի բաց *փախչել*** (էջ 60), **ի *ճանապարհ* գնալ** (էջ 212) և այլն,

5. տուն, տեղ, բնակավայր նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ՝ **ընդ *վայր* բերել** (էջ 179), **ի *հրապարակս* բերել** (էջ 205), ***պնակից* ունել/լինել/առնել** (էջ 320, 371), ***հրապարակայայտ* առնել** (էջ 169), **ի *վայր* անկանել** (էջ 55), **ի *վայր* խոնարհել** (էջ 105), ***վայր* յառաջ անկանել** (էջ 179), **ի *տեղի* անկանել** (էջ 323) և այլն:

Ինչպես ակներև է բերված դասակարգումից, երկի փիլիսոփայական-խրատաբանական բնույթը որոշիչ դեր է կատարել բառապաշարի ընտրության հարցում:

ԴՄ-ները թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական գրականության մեջ ունեն ոճական կարևոր նշանակություն: Դրանք խոսքը դարձնում են հասցեական, հակիրճ և միևնույն ժամանակ՝ բովանդակությամբ հարուստ, որովհետև աշխարհի ու մարդու փոխաբերական ընկալման արդյունք են՝ դարերի ընթացքում հղկված ու կատարյալ դարձած: Դարձվածքները մեծապես բնորոշում են հեղինակի, ապա՝ և թարգմանչի ոճը, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի լեզվի բառակազմական, իմաստաբանական ու քերականական հնարավորությունները: Ս. Արևշատյանի ընդհանրական բնութագրման համաձայն՝ «Կեսարացու երկի թարգմանությունը, ինչպես նաև V դ. առաջին կեսի թարգմանական երկերը, առանձնանում են իրենց ոճային ինքնատիպությամբ, հարուստ բառապաշարով, հայերենի քերականական և շարահյուսական օրինաչափությունների ճշգրիտ պահպանմամբ: Թարգմանական երկերում այնտեղ, որտեղ թարգմանիչ-

ները հանդիպում էին տարատեսակ փիլիսոփայական ենթատեքստով հատվածների, հատուկ տերմինների և տարբեր կանոնների անվանումների, զգացվում էր հայերեն համարժեքի բացակայությունը, որը հանգեցնում է դրանց նկարագրական, երկարաշունչ թարգմանության»[53]: «Գիրք պահոցում» երկարաշունչ և արհեստական նման լեզվակաղապարների գրեթե չենք հանդիպում, հայկաբան կազմությունները հունաբանության ազդեցության չեն ենթարկվել:

Մեր քննած որոշ դարձվածքներ տարբեր ճառերում, երբեմն անգամ նույն ճառի մեջ կիրառվում են տարբեր նշանակություններով, բազմիմաստ են: Դարձվածքի բովանդակային պլանի փոփոխությունները, մեր կարծիքով, էապես պայմանավորված են «Գիրք պահոց»-ի բարոյախրատական բնույթով, ամեն անգամ անհրաժեշտ է լինում քարոզչական ուղերձը ընթերցողներին հնարավորինս տպավորիչ հաղորդել՝ խուսափելով բառային կրկնություններից: «Գիրք պահոցում» վկայված դարձվածքների իմաստային հարստությունը ցույց տալու համար բերենք բնագրային մի քանի հետաքրքիր օրինակներ:

ա) «Քանզի իղ պարարէ զըմբիշս, իսկ պահք զկրաւնաւոր ի բարեպաշտութեան զաւրացուցանեն՝ որպէս թէ որքան ***ի բաց բառնաս*** ի մարմնոյդ, այնքան արասցես հոգեւոր քաջառողջութեամբ զհոգիդ փայլեալ» (էջ 81):

«Քանզի չարաչար վարեցաւ ուժով մարմնոյն, ***ի բաց բարձաւ*** նորա պնդութիւնն, որպէս թէ տատանել եւ սասանել, եւ ոչ հաց կարել դիւրագոյն ի բերան տանել, եւ ոչ ըմպելի առ ածել. յաղագս չարութեան ձեռինն զկնի անսուրբ գործոյն եւ ոչ զյատուկ եւ հարկաւոր մարմնոյն պէտս ապա սպասաւորեալ թողացեալք» (էջ 320):

***Ի բաց բառնալ*** դարձվածքը գրաբարի դարձվածաբանական բառարանում բերված է միայն «*վերացնել*» իմաստով[54], առաջին նախադասության մեջ ԴՄ-ն կիրառված է բառարանային հենց այս

---

[53] **Аревшатян С.,** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, с. 136.

[54] Տե՛ս **Ղազարեան Ռ.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012, էջ 109:

նշանակությամբ. գիրությունը, ճարպը ըմբիշին են պատում, իսկ կրոնավորին պահքն է զորացնում բարեպաշտության մեջ, և որքան ճարպը վերացնես, այնքան հոգևոր քաջառողջությամբ կփայլի հոգին: Իսկ երկրորդ նախադասության մեջ ***ի բաց բառնալ*** ԴՄ-ն արդեն նոր իմաստային երանգ է ձեռք բերում՝ «*կործել, լքել*». եթե մարմինը չար ուժով է կառավարվում, ամրությունը կործում է, լքում է մարմինը, այն դառնում է տատանվող, անգամ հացը չի կարող դյուրությամբ բերանը տանել, չարության պատճառով ուժն ու առաքինությունները լքում են, հեռանում մարդուց:

բ) «Զի՞նչ պատասխանի տայցես դատաւորին, որ զորմսն զգեցուցանես եւ զմարդն ոչ զգեցուցանես, որ զձիս զարդարես եւ զեղբայրն անամաւթացեալ ***անպէս առնես***, որ փտես զորեանն եւ զքաղցեալս ոչ կերակրես, որ զոսկին թաղես եւ զպահանջեալն քամահրես» (էջ 154):

«Զի ի մերկամարտ նահատակութիւնսն, որք ի կռուարանսն յառաջագոյն սովորեն, ոչ ի ցաւոց խորշին ի հարուածոյն, այլ երկաքանչիւրովք ձեռաւք յառաջ մատուցին առ ընդդիմարտսն ցանկութեամբ զովութեանցն՝ զմաւտաւոր վտանգն ***անպէս առնեն***» (էջ 352):

Առաջին նախադասության մեջ ***անպէս առնել*** դարձվածքն ունի «արհամարհել» փոխաբերական իմաստը, երկրորդում՝ «անտեսել» չեզոք իմաստը: Սրանք երկուսն էլ ունեն բովանդակային փոխկապակցվածություն, բայց և միևնույն ժամանակ հստակ տարանջատում, որն էլ երևան է գալիս տարբեր համատեքստերում: Ընդ որում՝ առաջին նախադասությունն ինքնին դարձվածային ընդարձակ արտահայտություն է, որտեղ հակադրվում են փիլիսոփայական խոր իմաստ ունեցող հասկացությունները՝ ճիշտն ու սխալը, առաքինին ու անպատեհը, իրականն ու կեղծը: Նման հակադրությունների միջոցով Կեսարացին ծաղրում և հանդիմանում է կեղծ բարեպաշտներին՝ *զորմսն զգեցուցանել եւ զմարդն ոչ զգեցուցանել, զձիս զարդարել եւ զեղբայրն անամաւթացեալ անպէս առնել, փտել զորեանն եւ զքաղցեալս ոչ կերակրել, զոսկին թաղել եւ զպահանջեալն քամահրել*: Այսպիսի դարձվածային արտահայտությունները ստեղծման իսկ պահից դառնում են թևավոր խոսքեր:

գ) «Ոչինչ զարմացայց ընդ պատահումն եւ ոչ խոտորեցից զմիտս որպէս յանկարծ եղ ի վիրէ ***ի վայր անկեալ***՝ կանխաւ յառաջագոյն ուսեալ, եթէ մահկանացու էի, եւ մահկանացու ունէի զմանուկն» (էջ 358):

«Այլ հացիւ հաստատի սիրտ սգաւորին եւ զինով ***ի վայր անկեալ*** բնութիւնն առաւել հեշտնայ» (էջ 378):

«Քանզի տեսեալ զինքն ի հրեշտակացն ***ի վայր անկեալ*** եւ ոչ հանդուրժէր տեսանել զերկրայինն ի պատիւ հրեշտակաց յառաջադիմութեամբ ամբարձեալ» (էջ 450):

*Ի վայր անկանել* դարձվածքը մեր բերած այս երեք հատվածներում արտահայտում է հետևյալ երեք իմաստները՝ 1) *ընկնել*, 2) *հարբել* և 3) *վիրավորել, արհամարհել*: Առաջին և երրորդ նշանակությունները կապված են իրար հետ իմաստային դաշտով, որովհետև *ընկնել*-ը ինքնին նշանակում է որոշակի տեղից կարգավիճակից հեռացում, իսկ երկրորդ նշանակությունը ձևավորվում է ***զինով*** բաղադրիչի շնորհիվ՝ «զինով ի վայր անկանել», որ բառացի նշանակում է ***գինովության պատճառով ընկնել,*** այսինքն՝ ***հարբել*** :

Հայերենի զարգացման բոլոր շրջաններում թե՛ գրական, թե՛ բարբառային, ժողովրդախոսակցական տարբերակներում ***անկանել-ընկնել*** բայը դարձվածաստեղծ մեծ ներուժ ունի. այս բայով կառույցները բնորոշ են հայկական լեզվամտածողությանը, սոսկ թարգմանական կաղապարներ չեն:

դ) «Աստուած ***զմտաւ ած***՝ զինչ է առաջի Աստուծոյ մարդ՝ ամենայն իրաւք ոչինչ է» (էջ 311):

«Իսկ եգիտ ապա հնարս եւ միտ դիր դեռադեռ եւս չարապէս, քանզի ***զմտաւ ածեալ*** զբռնութիւն գաւառին, զի պարզ եւ սառնամանուտ էր եւ զժամանակն զի ձմերային էր, եւ զգիշեր մի դիտեալ... » (էջ 396):

Առաջին նախադասության մեջ *զմտաւ ածել* դարձվածքն ունի «մտածել, խորհել» իմաստը, իսկ երկրորդում՝ «ծրագրել, նախատեսել»:

ե) «Քանզի յորժամ մի անգամ ***ի բաց մղեսցէ*** զխորհուրդսն ախտն զբռնութիւն ոգւոցն ըմբռնէ, գազանացուցանէ զմարդն ամե-

նեւին եւ ոչ մարդ զոլ թողացուցանէ, որ եւս ունել ի բանէն զաւգնակա-նութիւն» (էջ 177):

«Սակայն զգինն իմ խորհեցան ***ի բաց մղել***, եւ ընթացան ծարաւով, բերանով իւրեանց աւրհնելով եւ սրտիւ իւրեանց անիծանէին» (էջ 228):

«Վասն զի յառաջանալով գինարբուքն, ի ներքս գայ ոմն նոցա երիտասարդ՝ առոյգ մարմնով, չեւ եւս արբեցեալ՝ տաշտ բերելով մեծ գինեաւ լցեալ, որ զմատռուակն նոցա ***ի բաց մղելով*** կացեալ ի մէջ պատռուածովք ակնճափողացն, զոյգ ըմպակցացն բաժանէ զգինին նորագոյն» (էջ 105):

Բերված երեք նախադասություններում *ի բաց մղել* դարձվածքը կիրառվել է իմաստային տարբեր նրբերանգներով, որոնք արտահայտում են նույն գործողության տրամաբանական հաջորդականությունը ժամանակի և տարածության մեջ: Առաջին նախադասության մեջ այն արտահայտում է «արհամարհել, հաշվի չառնել» իմաստը, երկրորդում՝ «մերժել», երրորդում՝ «հեռացնել, վանել»: Ընկալման առաջին մակարդակում այս երեք իմաստներն իրար առնչակից են, բայց նույնական չեն. նրանց միջև առկա է պատճառահետևանքային զարգացում. մեկից բխում է մյուսը. եթե արհամարհում ես, ապա մերժում ես, այնուհետև մերժելով հեռացնում ես քեզանից: Բովանդակային դաշտի այս զարգացումը մի դարձվածքի միջոցով ակնհայտ են դարձնում հայերենի դարձվածային միավորների խոսքային ճկունությունը, մեկ ձևով տարատեսակ իմաստներ արտահայտելու հնարավորությունները, որի շնորհիվ թարգմանիչները դյուրին կարողացել են փոխանցել հունարեն բնագրի նրբերանգները՝ բառային միավորները և դարձվածքները կիրառելով իմաստային բազմազան շեշտադրումներով:

Բացի հանրահայտ, բառարաններում վկայված ԴՄ-ներից՝ Կեսարացու գրքում կան նաև նորագյուտ դարձվածքներ, որոնք կա՛մ ստեղծվել են թարգմանիչների կողմից, կա՛մ արդեն եղել գրաբարի բառապաշարում, բայց տարբեր պատճառներով չեն ամրագրվել բառարաններում: Նորագյուտ ենք համարել այն դարձվածքները, որոնք նշված չեն Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բա-

ռարանում», ինչպես նաև այնպիսիք, որոնց համար իբրև աղբյուր է նշվում սույն երկը: Մենք գտել ենք 111 նման ԴՄ, որոնք բերված են վերևում: Նորագյուտ դարձվածքների ճնշող մեծամասնությունը երկանդամ և եռանդամ կառույցներն են: Ռ. Ղազարյանի բառարանում արձանագրված չէ Կեսարացու թարգմանական երկից մեր դուրս գրած քառանդամ և հնգանդամ 9 դարձվածքներից ոչ մեկը, ուստի դրանք ևս համարում ենք նորակազմություններ: Կային նաև այնպիսի ԴՄ-ներ, որոնց համար բառարանում որպես կիրառության միակ օրինակ նշվում է «Գիրք պահոցը»: Այդպիսի դարձվածներից է *յաղթուկ լինել*-ը (էջ 225):

Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ «Գիրք պահոցի» գրաբարյան թարգմանության մեջ մեզ հանդիպած ԴՄ-ներից դարձվածաբանական բառարանում վկայված է փոքր մասը:

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոցի» գրաբարյան դարձվածքների այս քննությունը հաստատում է V դ. հայ թարգմանական գրականության վերաբերյալ Լ. Տեր-Պետրոսյանի արձանագրումը՝ ապացուցելով, որ հետագայում ևս ստեղծագործական մոտեցումները և հայերենի բառակազմական, իմաստաբանական նորանոր շերտերի բացահայտումները մնում են գերակա նպատակ. «Դասական շրջանի գլխավոր թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանչելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները»[55]:

---

[55] **Տեր-Պետրոսյան Լ.,** Հայ հին թարգմանական գրականություն, Եր., 1984, էջ 10:

# ԳԼՈՒԽ 5
# ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ՆՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այս գլխում կանդրադառնանք այն դարձվածքներին, որոնք վկայված չեն Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում», և նաև այն դարձվածքներին, որոնք առկա են հիշյալ բառարանում կամ ունեն կառուցվածքային ինչ-ինչ նմանություններ մեր առանձնացրած դարձվածքների հետ: Այսպիսով, բնագրից դուրս բերված 140 դարձվածքները համեմատել ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում» (ԳԴԲ) առկա դարձվածքների հետ: Արձանագրենք, որ մեր գտած 140 դարձվածքներից բառարանում առկա էին միայն 17-ը, իսկ մյուս 123-ը, ճիշտ է, բառարանում վկայված չեն, սակայն դրանցից մի քանիսը ներկայացված են նմանատիպ կառույցով, կաղապարներով և իմաստային դաշտերով:

Բերենք մի քանի օրինակ.

| **ԳԴԲ-ում չվկայված դարձվածքներ** | **ԳԴԲ-ում առկա նմանատիպ կառույցներով դարձվածքներ** |
|---|---|
| ածել ի բարկութիւն | ածել ի գիտութիւն, ածել ի գութ, ածել ի զարմացումն, ածել ի զղջումն, ածել ի խոստումն, ածել ի կատարումն, ածել հաւան, ածել ի յիշումն, ածել ի պատիւ ևն |
| ի գլուխ դառնալ | ի գլուխ դարձուցանել, ի գլուխ ելանել, ի գլուխ երթալ, ի գլուխ կալ, ի գլուխ հանել, ի գլուխ տանել |
| թողութիւն շնորհել | թողութիւն առնել, թողութիւն տալ |
| վրէժ հասանել | վրէժ առնուլ, վրէժ խնդրել |

| | |
|---|---|
| աուրս պակասել | աուրս հանել |
| սուտ գտանել | սուտ առնել |
| ի միտ կալել | ի միտ առնուլ, ի միտ արկանել |

Այն փաստը, որ այդքան շատ դարձվածային միավորներ վկայված չեն Ռ. Ղազարյանի բառարանում, կարող ենք բացատրել կարևոր մի հանգամանքով, որ բառարանագիրը չի առնչվել սույն երկին, այն իբրև սկզբնաղբյուր չի դիտարկել: Նշենք, որ Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում» և ՆՀԲ-ում (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր Ա և Բ) վկայված 17 դարձվածքները Խիկարին վերագրվող խրատագրքում իմաստափոխության դեպքեր չունեն, դրանք կիրառվել են իրենց բառարանային իմաստներով:

Այժմ բերենք օրինակներ այն 17 դարձվածքներից, որոնք նշված են Ռ. Ղազարյանի բառարանում, ներկայացնենք այդ դարձվածքներին տված բացատրությունները և այն նախադասությունները, որոնցից դուրս ենք գրել հիշյալ դարձվածքները:

**Աչս արձակել** (97) – աչքը հառել մի բանի, աչք տնկել, ցանկանալ: *Որդեակ, յաւուրս պարարազաց քոց առապաշեռնեա և մի՛ աչս արձակեր, զի ոչ հանի ապրուած:*

**Ծաղր առնել** (141) – ծաղրել, ծաղրի ենթարկել: *Որդեակ, թէ տեսանես զթշնամին քո գլորեալ, մի՛ ծաղր առներ զնա, զի թէ կանգնի, չար հատուցանէ քեզ:*

**Դնել ծունր** (137) – ծնրադրել, ծունկ չոքել ծնկի գալ: *Յայնժամ մտի առ չասպունծն իմ բազում ընծայիւք, բորբոքեցի հուր առաջի չապրուածոցն և արկի խունկս անոյշս ի վերայ նորա, մատուցի ընծայս և զոհեցի զոհս, եդի ծունրս և աղաչեցի:*

**Երկիր պագանել** (139) – երկրպագություն անել, երկրպագել: *Երկիր պագիտե առն իմոյ և առեալ տարա զՆադան յապարանս իմ:*

**Անտես առնել** (105) – չտեսնելու տալ, անուշադրության մատնել, զանց առնել, անտեսել: *...Եթէ զուստմն զոր ուսուցի, պահեաց ի*

*սրտի խորումնկեցցէ ի դրանն արքունի: Եւ ես ոչ գիտեի, թե զքանս իմ անտես արար և հուսաց որպէս փոշի ընդդեմ հողմոյ:*

**Ծաղր լինել** (282) – ծաղրի ենթարկվել, ծաղրի առարկա դառնալ: *Եւ ոչ գիտես եթէ յորում ժամու յանդիմանեսցեն զքեզ բանք քո և յայնժամ ամչեսցես և ծաղր լինիս, և այն քեզ դառն է քան զմահ:*

**Զմտաւ ածել** (75) – մտածել, խորհել: *Եւ զմտաւ ածեալ մտի ա-ռաջի չասպուածոցն և արկի խունկըս և մատուցի զոհս և ընծայս բա-զումս և աղաչեցի այսպէս ասելով...*

**Ի վեր հանել** (140) – գաղտնիքը բացել, երևան հանել, յայտնել, պատմել: *Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքունի, մեռո և թա-ղոզնա ի սրտի քում և մի՛ ումեք ի վեր հանիցես:*

**Զանց առնել** (274) – անուշադրության մատնել, անտեսել, հաշվի չառնել: *Որդեակ, յորժամ տեսանիցես զընկեր քո մեռեալ, մի՛ զանց առնիցես ի նմանէ, այլ երթ և ողբա և մի՛ զընկերն, այլ զանձն քո, զի նոյն օր պատրաստական է քեզ կարճել և զքեզ ի կենացըոց:*

**Թափել ի մտաց** (282) – խելքը կորցնել, խելագարվել: *Որդեակ, այր արբեցող և զինամոլ թափի ի մտաց և ոչ կարէ զգուշանալ անձին իւրոյ, այլ դիւրաւ անկանի ի յորոգայթ:*

**Ի բաց դարձուցանել** (284) – հետ դարձնել, վերադարձնել: *Որ-դեակ, կին առնակին և պոռնիկ նման է գեղեցիկ ծառոյ, որ ունի պտուղ չար և դառն, որ երբ նայիս ի գեղեցկութիւն ծառոյն, ուրախա-նաս և յորժամ ճաշակես ի պտղոյն դառնութենէ, փրփմութեամբ ի բաց դարձուցանես զերեսդ ի նմանէ:*

**Առ ոտն հարկանել** (285) – արհամարհել, ոտնահարել, ոտնա-տակ տալ, անտեսել: *Որդեակ, այր իմաստուն և հանճարեղ յորժամ անարգի յարկս թագաւորաց, նման է ոսկոյ մաքրափայլի և ականց պատուականաց, որ երբ կորչի յերկրի և թաղի ի գռեհս փողոցայց, ամենայն ոք առ ոտն հարկանէ և կոխէզնա, և ոչ իմանան զպատիւ նորա:*

**Աղ և հաց ուտել** (107) – միասին աղուհաց ուտել, սեղանակից լի-նել: *Արքայ, հավիտեան կաց, ես աղ և հաց կերեալ եմ ի փան քո, քաւլիցի ինձ նենգել արքայիդ, քանզի հայր իմ Խիկար, զոր առաքե-*

*ցեր ի հանգիստ և ի պարփի և ի փառս, ոչ արար ըստ հրամանի արքայիդ, այլ սրբեաց ասպունձոյ և արքայիդ:*

Անդրադարձ կատարենք գրաբարի դարձվածաբանական բառարանում չվկայված կառույցներին, ներկայացնենք դրանց բնութագիրն ըստ կառուցվածքային խմբերի, կաղապարների: Քանի որ երրորդ գլխում արդեն իսկ ներկայացրել ենք, թե ինչ են կառուցվածքային խմբերը, դարձվածաբանական կաղապարները, քննենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում» չվկայված դարձվածքները և տանք դրանց դասակարգումը՝ ըստ վերոնշյալ խմբերի:

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

**Երկանդամ դարձվածքներ** – հանգստեան լինել (76), յագեցուցանել ուսմամբ (76), դատաստան ունել (81), մարտուցելանել (82), ուղեղ դատել (89), սովամահ կորնչիլ (143), աւուրս պակասել (143), աղքատութիւն ժողովել (145), գլուխն խելագարել (149), սուտ գտանել (150), իջուցանել արտասուս (274), պատճառս պատճառել (276), փառս յաւելուլ (276), աչք գայթակղեցուցանել (284), որոգայթ մահու (284) և այլն:

**Եռանդամ դարձվածքներ** – զգործս վճարել (76), համբառնալ զաչս (78), կակղացուցանել զբարբառ (78), տանիլ ի կապանս (81), ի վնասու կորնչիլ (82), բարեկեցուցանել զմիտս (89), զաւուրս կարճել (95), ի փառաց ընկենուլ (122), ի բաց կենալ (123), վարել զկեանս (142), ի զատ գնալ (144), ի մեծութիւն ցրուել (145), ընդ վայր ծիծաղել (145), ընդ թիկունս լսեցուցանել (168), զբարիս առնել (170) և այլն:

**Քառանդամ դարձվածքներ** – հանգստութեամբ վճարել զժամանակս (89), հասնել զափն գերեզմանին (105), ի բարուց դատարկ մնալ (149), ի սիրոյ տիրութիւն շատախօսիլ (152), յաչս թեթեւ թուել (104), ձգել նետ յերկինս (169), չար առնել զչարն (278), բարեմիտ կանգնել զաշխարհս (281), ի զգաստութենէ թափուր գտանիլ (287), անկանիլ ի բազում խօսս (289), ցրուել ի բազում տեղիս (289) և այլն:

**Հնգանդամ դարձվածքներ** – պահել զբերան ի ստութենէ (86), պահել զլեզու ի չարախօսութենէ (144), պահել զձեռն ի գողութենէ (144), պահել զլեզու ի շատախօսութենէ (147), երկայն աւուրբք կենալ յերկրի (86), ի տանէ սիրտն առողջ լինել (152), զմարդոյն երեսին ջուրն տանել (152), ի բաց կենալ յընչից (153), փոշի ցանել ի վերայ հողմոյ (272), տանել զահ ի սրտաց (275) և այլն:

**Վեցանդամ դարձվածքներ** – պահել յաչս յարատ հայելոյ (86), կրթել զլեզու ի խօսս բարիս (101):

Այժմ ներկայացնենք դարձվածաբանական բառարանում չվկայված դարձվածքները՝ ըստ դարձվածաբանական կաղապարների:

## ԵՐԿԱՆԴԱՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

**Գոյական+բայ** – հանգստեան լինել (76), դատաստան ունել (81), մարտուց ելանել (82), ուղեղ դատել (89), աւուրս պակասել (143), աղքատութիւն ժողովել (145), գլուխն խելագարել (149), սուտ գտանել (150), պատճառս պատճառել (276), փառս յաւելուլ (276), աչք գայթակղեցուցանել (284) և այլն:

**Բայ+գոյական** – յագեցուցանել ուսմամբ (76), առնել ընդունելութիւն (114), համբերել անմտութեամբ (150), յագեցուցանել հացիւ (138), զոհել զոհս (137), իջուցանել արտասուս (274), ջերմացուցանել կոծ (274), զարթուցանել չարիս (276) և այլն:

**Ածական+բայ** – սովամահ կորնչիլ (143), կարող լինել (146), սուտ գտանել (150), մերձակա լինել (279) և այլն:

**Ածական + գոյական** – նեղ սրտիւ (101), առատ սրտիւ (101), անմիտ բանիւ (150), խաղաղական կենօք (171):

**Գոյական + գոյական** – ձայն չաստուծոյն (80), ցանկութիւն աշխարհիս (280), յորոգայթ նեղութիւն (282), որոգայթ մահու (284):

**Գոյական + ածական** – այր լեզուային (273), աղախին կաքաւող (82):

## ԵՌԱՆԴԱՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

**Զ + գոյական + բայ** – զգործս վճարել (76), զաւուրս կարճել (95), զբարիս առնել (170), զբարութիւնս ջամբել (171), զխաղաղութիւն խօսիլ (286), զերախտիք առնել (104):

**Բայ + զ +գոյական** – համբառնալ զաչս (78), ցածուցանել զաչս (78), կակղացուցանել զբարբառ (78), բարեկեցուցանել զմիտս (89), կակղացուցանել զլեզու (89), վարել զկեանս (142), կորացուցանել զկեանս (172), մխիթարել զսիրտ (274), կասեցուցանել զոյժն (275), կորուսանել զխելս (275), մերժել զերկիւղն (275), բարկացուցանել զսիրտ (276), ընդունել զմեծութիւն (280), հեղուլ զարիւն (283):

**Ի + գոյական + բայ** – ի վնասու կորնչիլ (82), ի փառաց ընկենուլ (122), ի գլուխ դառնալ (122), ի մեծութիւն ցրուել (145), յուսումն տալ (171), ի լեզուէ երկնչիլ (271), ի միտ կալել (273), ի յանդիմանութիւն գալ (276), ի դժոխս համարել (280), յիմաստութենէ թափիլ (289), ի մահ վարել (289):

**Բայ + ի + գոյական** – տանիլ ի կապանս (81), ածել ի բարկութիւն (87), կարծել ի միտս (276), տեսանել յաչս (277), արհամարհել յաչս (277), թօթափել ի զգաստութենէ (290), երթալ ի պատիւ (146):

**Ի + ածական + բայ** – ի բաց կենալ (123), ի զատ գնալ (144):

**Ընդ + գոյական + բայ** – ընդ վայր ծիծաղել (145), ընդ թիկունս լսեցուցանել (168):

**Ընդ + դերանուն + բայ** – ընդ այլ գնալ (171):

**Բայ + ընդ + գոյական** – նայել ընդ ակամբ (78):

**Գոյական + գոյական + բայ** – աստուծոյ պաշտպանութենէ թուլանալ (289):

## ՔԱՌԱՆԴԱՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

**Ի + գոյական + ածական + բայ** – ի բարուց դատարկ մնալ (149), յաչս թեթեւ թուել (104), ի զգաստութենէ թափուր գտանիլ (287):

**Ի + գոյական + գոյական + բայ** – ի սիրոյ տիրութիւն շատախօսիլ (152):

**Բայ + զ + գոյական + գոյական** – հասնել զափն գերեզմանին (105):

**Բայ + ի + ածական + գոյական** – անկանիլ ի բազում խօսս (289), գրուել ի բազում տեղիս (289):

**Բայ + գոյական + ի + գոյական** – ձգել նետ յերկինս (169):

**Գոյական + բայ + զ + գոյական** – հանգստութեամբ վճարել զժամանակս (89):

**Ածական + բայ + զ + ածական** – չար առնել զչարն (278):

**Ածական + բայ + զ + գոյական** – բարեմիտ կանգնել զաշխարհս (281):

## ՀՆԳԱՆԴԱՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

**Բայ + զ + գոյական + ի + գոյական** – պահել զբերան ի ստութենէ (86), պահել զլեզու ի չարախօսութենէ (144), պահել զձեռն ի գողութենէ (144), պահել զլեզու ի շատախօսութենէ (147), տանել զահ ի սրտաց (274), տանել զամօթ յերեսաց (275):

**Ի + գոյական + գոյական + ածական + բայ** – ի տանէ սիրտն առողջ լինել (152):

**Ի + ածական + բայ + ի + գոյական** – ի բաց կենալ յընչից (153):

**Գոյական + բայ + ի + մակբայ + գոյական** – փոշի ցանել ի վերայ հողմոյ (272):

**Զ + գոյական + գոյական + գոյական + բայ** – զմարդոյն երեսին ջուրն տանել (152):

**Զ + գոյական + ի + գոյական + բայ** – զհիրելութիւն յատելութիւն դարձուցանել (287), զհաց ի հողոյ արգելել (123):

## ՎԵՑԱՆԴԱՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

**Բայ + զ + գոյական + ի + գոյական + գոյական** – պահել զաչս յարատ հայելոյ (86):

**Բայ + զ + գոյական + ի + գոյական + ածական** – կրթել զլեզու ի խօսս բարիս (101):

## ԳԼՈՒԽ 6
## ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Դավանաբանական երկերը գրաբար մատենագրության էական մասն են կազմում: Նրանց լեզվի առանձնահատկությունների ամբողջական գնահատականը տալու առումով կարևոր է նրանցում դարձվածքների և դարձվածային արտահայտությունների քննությունը: Դարձվածքները, լինելով խոսքի կառուցման էական բաղադրիչ, յուրաքանչյուր երկում դրսևորում են իմաստագործառական, կառուցվածքային և ոճական տարբեր առանձնահատկություններ՝ պայմանավորված երկի ժանրով, բովանդակությամբ, նպատակաուղղվածությամբ, հեղինակի լեզվամտածողությամբ: Մեր կողմից առանձնացված տարբեր ժանրերի դավանաբանական երկերում դարձվածքների քննությունը, նաև նրանց լեզվի առանձնահատկությունների արժևորումը կատարվում է առաջին անգամ: Սկզբնաղբյուրների համադրական քննությունը հնարավորություն է տալիս արձանագրելու գրաբարի դարձվածքների և դարձվածային արտահայտությունների ոճական արժեքը և խոսքակառուցման էական գործառույթը: Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները կարևորվում են.

1. գրաբարի դարձվածաբանության,

2. հայերենի պատմական դարձվածաբանության և պատմական ոճաբանության համար՝ տալով բնագրային նյութի համեմատական վերլուծության հիմքի վրա ներկայացվող դարձվածքների և դարձվածային արտահայտությունների հարուստ նյութ, որի մի մասն է միայն վկայված գրաբարի բառարաններում: Ինչպես նշել ենք, գրաբարի դարձվածային միավորները (այսուհետ՝ ԴՄ-ները) տվյալ երկերում բազմակողմանիորեն ներկայացնելու և արժևորելու համար կարևոր է սահմանել դարձվածքների առանձնացման այն սկզբունքները, որոնք ելակետային են եղել մեր քննության համար: Դրանք վերաբերում են.

ա) բաղադրյալ անուններին և դարձվածքներին,

ը) հարադիր բայերի և դարձվածքների առնչություններին,

դ) փոխաբերական իմաստի հենքային դերին տվյալ կապակցության վերաիմաստավորման համար,

ե) «վերաիմաստավորում» եզրույթի ըմբռնմանը դարձվածքների դավանաբանական կայուն կապակցությունների, քրիստոնեական վարդապետության ձևակերպումների, թևավոր խոսքերի, աստվածաշնչյան հայտնի արտահայտությունների, ասացվածքների, կենսափիլիսոփայական ընդհանրացումների, քրիստոնեական քարոզչության հենքային ձևակերպումների տիրույթում,

զ) հեղինակային, դիպվածային և ընդհանրական դարձվածային միավորների գնահատման և տարբերակման չափորոշիչներին,

է) «պոտենցիալ դարձվածքների» կարևորությանը դարձվածաբանության մեջ ընդհանրապես, տվյալ ժանրի երկում մասնավորապես:

Բաղադրյալ անունների, ինչպես նաև հարադիր բայերի և դարձվածքների հարաբերակցության մեջ մենք կարևորում ենք կապակցության **առնվազն մեկ բաղադրիչի՝ փոխաբերական իմաստով** գործառույթը: Այս հարցում համակարծիք չենք այն ձևակերպմանը, որ տալիս է Պ. Բեդիրյանը՝ բաղադրյալ անուններ համարելով *ղուն Աստծոյ, դեղ կենաց, ճանապարհ կենաց, պապի թերթ, լուսնի եղջյուր, լեզվական պարնեշ* և նման կապակցությունները. «Տվյալ դեպքում չկա վերաիմաստավորում, քանի որ դրանք կայուն պատրաստի վերարտադրելի դարձնողը ոչ թե իմաստով ձուլումն է, այլ բառախմբի ամբողջականությանը, որից մի որևէ մաս հանելու դեպքում ԲԱ-ն (բաղադրյալ անունը – Ա. Յ.), որպես այդպիսին, սովորաբար խաթարվում է»[56]: Մեր կարծիքով նման կապակցություններում կա բառի փոխաբերական իմաստով գործածություն, որը և հիմք է դառնում նրանց՝ իբրև դարձվածքների արժևորման համար, օրինակ՝ *առասան յուսոյ, ակն ոգւոց, թեւք մտած* են:

Այս սկզբունքը պիտի պահել նաև հարադիր բայերի և դարձվածքների առնչությունները գնահատելիս: Հարադիր բայերը կա-

[56] **Բեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 31:

պակցություններ են, որոնց գլխավոր բաղադրիչը բայն է: Նրանք էականորեն տարբերվում են բայական դարձվածքներից, քանի որ.

1) բայական դարձվածքներում կա բաղադրիչներից առնվազն մեկի փոխաբերական իմաստով գործածություն,

2) այս դեպքում ունենում ենք տարբեր աստիճանի վերախմբավորումներ,

3) նրանց տարբերակման համար էական դեր է կատարում բայական բաղադրիչի իմաստը,

4) անհրաժեշտաբար կարևորվում է նաև այն քերականական կառույցը, որով հանդես է գալիս տվյալ կապակցությունը: Այս սկզբունքները հիմնային համարելով՝ փորձենք մեկնաբանել Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում» տեղ գտած կապակցությունները: Բառարանի «Առաջաբանում» հեղինակը գրում է. «Ներկայ բառարանի նպատակն է ըստ հնարաւորին ի մի բերել գրաբարի դարձուածքներն ու կայուն բառակապակցութիւնները, որոնք գործածութիւն են գտել ընդհանրապես 5-11-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական գրականութեան տարաբնույթ գործերում»[57]:

Կայուն կապակցությունների մեջ, որոնք տեղ են գտել բառարանում, մեծ տեղ են զբաղեցնում հարադիր բայերը: Քննենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը, նշենք, որ հատկապես ուշադիր պետք է լինել վերացական բայով հարադրություններին, որոնք են՝ *լինել, առնել* և այս նշանակությամբ այլ բայերով միավորները: Հարադիր բայերի և դարձվածքների գնահատման մեջ անվիճահարույց է այն մոտեցումը, որ հարադիր բայը կարող է դառնալ դարձվածք, եթե գործածվի փոխաբերական իմաստով: Պ. Բեդիրյանը սա մանրամասնում է արդի հայերենի դարձվածքների շրջանակում, օրինակ՝ խաչ հանել-ը «խաչել» ուղիղ իմաստով հարադիր բայ է, իսկ «տանջել» իմաստով՝ դարձվածք [58]: Սկզբունքը նույնն է մնում նաև գրաբարի դարձվածքները և հարադիր բայերը գնահատելիս: Այսպես՝ **ափիբերան լինել**-ը

---

[57] **Ղազարեան Ռ.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012, էջ 9:
[58] Տե՛ս **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 29:

Ռ. Ղազարյանը դարձվածք է համարել՝ *«պապանձվել»* իմաստով, **ափիբերան** բառի համար գրաբարի բառարանում փոխաբերական իմաստ է նշվում *«լուռ, պապանձված»* նշանակությունը[59]: Ուստի նրա կազմած բայը՝ **ափիբերան լինել**, դարձվածք է *«պապանձվել»* իմաստով: **Ափիբերան առնելը,** որը հոմանիշ է **ափիբերանել** բային՝ *«պապանձվել»* իմաստով, հոմանիշ է նաև նշված բային. նրա պատճառական ձևն է:

**Ափիբերան** բառի ուղիղ իմաստն է **ափը բերանին դրված**, ուստի նրանով հարադրություններում կա փոխաբերական իմաստ, և դրանք պետք է գնահատել իբրև դարձվածքներ, ինչը որ արել է Ռ. Ղազարյանը:

Ռ. Ղազարյանը «Գրաբարի բառարանում» դարձվածքների դիմաց գծիկ (–) է դնում, նրա երկու՝ գրաբարի բացատրական և գրաբարի դարձվածաբանական բառարանների[60] դարձվածքները և հարադիր բայերը համեմատաբար քննելով՝ կարող ենք նշել.

ա) «Գրաբարի բառարանում», որտեղ տեղ գտած միավորները հիշատակված են նաև ՆՀԲ-ում, հարադիր բայերը և բայական դարձվածքները հստակորեն տարբերակված են, ԳԴԲ-ում, ի թիվս բայական դարձվածքների, տեղ են գտել նաև հարադիր բայերը, որոնք կարող են դասվել հեղինակի կողմից հիշատակված կայուն կապակցությունների շարքում: Գրաբարի հարադիր բայերի ու դարձվածքների առնչությունների դիտակետում հետաքրքիր մեկնաբանում է տալիս Լ. Հովսեփյանն իր «Գրաբարի բառակապակցության վերլուծական տիպը» աշխատության մեջ, որտեղ առանձնացված են գրաբարի բաղադրյալ վերլուծական բաղադրությունների բոլոր կաղապարներն ու ենթակաղապարները: Նա իրավացիորեն նշում է, որ «հարադրավոր բայերին իրենց դարձվածային արժեքով և մեկ ընդհանուր հասկացություն արտահայտելու հատկանիշով մոտենում են

---

[59] **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. Ա, Եր., 2007, էջ 334:
[60] **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, Եր., 2000, հ. Ա և հ. Բ, այսուհետև՝ ԳԲԱ և ԳԲԲ: **Ղազարեան Ռ.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:

նաև բայական կենտրոնով դարձվածային կայուն կապակցություններն»[61], բայց նրանց մեջ կա էական տարբերություն:

Հեղինակը դարձվածքներին բնորոշ է համարում հետևյալ հատկանիշները՝

1. դարձվածքները «բազմանդամ կառույցներ են», որոնց բաղադրիչներին բնորոշ է անկախությունը,

2. նրանք ենթարկվում են շարահյուսական վերլուծության,

3. նրանք, շարահյուսորեն տարրալուծելի լինելով, «բառային միավորի արժեք չունեն»[62]: Օրինակ՝ **դնել զանձն ի վերայ բարեկամի** – նվիրվել իմաստով կամ **ազատամիտ լինել յագահութենէ** – ընչաքաղց չլինել իմաստով ևն:

Համամիտ լինելով վերոհիշյալ դիտարկումներին՝ կարևորում ենք այն հանգամանքը, որ էական նշանակություն ունի փոխաբերական իմաստը, որը հենքային դեր ունի դարձվածքի կառույցում:

Հարադիր բայերը բայական բաղադրյալ կառույցներ են, որոնք արժևորվում են իբրև բարդ բառի տեսակ. այս դեպքում բայական բաղադրիչը, եթե վերացական բայ է, ստանում է բայակերտ **ալ** կամ **ել** ձևույթի նշանակություն, օրինակ՝ **անյոյս լինել** – հուսահատվել, **աներևոյթ լինել** – անհետանալ, որին հոմանիշ է **անհետ լինել** – անհետանալ միավորը, **արշաւանս դնել** – արշավել, որին հոմանիշ է **արշաւանս առնել** հարադիր բայը: ԳԲԱ-ն **դնել** և **առնել** բայերի համար նշում է նաև *«անել»* իմաստը: Կամ **արմատախիլ առնել** և **արմատահատ առնել** հարադիր բայերը, որոնք հոմանիշ են և նշանակում են *«պոկել, հիմքից հանել»*: Իսկ եթե տվյալ կառույցում կա փոխաբերական իմաստով գործառույթով բաղադրիչ, այն բերում է նաև վերաիմաստավորման, և ձևավորվում է դարձվածքը, օրինակ՝ **անցանել զաւուրս**՝ *«ծերանալ»* իմաստով, **ընդ աղբ գալ**՝ *«արհամարհված լինել»* իմաստով, **ածել յուղղութիւն** նշանակում է *«դարձի բերել»:* Դարձվածքի ձևավորման համար կարևոր է բայական կապակցության բոլոր բաղադրիչների իմաստների գնահատումը. **ակն** բաղադ-

---

[61] **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 93:
[62] Նույն տեղում, էջ 93:

 րիչով ԳԲ-ն վկայում է **յակն գալ** – *հավանել,* **տալ ակն** – *նկատել,* **ակնակառոյց լինել** – *անքթիթ նայել,* **յակն արկանել** – *աչքի պակով անցկացնել,* **ակն ունենալ** – *հուսալ, ակնկալել,* **ընդ ակն հայցել** – սիրտը *ցավեցնել,* **զակն արկանել** – *անտեսել* են:

Բայական բաղադրիչներից *«առնել», «լինել»* վերացական իմաստով բայերը՝ իբրև հարադիր բայերի բաղադրիչներ, տարածված գործածություն ունեն, օրինակ՝ ականատես լինել – իր աչքերով տեսնել, ակնարկութիւն առնել – ակնարկել, աղաղակ առնել աղաղակել. համեմատենք՝ **ալեկոծ լինել**-ը՝ իբրև հարադիր բայ, ունի *«ծփալ»* իմաստը, փոխաբերական իմաստով, այն է՝ *«հուզվել»,* այն արդեն դարձվածք է, կամ **ամբառնալ զգլուխ**՝ *«գլուխը բարձրացնել»* իմաստով հարադիր բայ է, բայց *«ընդվզել, խռովություն հրահրել իմաստով»*՝ դարձվածք:

Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանում» գրաբարի դարձվածքների հետ տեղ են գտել նաև գրաբարի կայուն կապակցությունները: Դրանք են.

1. Իմաստային հոմանիշների կամ նույնանիշների համատեղ գործառույթով միավորները, օրինակ՝ **անցանել-զանցանել,** նաև՝ **անցուցանել զանցանել** – գերազանցել, **ագահել զագահութիւն** – *ագահություն անել*:

Նման կառույցները մենք արժևորել ենք իբրև ԴՄ-ներ:

2. Հարադիր բայերը, օրինակ՝ **ուրախ լինել** – ուրախանալ, **աղաւթս առնել** – աղոթել, **աղերս անել** – աղերսել, **ամբաստան լինել** – ամբաստանել, մեր շարադրանքում կնշենք աստղանիշով, քանի որ նման կառույցները համարել ենք հարադիր բայեր: Հընթացս նրանք կենթարկվեն առանձին և մանրակրկիտ վերլուծության, քանի որ դրանք հաճախադեպ միավորներ են գրաբար մատենագրության մեջ:

Հարադիր բայերի բայական բաղադրիչը նաև բայասեռի փոփոխություն է ձևավորում, օրինակ՝ **ազդ լինել** – իմաց տրվել և **ազդ առնել** – իմաց տալ, **ազդումն առնուլ** – տեղեկանալ, **ազդումն լինել** – տեղեկացվել են: Դարձվածքների արժևորման համար մենք կարևորում ենք հետևյալ առանձնահատկությունները.

ա) կայուն կապակցության առնվազն մեկ բաղադրիչի փոխաբերական իմաստով գործածությունը:

Գրիգոր Նարեկացին, որ սիրում է հոմանիշ կամ նույնանիշ բառերի համատեղ գործածություն, **բնակարան, ազդարան, ընդունարան** բառերը, որ նշանակում են *«տեղ, ուր պարփակված է ինչ-որ բան»*, համադրում է «**բանին Աստուծոյ**»-ի հետ և ստացված կառույցով բնորոշում է իրեն՝ իբրև Աստծո խոսքը տիրապետողի, այսինքն՝ մարդ, որ քաջագիտակ է քրիստոնեական վարդապետությանը. «Թէ էի զՊաւղոս, ասէի զիս **բնակարան, Ազդարան եւ ընդունարան Աստուծոյ բանին**»: Կամ **դատ դնել** միավորը, որը նշանակում է *«դատարան անել»*. «Եւ ի դնելու իմ ընդ քեզ դատ» (Նարեկ, էջ 246)[63]: Այն վկայում է նաև Ռ. Ղազարյանը իր բոլոր բառարաններում (ԳԲԱ, էջ 352): Կամ **փող ազդել**՝ *«պարփողել»* ԴՄ-ն՝ «Վասն որոյ առ միոն անթիվ են ստեղծուածք ճառից, Որ զողորմութեանցդ քո **փողով բարբառոյ ազդէ**» (Նարեկ, էջ 476): Թարգմ.՝ «Ահա թե ինչու մեկն ստեղծելով ճառեր անհամար՝ ողորմությանդ ազդարարում է միշտ տարփողելով» (էջ 332)[64]:

բ) Կապակցության ընդհանրական նշանակությունը, ըստ այդմ՝ գործածական տարածվածությունը, օրինակ՝ դոյզն-ինչ, դիցուք՝ ենթադրենք, մահու չափ, ամէն և նման միավորները:

գ) Էական է նաև քերականական կառույցի դերը, օրինակ՝ **աղաւթս առնել**՝ *«աղոթել»* իմաստով հարադիր բայ է, իսկ **յաղաւթս կալ**՝ *«աղոթել»* իմաստով դարձվածք է. բառացի ունի **աղոթքի մեջ մնալ** նշանակությունը:

դ) Դարձվածքների և դարձվածային արտահայտությունների մեջ ներառել ենք թևավոր խոսքերը, առածներն ու ասացվածքները, կենսափիլիսոփայական ընդհանրացումները, քրիստոնեական վարդապետության հիմնագաղափարները ձևակերպող միավորները, դավանաբանական կայուն կապակցությունները:

---

[63] Այստեղ խոսքը Աստծո դատաստանի մասին է:

[64] Բնագիրը՝ **Գ. Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., 1981, թարգմանության համար՝ **Գ. Նարեկացի,** Մատյան ողբերգության, Եր., 2014:

ե) Հեղինակային, դիպվածային դարձվածքները և դարձվածային արտահայտությունները, որոնք ունեն խոսքային առկայացում, գնահատել ենք տվյալ խոսքում՝ իմաստառճական դիտակետում:

Դարձվածքները պատկերավոր խոսքի կառուցման էական բաղադրիչներ են: Նրանց իմաստային և ոճական գնահատականներ տալու համար **կարևոր է բնագրի արժևորումը** բովանդակության, ժանրային և հեղինակի լեզվամտածողության հատկանիշների դիտակետում, քանի որ դարձվածքները, ունենալով խոր ակունքներ ժողովրդական մտածողության մեջ, հաստատվում են և դառնում կենսական նրա խոսքում: Յուրաքանչյուր հեղինակ իր խոսքակառուցման արվեստի կնիքն է դնում նրանց գործառույթում՝ հարազատ մնալով սեփական լեզվամտածողության պահանջներին և դրանից բխող դրսևորումներին: Ուստի դարձվածքների քննությունը պարտադիր պահանջ է ստեղծում բնագրերի ճշգրիտ ընտրության, կիրառական հաճախելիությունը պայմանավորվում է բնագրի բովանդակությամբ:

Բնագրերին անդրադարձել ենք ի հարկի, քանի որ բնագրի բովանդակությունը կարևորվում է դարձվածքների և դարձվածային արտահայտությունների գործածության հիմնավորման համար: Դավանաբանական բնագրերի[65] ընտրության հիմքում եղել է տվյալ նյութի ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեքը: Մեր հիմնախնդիրներից մեկը եղել է գրաբարի դարձվածքների և դարձվածային արտահայտությունների գործառական-ոճական արժևորումը, ինչը կատարվում է առաջին անգամ:

Խ. Բադիկյանը արդի հայերենի դարձվածքների ոճական գնահատականը տալիս է իր «Դարձվածային ոճաբանություն» ուսումնասիրության մեջ (Երևան, 2000): Գրաբարի դարձվածքների և դարձվածային արտահայտությունների ոճական-գործառական քննությունը, որը եղել է մեր հիմնական խնդիրներից մեկը, ներկա-

[65] Քննությունը կատարել ենք վարքագրություններում, վկայաբանություններում, դավանաբանական թղթերում և Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում:

յացվում է առաջին անգամ. ուսումնասիրությունը բացահայտում է գրաբարի ոճական ամենայն հնարավորությունները, որոնցից յուրաքանչյուր հեղինակ օգտվել է յուրովի: Կարծում ենք մեր այս ուսումնասիրությունը կարևոր հիմնաքար է գրաբարի դարձվածային ոճաբանության համար:

## 6.1. Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները վարքագրական երկերում և վկայաբանություններում

Վկայաբանություններում և սրբերի վարքագրություններում ակնառու է քրիստոնեական վարդապետության այն հիմնական գաղափարներից մեկը, որ հանուն Քրիստոսի հավատի ցանկացած ֆիզիկական կտտանք իմաստավորված է, քանի որ այդ տանջանքները լոկ մարմնական ցավեր են, որ տանում են դեպի գաղափարական լույսը, որը հավատն է առ Աստված. նրանցում հաճախ ենք հանդիպում «**Պի՛նդ կացէք**, զի այժմ առունք **զլուսեղէն պսակն**» (էջ 10), հորդորին, քանի որ Աստված տեսնում է այդ ամենը, և դա է ճանապարհն առ Աստված. «Քաջալերեցարո՛ւք և **պի՛նդ կացէք**, զի ես եկից եւ առից զձեզ առ իս» (էջ 8):

Քրիստոնեություն ընդունած ժողովրդի համար հավատի ամրապնդումը առաջնային այն խնդիրն էր, որ ուներ նաև ազգապահպան նշանակություն: Հետևաբար հավատի ճշգրիտ մատուցումը, այն է՝ քրիստոնեական վարդապետության խորքային և հասանելի քարոզչությունը կատարվում էր սրբերի վարքագրության, քրիստոնեական մասունքների հայտնության վկայաբանություններով, ինչը պիտի ներթափանցեր ժողովրդի մտքի և սրտի մեջ: Հետևաբար այդ խոսքը պատկերավոր էր, տպավորիչ: Դարձվածքների և դարձվածային արտահայտությունների գործածությունը նրանցում անխուսափելի էր և անհրաժեշտ: Ի վկայումն ասվածի՝ քննենք «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն, քարոզչութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարմանն որ ի Քրիստոս, զիտ նշխարաց Թադէոսի առաքելոյն» և «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկանն» բնագրերը[66]:

Առաջին բնագրի համար հիմք են ընդունված վենետիկյան երկու ձեռագրերը և Ֆրանսիայի ազգային գրադարանի ձեռագիրը, վերջինիս հետ համեմատված է Ղ. Ալիշանի՝ Սոփերքում հրատարակած

---

[66] Բնագրային նյութը տե՛ս Մատենագիրք Հայոց, Գ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2004:

բնագիրը[67]: Վկայաբանության հեղինակը Սամվել եպիսկոպոսն է, որի մասին վկայված է շարադրանքի վերջում. «Ես Սամուէլ եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի թարգմանեցի (տվյալ դեպքում այն նշանակում է պատմեցի – Ա. Ց.), զվկայութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի և զսրբոյ կուսին Սանդխտոյ եւ ետու ամենայն Հայոց աշխարհի»[68]: Ղ. Ալիշանի կարծիքով Սամուելը ասորի եպիսկոպոս Շմուելն է, բայց սա սխալ մոտեցում է, քանի որ բնագիրը բացակայում է ասորի գրականության մեջ:

Շմուելի կրոնաքաղաքական դավանանքին հակառակ էին շարադրանքում առաջ քաշված գաղափարները: Հակոբ Քեոսեյանը բնագիրը համարում է 485 թվականից հետո շարադրված, որի հեղինակը Սամվել եպիսկոպոսն էր: Աշխատանքը բովանդակում է Թադևոս առաքյալի գործունեությունը քրիստոնեական քարոզչության ուղղությամբ և Սանդուխտ կույսի մարտիրոսությունը Քրիստոսի հավատի ընդունման պատճառով: Այն ունի բովանդակային հետևյալ ուղղվածությունը.

1. Աստվածային հրաշագործությունը նրանց հանդեպ, ովքեր հավատում են նրան:

2. Քրիստոնեություն ընդունած Սանդուխտ կույսի կտտանքները, որ նա կրում է սիրով, քանի որ մեծապես հավատարիմ էր Տիրոջը:

Նյութը ներազդու է դառնում ոչ միայն դեպքերի, այլև խոսքային միջավայրի միջոցով:

«**Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկանն**» վարքագրությունը նվիրված է սուրբ Շուշանիկի՝ իր սուրբ հայրերի հոգևոր արժեքների կրողի և ժառանգողի կյանքի այն հատվածի նկարագրությանը, երբ նա ֆիզիկական կտտանքների է ենթարկվում հանուն հավատի և դավանանքի:

Շուշանիկը Վարդան Մամիկոնյանի դուստրն էր և Գուգարաց բդեշխ Աշուշայի հարսը: Նրա ամուսինը՝ բդեշխ Վազգենը, Պերոզ արքայի 8-րդ տարում գնում է Տիզբոն և կրոնափոխ լինում: Ըստ

[67] Մատենագիրք Հայոց, էջ 3:
[68] Նույն տեղում, էջ 18:

Դ. Փարպեցու՝ Պերոզի թագավորության 25-րդ տարում (482 թ.) նա դատապարտվում է մահվան: Շուշանիկը հեռանում է դավաճան ամուսնուց, 6 տարի կտտանքների ենթարկվում բանտում և 7-րդ տարում կնքում իր մահկանացուն: Վարքագրական այս երկը սրբախոսական մյուս աշխատություններից առանձնանում է՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով.

1. այն համարվում է Եղիշեի երկի շարունակությունը, որն ունի **կանոնիկ դավանաբանական** շարադրանք,

2. այս աշխատությունը արժևորվում է իբրև «բուական ստոյգ թուագրուող **Ե** դարի երկրորդ հուշարձան»[69] Կորյունի երկերից հետո:

Երկի հիմնագիծը սրբուհու գիտակցումն է այն մեծ իրողության, որ մարդու հասցրած ֆիզիկական ցավը ոչինչ է հոգևոր հաղթանակի համար. Քրիստոսի մեծ հավատի համար տառապանքը և կտտանքը մարդուն արժանացնում են **Քրիստոսի պսակին,** ուստի «**բրածեծ գահիցն**»՝ գնահատված տիկինը սիրով և գիտակցված է հաղթահարում հանուն հոգևոր հավատի իր պայքարը. «զի Տէր է իմ աւգնական եւ ոչ երկեայց, զի՞նչ արասցէ ինձ մարդ» (էջ 34):

Ահա նրա գանահարման պատկերներից մեկը. «...**եւ պատառպատառ լինէր** ամենայն մարմին նորա, զի էր դժնիկ զերկիրն և արիւն հոսէր ի նմանէ, եւ զերկիրն արեամբ ցնդեալ ցուցանէր տեսողոյն» (էջ 40):

Սրբախոսական երկի հայերեն մշակումներում այն պիտի ազգայնացվեր՝ շեշտը դնելով Շուշանիկի նահատակության վրա հանուն հավատապահպանման: Վրացերեն տարբերակում շեշտը դրվում է պատմականության վրա: Երկի հայկական տարբերակը համարվում է նախնական[70]:

Բնագրերը, լինելով դավանաբանական բովանդակությամբ, հարուստ են կայուն կապակցություններով, դարձվածքներով և դարձվածային արտահայտություններով: Կայուն կապակցությունները, ինչպես՝ **երկնաւոր թագաւոր**, **դուստր, հարս կամ աղախին երկնաւոր**

[69] Մատենագիրք Հայոց, Գ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 25:
[70] Նույն տեղում, էջ 25-26:

**թագաւորի, երկնային գաւթի ծնունդ** ևն դավանաբանական իմաստ ունեն: Քանի որ դրանք ունեն բաղադրիչներից առնվազն մեկի՝ փոխաբերական իմաստով գործածություն, մենք արժևորում ենք իբրև դարձվածային միավորներ:

Հաճախադեպ են **լոյս** բաղադրիչով միավորները: Ռ. Ղազարյանը «Գրաբարի բառարանի» Բ հատորում **լոյս** բառի բացատրության 6-րդ կետում փոխաբերական իմաստով արձանագրում է *«աստուածութիւն»* իմաստը:

**Լոյս** բաղադրիչը տարբեր որոշիչների հետ կազմում է ԴՄ-ներ, օրինակ՝ **վերին, վերագոյն լոյս, լոյս աստուածութեան, լոյս կենդանի** ևն: Բնագրային օրինակներ. «Եւ զարդարիլ **վերագոյն լուսով**, բնակել ի լոյս աստուածութեան եւ յամենայն ժամ կաս յուրախութեան **վերին լուսոյ**» (էջ 14): «Ահա փութով հասանես '**ի լոյսն կենդանի** առ որ անձկացեալ ես» (էջ 14), «…եւ ուսուցեր ինձ **զլոյսն կենդանի**, զի դու եղեր ինձ ճանապարհ կենդանի և դեղ անմահութեան» (էջ 14): «…ընկալցին զփափագելի **լոյսն յաւիտենից**» (էջ 22):

**Լուսով առլնուլ**՝ տոգովել լույսով. «…եւ մեծի թագաւորին մերձ կացից եւ անտի **լուսովն առլցոյց**…» (էջ 39):

**Լոյս** բաղադրիչը հաճախ է գործածվում **զգեցոյց** բայի հետ, որ կապակցության մեջ նշանակում է *«պողողվել, լցվել»*. «…**լոյս զգեցոյց**» (էջ 14), «զգեց **փառս լուսեղէն** զերկանաւոր ճառագայթուն» (էջ 16), «**զգենուս զլոյսն երկնաւոր**» (էջ 12), «**զգեցոյց նմա լուսեղէն զերկնաւոր ճառագայթուն**» (էջ 16), «**զգենու զփառս լուսեղէն դասուց**» (էջ 16):

**Լոյս** բաղադրիչը հանդես է գալիս նաև **աստուածութիւն** բաղադրիչի հետ. «պարզեաց ի **բովս լուսոյ աստուածութեան** հայոց» (էջ 15), «…փութամ հասանել **ի լոյս աստուածութեանդ** քում» (էջ 7), «…հաստատեսցէ **ի լոյս աստուածութեան** իւրոյ» (էջ 14), «…եւ թեւազգեցեալ ել **ի լուսեղէն բանական**» (էջ 16):

**Պսակ լուսոյ** կապակցությունը ունի *«ապվածային շնորհի պսակ* իմաստը». «…**պսակ լուսեղէն** ի գլուխ քո» (էջ 14):

Հաճախադեպ են **երկնային, երկնաւոր, երկնից** լրացումներով ԴՄ-ները: ՆՀԲ-ում **երկնային** բառի համար նշվում է. «որ ինչ յերկինս

են ի Սուրբ Գիրքն ասի Երկնից կամ երկնաւոր» (Ա, էջ 606)։ Բերված են **երկնային զաւրք, երկնային դասք** կամ **երկնայինք**, այսինքն՝ *հրեշտակք* են։ Այս դեպքում **երկնային, երկնաւոր** բաղադրիչներն ունեն *«սատվածային»* իմաստը։ **Երկնային դասք, երկնային կամ երկնաւոր գունդ, բանակ, զաւրք** հաճախադեպ կապակցությունները ևս մենք արժևորել ենք իբրև ԴՄ-ներ։

Բնագրային մեր օրինակները՝ **երկնաւոր զաւրքի ծնունդք** (էջ 15), **յարկս երկնայինս** (էջ 15), **երկնաւոր զաւրք** (էջ 15). «Եւ եղեւ շարժումն եւ ձայն ահեղ **երկնաւոր զաւրաց**» (էջ 15), **երկնային լոյս** (էջ 5, 8), **երկնային սէր** (էջ 7), **երկնաւոր թագաւոր** (էջ 8), «…եւ ասէ զնա. «Երանի՜ է քեզ **դուստր երկնաւոր թագաւորին**» (էջ 8)։ ԴՄ-ներում **երկնայինը** ունի աստվածային նշանակությունը. **երկնային թագաւոր** ԴՄ-ն խորհրդանշում է Քրիստոսին։ Առաջին բնագրում Աստծո՝ **երկնային թագաւորի** դուստրը Սանդուխտն է, երկրորդում՝ Շուշանիկը, որ է «աղախին Քրիստոսի»․ «Եւ անկաներ առաջի սուրբ **աղախնոյն Քրիստոսի** հանդերձ կնաւ իւրով» (էջ 46), «…զոր կենաց սուրբ աղախինն Քրիստոսի» (էջ 45)։

**Հարս, դուստր, աղախին Քրիստոսի** կամ **երկնաւոր թագաւորի** ԴՄ-ներ են։ Սրանք հաճախադեպ դավանաբանական կապակցություններ են, որ մենք արժևորում ենք իբրև ԴՄ-ներ, որոնցում փոխաբերական իմաստ ունեն **հարս, դուստր, աղախին** բառերը։

Դավանաբանական գրականության մեջ, այլև մեր քննած բնագրերում կան կայուն կապակցություններ, որոնք ԴՄ-ներ չեն, քանի որ նրանցում չկա փոխաբերական իմաստ. նրանք կայուն կապակցություններ են, որոնք ունեն մշտական գործածություն աստվածաբանական երկերում, օրինակներ՝ «…պաշտել **զԱստուած կենդանի**» (էջ 33), «Որ սիրեցի զքեզ **ճշմարիտ Աստուած**» (էջ 41), «…եւ դու ընկալցիս վրէժս յարդարադատն Աստուծոյ **յաւուրն այցելութեան**» (էջ 41), «…**եղեւ նշան լուսեղէն** յերկնից» (էջ 12) – Աստծու լուսե նշանը, որ կարող է տեսիլ լինել և այլ նշաններ՝ Աստծուց ուղարկված։

Հետևյալ միավորներն արդեն ԴՄ-ներ են, քանի որ նրանցում առկա է փոխաբերական իմաստը. «…արժանաւորեա՛ զիս ընդ սիրելիս քո հասանել հանգստեան **ի խորանսդ յաւիտենից**, որ պատրաս-

տեալ ես սիրելեաց քոյ» (էջ 47), «…զի յուղարկեսցեն զուրբն ի մեծ աշխատութեանցն **առ նաւահանգիստն Քրիստոս**» (էջ 16):

ՆՀԲ-ում **նաւահանգիստ** բառի փոխաբերական իմաստով գործածության հրաշալի օրինակներ են ներկայացված. «Փոխանակ երկրաւոր նաւահանգստի՝ հրեշտակական եւ երկնաւոր նաւահանգիստքն եկին 'ի քեզ» (Կիւրղ., ՆՀԲ, Բ, էջ 406), «Ժամանեսցուք յանքոյթ եւ ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ» (ՆՀԲ, Բ, էջ 406):

ՆՀԲ-ն *խորան* բառի տարբեր իմաստների շարքում տալիս է **խորան երկնից** կապակցությունը: Բնագրի մեր օրինակում ունենք *«երկնային արքայութիւն»* իմաստով **խորան յաւիտեան** դարձվածքը, որին հոմանիշ է **յարկս լուսեղէն** դարձվածքը: **Խորան** բառի իմաստների շարքում ԳԲԱ-ն վկայում է նաև *«յարկ»* նշանակությունը. «…թերեւս հաղորդեցայց սրբոյն դասուց եւ մտից **ի յարկսն լուսեղէնս**» (էջ 42):

**Հաւտ** բաղադրիչով ԴՄ-ներն են՝

«…**զմոլորեալ ոչխարս** յաւտի քո» (էջ 1),

«Եւ ընկալ զաղախին քո Որդւոյ քո սիրելւոյ ի հաւտ անուշից» (էջ 14),

«Արդ ընկալ զիս **ի հաւտ** անուշից **աստուածութեան քո**» (էջ15):

*«Մոլորեալ ոչխարը»* խորհրդանշում է հավատացյալին, որը քրիստոնեական վարդապետության ամրակայման կարիքն ունի, իսկ *«հաւտը»* Քրիստոսի հավատացյալների խումբն է:

Բնագրերում գործածված դավանաբանական դարձվածքները, ինչպես տեսանք, հիմնականում անվանական կապակցություններ են:

Դավանաբանական ԴՄ-ների հետ սրբախոսական բնագրերում գործածված են նաև ոչ դավանաբանական միավորներ, որ այսուհետև կանվանենք ընդհանրական դարձվածային միավորներ:

Դրանք հիմնականում բայական կառույցներ են: Տարածված են **առնել, լինել, առնուլ, կալ, թողուլ, արկանել, տալ, ածել, հարկանել** եւ բայերով ԴՄ-ները: Նրանցով կազմվում են նաև հարադիր բայեր: Օրինակ՝ **բրածեծ առնել**-ը եթե նշանակում է *«բրով ծեծել»,* այն հա-

ռադիր բայ է: Օրինակ՝ բնագրում ունենք «…ոչ մնաց ի նմա տեղի ողջ **ի բրածեծ առնելոյ**» (էջ 36), բայց եթե **բրածեծ առնել, բրազոհ առնել, սրամահ առնել** կապակցություններում ընդգծվում է *«ջկել, կոտորներից ներքանյվել»* նշանակությունը, դրանք կարող ենք արժևորել իբրև ԴՄ:

Բնագրում ունենք *«կոտորանք, ջկանք»* իմաստով **զբրածեծ տանիցն** (էջ 40) անվանական ԴՄ-ն:

Ռ. Ղազարյանն անվերապահորեն համարում է ԴՄ-ներ հետևյալ կապակցությունները՝ **սրամահ առնել** – *սրով սպանել* (ԳԴԲ, էջ 254, ԳԴԲ, էջ 483, ՆՀԲ, Բ, էջ 756), **բրածեծ առնել** – *զանահարել*, **բրածեծ լինել** – *զանահարվել* (ԳԴԲ, էջ 56), ՆՀԲ-ն վկայում է **բրազոհ առնել**-ը *«բրածեծ առնել»* նշանակությամբ (Ա, էջ 18):

Բնագրում ունենք՝ «Եւ զոմանս **բրազոհ արարեալ** եղին ի բանտի» (էջ 7), «…մտից ի սիրտս իշխանացն եւ զրգռեցից զնոսա հանդերձ թագաւորաւ եւ **արասցէ զմեզ սրամահ**» (էջ 9):

Քանի որ նրանցում կա *«զանահարել»* իմաստը՝ *«որպէս սրախողխող անել»,* մենք տվյալ գործառույթներում դրանք գնահատում ենք իբրև դարձվածքներ: Համեմատենք՝ «նա մեռանի ի բրածեծ առնելոց» և «Արասցես զնա բրազոհ կամ սրամահ»: Բայց կան միավորներ, որ Ռ. Ղազարյանն արժևորում է իբրև դարձվածքներ, բայց մեր կարծիքով դրանք հարադիր բայեր են: Սրանք մենք կներկայացնենք աստղանիշով, օրինակ՝ **արժանի առնել*** և **արժանի լինել*** միավորները՝ *«արժանացնել»* և *«արժանանալ»* իմաստներով (ԳԴԲ, էջ 44, ԳԲԱ, էջ 111, ՆՀԲ, Ա, էջ 357), **ուրախ լինել***՝ *«ուրախանալ»* և **ուրախ առնել***՝ *«ուրախացնել»* (ԳԴԲ, էջ 235, ՆՀԲ, Բ, էջ 558): Բնագրում ունենք. «…ուրա՜խ լեր» (էջ 12, 13, 14), «…**եւ արա՛ զիս արժանի**» (էջ 14):

Ռ. Ղազարյանը իր «Գրաբարի բառարանում» իբրև դարձվածքներ է վկայել նաև **աղաւթս առնել*** – *աղոթել* (ԳԲԱ, էջ 36), **ազդ առնել*** – *տեղեկացնել* (ԳԲԱ, էջ 36), **պատասխանի առնել*** – *պատասխանել* (ԳԲԲ, էջ 390): Այս դեպքում նա **աղօթս առնել**-ին հոմանիշ է համարում **յաղօթս կալ**-ը, **պատասխան առնել**-ին՝ **պատասխան տալ**-ը:

Մեր գնահատմամբ դարձվածային միավորներ են **յաղօթս կալ**-ը և **պատասխանի տալ**-ը, իսկ մյուսները հարադիր բայեր են:

Բայական դարձվածքների գերադաս անդամը, ինչպես նշեցինք բայն է: Ներկայացնենք դրանք:

1. **Առնել և առնուլ** բաղադրիչով կառույցներ. **առնել** բայը, ի թիվս այլ իմաստների, ունի *«լինել», «անել», «դարձնել», «փոխել»* իմաստները: Այլ բայերի հետ գործածվելիս արտահայտում է պատճառականի իմաստ, ՆՀԲ-ում նշվում է, որ տարբեր բառերի հետ կազմում է կապակցություններ, օրինակ՝ **թողութիւն առնել, յամաւթ առնել** ևն, այլև տարբեր խոսքի մասերի հետ կազմում է «յարադրաւոր բայեր», ինչպես՝ **աշխատ առնել** – *չարչարել,* **առաջի առնել** – *մատուցել,* **դատ առնել** – *դատել,* **բարձր առնել** – *բարձրացնել:*

**Առնուլ** բայը, ի թիվս այլ իմաստների, ունի *«անել», «համարել», «ձեռնարկել», «կրել»* ևն իմաստները: Այն նույնպես կազմում է բազմաթիվ հարադրություններ[71]: ՆՀԲ-ում բայի տարբեր իմաստների համար բերված են մատենագրական հետաքրքիր օրինակներ: Մեր քննած բնագրերում գործածված են հետևյալ ԴՄ-ները.

ա) **առնուլ զհայցումն գթոյն** – *գթասրտություն սպանալ.* «…մինչև **առնուն զհայցումն** ջերմեռանդ գթոյն…» (էջ 5),

բ) **առնուլ զնմանութիւն** – *նմանեցնել.* ՆՀԲ-ն վկայում է **բերել զնմանութիւն** տարբերակը (Ա, էջ 455), մեր բնագրային օրինակը՝ «…լոյս ծագեաց ի վերայ իմ, եւ ‘ի մէջ լուսոյն այր մի լուսազգեստ, որ ոչ կարէի առնուլ զնմանութիւն յառաւել լուսոյ ճառագայթիցն, ձայնեաց զիս և ասէ» (էջ 14),

**գ) պսակ** բաղադրիչի հետ՝ **առնուլ պսակ**՝ *«թագ կրել»* իմաստով ԴՄ է ձևավորվում. **պսակն** ունի *լուսէ, լուսեղէն* և *լոյս* բառով որոշիչներ, որոնք խորհրդանշում են աստվածայինը. «…զի այժմ **առնուք պսակ լուսոյ** ի գլուխ ձեր» (էջ 11)՝ «կկրեք աստվածային պսակ ձեր գլխին», «…եւ **առնուս զպսակն լուսեղէն** ի գլուխ քո» (էջ 11):

ԴՄ-ների արժևորման համար կարևոր դեր ունեն.

---

[71] Տե՛ս **Ղազարյան Ռ.**, ԳԲԱ, էջ 213 և ՆՀԲ, Ա, էջ 308:

1. փոխաբերական իմաստով բաղադրիչը, օրինակ՝ **թողություն առնել**՝ *«ներում շնորհել»*, **աղտեղի առնել**-ը *«աղտեղանալ»* իմաստով ԳԲԱ-ում համարվել է դարձվածք, այնինչ այն դարձվածք է դառնում **աղտեղի** բաղադրիչի փոխաբերական իմաստով գործառույթի դեպքում, երբ այն ունի *«մոլորության», «դատապարտելի արարքի կրկել»* իմաստները, իսկ *«աղտոտվել»* իմաստով այն հարադիր բայ է:

Կարևոր է նաև շարահյուսական կառույցը, օրինակ՝ **յաղօթս կալ**-ը բառացի նշանակում է *«աղոթքի մեջ լինել»*, որը ԴՄ է, իսկ **աղաւթս առնել**-ը՝ հարադիր բայ: Կարևոր է նաև բայական բաղադրիչի իմաստը, համեմատենք **հալածական առնել, հալածական արկանել, հալածական տանել** նույնիմաստ միավորները, որոնցից առաջինը հարադիր բայ է՝ *«հալածել»* բայիմաստով, և հոմանիշ է մյուսներին, որոնք ԴՄ-ներ են բայական բաղադրիչների իմաստներով պայմանավորված:

* **Անտես առնել**՝ *«անփեսել, անուշադրության մատնել»* իմաստով. «մի անտես առներ» (էջ 15):

ՆՀԲ-ն վկայում է **անտես առնել, մնալ** միավորները (Ա, էջ 249):

Եթե կապակցությունն ունի խոսքային առկայացում, ապա նրա իմաստը պայմանավորված է տվյալ խոսքային միջավայրով. բնագրերում կան նման ԴՄ-ներ, որոնք ԳԴԲ-ում կամ գրաբարի բառարանում վկայված չեն:

***Առնել յաւիտենական**՝ *«անմահ, մշտական դարձնել»* իմաստով: ՆՀԲ-ում յաւիտենական բառի բացատրությունների շարքում տալիս է «*մշտնջենավոր, յարակաց ապրվածաքանական իմաստ»*, օրինակ՝ «Ի կեանս յաւիտենականս, ի տանջանս յաւիտենական» (Բ, էջ 352):

Բնագրում ունենք. «…**արա** զսոսա ժողովուրդ **յաւիտենական** եւ երկնաւոր զաւթի ծնունդ» (էջ 11): Այն ունի *«հավերժացնել»* իմաստը:

* **Նշան(ս) առնել**՝ *«իմացնել, ցույց տալ»* իմաստով: ՆՀԲ-ում **նշան** բառի բացատրությունները բազմաթիվ են, ի թիվս նրանց՝ նաև

«Հրաշալի գործ ցուցեալ առ ի տալ հաւատալ հրաշք, սքանչելիք» (Բ, էջ 433):

«…**Առնէր նշանս** եւ սքանչելիս, մեծամեծս» (էջ 5):

**Նշան առնել** ԴՄ-ին հոմանիշ է **նշան տալ** դարձվածքը, որի մասին վկայում է Լ. Հովհաննիսյանը[72]:

**2. Առնել** բային հոմանիշ է **լինել** բայը, որը վերացական բայ է: Այն կապակցվում է գոյականների և ածականների հետ, որոնք Ռ. Ղազարյանը ԳԲ-ի իր վկայումներում, մի մասը նաև ԳԴԲ-ում գնահատել է իբրև դարձվածքներ, մենք դրանք համարում ենք հարադիր բայեր, որոնք ոճական առանձին արժեք ունեն: Նրանք, ինչպես նշել ենք, կներկայացնենք աստղանիշով՝ ի հիշեցումն այն, որ նշված բառարաններում դրանք արժևորված են իբրև ԴՄ-ներ.

**փառաւոր լինել*** – փառավորվել (էջ 43), **լսելի լինել*** – լսվել (էջ 43), այն հոմանիշ է **ազդ առնել** միավորին, **գետավէժ լինել*** – խեղդվել (էջ 37), **արժանի լինել*** – արժանանալ (էջ 44), **ուրախ լինել*** – ուրախանալ (էջ 42), **պատառ-պատառ լինել*** – բզիկ-բզիկ անել (էջ 40), **անյոյս լինել***– հուսահատվել (էջ 42), **ունկնդիր լինել*** – լսել (էջ 30), ըստ որում՝ ԳԲԲ-ում **ունկն դնել** միավորը ևս դարձվածք է համարվել, այս դեպքում ունենք **դնել** բայական բաղադրիչ և կարող ենք այն դիտել իբրև դարձվածք: Ռ. Ղազարյանը **ունկնդիր լինել**-ը համարում է դարձվածք, բայց **ուխտադիր լինել***-ը՝ ոչ. այս դեպքում, մեր կարծիքով, նա իր իսկ սկզբունքին հակառակ է գնում, քանի որ **ուխտադիր** նշանակում է *«ուխտած, երդված, երդումով հաստատված»*, ուստի նրա առանձնացրած շարքում պիտի ընդգրկվեր նաև **ուխտադիր լինելը**: Ունենք նաև միավորներ, որոնք Ռ. Ղազարյանը ԳԲ-ում չի վկայում կամ վկայում է նրանց հոմանիշը, օրինակ՝ **յարտասուս լինել** (էջ 28):

ԳԲԱ-ում վկայված է **յարտասուս հարկանել** միավորը. բնագրում ունենք **յարտասուս լինել** (էջ 28)՝ *«լալ»* իմաստով, ՆՀԲ-ն ներ-

[72] Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» լեզվի մի շարք առանձնահատկությունների շուրջ, «Լեզու և լեզվաբանություն», 1-2 (13), Եր., 2015, էջ 6:

կայացնում է **յարտասուս հարկանել** կամ **լինել** կամ **ցնդիլ**՝ *«արփա-սուել, լալ»* իմաստներով (Ա, էջ 379):

Բնագրում ունենք **պատկառ լինել** միավորը՝ *«հարգանքով լի-նել»* իմաստով (էջ 28), ԳԲԲ-ում այս միավորի հոմանիշն է վկայված՝ **պատկառ կալ**՝ *«հարգալից», «ուշադիր», «պատրաստ լինել»* իմաստներով (ԳԲԲ, էջ 394):

3. **Լինել** բայը **կերպարանք** բաղադրիչով նշանակում է *«կերպա-րանափոխվել»*, օրինակ՝ ՆՀԲ-ում կա.

ա) կերպարանափոխ լինել միավորը,

բ) կերպարանիմ՝ առնուլ զկերպարան ինչ,

գ) կերպարանեմ՝ կերպարանս իմն զգեցուցանել (Ա, էջ 1092-1093):

ԳԴԲ-ում Ռ. Ղազարյանը տալիս է հետևյալ կառույցները (ԳԴԲ, էջ 164).

ա) կերպարանակից լինել – մեկի կերպարանքին նմանվել,

բ) կերպարանափոխ լինել – կերպարանքը փոխել և կերպա-րանս կերպարանս – զանազան կերպարանքներով:

Բնագրային մեր օրինակները՝

«Իսկ անիծեալն սատանայ **եղեալ ի կերպարանսն** առն միոյ» (էջ 8):

«…Ով աղտեղի և պիղծ, չար եւ անամաւթ. մինչեւ յե՞րբ ոչ ամա-չես դու յԱստուծոյ, երկի՛ր ի զաւրութենէն Աստուծոյ, եւ **երթ յետս** (բացակայում է ի կերպարանս քո, որը տվյալ խոսքային տիրույթում կա) չարագլուխ վիշապ» (էջ 9):

Ասէ սուրբ առաքեալն. «**Ե՛րթ յետս**, սատանա՛յ, սաստեսցէ Տէր ի քեզ» (էջ 9): Ունի նաև համանիշ կառույց՝ «…լե՛ր յետս դարձեալ, թշուառական» (էջ 9), **յետս** բաղադրիչը *երթալ, դառնալ* բայի հետ է գործառվել: Ռ. Ղազարյանը **յետս**-ը վկայում է տարբեր բաղադրիչ-ների հետ՝ *յետս ունել՝ յետ պահել, յետս հարկանել՝ յետ մղել, յետս կա՝ յետ կանգնել, չհնազանդել* (ԳԴԲ, էջ 242):

**Յետս** բաղադրիչը տարբեր բայերի հետ տարբեր իմաստներով կապակցություններ է կազմում, որի մասին վկայված է ՆՀԲ-ում, օրի-նակ՝ *դառնալ յետս՝ յետս դարձուցանել, յետս հարկանել, յետս ունել՝*

*կանեցնել իմաստով, յետս փանել՝ յետ պահել* են (Զամենայն արժանս յառաջ մատուցանեք, և զարժանաւորս յետս տանեք, ՆՀԲ, էջ 357):

**Երթալ յետս** կառույցը մեր բնագրին բնորոշ, նրա խոսքային կոնկրետ տիրույթում գործածված միավոր է՝ **կերպարանք** բաղադրիչի հետ, որը զեղչված է, բայց կա տվյալ խոսքում, արտահայտում է *«վերակերպարավորվիր՝ վերադարձիր քո նախկին կերպարանքին»* իմաստը:

4. **Փախստական** բաղադրիչով. այս բաղադրիչը հանդես է գալիս ոչ միայն **առնել, այլև անկանիլ, լինել(իմ)** բայերի հետ, օրինակներ՝

«...եւ անաւրէնքն **եղեն փախստականք**» (էջ 18),

«...**արարից փախստական** զչար զազանն» (էջ 11),

«իսկ թագաւորն **փախստական անկաւ**, (փախավ) յապարանս իւր» (էջ 17):

Ռ. Ղազարյանը վկայում է հետևյալ ԴՄ-ները.

ա) **փախստական առնել** – փախցնել, հալածել, քշել,

բ) **փախստական անկանել (իմ), փախստական լինել** – փախչել, փախստական գալ, փախստական դիմել – փախչել, ունի նաև **փախստեայ** և փախստեայս բաղադրիչներով վկայություն՝ ա) **փախստեայ անկանել(իմ), փախստեայ լինել(իմ)**՝ *«փախչել իմաստով»,* **փախստեայս առնել**՝ *«փախուստի մատնել»* իմաստով (ԳԴԲ, էջ 270-271),

գ) **տալ փախստականս** (ԳԴԲ, էջ 262), ՆՀԲ-ն վկայում է ա) *«փախստական առնել», «արկանել», «վարել», «տալ»*՝ *«փախուցանել», «ի փախուստ դարձուցանել»* իմաստներով,

դ) **փախստական լինել, գնալ, դառնալ, անկանիլ, դիմել**՝ *«փախչել»* իմաստով (ՆՀԲ, Բ, էջ 924):

Բնագրում գործածված ԴՄ-ների մի մասի հոմանիշների վկայումները կան ԳԴԲ-ում կամ ԳԲԱ-ում և ԳԲԲ-ում: Այսպես՝ **մերձաւոր առնել** – *մոտենալ, մոտ լինել* (էջ 42), ԳԲԲ-ն վկայում է **մերձ լինել** հոմանիշը կամ **այցելութիւն առնել**՝ *«այցելել»* իմաստով (էջ 43), ԳԲ-ն այս միավորը չի վկայում, այլ տալիս է նրա հոմանիշները՝ **այց առնել, յայց ելանել**՝ *«այցի գնալ»* իմաստով (ԳԲԱ, էջ 62): Ռ. Ղազա-

րյանը «Գրաբարի բառարանում» **տալ** բայի բացատրություններում գրում է. «Գոյականների հետ կազմում է բազմաթիվ յարադիր բայեր՝ գոյականի արտահայտած նշանակությամբ, ինչպես՝ հրաման տալ, պատասխանի տալ, պատերազմ տալ են» (ԳԲԲՆ, էջ 536): Հեղինակը այս միավորները դարձվածքներ է համարում, ինչին համաձայն ենք՝ պայմանավորված **տալ** բայի բայիմաստով:

**Տալ** բաղադրիչով ունենք հետևյալ ԴՄ-ները.

ա) **հրաման տալ**՝ *«հրամայել»* իմաստով (էջ 12, 17, 36՝ 2 անգամ), այն վկայված է ՆՀԲ-ում և ԳԴԲ-ում:

բ) **տալ աւետիս** կամ **աւետիս տալ**՝ *«ավետել»* իմաստով (էջ 21, 48, 28, 9), այն վկայված է ՆՀԲ-ում և ԳԴԲ-ում,

գ) **տալ ի կնութիւն**՝ *«կնության տալ»* (էջ 27). «…Տայ նմա ի կնութիւն». ԳԴԲ-ն վկայում է **կին առնել** (ԳԴԲ, էջ 40)՝ *«ամուսնանալ»* ԴՄ-ն՝ չնշելով տալ կին՝ *«ամուսնացնել»* պատճառականի ձևը, ուստի հասկանալի է նաև, որ վկայված չէ,

դ) **զաւրութիւն տալ**՝ *«ուժեղացնել», «զորացնել»*. «…Տայցէ զաւրութիւն» (էջ 31), «եւ տուր ինձ զաւրութիւն» (էջ 35): Նրան հոմանիշ է.

ե) **տալ թեւս** ԴՄ-ն՝ *«զորացնել»* իմաստով «Աստածոյ Ամենակալի, որ փրկեսցէ զիս եւ **տայցէ** ինձ **թեւս** որպէս աղաւնոյ, զի թռուցեալ թեւաւքն եւ շնորհաւք Հոգւոյն Սրբոյ հեռացեալ դաղարեցից յանապատի (էջ 31),

զ) **տալ զանձին, տալ զանձն, տալ զինքն** միավորները նշանակում են *«նվիրվել», «իրեն նվիրել»*. «…այլ **ետ զինքն** Աստուծոյ…» (էջ 40), «…տալ զանձն բանտից» (էջ 32), «…տալ զանձն կապանաց» (էջ 32), «տալ զանձն կտտանաց» (էջ 32):

Օրինակներից երևում է, որ այն պահանջում է տրականով հանգման խնդիր լրացում:

ՆՀԲ-ն վկայում է **տալ զանձինս**՝ *«նվիրվել»* իմաստով միավորը (ՆՀԲ, Բ, էջ 842). բնագրում ունենք «…ետուք զանձինս ձեր Աստուծոյ» (էջ 11):

է) **Տալ պտուղ (հանդիսի)**՝ *«կայացնել»* իմաստով. այն բնագրային առկայացում ունի և նշված բառարաններում վկայված չէ. «Եւ **տան պտուղ** սուրբ հանդիսին» (էջ 5)՝ *«կայացրին հանդեսը»*:

Բայական կապակցությունները հանդես են գալիս նաև հետևյալ բաղադրիչներով.

**1. դնել**

ա) **ուխտ դնել.** ՆՀԲ-ն վկայում է *ուխտ դնել, ուխտադիր լինել, ուխտադրեմ* (Բ, էջ 542): Ռ. Ղազարյանը վկայում է *ուխտ դնել*՝ *ուխտադրել, ուխտադիր լինել* (ԳԴԲ, էջ 232): Բնագրային մեր օրինակը՝ «**ուխտ եղեալ** կատարեալ զհիշատակ նոցա» (էջ 22),

բ) **ունկ դնել.** ՆՀԲ-ը վկայում է *ունկն դնել*՝ *ունկնդիր լինել, լսել* (Բ, էջ 551): ԳԴԲ-ում ևս այն վկայված է **ունկն դնել** և **ունկնդիր լինել**՝ *«ունկնդրել»* իմաստով: Մեր օրինակը՝ «. . .արդ **ունկն դիր** և պատմեցից քեզ» (էջ 19),

գ) **միտ դնել**. ՆՀԲ-ը վկայում է այս կապակցությունը՝ *«վճռել, մտադրվել»* իմաստով (Բ, էջ 282): Ունի նաև **արկանել ի միտս** հոմանիշը (Ա, էջ 363): ԳԴԲ-ում այն վկայված է *«ուշադրություն դարձնել», «դիտել», «հետևել»* իմաստներով (էջ 198): Բնագրային մեր օրինակը՝ «…**մի՛տ դիր**» (էջ 20) – *մտադրվի՛ր, որոշի՛ր,*

դ) **դնել ի բանտի** –*բանտարկել*: Ռ. Ղազարյանը վկայում է **ի բանտի դնել** (ԳԴԲ, էջ 108), ՆՀԲ-ում **բանտ** բառի բացատրության համար բերվող օրինակներում կա «…եդ զնոսա ի բանտի» (Ա, էջ 437): Մեր բնագրային օրինակը՝ « Եւ զոմանս բրազոհ արարեալ **եդին ի բանտի** (էջ 7):

2. **Արկանել**

**ա) արկանել կոխան** – ոտնատակ անել՝ *ոտքի տակ բերել, գցել.* «…եւ **արկցէ** զնա **կոխան** առաջի ոտից ձերոց» (էջ 16):

Ռ. Ղազարյանը վկայում է այս միավորը՝ **կոխան արկանել** – *ոտքի տակ գցել,* հոմանիշ է **կոխան առնել** – *ոտնատակ անել,* **կոխան տալ**՝ պատճառականի իմաստով – *կոխոտել տալ, լինել* բաղադրիչով՝ **կոխան լինել** – *ոտնատակ գնալ (ոտնակոխ արտել)* իմաստով

(ԳԴԲ, էջ 165), ունի նաև **արկանել կոխան** (ԳԴԲ, էջ 46): Վկայված է նաև ՆՀԲ-ում (Ա, էջ 1108):

բ) **Ձեռն** բաղադրիչով՝ **ձեռն արկանել** – *բռնել*՝ Ռ. Ղազարյանը վկայում է **ձեռն արկանել** – 1. *ձեռնարկել, 2. բռնել, 3. ձեռք բարձրացնել* (ԳԴԲ,էջ 185): Վկայված է նաև ՆՀԲ-ում (Ա, էջ 363): Բնագրային մեր օրինակները՝

«…եւ բազումք կորան ի նոցանէ յահէ լուսոյ ճառագայթից եւ ոչ իշխեցին **ձեռն արկանել** ի սուրբ առաքեալն» (էջ 6),

«…եւ զոմանս բրազոհ արարեալ եղին ի բանտի, կամէին եւ յիս **ձեռն արկանել**» (էջ 7):

3. **Պազանել** բայը հանդես է գալիս **երկիր պազանել** կառույցով. «Եւ դուք մոլորեալ երկիր պազանէք» (էջ 16), «…երկիր եպազ» (էջ 6), «…պազէք երկիր Անահտայ…» (էջ 9):

Ռ. Ղազարյանն ունի վկայություն **երկիր պազանել**՝ *«երկրպագել»* իմաստով (ԳԲԱ, էջ 80): ՆՀԲ-ում վկայված է **երկիր պազանեմ, երկրպագել** – *համբուրել զերկիր, ծունր կրկնել, խոնարհիլ զգետին* (Ա, էջ 693): Հոմանիշ է **պաշտաւն տալ** (էջ 30) ԴՄ-ին:

4. **Պարսպել** բաղադրիչով ունենք **պարսպել յուսով** կառույցը՝ *հուսադրել:* Օրինակ՝ «…եւ **պարսպեցից զդոսա յուսով** աստուածութեան իմոյ» (էջ 11): Այս կառույցը վկայված չէ ՆՀԲ-ում, ԳԴԲ-ում վկայված է **յոյս առաջին դնել** (ԳԴԲ, էջ 15)՝ *«հուսադրել»* իմաստով:

5. **Կալ** բաղադրիչով՝ ա) **կալ յաղաւթս կամ յաղաւթս կալ** – աղոթել:

Վկայում է նաև Ռ. Ղազարյանը (ԳԴԲ, 15 161, 203), հոմանիշ է **աղօթս մտնել** (էջ 203), ՆՀԲ-ն տալիս է **աղօթս առնել, յաղօթս կալ, կանխել յաղօթս**՝ փխն. **աղօթել** (Ա, էջ 47): Մեր բնագրային օրինակներն են՝ «…կալ յաղաւթս» (էջ 14,15), «կացուցից յաղաւթս» (էջ 14), «կայր յաղաւթս» (էջ 25, 35, 37, 39),

բ) **պինդ** բաղադրիչի հետ՝ **պինդ կալ** կամ **կալ պինդ** նշանակում է *«ամուր հապաղուն մնալ»*: Ռ. Ղազարյանը վկայում է ***պինդ կալ***՝ *«հապաղուն մնալ»* իմաստով (ԳԴԲ, էջ 245): Մեր բնագրային օրինակները՝

«…այդ զաւրացի՜ր եւ **պինդ կաց** ի հաւատսն Քրիստոսի» (էջ 18):

«Պի՛նդ կացէք եւ համբերեցէ՛ք» (էջ 11) «…եղբարք իմ, պի՛նդ կացէք եւ զաւրացարուք ի Քրիստոս»(էջ 12), «…պի՛նդ կացեք» (էջ 11,14,15):

գ) **Կալ յոտն** կամ **յոտն կալ**՝ *«ոտքի ելնել, կանգնել»* նշանակությամբ վկայված է ԳԴԲ-ում՝ էջ 215: Այն վկայում է նաև ՆՀԲ-ն՝ **յոտն կալ**՝ *«յառնել», «կանգնել»* իմաստներով (Բ, էջ 524): Բնագրային մեր օրինակը՝ «…Սուրբ առաքեալն **կայր յոտն** եւ ուսուցանէր նոցա զբանն կենաց» (էջ 9):

դ) Ունենք **կայր ի տարակուսի**՝ *«երկմտել»* իմաստով միավորը. «…վարանեալ կայր ի տարակուսի» (էջ 16), այս գործառույթում ունենք **վարանեալ + կայր ի տարակուսի** նույնիմաստ բաղադրիչները՝ *«երկմտել»* իմաստով. համատեղ գործառույթը իմաստի սաստկացումն է ձևավորում:

ե) **Ակն կալ** – *ակնկալել* (էջ 31)՝ *ինչ-որ բանի սպասում ունենալ*:

6. **Թողուլ** բաղադրիչով. **թողուլ ի ձեռանէ** – *անփութել*: Ռ. Ղազարյանը վկայում է **թողուլ ի ձեռանէ** – *ձեռք մեկնելուց, օգնելուց զրկել* (ԳԴԲ, էջ 105):

Բնագրային մեր օրինակները՝

«…զի ոչ թողցէ զմեզ ի ձեռանէ» (էջ 16),

«մի՛ թողուր ի ձեռանէ սակաւ ժողովուրդս» (էջ 16),

«…մի՛ թողուր ի ձեռանէ զվիճակս զայս» (էջ 17):

7. **Հարկանել** բաղադրիչով՝ **բուռն հարկանել** – *բռնել*. «Եւ բուռն եհար ի ձեռանէ մեռելոյն» (էջ 17, էջ 39՝ 2 անգամ): ՆՀԲ-ում այն վկայված է (Ա, էջ 512), այլև՝ ԳԴԲ-ում՝ էջ 56):

8) **Ճիչ բառնալ**՝ *«ճչալ»* իմաստով (էջ 40). «…եւ զամենայն ժողովեալքն զճիչ բարձեալ լային» (էջ 40): ԳԴԲ-ն այն վկայում է:

9) **Յասումն հեղուլ**՝ *«զայրանալ»* իմաստով (էջ 40), որին հոմանիշ է **յուզել ի բարկութիւն** (էջ 36)՝ *«զայրացնել»* իմաստով: Նրանց հականիշ են.

10) **Շիջուցանել զբարկութիւն** և **ցածուցանել զբարկություն**-ը՝ «*զայրույթը մեղմացնել»* իմաստով (էջ 36):

11) **Ժառանգորդ գտանել**-ը՝ *«ժառանգել»* իմաստով (էջ 35):

12) **Մաշել սրտիք**-ը՝ *« ընկճված»* իմաստով (էջ 29). «…որ տայ երկայնամտութիւն տարակուսելոց եւ կեանս այնոցիկ, որ մաշեալ էին սրտիք» (էջ 29):

13) Ունենք նաև **կրել համբերութիւն** միավորը՝ *«դիմանալ, համբերել»* իմաստով (էջ 41): ԳԴԲ-ն այս միավորը չի տալիս, բայց ԳԲԱ-ում (էջ 679) **կրել** բայի համար առանձնացվում են նշված իմաստները:

Առանձնանում են նաև **նախդրիվ միավորները,** որոնք հիմնականում **զ** և **ի** նախդիրներով են բաղադրված.

1. **յընթրիս** բաղադրիչով – ա) **մտանել յընթրիս**՝ *«ընթրել»* իմաստով (էջ 35), որի հականիշն է **բաւ լինել ընթրեացն** ոչ նախդրիվ բաղադրիչով միավորը՝ *«ընթրիքն ավարտել»* իմաստով (էջ 36):

ԳԴԲ-ն տալիս է **յընթրիս լինել, յընթրիս ուտել** միավորները՝ *«ընթրել»* իմաստով (ԳԴԲ, էջ 213):

2. **Գալ բաղադրիչ + ի նախդիր + հայցական հոլովով** գոյական կառույցով ԳԴԲ-ն վկայում է **գալ ի ծնունդ** – *ծնվել*, **գալ ի զգաստութիւն** – *խելքի գալ*, **գալ ի լոյս** – *երևան գալ* ևն (ԳԴԲ, էջ 57) ԴՄ-ները: **Գալ ի լաւութիւն** *«լավանալ»* իմաստով (էջ 37) ԴՄ-ն այնտեղ վկայված չէ. «Եւ ապա հացիւ սակաւ ինչ ճաշակեալ եւ յետ աւուրց ինչ **գայր ի լաւութիւն** փոքր մի» (էջ 37):

3. **Զմտաւ ածել**՝ *«մտածել»* իմաստով (էջ 34): Այն ԳԴԲ-ում վկայված է:

4. **Զբժշկութիւն առնել**՝ *«բուժել»* (էջ 43):

5. **Զբժշկութիւն հայցել**՝ *«բժշկություն խնդրել»* իմաստով (էջ 43): ԳԴԲ-ում վերջին միավորները չեն հիշատակվում:

6. **Որսալ զկորուստ**՝ *«կորստի մատնել»* (էջ 33) իմաստով: ԳԲԲ-ում **որսալ** բայի համար իբրև փոխաբերական իմաստ նշվում են *«խորամանկութեամբ մէկին իր կողմը գրաւել», «մոլորեցնել», «պարտել»* իմաստները (ԳԲԲ,էջ 350): ԳԴԲ-ում այս միավորը չի վկայվում: ՆՀԲ-ում **որսալ** բայի համար բերված մատենագրական օրինակներում կա հետևյալ նախադասությունը՝ «Զամենեսեան որսալ **յանգիւտ**

**կորուստն**» (էջ 538) նախադասությունը Եղիշեից: Բնագրային մեր օրինակը՝ «**...որպայ զկորուստ,** որպէս զինքն» (էջ 37):

7. **Յերկիր կործանել** – *գետնին թավալել*. ԳԴԲ-ն այն չի վկայում:

ՆՀԲ-ն մատենագրական օրինակներում բերում է **յերկիր կործանեսջիր** (Ա, էջ 1120) նախադասությունը: Բնագրային մեր օրինակը՝ «...Իբրև լուաւ բարեպաշտ տիկինն **յերկիր կործանեցաւ** (=գետին տապալվեց), լար դառնապես եւ աւաղէր զայրն ուրացեալ» (էջ 27):

8. **Փոխել(իմ) յաշխարէ**՝ *«մեռնել»* իմաստով (էջ 44), որի հոմանիշն է **աւանդել զհոգի**. «Եւ զայս ասացեալ սրբոյն **աւանդեաց զհոգին** ի ձեռս Աստուծոյ ամենակալի (էջ 47):

9. **Փարին զինեւ** (էջ 16) – *ինչնով համակվել, պոզորվել իմ գաղափարներով*: ԳԴԲ-ն այն չի վկայում:

10. **Զբանն կենաց** – *քարոզել, ուսուցանել* (էջ 9, 13):

Վարքագրություններում գործածված են նաև հռետորական նախադասություններ, որոնցում համադրված են իմաստի սաստկացում ձևավորող միավորները, որոնք ինքնատիպ ԴՄ-ներ են.

«...Այսպես **ո՞ր լսելիք բերեն զլուր** կորստեան, որ ոչ յոյս մխիթարութեան, ո՞ր **տեսանելիս տարցեն զտեսութիւն** առն ամբարշտի եւ ուրացող զԱստուած. . . » (էջ 31) կամ «Ո՞վ տայր գլխոյ իմոյ ջուր եւ աչաց իմոց **աղբիւրս արտասուաց**, եւ յանապատի աւթեւանս, որ լայի յաղագս անհնարին առն իմոյ (էջ 31): Բայց ելքը, որով մխիթարություն ու փրկություն պիտի գտնի Շուշանիկը, նրա համար ձևակերպված է դեռևս իր հայրերի կյանքով և դավանանքով՝ «**զակն կալայց** Աստուծոյ ամենակալի»:

Դարձվածքներին զուգահեռ փոխաբերական գործառույթով կապակցություններով և բառերով հագեցած են սրբախոսական երկերը, որովհետև նրանք ունեն քարոզչական միտում մի կողմից, և նրանց հեղինակները քրիստոնեական վարդապետությունը ոչ միայն իբրև **գաղափարախոսություն** էին արժևորում, այլև «յանձին ունեին զայն» իբրև *հավատամք, բան կենաց*: Բազմաթիվ օրինակներից բերենք մեկը.

«Բազմաղիմի են ճանապարհք աստուածային լուսեղէն վտակացն, եւ ոռոգի դիտարագունդ բաժակաւքն վասն զի մաքրական ընթացիւքն վառին ի հանդիպումն անշէջ լապտերին, եւ հասանեն սիրական խորհրդին» (էջ 5):

Ընդգծված կապակցությունները քերականագիտության մեջ ոչ միանշանակ գնահատական են ստացել, օրինակ՝ Պ. Բեդիրյանի մոտեցմամբ դրանք կայուն կապակցություններ են: Ըստ հեղինակի՝ ցանկացած կապակցության մեջ մեկ բաղադրիչի փոխաբերական իմաստով գործառույթը դեռևս այն չի դարձնում ԴՄ: Այս հարցում չլինելով համակարծիք հեղինակի հետ՝ համամիտ ենք նրա մեկ այլ դիտարկմանն այն մասին, որ կան բառային առանձին միավորներ, որ ունեն կապակցության, գերազանցապես նախադասության արժեք: Արդի հայերենում այդպիսի դարձվածքներից են **ներողություն, կներեք, թքած, խակ, մեռած, զորանալ** են[73]:

Աստվածաբանական գրականության մեջ դրանք բառեր են կամ կապակցություններ, օրինակ՝ **փա՜ռք յաւիտեանս, ամէն, յանուն Հոր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ, խաղաղութիւն ընդ ձեզ** են:

Շուշանիկին նվիրված սրբախոսական երկում գործածված ԴՄ-ները առանձնանում են բաղադրիչների իմաստային համադրման հետաքրքիր զուգորդումներով, օրինակ՝ բնագրում գործածված է **լուսովն առլցայց** (լուսով առլնուլ) կապակցությունը: **Առնուլ**-ի բացատրության մեջ նշվում են *համակվել* և *ամբողջությամբ լցվել* իմաստները (ԳԲԱ, էջ 181):

Միևնույն իմաստի արտահայտության համար դարձվածքի և հոմանիշ բայի համատեղ գործառույթով որոշակի ոճական տիրույթ է ստեղծվում, որտեղ ընդգծվում է միտքը. «…ապա **եղեալ յարտասուս լային**» (էջ 18), «…եւ չար հիւանդութեամբ վատանեալ **կայր ի տարակուսի**» (էջ 17):

Բնագրում կան նաև դարձվածային արտահայտություններ.

«…մինչև **իցէ շունչս ի մարմնի իմում**» (էջ 42) – *քանի դեռ ապրում եմ, կենդանի եմ*, որը գործածվում է նաև արդի գրական հայերե-

---

[73] Տե՛ս **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 7:

նում, «…**եւ անքառամ փառաց պսակաւն պսակեցան** ընդ ամենայն սուրբսն ի Քրիստոս Յիսուս» (էջ 48) – *կրել Քրիստոսի անթառամ փառքի պսակը*, «…զի սերմն ժանտի են ժանտածին» (էջ 42), «…արդարեւ ի բարի արմատոյ բարի շառաւեղ ցուցեալ» (էջ 41), «Եւ ոչ ոք իշխէր բուռն հարկանել և թափել ի գայլոյն զորոջն Քրիստոսի» (էջ 39), «…ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց (էջ 12):

Վարքագրություններում և վկայաբանություններում ԴՄ-ներն ունեն դավանաբանական բովանդակություն, նրանք արտահայտում են քրիստոնեական վարդապետության հիմնագաղափարները և օգնում են նրա քարոզչությունը հասանելի դարձնել հաւատացելոց ճշմարիտ Աստծոյ՝ Քրիստոսի: Նրանցում գործածված ընդհանրական (ոչ դավանաբանական) դարձվածքներն ու դարձվածային արտահայտությունները խոսքակառուցման անհրաժեշտ բաղադրիչ են, ուստի կիրառելի ցանկացած բնագրում: Նրանք կան նաև «Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ» և «Յովհաննու Հայոց կաթողիկոսի ի յայտնութիւն Քրիստոսի» արժեքավոր բնագրերում[74]: Անդրադառնանք միայն այն ԴՄ-ներին, որոնք մյուս բնագրերում չեն գործածվել. «Յիզտիբուզիտ, որ «թարգմանի Աստուածատուր, այսինքն՝ յԱստուծոյ փրկեալ» (էջ 462):

1. **Ոչխար ի զենումն** (էջ 464) – *զոհաբերվող, մորթվող ոչխար*. «Արի, Տէ՛ր, աւգնեա՛ մեզ եւ փրկեա՛ զմեզ վասն անուանդ քո համարեցաք **որպէս զոչխար ի զենումն**» (էջ 464). ունի *«մարտիրոսվող հավատարացյալ»* իմաստը:

2. **Տալ ի բանտ** – *բանտարկել* (էջ 462):

3. **Պարապել յունկնդրութիւն** (էջ 462) – *ուսանել, սովորել*, բնագրում՝ *հետևել*. «…պարապելով յունկնդրութիւն զրոց սրբոց» (էջ 462):

Այսպիսով, քրիստոնեական ուսմունքը, որ է «բանն կենաց», պիտի ամրապնդվեր, հիմնավորվեր և հասանելի դառնար այն կրողների համար. մասնավորապես կարևորվում էր նրա քարոզչությունը «ի Հայս, որ է ժողովուրդ առաջին», որ հզորացել է «ի պնդութենէ հաւա-

---

[74] Բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Գ հատորում: Էջերը ներկայացվում են ըստ այդմ:

տոյ առ Քրիստոս» և այսօր էլ հզոր է մնում «բանիւ կենաց», ուստի հասկանալի է դարձվածքների՝ իբրև գեղարվեստական խոսքի կառուցման կարևոր միավորների հաճախադեպ գործառույթը սրբախոսական երկերում:

Ամփոփելով նշենք, որ մեր կողմից ուսումնասիրված սրբախոսական երկերում և վկայաբանություններում գործածված 127 դարձվածքներից 41-ը վկայված չեն բառարաններում և ներկայացվում են առաջին անգամ: Դարձվածային միավորներում.

1. տիրապետող են բայական կառույցները,
2. նախդրիվ անվանական միավորները **զ** և **ի** նախդիրներով են հանդես գալիս,
3. դարձվածային արտահայտությունները հիմնականում աստվածաշնչյան են:

Նրանց իմաստագործառական և ոճական գնահատականը կարևոր է գրաբարի դարձվածաբանության ամբողջական ուսումնասիրության համար[75]:

[75] Տե՛ս **Աբաջյան Ա., Յուզբաշյան Ա.**, Դարձվածքները և կայուն կապակցությունները «Վկայություն սրբոյն Շուշանկանն» երկում, «Հայագիտության հարցեր», 2019, 2 (17), էջ 183-193: **Աբաջյան Ա., Յուզբաշյան Ա.**, Դարձվածային միավորները և կայուն կապակցությունները Անանունի «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն, քարոզչութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարմանն որ ի Քրիստոս, գիտ նշխարաց Թադէոսի առաքելոյն» աշխատություններում, «Լեզու և լեզվաբանություն», 2020 (տպագրության ընթացքում է):

## 6.2. Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները դավանաբանական թղթերում

Դավանաբանական թղթերը պաշտոնական ուղերձ-նամակներ են, որոնք ունեն որոշակի կառուցվածքային ձևաչափ և բովանդակությամբ պայմանավորված լեզվաոճական առանձնահատկություններ: Նրանք ուղղված են այնպիսի վտանգավոր աղանդների հերքմանը, ինչպիսիք են նեստորականությունը և քաղկեդոնականությունը: Նրանցում հստակ ապացուցվում, մերժվում է նրանց գաղափարական հենքային միասնությունը, որի հիմքում ընկած են Քրիստոսի աստվածային ծնունդի ժխտումը և դրանով պայմանավորված՝ մնացած բոլոր մոլոր գաղափարները: Յանկացած աղանդի հիմքում ընկած է գաղափարական հետամուտ աշխատանք՝ ուղղված ներազդելու հավատացյալների մտքին և հոգուն՝ նրանց հեռացնելով քրիստոնեական վարդապետության ճշգրիտ գաղափարախոսությունից, ավելին՝ նրանք հետամտորեն մտնում էին նաև «ի տունս Աստծո», ուստի մեծ վտանգ հանդիսանում հայ, վրաց և աղվան եկեղեցիների համար: Թղթերը ունեն ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեք, քանի որ աղանդավոր յուրաքանչյուր դրսևորում ազգավտանգ լուրջ իրողություն է, որը պիտի արմատախիլ անել խիստ հետևողական աշխատանքի միջոցով:

Աղանդավորների վտանգավորությունը գերակա խնդիր է եղել հայ, վրաց և աղվան եկեղեցիների համար, նրանց գաղափարական միասնությունը կարևորվում է թղթերում, քանի որ նեստորականության չարամիտ գաղափարները ուղղված էին մոլորեցնելու հայ, աղվան և վրաց «ճշմարիտ հաւատացելոց»: Թղթերը շարադրված են հակաճառության մեթոդով և ունեն երկու ուղղվածություն.

1. քրիստոնեական վարդապետության ճշգրիտ մեկնաբանում խիստ հասկանալի լեզվով. նրա հիմնախնդիրների տրամաբանական ճշգրտությունը հասանելի պիտի լինի «ամենայն հաւատացելոց» Քրիստոսի,

2. ցույց տալ նեստորականության և քաղկեդոնականության ուղղակի կապը. «Քանզի առաջնորդք ժողովոյն աղանդակիցք Նեստորի

էին»[76],– գրված է Մովսես կաթողիկոսի «Շրջաբերականում» (էջ 478):

Հայոց կաթողիկոսները իրենց թղթերում առավելագույնս ճիշտ էին գնահատում քրիստոնեական վարդապետության ճշգրիտ մեկնաբանությունը և «մոլար ու չարութոյն քարոզ հերձուածողաց»:

Սրբախոսական վարքագրություններում, վկայաբանություններում կա գերակա խնդիր՝ «ազդել ի զգացմանց հավատացելոց», քանի որ նրանցում տիրապետող է Քրիստոսի վարդապետության քարոզչությունը, իսկ թղթերում ակնառու է ասելիքի **տրամաբանական-դատողական շեշտվածություն,** որպեսզի ամրապնդվի քրիստոնեական վարդապետության ճշգրիտ մեկնաբանումը: Նեստորականության գաղափարախոսության հիմքում ընկած է այն միտքը, որ Հայր Աստվածը ունեցել է երկու որդիներ՝ «**Աստուած Բանն հաւասար Հաւր**», իսկ մյուսը՝ Հիսուսը՝ «**Մարդ մահկանացու՝ նման մեզ**»: Ի դեմս հերձվածողների՝ կաթողիկոսները տեսնում են «**չարիմաց խորհեցաւղ**»-ների, որոնք «**ստի որոմն**» են տարածում «ի մէջ Հայոց, Վրաց և Աղուանից», այնինչ արմատախիլ պիտի արվեն նրանց մտքերը, ինչին և ուղղված են «**Թուղթք կաթողիկոսաց**»:

**Բաբկեն կաթողիկոս Ոթմսեցու** (աթոռակալել է 490-516 թթ.) անունով վկայված են «**Թուղթ երկուք»,** որոնցից մեկը ժողովրդական է, մյուսը՝ հեղինակային: Նրանք գրված են ի պատասխան ասորիների դիմումին, որում ընդգծված էր նրանց մտավախությունն այն մասին, որ նեստորականները նսեմացնում են «զհաւատս ուղղափառս յաշխարհի ձերում» և հեղինակազրկում Ասորի եկեղեցին:

Քանի որ թղթերում միտքը կառուցվում է այն տրամաբանորեն համոզիչ դարձնելու միտումով, նրանցում ԴՄ-ները և դարձվածային արտահայտությունները հաճախադեպ չեն, սակայն նրանցից յուրաքանչյուրի գործառույթը **ի հարկի** է և **հիմնավորված**:

Նեստորի գաղափարախոսությունը բնորոշվում է իբրև «**դառն հայհոյութիւն**» (էջ 119), որ նպատակ ունի «**պատրել ի մոլորութիւն**

[76] Թղթերի բնագրերը տե՛ս «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Գ հատոր և «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

զմիտս անմեղաց... **վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրս**, որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն մարգարէին» (էջ 120), «Աստուած աշխարհիս այսորիկ ըստ աւացելումն. **կուրացոյց զմիտս** նոցա, զի մի ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն փրկչին արարածոց, զոր յամենայն ժամ ընթերցեալ» (էջ 123):

Հոմանիշ դարձվածքներ են **պատրել ի մոլորութիւն**, **վրիպեցուցանել ի ճանապարհէ, կուրացուցանել զմիտս**. **կոյր** բաղադրիչն ունի *«անփեղյակ» իմաստը:*

Նեստորականությունը բնորոշվում է «**նախանձ խանտանաց**» ԴՄ-ով. «Որպէս սովորեաց **նախանձ խանտանանց** ի սկզբանէ, որով տարագիր եղեւ ազգ մարդկան յաստուածայնիցն բարեացն» (էջ 122): **Խանտանք** (խանդանք) նշանակում է *«նախանձ», նաև «չարիք»*, որը վկայում է ՆՀԲ-ն: **Նախանձ** բառը հանդիպում է նաև **բարի** բաղադրիչի հետ. «...որք զբարի նախանձ նախանձեցայք զերանելի եւ զցանկալի անձանց ընտրեցէք ուղղափառ հաւատով» (էջ 119):

**Բարի նախանձ** ԴՄ-ն ԳԴԲ-ն չի վկայում, բայց տալիս է «**նախանձ բարւոյ ի մեջ առնուլ**» – *բարի նախանձով լցվել* (ԳԴԲ, էջ 218) միավորը:

**Նախանձ** բաղադրիչով կազմված են հարադրություններ, ինչպես՝ ***նախանձ ունել,*** որ նշանակում է *«նախանձել»*, օրինակ՝ «Լուաք եւ վասն սրբութեանդ ձերոյ ունել նախանձ վասն ուղղափառ հաւատոյ»: Բնագրում գործածված է **նախանձաւոր լինել** (էջ 508), որի հոմանիշն է **նախանձախնդիր լինել** ԴՄ-ն՝ *«հետևողական լինել, հետևել»* իմաստով. «Արդ պարտ է պատուականութեանդ ձերում **նախանձաւոր լինել** ճշմարիտ հաւատոյ հարցն» (էջ 508), այլև՝ «...այլ նախանձախնդիր լինել գործոց Աստուծոյ եւ հոգւոց փրկութեան» (էջ 418):

Սուրբ հայրերին հեղինակն անվանում է «**առաքինի մշակք**», «որոց ստուգիւ զհետ գնացեալ արդարութեան հալածեցին զստութիւն» (էջ 123):

**Մշակ** բառն ունի *«աշխատավոր»* իմաստը, դավանաբանական նյութերում այն **բարի մշակ**, **մշակ հաւատարիմ** կապակցություններում ձեռք է բերում *«Աստծո ծառա, սպասավոր»* իմաստը:

«Ընդ որոց եղիցի լսել եւ զբարբառն հրաւիրական. թէ **Բարի մշակ** եւ **հաւատարիմ,** հանդերձ ընդ քեզ սատարիչ բարեկամաւքդ եւ փրկեալ գնդաւդ եկ մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո» (էջ 474):

**Մշակ** բառով կան նաև հականիշ ԴՄ-ներ, որ բնորոշում են հերձվածողներին.

«Վասնզի այնպիսիքն գողք են եւ աւազակք և **գայլք յափշտակողք** եւ դարձեալ սուտ առաքեալք և **մշակք նենգաւորք** և կերպարանին զգեստիւք ոչխարաց» (էջ 529):

**Դուռն ողորմութեան Աստուծոյ** բաց է նրանց առաջ, ովքեր «ընդ բազում աշխատութեամբ **զանձինս արկեալ** առ ի գտանել զճշմարիտ եւ զուղղափառ հաւատ Սրբոյ Երրորդութեան» (էջ 118): **Բան կենաց,** որ է «խօսք Աստուծոյ», պիտի իմանալ և ուսուցանել խորապէս, քանզի «**տարագիր եղեւ** ազգ մարդկան յաստուածայնիցն բարեացն» (էջ 122) կոյր՝ անտեղյակ լինելու պատճառով, ԳԴԲ-ն վկայում է **տարագիր լինել**՝ *«վտարվել* իմաստով», և չի վկայում **զանձինս արկանել** կապակցությունը:

Թղթերում հերձվածողների ուսմունքը բնորոշվում է իբրև «**խմոր չարութեան». խմոր** բառի համար ԳԲԱ-ում նշվում են *«հանգամանք», «իրողություն»* փոխաբերական իմաստները. «Իսկ ի ժամանակին յայնմիտ երեւեցաւ **խմոր չարութեանն**, որ էր ծածկեալ յանձին անսուրբս…» (էջ 128):

ՆՀԲ-ն վկայում է. «Լայնաբար ասի և նմանութեամբ զաճեցումն իրաց և զխառնակ վարդապետութենէ» (Ա, 549). նկատի ունի քրիստոնեական վարդապետության խառնակ մեկնությունը:

Հաճախ թղթերում կան կրկնվող հատվածներ՝ որոշ փոփոխություններով կամ բառացի, ինչը տեսնում ենք Բաբկեն կաթողիկոսի և **Հովհաննես Գաբեղենացու** (Գաբեղենեան) թղթերում: Գաբեղենացին (կաթողիկոս է եղել 557-574 թթ.) շարունակում է Բագրևանդացի հայրապետի հականեստորական պայքարը, քանի որ «հերձուածողք էին նաև ի Սիւնիս»:

Կրկնվող հատվածներում բնականաբար հանդիպում են նույն ԴՄ-ները. «…Երեւեցաւ **խմոր չարութեան** եւ յաշխարհիս մերում» (էջ 465):

ԴՄ-ների իմաստի ձևավորումը ուղղակիորեն կապ ունի խոսքային բովանդակության հետ: Համեմատենք **խրամատել զսահմանս** և **խզել զընթացս** կապակցությունները. նրանք իրենց գործառական տիրույթում ունեն *«քանդել», «ոչնչացնել»* իմաստները: **Խրամատել** բայի համար ՆՀԲ-ում նշվում են *«քանդել», «վերացնել»* փոխաբերական իմաստները, **խզել** բայի համար՝ *«կտրել», «ի չիք դարձնել»* իմաստները: **Խզել զընթացս** կապակցությունը բնագրային օրինակում ունի *«ոչնչացնել», «դեմն առնել»* իմաստները.

«…զոր սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկիա յանդիմանեալ **խզեցին զընթացս** չար խորհրդոց նոցա» (էջ 122),

«…զի ըստ կամաց եւ խնդրոյ ստուգութեան քրիստոնեութեան հաւատ յանձինս հաստատեցի ըստ կանոնի և գիտութեան աշխարհին Հոռոմց եւ Հայոց, Վրաց եւ Աղուանից, եւ մի՛ վայրապատ **խրամատեցի սահմանս** առ ի Քրիստոս հաւատացելոց» (էջ 118):

Նրանք վկայված չեն ԳԴԲ-ում:

**Փոյթ ունել յանձին** ԴՄ-ն գրաբարում հաճախադեպ է և վկայված է ԳԴԲ-ում *«հոգ տանել»* իմաստով: Բնագրում ունենք հետևյալ օրինակը. «…Հանապազ **փոյթ ունիմք յանձինս** ըստ կարի մերում խնդրել յԱստուծոյ զառողջութիւն և զխաղաղութիւն» (էջ 118): Այն հոմանիշ է **փոյթ ունել, փոյթ առնել, փոյթ դնել** ԴՄ-ներին:

Ոթմսեցին երկրորդ՝ ոչ ժողովրդական թղթում ևս արտացոլում է հայոց եկեղեցու կտրուկ մերժողական դիրքորոշումը Նեստորի մոլորյալ գաղափարների հանդեպ, որոնք բնորոշում է առաքյալների խոսքերից մեջբերումներով, որոնք մենք արժևորում ենք իբրև ԴՄ-ներ. նրանք բնագրում շեղագիր են: Նրանք փոքր-ինչ փոփոխված տարբերակներով հանդիպում են նաև այլ թղթերում.

«**Ծառս պտղակորոյսս խլեալ արմատաքի, աստեղս մոլորս**, որոց վիհ խաւարին յաւիտենից պատրաստեալ մնայ» (էջ 123):

Ներսես Բագրևանդացին գործածում է հետևյալ տարբերակով՝ ա) **ծառս գաւսս** պտղակորոյսս, բ) **ամպս անջրդիս**, որ վարեալ ի մրրկէ ի կորուստ և գ) **նիւթս** են **կիզման յաւիտենականի** (էջ 416):

Ինչպես տեսնում ենք, արդեն ունենք ստորոգումով նույնիմաստ կառույցներ, որ դարձվածային արտահայտություններ են: Նրանք

նույնակերպ գործառույթ ունեն նաև Հովհաննես Գաբեղենացու թղթերում՝ «**ամպս անջրդիս**՝ վարարեալս ի մրրկէ ի կորուստ» (էջ 418), «**ծառս գաւսս պտղակորոյսս**, նիւթս կիզման յաւիտենականի» (էջ 418):

**Կոմիտաս կաթողիկոսի** (VII դ.) թղթերում նրանք ավելի խիտ գույներ են ստանում, որով երևում է նրա արգահատանքը նեստորականության նկատմամբ՝ ա) **ամպս անջրդիս**, բ) **ծառս պտղակորոյսս կրկնամեռս**, գ) **նիւթս կիզման հրոյն յաւիտենականի**, որք վառեն զհուր գեհենին, սնուցանեն զորդն անմահ» (Գիրք թղթոց, էջ 328)[77]:

Նեստորականությունը իր ճյուղերը տարածել էր ամենուր ու կլլում էր նրանց, ովքեր «կոյրք էին մտաւք»: Այս է պատճառը, որ Ներսես Բագրևանդացին, որ կաթողիկոսել է 548-557 թթ., դիվանագիտական խորիմաց ընկալումով հովանավորում է Հայոց եկեղեցուն դիմած ասորիներին: Նա 554 թ. Դվինում գումարում է երկրորդ ժողովը, որին մասնակցում են նաև ասորիները: Ժողովում սահմանվում են 37 բարենորոգչական կանոններ: Ասորիներին ուղղված թղթում կաթողիկոսը ուղղակի կոչ է անում «ամենեւին **չընդունել ի տունս**» (էջ 416) մանկությունից անիծված մարդկանց:

**«Եկեղեցին է տուն Աստծոյ». տունը** դավանաբանական կապակցություններում ունի *«եկեղեցի»* իմաստը, նրանով կազմված կապակցությունները ևս մեր դիտարկմամբ ԴՄ-եր են ի շարս **դուռն ողորմութեան, դեղ կենաց, բան կենաց** նն միավորների: Այն գործածված է նաև Կոմիտաս կաթողիկոսի թղթում. «Քանզի են ոմանք ըստ աւետարանի պատմութեան, ունելով զզգեստս գառանց, եւ զլեզուս իւրեանց սրեալ ի հայհոյութիւն Սուրբ Երրորդութեանն, յորմէ հրաժարեցոյց զմեզ Որդին Որոտման՝ **ոչ ընդունելի ի տուն** եւ ոչ ողջունել բանիւ եւ զնոցին վարդապետութիւնս անու անելի **ամպս անջրդիս…**»[78]:

Հակաճառության մեթոդով շարադրանքում ձևավորվում են նաև հակադիր իմաստ արտահայտող ԴՄ-եր: Այսպես՝ Քրիստոսի վար-

---

[77] Գիրք թղթոց, էջ 328:

[78] Նույն տեղում:

դապետությունը արտահայտվում է «**Բան կենաց**» հայտնի դարձվածքով, իսկ Նեստորի գաղափարախոսությունը մշտապես ուղեկցվում է **չարաթոյն, մահաբեր, չարահնար** մակդիրներով և ունենում ենք **բանք չարաթոյն** և **մահաբեր** կապակցությունը, որից պիտի զգուշանալ, հետևաբար «**ի բաց մերժեցէք**» ԴՄ-ն թղթերում հաճախ է գործածվում՝ *զգուշանելով հեռու մնալ «ի խօսից հերձուածողաց»*: Իսկ դրա համար պիտի «**ի գլուխ տանել**»՝ *ավարտել, սրբերի և մարգարեների աշխատանքը՝ ի լուր քրիստոնյա աշխարհին*, որ «կենաց ճանապարհը»՝ Քրիստոսին՝ Աստծու որդուն ապավինելը, միակն է. «…Նոյնպէս ի սրբոց եկեղեցւոյ եւ ի ձեր հաղորդութենէ նզովիք **ի բաց մերժեցէք**, եւ ամենայն ուղղափառաց **պատուիրեցէք** մի՛ լինել հաղորդ անպտղութեան գործոց նոցա և մի՛ լսել հրապուրող և **չարաթոյն բանից** նոցա **մահաբերաց**» (էջ 446):

**Ի բաց մերժել** ԴՄ-ն վկայված է ԳԴԲ-ում *«հեռանալ», «փախչել»* իմաստներով: Բնագրում **ունել** բայով արտահայտված **յանձին ունել** ԴՄ-ն ևս վկայված է ԳԴԲ-ում: Այն ունի *«հանձն առնել»* իմաստը, ինչը պահպանել է նաև արևելահայերենում: Օրինակ՝ «…Առաւել քան զամենայն զայդ հող **յանձին կալաք** հեռացուցանել եւ **ի ձէնջ զչարի որոմանն սերմանս**» (էջ 446): Հեղինակը նեստորականությունը և քաղկեդոնականությունն անվանում է «**զչար որոմն** անիծելոյն Նեստորի և ժողովոյն Քաղկեդոնի» (էջ 448):

Հետևաբար պիտի ճանաչել նրանց անարդյունք գործի՝ «անպտղութեան գործոց» սերմերը, որ են «սերմանք չարի որոման»:

**Մովսես Ցուրտավեցու** անունով վկայված են «Թուղթք վեց» (Ցուրտավեցին կաթողիկոսական տեղապահ է եղել 605-608 թթ.): Նրան ձեռնադրել է Կյուրոն կաթողիկոսը, որի հետ ունեցած գաղափարական տարաձայնությունների պատճառով նա վտարվել է և ապաստանել Արագածոտնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ վանքի երեց Բարբյուլասի մոտ: Նա բազմաթիվ թղթեր է ուղղել Վրթանես Աբրահամ կաթողիկոսին, հայախոս իշխաններին, բայց չի կարողացել շտկել իր հարաբերությունները Կյուրոնի հետ: **Հայ-վրացական** դավանաբանական վեճը, որին մասնակցում էր նաև Ցուրտավեցին, և «բաժանումն ի Հայոց անշուշտ նշանակալի փորձութիւն էր եկեղեցու

համար»[79]: Այդ առիթով են գրված 24 նամակներն ու պատասխանները, շրջաբերականները, որ պահպանվել են միայն հայերենով և ունեն պատմական արժեք: Ցուրտավեցին սուրբ Վրթանես Քերթողին գրված իր նամակում աստվածաշնչյան նյութի հենքի վրա դարձվածային արտահայտություններով բնորոշում է Վրաց եկեղեցու վերաբերյալ իր վերաբերմունքը:

«Քանզի յետ յայսչափ անցելոց ժամանակաց ապա եւս հասի ի վերայ, թէ որպէս Վիրք **զկանաչազգեղ տերեւն** միայն ունէին, **ուստս առանց պտղոյ** ունելով յինքեանս, ըստ աւրինակի սաղարթալից թզենոյն, յորում պտուղ ոչ եգիտ Տէրն, այլ տերեւ միայն» (էջ 478): Բայց Քաղկեդոնի ժողովից հետո այդ տերևն էլ չկար. «Նա եւ ոչ տերեւն կանաչ գոյր ի նոսա» (էջ 471): Այս օրինակում ունենք **ուստս առանց պտղոյ**, **կանաչազգեղ տերև**, որ համեմատվում է աստվածաշնչյան թզենու հետ, որի պտուղները չճանաչեց:

Դարձվածքները նրա թղթերում ևս հաճախադեպ չեն: Դրանք են.

**1. փքայոյզ լինել** – *մեծամտանալ* (էջ 471):

Այն ԳԴԲ-ում վկայված չէ: ԳԲԲ-ում **փքար** բայի համար *«մեծամտանալ», «ամբարտավան դառնալ»* իմաստները նշվում են իբրև փոխաբերական իմաստներ. «Եւ թէ որպէս վասն խստութեան ձմերայնոյն և **փքայոյզ լինելոյ** արգելեալ եղէ ի սրբոյ Մկրտչի Յովհաննու ի վանս, որ յԱրագածս ոտին եւ ընկալեալ ես ի ձեռն երանելւոյն տեառն Բաբիլասայ» (էջ 471):

2. **Աշխատ լինել** – *չարչարվել*: Այն ԳԴԲ-ում վկայված է: ԳԲԱ-ն **աշխատ** բառի համար նշում է *«նեղություն», «չարչարանք»* իմաստները, որոնք նա դրսևորում է **առնել, լինել, անել** բաղադրիչների և չունի ինքնուրույն գործածություն: Բնագրում ունենք «Ապա թէ ոչ ձեզ պիտի երթալ հետ, թող զի **լինիք աշխատ…**» (էջ 472) օրինակը:

3. **Կենաց դիպչել** – *կյանքի կոչվել*: ԳԴԲ-ում այն չի վկայվում, բնագրում ունենք «Զի ձեր ի ձեռն առնելով զիս, ահա կրկին **կենաց**

---

[79] Մանրամասն տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Գ, էջ 469:

**դիպեցայ**, հոգալով զիս եւ աշխարհն որպէս արժան իսկ է» (էջ 472) օրինակը:

4. Նախդիրիվ հետևյալ միավորները՝ **ի գլուխ տանել** (էջ 472)՝ *«ավարտել»* իմաստով **և ի ձեռն առնուլ** (էջ 472)՝ *«օգնել», «ձեռք մեկնել»* իմաստով, նրանք վկայված են նաև ԳԴԲ-ում:

5. **Դարձուցանել յուղղութիւն** կամ **յուղղութիւն դարձուցանել** – *ճիշտ ուղու վրա դնել*: ԳԴԲ-ն վկայում է **յուղղութիւն ածել** միավորը՝ *շտկել* իմաստով: Նրանք հոմանիշ ԴՄ-ներ են: **Ճիշտ ուղու վրա դնել** կառույցը այսօր էլ ԴՄ է:

6. **Դարձուցանել** բաղադրիչով ունենք **դարձուցանել ի պարտութիւն** նախդրիվ կառույցը՝ *«պարտության մատնել»* իմաստով, բնագրային օրինակը. «…Ջանացարուք **դարձուցանել** զժողովուրդն ժխտող և զապստամբեալն **յուղղութիւն,** եւ ածել ի նոյն գաւիթ միոյ հովուի» (էջ 474):

7. Գործածված է բազմաբաղադրիչ հետևյալ դարձվածքը **ի բաց ընկենուլ ի ճանապարհէն զքարինս** (էջ 474), որ նշանակում է *«վերացնել խոչընդոտները»*: Այն իր մեջ ունի ևս մի ԴՄ՝ **ի բաց ընկենուլ** ԴՄ-ն՝ *«նետել»* իմաստով: Բնագրային օրինակներ՝

«…Դուք, որ կարողդ էք եւ **զքարինսն ի ճանապարհէն ի բաց ընկեցէք**, զի մի՛ իւիք սայթաքիցեն ժողովուրդք իմ» (էջ 472),

«…եւ ըստ մարգարէին հրամանի՝ **զքարինս ի ճանապարհէ ի բաց ընկենուլ**, զի մի՛, որ կաղն իցէ, գլորիցի» (էջ 519):

Բնագրերում գործածված են նաև հետաքրքիր դարձվածային արտահայտություններ:

- Հետաքրքիր օրինակ է գործածված Վրթանես Քերթողի թղթերում: Քերթողը մերժում է Բյուզանդիայում տարածված «տէրունական պատկերագրութեան թոյլատրելիութիւնը»: Նրա շարադրանքը այդ մասին է. «…**Եւ առանց մտաց աչաց մարմնոյ, աչք կուրացեալ գտանին**»,– գրում է հեղինակը (էջ 495): ԴՄ-ները սակավադեպ են նաև նրա թղթերում:

- Ամենագետ ուսուցիչներին, որոնք են եպիսկոպոսները և երեցները, տրվում են որոշակի հրամաններ. ա) «**…ծախելով զմարմին՝ ի հոգին յաւելուլ**» (էջ 477) (քրիստոնեական վարդապետության

ամրապնդման համար հոգեկան ամրություն է պետք, ինչը ֆիզիկական ջանքեր է պահանջում), բ) «**զգայլսն հալածելով ի գահավիժութենէ զփարախն պահել...**» (էջ 477) (հերձվածողներին հալածելով՝ փարախը (նկատի ունի ճշմարիտ վարդապետության հավատացյալներին) պահպանել և պաշտպանել կործանումից):

• «Այպ թէ վասն բազում մեղաց զհակառակսն եւ զընդդէմսն հասանէ լսել, **զփոշի ոտից մերոց** ի նոսա **թօթափեմք,** եւ յաղագս այդր պատճառի է, զի անմեղադրելիք յԱստուծոյ եւ մարդկանէ լինիմք» (էջ 510):

ԴՄ-ները, ըստ կապակցության գլխավոր բաղադրիչի խոսքիմասային պատկանելության, անվանական և բայական կառույցներ են:

Քննենք անվանական կառույցները.

1. **դառն հայհոյութիւն** (էջ 119) – *վիրավորանք*, 2. **զմարտ պատերազմի** (էջ 118) – *գաղափարական պայքար ընդդեմ հերձվածողների*, 3. **նախանձ խանտանաց** (էջ 122) – *չարիք, չարածին նախանձ*, 4. **բարի նախանձ** (էջ 119, 461, 471), որը գործածվում է նաև այսօր, 5. **առաքինի մշակ** (էջ 122) – *Քրիստոսի վարդապետության քարոզիչ և սպասավոր,* նրան հոմանիշ են 6. **բարի մշակ**, 7. **հաւատարիմ մշակ** (էջ 475) ԴՄ-ները՝ *«Քրիստոսի վարդապետության նվիրյալ»* իմաստով: Հակադիր ԴՄ-ներն են՝ 8. **մշակք նենգաւորք** (էջ 529) (հերձվածողներ նեստորականներին և քաղկեդոնականներին են բնորոշում), 9. **դուռն ողորմութեան** (էջ 123, 461) – *Աստծու ողորմություն*, 10. **խմոր չարութեան** (էջ 128, 445) – *աղանդավորական երկպառակում*, 11. **տունկ բարեպտուղ** (էջ 123) հոմանիշ է *սերմն բարւոյ պտղոյ* ԴՄ-ին, 12. **ճառագայթ լուսոյ** (էջ 125) – *լուսափայլ*, 13. **կենաց առաջնորդ** (էջ 123) – *գաղափարական ռահվիրա*[80], 14. **ոչխար ի զենումն** (էջ 464) – *զոհաբերվող*, 15. **գառն Աստուծոյ** (էջ 453) – *ճշմարիտ հավատացյալ ի Քրիստոս*, 16. **գայլք զգեստուք գառանց** (էջ 448)՝ հերձվածողների բնորոշում, 17. **գայլք յափշտակողք** զգեստուք ոչխարաց

[80] 11-13 միավորները մեծարումն են այն «մշակաց առաքինեաց», որոնց ուղղված են նամակները:

(էջ 448), 18. **վէմ հաւատոյ** (էջ 530) – *քրիստոնեական ճշմարիտ վարդապետություն*, 19. **սրտի պակասութիւն** (էջ 475) – *անհանգ, ցավոտ* (հանդիպել են բնագրային հետևյալ օրինակները. «Եւ յաղագս տեառն կաթողիկոսի վասն իմ չէ՛ **սրտի պակասութիւն**. չի տեղեկացեալ եւ բովանդակ ի վերայ հասեաք» (էջ 475), «…զի Վահրամայ առ իս գրեալ էր, թէ իմ **սրտի** մեծ **պակասութիւն** է ձեր ի սրբոյ եկեղեցւոյն հեռանալդ» (էջ 475), 20. **ծառս պտղակորոյսս** (էջ 123), 21. **ծառս զաւսս պտղակորոյսս** (էջ 416), 22. **ծառս պտղակորոյս՝ խլեալ արմատաքի** (էջ 123)[81], 23. **աստեղս մոլորս** (էջ 123), 24. **ամպս անջրդիս** (էջ 416), 25. **չարաթոյն և մահաբերք բանք** (էջ 446) հերձվածողների գաղափարները բնորոշող միավոր, 26. **նիւթ կիզման յաւիտենականի** (էջ 416), 27. **չար որոմն** (էջ 448-449), 28. **ստի որոմն** (էջ 449), 29. **սերմանք չարի որոման** (էջ 446):

27-29 միավորները ևս հերձվածողների գաղափարները բնորոշող միավորներ են և վկայված չեն ԳԴԲ-ում:

Դիտարկենք բայական դարձվածային միավորները, որոնց գլխավոր բաղադրիչը բայ է:

1. **Պատրել ի մոլորութիւն** (էջ 122) – *մոլորեցնել*, որին հոմանիշ են հաջորդ երեքը, 2. **կուրացուցանել զմիտս** (էջ 123), 3. **վրիպեցուցանել ի ճանապարհէ** (էջ 122), 4. **վրիպեցուցանել ի ճանապարհէ զկորոյս** (էջ 122), «*անտեղյակներին խաբել», «ճիշտ ուղղուց շեղել»* իմաստներով նրանք վկայված չեն ԳԴԲ-ում, բառարանը վկայում է նրանց հոմանիշ այլ միավոր՝ **զողանալ զմիտս**, 5. **զանձինս արկանել** (էջ 118) – *նվիրվել*, նրան հոմանիշ է ***դնել զանձն*** (էջ 529) միավորը, 6. **խրամատել զաահմանս** (էջ 118) – *քանդել, ոչնչացնել*: Նրան հոմանիշ է 7. **խզել զընթացս** (էջ 122), 8. **դարձուցանել յուղղութիւն** (էջ 474) – *ճիշտ ուղղու վրա դնել*, 9. **պարապել յունկնդրութիւն** – *ուշադիր լինել* (նշենք, որ 1-9 միավորները վկայված չեն ԳԴԲ-ում և ՆՀԲ-ում),

---

[81] 20-24 միավորներով բնորոշվում են նեստորականները (ի դեպ, նրանց անմիջապես հաջորդում է հեղինակի վերաբերմունքը (օրինակ՝ ծառս պտղակորոյս՝ **խլեալ արմատաքի** (էջ 123), **աստեղս մոլորս** (էջ 123), **որոց վհի խաւարին յաւիտենից պատրաստեալ մնայ** (էջ 123) կամ **ամպս անջրդիս** (էջ 416)՝ **վարեալ ի մրրկէ ի կորուստ** են):

10. **տարագիր լինել** (էջ 122) –*վտարվել, հեռանալ*, 11. **փոյթ յանձին ունել** (էջ 118) – *հոգ տանել*, 12. **ի բաց մերժել** (էջ 446) –*հեռացնել, դեն նետել*, 13. **յանձին ունել** (էջ 446) – *ստանձնել*, 14. **ի գլուխ տանել** (էջ 472) – *ավարտել*, 15. **ի ձեռն առնուլ** (էջ 472) – *օգնել*, 16. **աշխատ լինել** (էջ 427) – *չարչարվել*, 16. **ի բաց քակել** (էջ 520) – *հեռացնել*, որին հոմանիշ են **ի բաց մերժել** և 17. **ի բաց բառնալ** (էջ 513) միավորները, 18. **երկիր պագանել** (էջ 495) – *պաշտել*, 19. **զանց առնել** (էջ 530) – *անտեսել*, 20. **ի բաց ընկենուլ** (էջ 119) – *դեն նետել*, որով գործածված է *ի բաց ընկենուլ զքարինս ի ճանապարհէ* միավորը, վերջինիս հոմանիշ է **անփոյթ առնել** (էջ 478) միավորը, 21. **զանց առնել** (էջ 530) – *անտեսել*, որի հոմանիշն է **անփույթ առնել** միավորը (էջ 478), 22. **ի բաց կալ** – *հեռու մնալ*, 23. **ձեռն արկանել** (էջ 504, 512) – *նախաձեռնել*, 24. **ի միտ առնուլ** (էջ 494) հոմանիշ է **զմտաւ ածել** միավորին (էջ 475, այն ունի «*մտածել», «հիշել»* իմաստները), 24. **ի միտ ունել** (էջ 453) – *հիշել*, 25. **նախանձախնդիր լինել** (էջ 118) – *հետամուտ լինել*, 26. **նախանձաւոր լինել** (էջ 508), հոմանիշ է նախորդ միավորին և ԳԴԲ-ում վկայված չէ, 27. **քարաձիգ լինել** (էջ 495) – *քարկոծել* (20-25 և 27 միավորները ԳԴԲ-ն վկայում է), 28. **չընդունել ի տունս** (էջ 463) – *եկեղեցի չթողնել*, վկայված չէ ԳԴԲ-ում: 29. **Փքայոյզ լինել** (էջ 471) – *հոխորտալ, գոռոզամտանալ* (26-րդ, 28-րդ և 29-րդ միավորները վկայված չեն ԳԴԲ-ում), 30. **վարել ի գերութիւն** (էջ 478) – *գերեվարել*: 24-րդ և 30-րդ միավորները վկայված են Մովսես եպիսկոպոսի «Թուղթ շրջագայականն»-ից, որը դավանաբանական կարևոր նշանակություն ունեցող նյութ է բովանդակում: Այնտեղ գործածված են նաև հաջորդ երկու դարձվածային արտահայտությունները՝ 31. **ծախելով զմարմին** ի հոգին յաւելուլ, 32. **զգայլսն հալածելով՝ ի գահավիժութենէ** զփարախն պահել (վերջիններս նորից բայական գերադաս բաղադրիչով բազմաբաղադրիչ կառույցներ են):

Բայական 33 ԴՄ-ից 15-ը վկայված չեն ԳԴԲ-ում:

Այսպիսով, դավանաբանական թղթերը՝ գրված «ի կաթողիկոսաց», ունեն ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեք:

Նրանցում արտահայտվում է քրիստոնեական վարդապետության հիմքային մեկնություն, հերձվածողների մտքերի ժխտում, որը կատարվում է տրամաբանական-դատողական ապացույցների, դրանց բացատրությունների շարունակական աշխատանքով, քանի որ հավատացյալներից անտեղյակներին ի հարկի պիտի զինել ճշգրիտ քարոզչությամբ՝ «ի բաց մերժելով» ցանկացած մոլար գաղափար: Պայմանավորված նյութի բովանդակությամբ՝ ԴՄ-ները նրանցում հաճախադեպ չեն: Նրանց մեծ մասն ունի թղթի բովանդակությամբ պայմանավորված գործածություն, այսինքն՝ խոսքային առկայացում:

Կաթողիկոսների թղթերը պաշտոնական փաստաթղթեր են, որոնցում ընդգծված է հայ եկեղեցու կոշտ վերաբերմունքը նեստորականության և քաղկեդոնականության դեմ, այլև ցավը հայ-վրացական դավանաբանական վեճի իրողության հանդեպ, որն ավարտվում է հայ և վրաց եկեղեցիների բաժանմամբ: Այս առիթով գրված նամակները, շրջագայականները կարևորում են նաև նրանով, որ նրանց մի մասի հայերեն տարբերակներն են միայն պահպանված[82]:

Ուսումնասիրելով Բաբկեն Ոթմսեցու, Ներսես Բագրևանդացու, Հովհաննես Գաբեղենացու, Մովսես Ցուրտավեցու, Մովսես Եղիվարդեցու, Վրթանես Քերթողի թղթերը և շրջագայականները՝ տեսնում ենք, որ նրանցում դարձվածքները հաճախադեպ չեն, ինչպես վարքագրություններում և վկայաբանություններում: Նրանցում գործածված 62 ԴՄ-ից, որոնցից 29-ը անվանական միավորներ են, 45-ը վկայված չեն ԳԴԲ-ում, օրինակ՝ **խմոր չարութեան, վէմ հաւատոյ, սրտի պակասութիւն, պարապել յունկնդրութիւն, պարտել ի մոլորութիւն, փքայոյզ լինել, խրամատել զսահմանս, կենաց դիպչել (կյանքի կոչվել), վրիպեցուցանել ի ճանապարհէ**, որին հականիշ է **դարձուցանել յուղղութիւն, նախանձաւոր լինել**, որին հոմանիշ է **նախանձախնդիր լինել, չարաթոյն բանք**, որ հականիշ է **բան կենաց** դարձվածքին, **տունկ բարեպտուղ**, որ հոմանիշ է **սերմն բարւոյ պտղոյ, դնել զանձն** (նվիրվել), որը հոմանիշ է **զանձինս արկանել** ԴՄ-ին են:

---

[82] Մանրամասն տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Գ, էջ 469:

Կառուցվածքային առումով տիրապետող են երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ դարձվածքները, որոնց մեջ ենք ընդգրկել նաև նախդիրով կառույցները, հաճախ ձևավորվում են երկբաղադրիչ միավորին որևէ բառի հավելումով, օրինակ՝ **ի բաց ընկենուլ+զքարինս+ի ճանապարհէ** կամ **որոմն չարի** և **սերմանք որոման չարի**, **վրիպեցուցանել ի ճանապարհէ+զկորոյս** են: Թղթերը գրված են հակաճառության մեթոդով, ուստի և նրանցում գործածվում են հակադիր իմաստով դարձվածքներ, օրինակ՝ **գառն Աստուծոյ** և **գայլք յափշտակողք**, **մշակ առաքինի** և **մշակ նենգավոր** են: Հաճախադեպ են նաև հոմանիշ դարձվածքները, օրինակ՝ **կուրացուցանել զմիտս** և **պատրել ի մոլորութիւն, նախանձ խանտանաց** և **խմոր չարութեան**, որ նշանակում է «միտք հերձվածողաց» են:

VI-VII դդ. դավանաբանական թղթերում տեղ գտած դարձվածքների իմաստային, կառուցվածքային և ոճական քննությունը կարևորվում է գրաբարի դարձվածքների՝ պաշտոնական ոճի երկերի լեզվում դրսևորած առանձնահատկությունների գնահատման դիտակետում: Մեր կողմից առաջին անգամ ներկայացված քառասունհինգ դարձվածքները կարևոր նյութ են ի լրումն գրաբարի դարձվածքների շտեմարանի[83]:

[83] Տե՛ս **Աբաջյան Ա., Յուզբաշյան Ա.**, Դարձվածային միավորները դավանաբանական թղթերում, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, N 1 (31), էջ 51-61:

# ԳԼՈՒԽ 7
# ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ

## 7.1. Դարձվածքները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի լեզուն բնորոշվում է պատկերակերտման և խոսքակառուցման եզակի արվեստով: Պոեմի լեզվի ոճական հատկանիշները գնահատելիս անհրաժեշտ է կարևորել հետևյալը.

ա) Նարեկացին խոսում է մարդու և Աստծու մասին. արժեքներ, որոնց ճշգրիտ գնահատականը տալով՝ հեղինակը գծում է մարդկային աշխարհի՝ մեղքերից ազատվելու ճանապարհը:

բ) Նա ամենապարփակ սիրո ուժն է կրում իր մեջ, որի արդյունքում հրաշալի է կերտում մարդու և Աստծու փոխհարաբերման ճամփան. քրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարը՝ Աստծու մեջ որոնել մարդու փրկչին, պոեմի հենքն է. «**ի յարկս բանական**»՝ բանական շենքի և հավատի վիմաքարի՝ «**վէմ հաւատոյ**» ուժը Աստծու ձեռքին է, ուստի «**Թէ՝ Որ կարդայ զանուն տեառն, նա կեցցէ**» (էջ 289):

Նարեկացու գերնպատակն է մարդուն հասցնել այդ մեծ հավատին, իսկ դրա համար մարդ պիտի տեսնի իր էության ճշգրիտ պատկերը. երկդիմի էությունը նրան հեռացրել է «**ի տանէ Աստուածակերտ**», ուր վերադառնալու համար նա պիտի անցնի ապաշխարելու և մեղքերից ազատվելու դժվարին ճանապարհը:

Պոեմի յուրաքանչյուր տողում Նարեկացին ցավով է խոսում մարդկային մեղքերի մասին, բայց և վստահ է, որ Աստված օգնական է քավության եկած յուրաքանչյուր մարդու:

դ) Յուրաքանչյուր գլուխ և ենթագլուխ առանձնանում է ոչ միայն բովանդակությամբ, այլև շարահյուսական կառույցով, որը թելադրվում է բովանդակությունից: Խոսքային հատվածները բացա-

հայտում են գրաբարի շարահյուսության հնարավորությունները, ոճական միավորների կերտման դիտակետում:

Պոեմում գործածված դարձվածքների և դարձվածային արտահայտությունների մեծամասնությունը հեղինակային է: Նրանք ավելի հաճախադեպ են գրաբար մատենագրության մեջ գործածված միավորների համեմատությամբ: Հեղինակը պոեմը կառուցում է հակադրման մեթոդով, որը պայմանավորված է պոեմի հիմնագաղափարներով:

Հակադրության մի եզրում մարդն է՝ աստվածային արարման կատարելատիպը, որը, ցավոք, երկրային կյանքում կուտակում է անսահման մեղքեր և հեռանում է աստվածային անաղարտությունից: Մյուս եզրում Աստված է՝ իր մաքրությամբ, իր լույսով ու մարդուն ներելու եզակի կարողությամբ ու ցանկությամբ:

Ո՞րն է հեղինակի ողբերգությունը. աստվածակերտ մարդու՝ մարդկային էության ճշգրիտ ճանաչմանը հասնելով, նրա կենսակերպի իրավացի գնահատականը տալով՝ Նարեկացին ուզում է մարդուն հասցնել աստվածակերպ տեսակին, այս ճանապարհին նրա հոգեկան ապրումները բազմագույն են ու երբեմն այնքան ցավոտ, որ հոգու ցավերը ֆիզիկական տառապանքով են լցնում նրա մարմինը: Իր ներհայեցողական հայացքի դիտակետում Նարեկացին ունի հոգեկան անասելի տառապանք, իրողություն, որը բերում է ֆիզիկական քայքայման, ինչի նկարագիրը նա տալիս է տարբեր գլուխներում: Նա հաճախ է մանրամասնում իր՝ իբրև մեղսալի մարդու հոգեկան և ֆիզիկական նկարագիրը: Օրինակ՝ ԻԵ գլխում դա անում է խորտակվող նավի հետ համեմատությամբ: Բ ենթագլխում նա մանրամասնում է նավի խորտակման նկարագիրը: Գ ենթագլխում արդեն ինքն է խորտակված նավի նավավարի զգացողությամբ և նկարագրով: «**Աշխարհի ծովում**» նավարկվող իր նավի բեկանումը նման է խորտակվող նավի նկարագրին՝ ի ցույց դնելու իր վիճակի՝ իբրև նավավարի անտանելիությունը, հոգեկան մեծ ողբերգությունը:

«Նաւ ուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ,

Ձեռն ի ծնաւտի եդեալ՝ **արտասուաց գետս իջուցանէ**» (էջ 341):

Բայց նա վստահ է. «Վասն զի թէ **զբարի նաւապետն** երկնաւո-րաւքն զաւրաւք **յաշխարհիս ծովու**

Առ ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս

**Առցէ աշխատել** բանիս յարմարութիւն,

Ոչ ինչ վրիպեսցէ ի ստուգութենէ» (էջ 341):

**«Բարի նաւապետ»-ը** Քրիստոսն է:

**Նաւ** բառով և նրանով բարդված **նաւապետ, նաւահանգիստ** բա-ղադրիչներով դարձվածքները հաճախ են հանդիպում դավանաբա-նական գրականության մեջ. **նաւահանգիստ կենաց** դարձվածքը ՆՀԲ-ն վկայում է: Բնագրում ունենք ***նաւահանգիստ կենաց**. «Զթե-թեւութիւն հոգւոցն թռուցեալ՝

**Ի նաւահանգիստն կենաց** հասին» (էջ 578):

* **նաւ հոգւոյ,** սա հեղինակային միավոր է.

«Մի՛ նաւ հոգւոյս ալեկոծեալ» (էջ 596):

***Նաւ խարդախողին**. «Կացցէ ի սասանման նաւ խարդախո-ղին» (էջ 605):

Նա վստահ է, որ Տերը՝ բարի նավապետը, ողբում է նաև իր կոր-ծանված նավի համար: Իր ձեռքում նա մշտապես ունի **«առաստն յուսոյն»**, քանի որ վստահ է, որ «բացցի գթութեան դուռն Աստծոյ»: Հեղինակը **դուռ** բաղադրիչով տարբեր դարձվածքներ է գործածել պոեմում.

***դուռն գթութեան**. «Գթութեան քո դուռն բացցի» (էջ 342), ԳԴԲ-ն այն չի վկայում:

* **դուռն յուսոյ**. «Եւ զդուռն յուսոյն մտից անփակելի պահեսցես» (էջ 450):

* **դուռն կշտամբութեան**. «…Դուռն կշտամբութեան գազանաւոր գործավար» (էջ 463),

***դրունք իմաստից**.

«Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

Եւ տպաւորեսցի՛ ի սեամս զգայութեանց» (էջ 599):

Թարգմ.՝ «Տպվի **դռների բանականության**

Եվ զգացության սեմերի վրա դրոշմվի ամուր» (էջ 503)[84]:

**Աշխատ առնել**-ը գործածված է բայի հետ՝ ի աշխատել, որ նշանակում է «կոծել, սգալ»: Սրան հոմանիշ է **արտասուաց գետս իջուցանել** դարձվածքը, «կոծել» իմաստով ԳԴԲ-ն վկայում է **արտասուս իջուցանել** միավորը:

**Դ** ենթագլուխը, որի տողերը սկսվում են **իցէ՞** բաղադրիչով կամ ստորադասական երկրորդ ապառնու բայաձևով, որին նախորդում են **արդեւք, ապաքէն, գուցէ** բառերը, երկմտանքի մտորումներով հարցական նախադասություններով է կառուցված: Յուրաքանչյուր տողում հեղինակի խնդրանքն է՝ ազատվելու մեղքերի անասելի պարտքից, որը հեղինակը արտահայտել է դարձվածային արտահայտություններով.

«Իցէ՞ թէ տեսցեն **պատուհան աչացս** իմաստից զմուրհակ պարտուցս իմոց պատառեալ

Եթե տեսի՞ց զցաւղ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ արաւտ,

Եթե իցէ՞ երբէք նկարել զգազանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գրութեան քո հաւտ» (էջ 342):

Սրանք հռետորական հարցադրումներ են, որոնց ենթատեքստում կա դրական պատասխանի սպասումը:

Ցանկացած հատվածում դարձվածքները և դարձվածային արտահայտությունները մանվածապատ են հեղինակի խոսքին: Նշված գլխում գործածված դարձվածքներն են.

1. **ակն ունենալ** – *ակնկալել*: ԳԴԲ-ն այն վկայում է: Այն համախաղեպ է նաև պոեմում:

«Արդ իցէ՞ **ակն ունել** նայել զյաւէտ խաքարեալ կերպարան բնութեանս կրկին հանդերձեալ…

Ապաքէն գուցէ՞ **ակն ունել** զանկեալս ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազդուրեալ» (էջ 341):

«**Ակն ունիմ** զաւրել քո բանիդ առ իմ բժշկութիւն… (էջ 308),

---

[84] Բնագրային նյութը՝ ըստ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., 1981: Թարգմանության նյութը՝ ըստ **Գ. Նարեկացի**, Մատյան ողբերգության, Եր., 2014:

**2. աշխատ առնել** – կոծել իմաստով, ԳԴԲ-ն վկայում է **աշխատ դնել** միավորը: Նրանք հոմանիշներ են, քանի որ **դնել**-ը գրաբարում ունի նաև *«անել»* իմաստը:

«**Առցէ աշխատել** բանիս յարմարութիւն,

Ոչ ինչ վրիպեսցէ ի ստուգութենէ» (էջ 341):

Բնագրային օրինակում **առնել** բայը գործածվել է **աշխատել** բայի հետ՝ **աշխատել առնել:**

**3. Ի միտ բերել** – պատկերացնել, ԳԴԲ-ն այն վկայում է: «Դոյզն կասկած արկածից **ի միտ բերելով**» (էջ 340):

4. **Առաասն յուսոյն.** ԳԴԲ-ն այն չի վկայում:

«**Առաասն** յուսոյն ձեռամբ ունողին

Յանքոյթն արտաբերեաց խաղաղութիւն» (էջ 341):

Նարեկացին վստահ է իր հավատի մեջ, բայց ինչո՞ւ է առաջին վայրկյանից նաև երկմտում՝ չլինի՞ հանկարծ չարժանանա Աստծու ողորմածությունը: Սա շատ խորքային հոգեվիճակ է, որի ճշգրիտ նկարագրման մեջ է Նարեկացի մտածողի հանճարեղությունը, Նարեկացու արժեհամակարգում մարդը այն արժեքն է, որի փրկության համար մարտիրոսվեց Քրիստոսն ինքը: Պոեմում ընդհանուրի և մասնավորի հրաշալի ամբողջացում է կատարվում: Նա սիրում է մարդուն, այդ սերը աստվածային այն մեծ սիրո պատգամում ձևակերպված սերն է, որով կանգուն է մարդկային աշխարհը. «Աստված սէր է, և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ի նմա բնակի… սէր յԱստուծոյ է, և ամենայն, որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած»[85]: Նարեկացին անշուշտ պիտի սրդողեր իր, հետևաբար մարդու համար, քանի որ սիրո վերոհիշյալ պատգամը, որ քրիստոնեական վարդապետության հիմնագաղափարներից մեկն է, նստած էր Նարեկացու մեջ: «Մարդու փրկության համար իր խնդրանքն առ Աստված հանկարծ անպտուղ չմնա» հոգեվիճակը այդ՝ սահմաններ չունեցող սիրուց է ծնվում, դրան հաջորդում է հավատը. «Աստուած է յամենայնի և ամենեցունց»:

[85] Թուղթ Յովհաննու, ԼԴ, 7-8, 16:

Սա գաղափարական այն հենքն է, որի վրա կառուցվում է պոեմը տող առ տող. այդ տողերում կան ցավ, տագնապ և «հավատ ու յույս»: «Սիրեցուք զմիմեանս» պատգամը Նարեկացու համար մարդկային լինելիության այն հիմնակետն է և ճանապարհը, որ տանում է առ Աստուած: Սերը սկսվում է Աստծուց, այն պիտի մարդու կենսակերպի և հոգեբանության մեջ մաքրվելու միջոց լինի, քանզի այն բանական շենքը, որ վարակված է բորոտությամբ՝ **«Յարկաբանական ունողս բորոտութեան»** (էջ 250), այդ սիրո ուժով կտանի ինքնամաքրման: Նարեկացին կրողն է հենց այդ սիրո. փրկության բանաձևը հստակ է՝ ապավինել Աստծուն՝ արժանանալու համար նրա մեծ սիրուն, որի մեջ է նաև նրա ներողամտո ւթյան օժտվածությունը:

«Չի կենից եւ ես առ նոքաւք բերկրեալ ընդ նոսին.

**Բուռն հարեալ** քան զիմոյ գործոց՝ զքոյս շնորհաց» (էջ 370):

**Բուռն հարկանել** դարձվածքը բռնել իմաստով ԳԴԲ-ն վկայում է: Նարեկացին գործածել է *ապավինել* իմաստով, թարգմ.՝ «Որպեսզի ես էլ ապրեմ նրանց մոտ, / Բերկրեմ նրանց հետ՝ **ապավինելով** / Ոչ թե գործերիս, այլ շնորհներիդ» (թ. 178):

Զարմանալի ճշգրիտ և առանձնակի շարահյուսական կառույցների ևս հանդիպում ենք յուրաքանչյուր գլխում: Ոճական միջոցներից նախդիրների, շաղկապների, դերանունների և լեզվական այլ միավորներով սկզբնավորվող կառույցներից յուրաքանչյուրը շարահյուսական առանձին կաղապար է՝ կառուցված և բանաձևված մեծ լեզվագետի կողմից: «Գեղարվեստական այդ պատկերները՝ լինեն բառ-պատկեր, ծաւալուն համեմատութիւն, հոգեվիճակ, թէ պատկերմենախօսութիւն, բոլորն էլ ներկայացնում են Մատեանի գեղագիտօրեն կազմակերպուած ոճակառուցվածքային տարրեր: Սա էլ բնութագրում է Մատեանի պատկերային հէնքի և նրա կառուցվածքի առանձնայատկութիւնը»[86]:

Գրաբարով մատենագրության մեջ ընդհանուր գործածություն գտած դարձվածքները դյուրանկար են: Նարեկացին դրանք ևս գոր-

[86] **Ա. Ղազինեան**, Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 198:

ծածում է ի հարկի՝ իբրև իր խոսքի կառուցման անհրաժեշտ բաղադրիչներ: Օրինակ՝ **մահ** բաղադրիչով պոեմում գործածված են հետևյալ ԴՄ-ները.

1. **գերել ի մահ**՝ մահվան ենթարկել իմաստով. «Գրաբարի բառարանում» գերել բայի փոխաբերական իմաստների շարքում նշված է նաև *ենթարկել*-ը: Բնագրի մեր օրինակը. «Եւ գերեալ զիս ի մահ ըստ դիպուածոյն» (էջ 247),

2. **ի նիրհումն մահու** (էջ 409),

3. **ի մահ գերիս** (էջ 409),

4. **մահուան ափ** – *մահամերձ*. «Կանգնեա՛ զհասեալս յափն մահս ի բազմավտանգ հիւանդութենէս» (էջ 585),

5. **խավար մահու**. «Առ **խաւարաւ մահու** ծածկելոյս՝ նշոյլ կենաց քո» (էջ 368):

6. **մահու մատնեալ** (էջ 572). «Թէ զմատնեալս մահս փրկեսցես, կենդանի լոյս» (էջ 572):

7. **մշակք մահու** (էջ 422),

8. **որոգայթ մահու** (էջ 367),

9. **խայթուած մահու**. «**Եւ զխայթուածս մահու** բժշկել» (էջ 351):

10. **ճաշակումն մահու**. «Զճշմարտութիւն տարակուսանացս՝ իբրեւ **ճաշակումն մահու**, արբի» (էջ 346),

11. **մահու չափ**. «Մեղա՜ գովեալ մարմնոյդ աստուծոյ, **մահու չափ** մեղա՜յ» (էջ 349):

Սրանցում կա փոխաբերական իմաստով գործածված բաղադրիչ, որով և բառակապակցությունն արժևորվում է իբրև դարձվածք: ԳԴԲ-ն վկայում է միայն **ի մահ դնել** դարձվածքը՝ «մահվան ենթարկել» իմաստով:

12. **Դատարկ ելանել**՝ *ձեռնունայն, դատարկաձեռն* իմաստով. «Մի՛ լիցի ինձ զքեզ տեսանել և **դատարկ ելանել**» (էջ 252). ԳԴԲ-ն այն չի վկայում:

13. **Փող բարբառոյ ազդել** – *փարփողել, գովաբանել*. «Վասն որոյ առ միևն անթիվ են ստեղծուածք ճառից, Որ զողորմութեանցդ քո **փողով բարբառոյ** ազդէ» (էջ 476):

ԳԲ-ում և ԳԴԲ-ում վերոհիշյալ 2 միավորները ևս վկայված չեն:

14. **Ձեռն մատուցանել** – ձեռք մեկնել իմաստով. «Եւ ինձ ողորմեա՛ կրկին գրութեամբ՝ Ձեռն **մատուցեալ փրկութեան**» (էջ 522):

15. **Ի կիր արկանել** – *կիրառել, գործածության մեջ դնել.* «Բայց զի՞նչ է ինձ ի փոքունց եւ զանկածից Ծաղրականաց ոմանց գոյութեանց ի կիր արկանել» (էջ 523):

16. **Զմտաւ ածել** – *հիշել, մտքով անցկացնել.* «**Ածեալ զմտաւ**՝ ոչ եւս յաւելից» (էջ 485):

17. **Անտես առնել** – *անուշադրության մատնել.* «Զայս բան ասելով՝ Զգործս ձեռաց քոց **մի՛ անտես առներ**» (էջ 574):

18. **Ի միտ բերել** – *մտաբերել, հիշել.* «Դոյզն կասկած արկածից **ի միտ բերելով** առ խտրոց փոքր միջոցին» (էջ 340):

19. **Յանձին հարկանել ձեռն** – *ինքնավստահ լինել.* Նարեկացին ընդհանուր գործառական այս կառույցին ավելացրել է նաև **վստահութեան** բառը. «**Յանձին հարեալ ձեռն վստահութեան**» (էջ 476):

Վերոբերյալ դարձվածքները վկայված են ԳԴԲ-ում և «Գրաբարի բառարանում»:

Նարեկացու երկում գործածված դարձվածքները իմաստային 2 խմբի են բաժանվում՝ **դավանաբանական,** որոնք ընդգրկում են քրիստոնեական վարդապետության և ընդհանրապես աստվածաբանական իմաստային տիրույթը, և **ոչ դավանաբանական:**

Պոեմում գործածված դարձվածքները բաժանվում են ևս 2 ենթախմբի.

ա) ընդհանրական գործառույթ գտած միավորներ, որոնք կան գրաբարով մատենագրության մեջ,

բ) հեղինակային-դիպվածային, որոնք արգասիքն են հեղինակի գրչի, ստեղծվում են տեղում՝ խոսքային տվյալ կառույցում: Նրանք հաճախադեպ են յուրաքանչյուր գլխում ու ենթագլխում և ունենալով խոսքային առկայացում՝ նրանք կարող են դասվել «պոտենցիալ դարձվածքների և դարձվածային արտահայտությունների շարքին»[87]: Նրանց բնորոշ է իմաստային ընդհանրացման ներուժը,

[87] Տե՛ս **Բաղիկյան Խ.**, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 121:

պատկերավոր մտածողության եզակի արվեստը, օրինակ՝ **ալրհնու-թեան անձրեւ** (էջ 375), **ձեռնկալ վստահութեան** (էջ 603) են:

Դավանաբանական դարձվածքների շարքում հաճախադեպ են Քրիստոսին և Աստվածամորը մեծարող դարձվածքները՝ արեգակն արդար (էջ 635), արեգակն անաչառասփիւռ (էջ 620), աղբիւր իմաստութեան (էջ 465), աստղ սահմանիչ երկակշիռ տարրութեանց (էջ 620), ալրհնութեան անձրեւ (էջ 375), անսխալելի դեղ կենաց (էջ 633), դուռն բարութեան (էջ 356), դուռն բարձրութեան (էջ 359), դարան ամրութեան (էջ 601), երասանակալդ սրտի (էջ 375), երկնաճեմ սանդուղք (էջ 375), կենաց գաւազան (էջ 374), կենաց աւետիս (էջ 356), ձեռնկալ կենաց (էջ 361), ձեռնկալ մեծ վստահութեան (էջ 603), ճանապարհ կենաց (էջ 603), ճշմարտութեան ճանապարհ (էջ 375), սանդուղք երանութեան (էջ 361), պատսպարան վստահութեան (էջ 601), փառաց դուռն (էջ 357) կանաչացուցանող հոգւոյ (էջ 342) են:

Քրիստոսամեծար կապակցություններով ակաղձուն է «Մատեանը»: Քրիստոսին և Աստվածամորը մեծարող այլ կապակցությունները ներկայացնում ենք հետագա շարադրանքում ևս, երբ ԴՄ-ները առանձնացնում ենք ըստ կապակցության գլխավոր բաղադրիչի կամ գնահատում ենք նրանք իմաստառճական դիտակետում: Նշենք, որ նրանք ամենուր են, օրինակ՝ **Չէ** գլուխը ամբողջովին, եթե նույնիսկ տվյալ գլխում այլ միտք և գաղափար է արտահայտում, միևնույնն է, դիմում է Աստծուն նրան մեծարող կապակցություններով, որոնք հանդիպում են դավանաբանական գրականության մեջ կամ հեղինակային են: Նրանք գերազանցապես կոչականի գործառույթ ունեն:

Դավանաբանական գրականության մեջ Քրիստոսի խորհրդանիշն է **գառն** բառը, որն ունի իր մեջ անմեղության, մաքրության և զոհի խորհուրդ. այն իր խոսքում գործածել է նաև Նարեկացին՝ «ի վայելումն ճաշակման **երկնաւոր գառինդ**» (էջ 383), «իսկ ինքն եկեալ կամաւորութեամբ ի խաչն մահու, իբր **զգառն անարատ** ի սպանդ վարեցաւ Եւ հանդերձեալ զատել ինքնիշխանութեամբ զարարածոց իւրոյ» (էջ 387):

Դավանաբանական դարձվածքների գերակշռող մասը հանդիպում է աստվածաբանական գրականության մեջ, օրինակ՝

1. **փայտ կենաց** կամ **կենաց փայտ** այս դարձվածքը խորհրդանշում է *խաչափայտը* «Հանդարտեցո՜ **փայտիւդ կենաց** զծովուս մրրիկ» (էջ 590):

«Որ զմեռային դառնութիւն իբր զմտաց անհաւանութիւն,

**Կենաց փայտիւ** ի քեզ յարմարեալ՝ պիտանի արարեր» (էջ 496):

2. **Բան կենաց.** «Եւ իբր **զբանս կենաց** յաւիտենականաց անողի» (էջ 625):

3. **Կենաց գաւազան.** «Այլ ի քեզ, տէ՛ր, յեղեալ իբր ի հաստարան **կենաց գաւազանն**» (էջ 374),

4. **Գավազան կենաց** աւգնութեան (էջ 478):

5. **Դեղ կենաց**. սա հաճախադեպ է: Բնագրային օրինակներ.

«Արդ՛ տուր խոցելոյս ի սիրտ

Եւ յոգի, աղաչեմ, զքած,

Զառ ի յերկնուստ ընծայեալ **զդեղդ կենաց**» (էջ 457):

«Թէ զխորտակեալս կազդուրեսցես, **դեղ կենաց**» (էջ 572):

«Որ զայս **դեղ փրկութեան կենաց** յարմարեցոյց

Եղիցի բժշկեալ յանուն քո հզաւր» (էջ 356):

(Թարգմ.՝ Նա, որ մեզ համար հորինեց դեղն այս կյանքի փրկության (էջ 159)):

«Անսխալելի **դեղ կենաց**» (էջ 603):

**Դեղ** բաղադրիչով՝ **դեղ ողորմութեան** դարձվածք.

«Զտիպքն եւ զգիծքն՝ եւ զխարանս հարուածոցն՝

Բարձեալ եւ մաքրեալ **դեղովք ողորմութեամբ**» (էջ 595):

Նարեկացին **կենաց** բաղադրիչով գործածել է նաև հետևյալ դարձվածքները՝ **շաւիղ կենաց** (էջ 471), **կտակ կենաց**. «Որպէս ամենայն իսկ երգ սաղմոսացն Մաքուր սրտից է տեսանելի, **Կտակ կենաց** մարդկան նկարեալ» (էջ 448), **աւանդ կենաց**. «Զաւանդն կենաց մոռացեալ» (էջ 352), **կենաց աւետիս**. «**Կենաց աւետիս,** կէտ տէրունի, դուռն բարութեան, Սփոփանաց հրաւէր, ճշգրիտ պատկեր» (էջ 356), **ծառ կենացն**. «Ծառ կենացն անմահից՝ բոցեղէն **ստովն** պարունակեալ» (էջ 570):

6. **Պտուղ կենաց** կամ **կենաց պտուղ** դարձվածքը ԳԴԲ-ն չի վկայում: Դիտարկենք բնագրային օրինակներ.

«Եւ զիա՞րդ հնձեցից և ժողովեցից **զկենաց պտուղն**» (էջ 584), «Տունկդ **կենաց պտղոյն** աւրհնութեան» (էջ 571): **Տունկ** բաղադրիչով ունենք աստվածաշնչյան հետևյալ միավորը. «Որք եւ **պտղակորոյս տնկոյ** թզենւոյն՝ եռամեանն դատարկութեամբ» (էջ 573):

**Պտուղ** բաղադրիչով գործածված է **պտուղ դառնութեան** (= դառն պտուղ) միավորը. «Որք ի մարմնոյս անաւրինելոյ ընծային **պտուղք դառնութեան**» (էջ 523): Այն գործածվում է նաև արդի հայերենում և ընդհանրական իմաստի դարձվածք է. օրինակ՝ «Նա քաշում է իր սխալ ապրած կյանքի դառն պտուղները»: Ընդհանրական իմաստի դարձվածքները ունեն ընդհանրական գործառական տիրույթ:

Այսպես՝ **ծանր խոնարհեցուցանել** դարձվածքն ունի «*ծնկի գալ՝ ի նշան հարգանքի և պատկառանքի*» իմաստը:

Պոեմում ունի հետևյալ գործածությունը.

«**Ծո՛ւնր խոնարհեցո** առ իս հաշտու՛թիւն ծնողդ Աստուծոյ» (էջ 571): Տվյալ դեպքում այն գործածված է դավանաբանական խոսքում: Բայց այն, անշուշտ, ունի ընդհանրական (նաև ոչ դավանաբանական) գործառույթ, օրինակ՝ «ծունր խոնարհեցուցանեմ առ գործս հայրենեանուէր մեծի գորչի»: ԳԴԲ-ն այս միավորը չունի և վկայում է **ծունր դնել**, **ծանր կրկնել** դարձվածքները. բնագրում կա նաև այդ միավորի գործածությունը. «որում **կրկնի ծունր** երկրպագութեան ամենայն եղելոց» (էջ 637):

Ընդհանրական իմաստի միավոր է նաև **քարամբ կոծել** դարձվածքը, որը ԳԴԲ-ն ևս վկայում է: Բնագրային օրինակը՝

***քարամբ զմիտս կոծել**. «Ով որ անաւրինացաւ եւ ոչ **քարամբք զմիտս կոծեաց**» (էջ 369):

Հեղինակային դարձվածքները ծնվում են տեղում, նրանք արդյունքն են հեղինակի պատկերավոր լեզվամտածողության, որի ակունքները գալիս են ժողովրդական լեզվամտածողությունից: Նրանք հաճախադեպ են և գերակշռող են արդեն գրաբարում ընդհանուր

գործառույթ, գործածություն գտած ԴՄ-ների համեմատությամբ: Օրինակներ՝

1. **արատ հոգւոյ**. «Եթէ տեսի՞ց զցաւղ անճրեւոյն կանաչացուցանողն **հոգւոց ինձ արատ**» (էջ 342):

2. **Շունչ հոգւոյ**. «Եւ շունչ հոգւոյս իմ ընդ քեզ՝ Անարժանաւրէն կապաւ միացեալ» (էջ 606):

3. **Գաւազան խրատու**. «Քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ… **Գաւազան խրատուն** առ հատուածն» (էջ 404):

4. **Վէմն հաւատոյ**. «Իսկ եթէ առ Պետրոս՝ վէմն հաւատոյ,
Ի քումդ խնամոց խուն մի խիթացեալ՝
Եւ նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ» (էջ 525):

5. **Ձահ փառաց**. «Ձգահս փառաց շիջեալ» (էջ 350):

6. **Չոր վրէժխնդրութեան**. «Բայց քանզի ձայնդ դատաստանիդ հատուցման Ուժգինս հնչեցեալ՝ **ի ձորն վրէժխնդրութեան**» (էջ 347):

7. **Փուշ վարուց**. «Զի փուշս վարուց դիպեցի» (էջ 350):

8. **Վիհ մեղաց**. «Անյայտնելի կորուստ՝ կործանեալ ի **մեղաց վիհի**» (էջ 345):

9. **Կենաց վիհ**. «Յանակնկալս **կենաց վիհէ** արտաբերել ի լոյս անձկալի» (էջ 346):

10. **Սրտիւ ի գրաւի** (էջ 345):

Սրանք հեղինակային ԴՄ-եր են:

Խ. Բաղիկյանը «Դարձվածային ոճաբանություն» աշխատության մեջ ըստ ամենայնի խորքային վերլուծության է ենթարկում արևելահայերենի դարձվածքների ոճական հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Գրաբարի դարձվածքների և դարձվածային արտահայտությունների ոճական առանձնահատկությունները Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում հանդես են գալիս ամենատարբեր դրսևորումներով: Նրանց մեջ կարող ենք գտնել շրջասույթների, փոխանունների (համըմբռնում), օքսիմորոնների (հակադրույթների) հրաշալի օրինակներ: Նարեկագիտությունը բարձր է գնահատում նարեկյան լեզվամտածողությունը նաև նման ոճական-կիրառական

դիտակետում: Մենք դրանք դարձվածքների հրաշալի օրինակներ ենք համարում, որոնք նարեկյան լեզվին առանձին հմայք են տալիս՝ մնալով բնորոշ նարեկյան լեզվամտածողությանը: Շրջասույթի հրաշալի օրինակներ են հետևյալ դարձվածքները.

1. **տեսութիւն մտաց**.

«Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երեսաց **տեսութեան մտացս**

Անձն իմ անպիտան

Վիմաւք ձգելոց արձանաց բանից

Իբր զանընտրել գազան վայրենի» (էջ 278),

«Եւ ըստ ընթացից **տեսութեան մտաց**՝ արագունք» (էջ 573),

«Զաւրացո՛ զշնորհիդ փայլումն ի գեղ դիմացս եւ ի կերպարան **տեսութեան մտացս** հողեղէնիս» (էջ 409):

2. **Ուշ մտացս**. **ուշ** նշանակում է «միտք, մտածողություն». սա նույնանիշ բաղադրիչներով կառույց է: Իմաստի ընդգծման նպատակով նույնիմաստ կամ հոմանիշ բառերով կառույցները գրաբարին բնորոշ միավորներ են, որոնք մենք դարձվածքների շարքին ենք դասում. «Ուշիւ մտացս» (էջ 108):

3. **Խորհրդակիր սենեակ զգայութեանց** (էջ 246). «Ելցէ ի խորոց աստի **զգայութեանց խորհրդակիր սենեկիս**» (էջ 246) (թարգմ.՝ Մտքիս խոհածուփ սենյակի խորքից):

Ընդգծված դարձվածք-շրջասույթը ունի *«միտք, մտածողություն»* իմաստը:

4. **Դրունք իմաստից**. «Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

Եւ տպաւորեսցի՛ **ի սեամս զգայութեանց**» (էջ 599),

**Դրունք իմաստից** նշանակում է *«իմաստնություն», «խելամտություն»*, իսկ **Ի սեամս զգայութեանց**-ն ունի *«զգացողություն»* իմաստ (թարգմ.՝ Տպվի դռներին բանականության Եվ զգայության սեմերի վրա դրոշմվի ամուր, էջ 503):

5. **Ուշ իմաստին** – *խելամտություն, իմաստնություն*. «Մի՛ ուշ իմաստին բարձրեալ» (էջ 596):

**Աչք, տեսողություն** իմաստի համար գործածել է հետևյալ դարձվածքները, որոնք ևս շրջասույթներ են.

6. **պատուհան աչաց**. «Մի՛ պատուհանք աչացս՝ փակեալ Մի՛ լուսաւորութիւն նորին՝ խափանեալ» (էջ 596):

7. **Լիճ լուսոյն.** «Ձլիճ լուսոյս արտասուաւք լզեալ» (էջ 374):

**Աչք, ակն** բառերը հեղինակը գործածել է **աչք հոգւոյն, ակն ոգւոյ** դարձվածքներում, որոնք հեղինակային են:

8**. Աչք հոգւոյ, ակն ոգւոյ**. «Լուսաւորեա՛ վերստին զխաւարեցեալ **հոգւոյս աչս** Կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ» (էջ 404): «Ոչ յառեցի **զակն ոգւոյս** ի գլուխն իմ կենաց Քրիստոս» (էջ 466):

9. **Աչք ի յողբումն.** «Կերպ՝ ի ծաղր, և **աչք ի յողբումն**» (էջ 365), ունենք **ի (յ)** նախդրի կրկնակի գործածություն:

10. **Ստին ս աչաց**. «Եւ **ստինս աչաց** ցամաքեալս, ո՛վ ամենազութ» (էջ 251):

11. **Գերանակիր ակն**. «**Ձգերանակիր ակնս** բշուառացեալ» (էջ 350), **գերանակիր աչք**-ը աստվածաշնչյան ԴՄ է:

**Արտասուք** բաղադրիչով ԴՄ-ներն են՝

12. **հեղեղ արտասուաց** (էջ 409),

13. **անձրեւ արտասուաց**. «Ընձեռեալ տացես, Տէ՛ր, տառապելոյս անձրեւ արտասուաց» (էջ 618),

14. **արեան արտասուս երկնել**. «Ո՞վ որ զկեանս իւր կորոյս եւ ոչ **արեան արտասուս երկնեաց»** (էջ 362): Արդի հայերենում գործածական է *«արյուն արցունք թափել»* տարբերակը,

15. **զետ արտասուաց իջուցանել** (էջ 341). ԳԴԲ-ն վկայում է **արտասուս իջուցանել**՝ *«ազալ»* իմաստով ԴՄ-ն:

Չափածո խոսքի համար հեղինակը գործածել է հետևյալ դարձվածքները, որոնք նույնպես շրջասույթներ են.

16. **յաւդուածս բանից** (էջ 346),

17. **յաւդաւորական շրթունք**. «Եւ արդ քանզի առ բարձրեալն Աստուած յաւդաւորական շրթամբք կարդաս» (էջ 242),

18. **հիւսուած բան**. «Եւ արդ ընկալ զայս **հիւսուած բանի** աղիողորմ հեծեծանաց» (էջ 598):

«Մատեանը» Նարեկացին թողնում է **իբրև կտակ՝ համայն մարդկությանն** ուղղված՝

«Ու քանզի՝ անդառնալի ուղւոյն յիշատակ

Աստեացս պարտեաց զայս կտակ թողի՝ որոց ընթեռնուն…» (էջ 461):

Մատեանը բնորոշվում է հետևյալ դարձվածքներով՝

18. **կտակ ողբերգութեան**.

«Եւ արդ, քանզի ի գլուխ կատարման հասեալ

Սակաւամասնեայ **կտակի** այսր **ողբերգութեան**

Արա՛, Տէ՛ր, վախճան դադարման առնուլ» (էջ 504),

19. **աւանդ անկորուստ**. «**Յաւանդ անկորուստ** ընդ իս պահելով» (էջ 355),

20. **արձան յաւիտեան**. «Եւ գրեալ դրոշմեսցես **յարձան յաւիտեան** սպասաւորութիւն» (էջ 508):

Նարեկացու հեղինակային դարձվածքների մեջ կարող ենք տեսնել խորհրդանշական բովանդակություն: Ըստ որում՝ առանձին բառերն իրենք ունեն որոշակի խուրհուրդ: Ա. Ղազինյանը, բարձր գնահատելով Նարեկացու պատկերաստեղծման և բառակերտման արվեստը, նշում է երկու բառերի և բառակապակցությունների խորհրդանշական իմաստով գործածությունների ոճական արժեքի մասին՝ վկայելով հետևյալ օրինակները. «Ողբամ **զորովայնն**, որ երկնացն զիս» և «Ընդ **խաչեցելոյն** ընդ քեզ պաղատիմ» (բան ԻԲ, ա) **որովայնը** խորհրդանշում է մորը, **խաչեցեալ**-ը՝ Քրիստոսին: Սրանք **փոխանունություններ են:** Հավելենք՝ «Մի՛ անարգեր **զալիսն**» (էջ 596), «Մի՛ անարգիր ծերությունս». փոխանունն է **զալիսն**՝ «ճերմակած մազեր» իմաստով[88]:

Սրանք այլասույթներ են, որոնք վկայում են այն մասին, որ հեղինակը ոչ միայն բառակապակցություններով է շրջասույթներ գործածում, այլև բառը նրա համար ևս որոշակի խորհուրդ ունի: Նարեկագիտությունը բառի արժևորումը «Նարեկ»-ում տարբեր դիտակետերում գնահատել և արժևորել է տեղին և ամբողջապես, մենք բառը արժևորում ենք իբրև ԴՄ-ի բաղադրիչ. իբրև այդպիսին ևս անփոխարինելի է նրա տեղը պոեմում: Դիտենք **որովայն** բաղադրիչով ԴՄ-ները:

[88] Այս օրինակները առանձնացրել է **Ա. Ղազինյանը**, տե՛ս նշվ. աշխ., էջ 187:

**Արգանդ, որովայն** բաղադրիչներով հեղինակն գործածել է հետևյալ դարձվածքները. ԳԲ-ում **արգանդ** բառի փոխաբերական իմաստ է նշվում *«որևէ բան ծնող, առաջ բերող երևույթ»* (ԳԲԱ, էջ 203): Այս միավորները հեղինակային են:

«Եւ զի դաւղեալ ծածկեցաւ անմահն խսկութիւն **յորովայնի** երկրում» (էջ 358):

Թարգմ.՝ «Եվ որովհետև իսկությունն անմահ քաշվելով ծածկվեց երկրի **արգանդում**» (էջ 161):

«Մի՛ տացես ինձ **արգանդ** սրտի անորդի իբր Իսրայելի» (էջ 251):

**Երկնային կյանքը** խորհրդանշում են հետևյալ ԴՄ-ները.

1. **այգի աշխարհի** – «Յայգի աշխարհիս արմատացելոյ …

…Սոքա բարեխաւսք, հանդերձիչք, այլ եւ խնամակալք (էջ 574)

թարգմ.՝ «Բարեխոսներ են սրանք, հոգածու և խնամակալ՝

**Աշխարհի այգում**՝ արմատավորված» (էջ 465):

2. **Աշխարհի ծով** «Առանց զգուանաց ծանրաբեռնութեան

Ի լայնածաւալ ծփանաց **աշխարհիս ծովու**…» (էջ 578):

Նրանք բաղադրվում են **աշխարհ** բառին՝ **այգի աշխարհի, աշխարհի ծով:**

Հեղինակը **բաժակ-ըմպանակ** բաղադրիչներով ևս ԴՄ-ներ է գործածում.

1. **բաժակ դառնութեան**՝ դառնության բաժակ. «Մի՛ մատուցաներ **բաժակ դառնութեան** ի ժամ ծարաւու» (էջ 580):

2. **Բաժակ երկնաւոր**. «Ծաղկեցուցէ՛ պտղաբերեսցէ՛

Բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ

Զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ…» (էջ 640):

3. **Բաժակ բարկութեան.** «Զուշին պարտութիւն յանվքարելեացն **բաժակ բարկութեան** ի ձեռն առի» (էջ 346):

Արդի հայերենում գործածական է **համբերության բաժակ** դարձվածքը:

Ինքնաքննորոշման համար գործածել է հետևյալ դարձվածքը՝ «Զարտաքնայարդար բաժակս անմաքուր» (էջ 350), որը նաև օքսիմորոնի լավագույն օրինակ է: Օքսիմորոնի հետաքրքիր այլ օրինակ-

ներ էլ կան «Մատյան ողբերգության»պոեմում, որտեղ Նարեկացին իր մասին ասում է. «Ջրռեալ որմս զարշունակ» (էջ 350) – *ծեփված և ներկված որմ, որը զարշունակ է*:

**Թեւք** բաղադրիչով գործածված են հետևյալ ԴՄ-ները.

1.**ամբարձմանն թեւք**. «Մի՛ **ամբարձմանն թեւք** փետտեալ» (էջ 596),

2. **թեւք մտաց.** «Եւ քանզի իբր անհաս, ոչ ըմբռնական այս մեծ զաւրութիւն,

արագ սլացմամբ **ի թեւս թեթեւս մտաց** պայմանի,

անդ քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեւման» (էջ 635):

«**Զմտացս** արագեալ **զթեւս** յերեւոյթ իրին ոչ հասի» (էջ 346),

3. **թեւք օգնութեան.** «Ոչ անպատսպար մնալ ի **թեւոց** քոց **աւգնութենէ** եւ ոչ զէացեալն ի մեզ աւծութիւն անմաքրապէս ի բաց մերկանալ» (էջ 636),

4. **թեւք ոգւոյ.** «Եւ վասն զի սլացեալ **ոգւոյս թեւաւք**

Ի թիւս անբաւից ծննդոց մարդկան» (էջ 463):

**Թև** բաղադրիչով է նաև «Աւժանդակեա՛ **թեւոցդ աղաւթիւք**» (էջ 571) կապակցության մեջ գործածված ԴՄ-ն:

Դարձվածքների և դարձվածային արտահայտությունների համար հեղինակը հաճախ է գործածում կենդանիների անուններ: Հեղինակը սրանով խոսքը ավելի տպավորիչ է դարձնում. արդեն նշել ենք, որ դավանաբանական գրականության մեջ **գառը** խորհրդանշում է Քրիստոսին՝ իբրև անմեղության և բարության խորհրդանիշ, իսկ ոչխարը՝ մարդուն, հավատացյալին: Մեղքը գիտակցող Նարեկացու գնահատմամբ ո՞վ է ինքը.

«**Աղու աղաւնիս** միշտ յիմարութեամբ, այլ ոչ հանդարտութեամբ» (էջ 250),

«Ի կորեանց առիւծուց անձնական **աւձս եղեռնային**» (էջ 250),

«**Կերպս ձուոց** քարբից՝ լցեալ ժանտութեամբ» (էջ 250):

Նրանցով ձևավորված դարձվածային արտահայտությունները հեղինակային են և ունեն խոսքային առկայացում:

«Եթէ իցէ՞ երբէք նկատել զգազանաբեկ **հերքելի ոչխարս վերստին** կամաց զթութեան քո հաւտ» (էջ 342):

**Հերքելի ոչխարը** մեղքերից մոլորված մարդն է: Հաճախ կենդանիների հակադրմամբ հեղինակը ստեղծում է որոշակի խոսքային տիրույթ, որը դառնում է տպավորիչ հակադրվող կենդանիների անուններով.

«Յորս է տեսանել ի մէջ արջնատես ազռաւուց` սպիտականիշ երամս աղաւնեաց,

Ի մէջ խրոխտականաց ձիուց անմաքրից` որոջս հանդարտաբարս,

Ի թիւս շանց գազանականաց` գառինս նուիրելիս,

Հեզութիւն` ի խստութեան, կատարելութիւն` ի թերութեան» (էջ 372):

Սրանցից ամեն մեկը մի ասույթ է, որոնց ամբողջությունը իբրև մեծ փոխաբերույթ ձևավորվում է տվյալ գլխում կամ հատվածում:

Կենդանիների անուններով ասույթներում հակադրվող կենդանիները մեղսակիր մարդու բնորոշումներն են տալիս մի կողմից և մոլորված հավատացյալին ու անարատ, մաքուր Աստծուն մյուս կողմից: Մետաղների անվանումներով ասույթներում հակադրվում են պղինձը, երկաթը մի կողմից և ոսկին մյուս կողմից: Նարեկացին գործածում է ասույթ-փոխանունություններ մարմնի մասերի գործառույթով, օրինակ` աջը` Քրիստոսի, մատը, ոտքը կամ որովայնը իբրև խորհրդանիշը Աստվածամոր, խաչվածը` խորհրդանիշը Քրիստոսի, ալիքները` ճերմակած մազեր իմաստով` իբրև իմաստնության և կենսափորձի հարստության խորհրդանիշ են: Սրանք հեղինակային միավորներ են:

Մետաղների և կենդանիների անուններով դարձվածային արտահայտությունները ևս հեղինակային են և ունեն խոսքային առկայացում: Դիտարկենք բնագրային օրինակներ:

Բ գլխի Բ ենթագլխում ունի հետևյալ փոխաբերույթները.

«Պարգևեա՛, բարերար, զառակն Եսայեայ լուսաւորել առ ճշմարտութիւնն,

Մատուցանելով մահու արժանոյս,

**Ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի` ինձ ոսկի շնորհի.**

**Ընդ անզարդութեան` երկաթոյս սևութեան գունոյս`**

**Պղինձ պճնելի՝ ցոյցի առաքինութեան, հրաշեկ Լիբանանու**» (էջ 251):

«Եւ ես ընդ նուսին՝ իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու,
Կամ տատասկ՝ ընդ ողորկութեան,
Տգեղութիւն՝ ընդ վայելչութեան,
Տիղմ՝ ընդ գեղեցկութեան մարգարտի,
Եւ հող՝ ընդ **յստակութեան ոսկւոյ**
Եւ կամ քարինս անարգս՝ ընդ պայծառութեան **արծաթոյ.**
Եւ կամ աւազ ինչ ատամնառու՝ ընդ կակղութեան զարգուածոյ հացի,- …
Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան
Ընդ նախագրեցեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն…» (էջ 578):

«**Թարախ մթերից, պատեալ, զերկաթով,** գաղտնեացս ծածուկք
Ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս
Ընդ ելս շնչոյս տուրեւառութեան
Յորոց նեղութեանց չարաչար ճնշեալ աղաղակ ձայնիս
Խառնեալ արտասուաւք կողկողագին թախծանաւք հոգւոյ» (էջ 334) կամ.

«…Անդրանիկ, ըստ սաղմոսողին բան զամենայն թագաւոր երկրի, անապական խառնութեամբ կերպացեալ զմերս ի մարմնի, ըստ աւրինի եւ կամ յայտնապէս իսկ ասել. լուսոյ՝ ընդ աւդոյ, ոչ փոփոխեալ եւ ոչ անջատեալ» (էջ 387):

Կամ՝ «Ձերծ ի շղթայիցս, փրկեա՛ ի խեղդմանէս,
Ազատեա՛ ի տագնապէս, քակտեա՛ **ի յերկաթիցս**» (էջ 383):
(Թարգմ.՝ «Արձակի՛ր բոլոր կապանքներն իմ այս
Այս շղթաները պրկող՝ կտրատի՛ր,
Թրկի՛ր խեղդվելուց, վերջ տո՛ւր տագնապիս,
Քանդի՛ր կապկպող երկաթներն այս ողջ» (էջ 488):
«Գաղտնի ծածկապես ներսս մթերված՝
Երկաթը պատող թարախը անվերջ տանջում է ինձ» (թարգմ.՝ 127)):

Մեկ այլ օրինակում ունենք.

«Որ ինճէն իսկ զիս՝ **ոսկեղէն տախտակս** խաւսուն՝ նուիրեալ քումդ պատգամի զգրեալս մատամբդ աստուծոյ» (էջ 389):

Հիսուսը իր պատգամը ոսկե տախտակի վրա է թողել: Նշենք, որ սրանք Նարեկացու լեզվամտածողության հիմքում ընկած կարևոր բաղադրիչներն են:

Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները ինքնաբուխ են: Թե՛ հեղինակային, թե՛ ընդհանրական գործածություն գտած ԴՄ-ները կարևորվում են հեղինակի յուրաքանչյուր մտքի ձևակերպման համար: Գերակշռող են նաև «պոտենցիալ ԴՄ-ները», որոնք տվյալ խոսքային կառույցում են հանդես գալիս, բայց նրանք իմաստային ընդհանրացման հենքով կարող են հետագա ընդհանրացում գտնել. եթե անգամ չգտնեն, նրանք պատկերավորման հզոր ներուժի հատկանիշով են օժտված:

Ասույթների, որոնցից յուրաքանչյուրը հիրավի դարձվածային արտահայտության լավագույն օրինակ է, գիտական ճշգրիտ գնահատականը տալիս է Մ. Աբեղյանը. «… Մինչդեռ Գրիգոր Նարեկացու բանահարուստ «Ողբերգութեան» մեջ ասուածներն ընդարձակուելով ծաւալում են, անցնելով մի շարք համեմատաբար աւելի երկար տողերի մեջ, մինչեւ որ մտքի մի զորեղ հատուածով միանալով մի ամբողջութիւն են կազմում»[89]: Նարեկացու բառը, կապակցությունը, ապա նախադասությունը, խոսքային ավելի մեծ միավորները, դարձույթների հրաշալի և նարեկյան տաղանդով ու լեզվագիտության կառուցողական արվեստով ու գիտությամբ կառուցված լինելով, դարձել են անկրկնելի այն խաչքարի կերտվածքը, որը հայկական է իր արվեստով, խաչքարի կերտման եզակիությամբ ու անկրկնելիությամբ, համամարդկային՝ իր բովանդակությամբ: Այս մասին գրում է ինքը՝ հեղինակը՝ լավագույնս գիտակցելով իր առաքելությունը.

«Պատմեսցի՛ ի յականջս ազգաց
Եւ նորոգեսցի՛ ի լուր ժողովրդոց,
Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

---

[89] **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Պէյրութ, 1955, էջ 589:

Եւ տպաւորեսցի ի սեամս զգայութեանց» (էջ 599):

Հիրավի «Մատեանը» մի եզակի խաչքար է, որի յուրաքանչյուր բաղադրիչ անփոխարինելի է իր բովանդակությամբ և ձևով, խոհափիլիսոփայական, կենսական ընդհանրացման հզոր ներուժով, քրիստոնեական վարդապետության քաջիմացությամբ և գեղարվեստորեն անկրկնելի հմայքով ու գիտականորեն հիմնավոր մատուցմամբ: Մեր ուսումնասիրությունը ի ցույց դրեց նաև շարահյուսական կառույցի կարևոր արժեքը դարձվածային արտահայտությունների և խոսքային ավելի մեծ հատվածների՝ իբրև փոխաբերույթների (իմա՛ մեծածավալ ընդգրկում ունեցող կենսափիլիսոփայական, մարդագիտական կամ աստվածաբանական վերլուծաբանական հատվածներ, որոնց հիմքում ընկած է փոխաբերական իմաստի հենքով կառուցված այլասույթը): Սա արձանագրում է Նարեկացու՝ իբրև շարահյուսագետի և ոճաբանի տաղանդը, որը ընկած է նրա լեզվամտածողության հիմքում: «Մատեան ողբերգութեան» պոեմի 35 գլուխներից հանված 250 դարձվածքից 190-ը հեղինակային են:

## 7.2. Դարձվածային արտահայտությունները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում

*«Ես եմ պարզամաւոր աղաւթանուէր ամենայն աշխարհի»:*
*Գ. Նարեկացի*

Նարեկացիագիտությունը, ի խոնարհումն Գ. Նարեկացու, տարածական և ժամանակային առումով սահմանափակում չունեցող «Մատեան ողբերգութեան» պոեմի, հայտնի է գիտական խորաքնին վերլուծության բարձրարժեք ուսումնասիրություններով, որոնցում տրված են պոեմի գրական-գեղարվեստական գնահատականը, լեզվի բազմակողմանի հատկանիշների արժևորումը ձևաբանական, շարահյուսական, ոճական մակարդակներում: Բառաստեղծման Նարեկացու աստվածատուր օժտվածությունը առանձնանում է նրա կերտած մեծածավալ բառերով, որոնք նույնպես գիտական բազմակողմանի քննությամբ տեղ են գտել հայտնի գիտնականների աշխատություններում: Լեզվաոճական բազմաթիվ գնահատականներում հիշատակվում է այն փաստը, որ պոեմը հարուստ է դարձվածքներով և դարձվածային արտահայտություններով, որոնց մեծ մասը դիպվածային է, հեղինակային, սակայն նրանց առանձին քննություն առ այսօր կատարված չէ: Դասական գրաբարի դարձվածքների՝ մեր կողմից կատարված քննությունը հաստատում է մի կարևոր հանգամանք. գրաբարի դարձվածքները ոճական բարձրարժեք միավորներ են, որոնք իրենց լեզվակառուցվածքային, ոճագործառական առանձնակի նկարագիրն են ստանում ցանկացած մատենագրի երկում, ավելին՝ միևնույն հեղինակի տարբեր երկերում:

Գ. Նարեկացու երկում դարձվածքների և դարձվածային արտահայտությունների արժևորման դժվարությունն ունի այն հիմքը, որ դրանք մանվածապատ են ոճական մյուս միավորներին, որոնց ամբողջությունը դառնում է Նարեկացու տվյալ մտքի և խոհի արտահայտման չկրկնվող կերտվածք: Պոեմը փոխաբերույթների և այլաբանույթների մի ամբողջություն է կազմում, և ուսումնասիրողի առաջ

դրվում է նրանց մեջ դարձվածքների և դարձվածային արտահայտությունների առանձնացման խնդիրը. մասնավորապես սա վերաբերում է հեղինակային դիպվածային միավորներին, որոնք տիրապետող են երկում: Դրանցից յուրաքանչյուրը կառուցվածքային չկրկնվող ամբողջություն է կազմում:

Դարձվածքը պատկերավոր խոսքի կառուցման կարևորագույն բաղադրիչ է, որին բնորոշ է վերաիմաստավորումը: Լինելով կայուն կապակցություն՝ այն ունի բաղադրիչների ամրակայված դրսևորում, օրինակ՝ *գողանալ զմիտս* և *կուրացուցանել զմիտս*: Շարադասությունը տվյալ կառույցում գերազանցապես ազատ է, օրինակ՝ *դարձուցանել յուղղութիւն* և *յուղղութիւն դարձուցանել*: Այս մասով լեզվաբանները համակարծիք են, տարակարծիք են դարձվածքի ըմբռնման դիտակետում. մի մասի համար կայուն կապակցության առնվազն մեկ բաղադրիչի՝ փոխաբերական իմաստով գործածությունը դեռևս դարձվածքի արժևորման հիմք չէ (օրինակ՝ *առաջնորդ ճանապարհի, դեղ կենաց, վտակ Աստուծոյ, դուռն ողորմութեան* են), քանի որ չունենք իմաստային ամբողջական փոփոխություն՝ վերաիմաստավորում: Նման միավորները Պ. Բեդիրյանը համարում է բաղադրյալ անուններ, քանի որ նրանցում «իմաստային տեսանկյունից բնորոշ է վերաիմաստավորման բացակայությունը»[90]:

Մեր մոտեցմամբ կայուն կապակցության առնվազն մեկ բաղադրիչի փոխաբերական իմաստով գործածությունը թույլ է տալիս այն դարձվածք անվանել: Դարձվածքները որոշակի լեզվամտածողության արգասիք են և իրենց հիմքերն ունեն ժողովրդական մտքի գանձարանում: Ոճաբանության մեջ դարձվածքի արժևորման հիմնակետը համարվում է բառը[91]: Չնի սեղմությունը խորիմաստ է դառնում բառի, որը տվյալ դարձվածքի հիմնաբառն է՝ ճշգրիտ գործառույթով:

Մենք հետևում ենք լեզվաբանների այն մոտեցմանը, որ ժողովրդական բանահյուսության այնպիսի միավորներ, ինչպիսիք են առածներն ու ասացվածքները, կենսափիլիսոփայական ընդհանրա-

---

[90] **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 27-28, 39:
[91] **Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 193:

ցումները, թևավոր խոսքերը, համարվում են **դարձվածային արտահայտություններ**: Դրանց հիմքում ընկած է ընդհանրացված միտք, կա փոխաբերական իմաստ, և դրանք ունեն կենսական ուժ: Օրինակներ՝

«Զվիրաւորեալսն ի մարմին յոգի բժշկել» (էջ 464),

«Ի խնդիր սակաւուն՝ ի կարեւորացն զրկեցայ» (էջ 466),

«Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ» (էջ 461),

«Մտեմ ի բոյնն աղաւնի եւ անդուստ ագռաւ ելանեմ» (էջ 529):

Բառի արժևորումը Նարեկացու լեզվամտածողության և խոսքակառուցման առանցքային հիմնաքարն է: Բառը պտեմում կերտվում է խաչքարի կառուցման նրբարվեստով, երբ յուրաքանչյուր բաղադրիչ անփոխարինելի է ձևի և բովանդակության ամբողջության մեջ: Այն եզակի է իր բովանդակության խորությամբ, անփոխարինելի՝ լեզվական տվյալ կառույցում: Բառաստեղծման արվեստը հնարավորություն է տվել հեղինակին արարելու բազմաթիվ դարձվածքների և դարձվածային արտահայտություններ, որոնք պտեմում գնահատելի են դառնում տվյալ գլխում կամ ենթագլխում, այսինքն՝ նրանք գերազանցապես ունեն խոսքային առկայացում, և նրանց գործածությունը պայմանավորված է տվյալ բովանդակությամբ: Պտեմում ակնհայտ է դիպվածային, հեղինակային դարձվածային միավորների և դարձվածային արտահայտությունների գերազանցությունը գրաբար մատենագրության մեջ արդեն ընդհանուր գործառույթ գտած ԴՄ-ների համեմատությամբ:

Հետևաբար կարևոր է նորակերտ ԴՄ-ների և դարձվածային արտահայտությունների գնահատման համար առանձնացնել նրանց իբրև այդպիսին հիմնավորող սկզբունքները: Դրանք են՝

ա) տվյալ կառույցը ունի փոխաբերական իմաստ, որը և ընկած է նրա վերաիմաստավորման հիմքում,

բ) այն կայուն է իբրև քերականական միավոր՝ իր բաղադրիչների կառուցման դիտակետում,

գ) այն գործածվում է տվյալ խոսքային տիրույթի հիմնիմաստի արտահայտման համար և ուղղված է խոսքը առավելապես ներազդու դարձնելուն:

Նարեկացու պոեմում[92] դարձվածքները և հատկապես դարձվածային արտահայտությունները բնորոշվում են ոչ միայն իմաստային ինքնատիպությամբ, այլև կառուցվածքով:

Հեղինակային յուրաքանչյուր դարձվածք և դարձվածային արտահայտություն տվյալ գլխում կամ ենթագլխում դառնում է տվյալ բովանդակության արտահայտման անփոխարինելի բաղադրիչ: Այսպես՝ **Լ** գլխի **Գ** ենթագլուխը, որը մարդկային էության արտահայտման եզակի գլուխգործոց է, կառուցված է հակադրման սկզբունքով, ինչը պոեմի կառուցվածքային գլխավոր հատկանիշներից մեկն է: Այն քերականական համակարգված կառույց է, որի յուրաքանչյուր բաղադրիչի ճշգրիտ ընտրությունը խոսում է Նարեկացու՝ ոչ միայն իբրև գրաբարագետի, այլև ընդհանրապես տաղանդավոր լեզվագետի բնատուր օժտվածության մասին: Նշված հատվածում հակադրությունները իմաստային լրացումն են փոխաբերույթի[93] հիմնաբառի, իսկ փոխաբերություններից յուրաքանչյուրը բարդ համադասական նախադասություն է. առաջին նախադասության մեջ հիմնաբառն է, հաջորդիվ հակադրությունն արտահայտող երկու համադաս կառույցներն են, որոնք նախորդ նախադասության հիմնաբառի հատկանիշներն են արտահայտում:

Դրանք են.

1. «Ըմպանակք երկու յերկուսին ձեռին.
Մինն՝ արեամբ, եւ միւսն կաթամբ» (էջ 365):
2. «Երկու բուրանոցք կայծակնաւորք,
Մինն՝ խնկով, եւ միւսն՝ ճենճերիւ» (էջ 365):
3. «Սկաւառակք կրկին կրաւորականք համց,
Մինն՝ քաղցու, եւ միւսն՝ դառնութեամբ» (էջ 365):
4. «Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,
Մինն՝ արտաւսր, եւ միւսն՝ ծծումբ» (էջ 365):
5. «Տաշտք կրեցեալք ի ծայրս մատանց,

---

[92] Բնագրային օրինակները տե՛ս **Գ. Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., 1980:
[93] *Փոխաբերույթ* եզրույթի մեջ ընդգրկում ենք փոխաբերական իմաստով խոսքային մեծ հատվածները, որոնք կարող են ներառել նաև փոխաբերություններ, որոնք դարձվածային փոքրածավալ արտահայտություններ են:

Մինն՝ գինի, եւ միւսն՝ լեղի» (էջ 365):

6. «Դրունք՝ տեսանելեաց ներհակաց,
Մինն՝ ի բաց, եւ միւսն՝ ի փրիպումն» (էջ 365):

7. «Խանութք հալոցականաց հակառակութեանց,
Մինն՝ արծարծէ, եւ միւսն շիջուցանէ» (էջ 365):

8. «Ամպ լրթագոյն, ահագնատեսիլ, կրկին տեղացմանց,
Մինն՝ նետս, ու միւսն՝ քարինս» (էջ 366):

9. «Որոտումն ահեղ, երկոցունց բերմանց,
Արեգակունք երկու ի յերկուց ծայրից,
Մինն՝ խաւարի, եւ միւսն՝ կիզման» (էջ 366):

Հեղինակն այս նույն հատվածում ունի նաև ոչ փոխաբերական իմաստով կառույցներ, օրինակ՝

1. «Համբարձումն երկակի բազկաց,
Ոմն՝ ի հարուածս, եւ ոմն՝ ի մերժումն» (էջ 365):

2. «Դէմք կրկնակի կերպից,
Մինն՝ տխրեալ, եւ միւսն՝ ցասուցեալ» (էջ 365):

3. «Առաւատ սգոյ երկուց բողոքմանց,
Մինն՝ սաստից, եւ միւսն՝ սպառնալեաց» (էջ 366):

4. «Ցայգ ցաւագին երկուց վտանգից,
Մինն՝ լալոյ, եւ միւսն՝ մահու» (էջ 366):

Սա կենսափիլիսոփայության և մարդաճանաչման արդյունքում ձևավորված, մարդկային էությունն արտահայտող մի հրաշալի կերտվածք է: Մարդու էության երկդիմի բնույթը մարդուն դարձնում է «մեղքերի չմարվող պարտքեր» հավաքած մի պարտապան, որը դրանց գիտակցումով սարսափում է ու որոնում փրկության ելք՝ «**աշխարհի ծովում**» խորտակվող նավի բեկորներին կառչած մարդու փրկությունը, որը Աստծուն ապավինելն է: Քրիստոնեական վարդապետության առանցքային գաղափարափոխության հետևյալ ձևակերպումը՝

«Արդ, դու ստացար զամենեսեան, եւ քո են ամենեքեան,
Եւ ողորմիս ամենեցուն, միայն բարեգութ,
Զի թէ եւ մեղիցեն՝ քո են, վասն զի ի քում համարի են» (էջ 372), ընդհանրական ամենամեծ իմաստն է արտահայտում աստվածային

սիրո և ներման մասին: Այդ սիրո և ներման կարիքն ունի նաև ինքը՝ հեղինակը.

«Այո՛, այո՛, եւ ես մի եմ ի նոցանէ

Եւ զիս՛ ընկալ ընդ նոսին՝

Իբր մարդասիրութեան կարաւտեալ մեծի,

Զի յայսմ ամենայնի յամենայնի՝ ծանիցի քո աստուածութիւնդ» (էջ 384):

Սա է աստվածաբանական մտախոհության և մարդկային կենսափիլիսոփայության հիմնիմաստը՝ «Աստված յիս է և յամենայնի», ուստի մարդը միշտ աստվածային խոսքի ուժը պիտի կրի իր մեջ՝ իբրև **«զաւազան խրատու»:** Համամիտ ենք Ա. Ղազինյանի հետևյալ բնորոշմանը. «Մարդկային էութեան այդ երկուութիւնն ու երկուատուածութիւնը Նարեկացին տալիս է իր երեւակայութեանն ու գիտակցութեանը յատուկ համապարփակ ընդգրկմամբ… Ներհակ ուժերից ծնուած այդ ողբերգութիւնը ոչ միայն իրական է ու ճշմարիտ, այլեւ յաւիտենական է եւ համամարդկային»[94]:

Հատվածն ամբողջովին կարող ենք գնահատել իբրև առանձին դարձվածային արտահայտությունների հենքով կառուցված, կենսափիլիսոփայական ներուժով լեցուն մի ամբողջություն, որտեղ յուրաքանչյուր միավոր շարահյուսական ճշգրիտ կառույց է:

Հակադիր իմաստ արտահայտող նախադասությունները սկսվում են *մինն* և *միւսն* բառերով: Առկա է ստորոգյալի զեղչում, որը արդի դարձվածաբանության համար նույնպես բնորոշ իրողություն է: Այսպես՝ Խ. Բադիկյանը, իր «Դարձվածային ոճաբանություն» աշխատության մեջ ներկայացնելով արդի հայերենի դարձվածքների ոճական արժեքը, ունի կարևոր մի դիտարկում. «Ինչպես գեղարվեստական արձակում և չափածոյում, այնպես էլ դարձվածաբանական համակարգում լայն կիրառություն ունի բացթողման (էլիպսիս) ոճական հնարանքը… Թեև սակավաթիվ, բայց կան էլիպսային այնպիսի դարձվածային համադասական նախադասություններ, որոնցից ոչ մեկում էլ ստորոգյալ չկա. երկուսում էլ զեղչված են ստորոգյալը կամ

---

[94] **Ղազինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 138-139:

հանգույցը. օրինակ՝ «Ձենը՝ տակը, քարը՝ վրա»»[95]: Ոճական այս հնարանքը հաճախադեպ է Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում:

Մարդկային երկդիմի էության համար հեղինակը տագնապում է, բայց վստահում է, որ Աստված կբանա «**դուռն փրկութեան**» միայն մի դեպքում, եթե մարդն ունի դրա գիտակցումը: Մարդու փրկության բանաձևը Նարեկացին ձևակերպում է հստակ, հասկանալի և աներկբա.

*«Ձ'դարձարուքն առ իս, եւ ես դառնամ առ ձեզ,*

*Եւ յորժամ դարձցիս եւ հառաչեսցես, յայնժամ կեցցես»* (էջ 452):

Աստված *կենաց դեղը* տալիս է դրա կարիքը ունեցող յուրաքանչյուրին, ով հավատում է, որ Աստված է *ճանապարհ կենաց*: Ուստի՝

«Զի եթէ փոքու սերմանի գոյի՝

Հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք,

Զլերանց մեծութիւն փոխէ զաւրեղապէս ի սիրտս ծովու,

Ապա յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝

Աներկմիտ պաշտպան առ Աստուած» (էջ 283):

Պոեմի փոխաբերություններից յուրաքանչյուրն ունի խորքային մեծ իմաստ, որը կօգնի մարդուն հասկանալ իրեն, աշխարհը, Աստծուն և կառուցել իր կեցության (ըստ որում՝ կեցութեան մարմնոյ, կեցութեան մտաց, կեցութեան հոգւոյ) արժեքների համակարգը. այդ արժեքների փիլիսոփայական և աստվածաբանական ձևակերպումները գտնում ենք «Նարեկի» դարձվածային արտահայտություններում:

Դիմելով տիրոջը՝ **ԻԹ** գլխում հեղինակը կրկին ստանում է ամբողջական մի շարահյուսական կառույց, որի յուրաքանչյուր բաղադրիչ իր տեղում է.

«Բժիշկ՝ ախտացելոյս,

Հովիւ՝ **մոլորեալ ոչխարիս,**

**Սպեղանեաց դեղ**՝ վիրաւորեցելոյս,

**…Աւժանդակ վեհ**՝ գայթակղեցելոյս,

**Դուռն բարձրութեան**՝ տարակուսելոյս» (էջ 359),

---

[95] **Բաղիկյան Խ.**, նշվ. աշխ., էջ 35:

«**Սանդուղք երանութեան**՝ եղկելոյ,
**Ճանապարհ շաւղաց**՝ մոլորելոյ,
**Չեռնկալ կենաց**՝ հերքելոյ» (էջ 360):

Նշված ԴՄ-ները Աստծուն բնորոշող կապակցություններ են. **մոլորյալ ոչխարը** խորհրդանշում է մարդուն, *«որ է մոլորեալ ի ծովու մեղաց»*:

**ԻԹ** գլխի **Գ** ենթագլխին արդեն շարահյուսական մեկ այլ կառույց է. հռետորական հարցում արտահայտող միավորները սկսվում են **ով որ**-ով, յուրաքանչյուր նախադասություն փոխաբերական իմաստով կառույց է, որ արտահայտում է ինքնաճանաչման եկած մարդու հոգեկան վիճակը: Նախադասություններից յուրաքանչյուրն առավելագույնս **սաստկացման երանգ** ունի, որը արտահայտում է մարդու ապաշավելու անխուսափելիությունը:

Խ. Բադիկյանը արդի հայերենի դարձվածքների ոճական գնահատականը տալիս ճիշտ է նկատում այն փաստը, որ դարձվածքի կերտումը կենդանի իրողություն է, սրանք նա անվանում է «պոտենցիալ դարձվածային միավորներ»[96]: Հավելենք այն փաստը, որ հեղինակային շատ դարձվածքներ և դարձվածային արտահայտություններ, ունենալով խոսքային առկայացում, բնորոշ են տվյալ բովանդակությանը, սակայն դրանք դարձվածքներ և դարձվածային արտահայտություններ պիտի համարել **կենսափիլիսոփայական ընդհանրացման ներուժի հիմնավորմամբ,** իսկ այդպիսիք պոեմում շատ են: Հաճախ դրանք հանդիպում են ողջ գլխի կամ ենթագլխի շարադրանքում՝ համարժեք նրա բովանդակությանը: Վերոնշյալ հատվածից առանձնացրել ենք հետևյալ արտահայտությունները, որոնցից ամեն մեկը տեղայնացված դարձվածային արտահայտություն է՝ ընդհանրական մեկ իմաստով՝ մեղքերի ծանրության ինքնագիտակցման եկած մարդու հոգեվիճակի ճշգրիտ արտացոլում.

«Ո՞վ որ մերկացեալ յաւուրս ձմերայնոց՝ եւ ոչ զովացաւ,
Ո՞վ որ անաւրինացաւ եւ **ոչ քարամբք զմիտս կոծեաց**,

[96] Տե՛ս **Խ. Բադիկյան**, նշվ. աշխ., էջ 121-128:

Ո՞վ որ ետես զտրուկն յիրում մեծութեան եւ ոչ զկծեցաւ» (էջ 361):

«Ո՞վ որ ընդ մեղացն հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեալ» (էջ 361):

«Ո՞վ որ ընդ պսակին պերճութեան հող ի գլուխ եղեալ՝ եւ ոչ կրկին չարչարեալ յոգի մահացաւ» (էջ 362):

«Ո՞վ որ ընդ պայծառ պատմուճանին քրձազգած եղեալ՝ եւ ոչ տխրեցաւ» (էջ 362):

«Ո՞վ որ զկեանս իւր կորոյս եւ **ոչ արեան արտասուս երկնեաց**» (էջ 361-362):

Փոխաբերական իմաստ արտահայտող յուրաքանչյուր նախադասության մեջ արտահայտվում է բովանդակության ներքին հակադրությունը: Նրանցում կան առանձին դարձվածային միավորներ ևս.

- **քարամբ զմիտս կոծել** – քարկոծել միտքը,
- **արեան արտասուս երկնել** – արյան արտասուք թափել:

Հեղինակը վերստին ունի այն համոզմունքը, որ Աստված, որ է «քաւիչ մեղաց», փրկության այն դուռն է, որին պիտի ապավինել «կարող յամենայնի առ ամենայն փրկութիւն: Եթե զանդունդս առ երկինս փոխես... **Եթէ զդառնութիւն լեղոյի մանանայի քաղցրութիւն կազմես...**» (էջ 363):

Հեղինակն ունի դարձվածային արտահայտություններ կենդանիների անունների գործառույթով, օրինակ՝ **ԼԱ** գլխի **Դ** ենթագլխում հակադրության սկզբունքը պահելով՝ նա գրում է.

«Յորս է տեսանել ի մէջ արջնատես ազռաւուց՝ սպիտականիշ երամս աղաւնեաց:

Ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս,

Ի թիւս շանց գազանականաց՝գառինս նուիրելիս» (էջ 372):

Պահպանելով շարահյուսական կառույցի կաղապարը՝ հեղինակը միտքը շարունակում է ոչ փոխաբերական իմաստով արտահայտություններով.

«Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան...

Բարաւրութիւն՝ ի չարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան» (էջ 372) են:

Եվ ցանկացած խնդրանքի կամ երկմտության ու հոգեկան ցավի նկարագրին հաջորդում է քրիստոնեական վարդապետության հիմնիմաստը: Իբրև սատար՝ Աստված պարզելու է իր հզոր բազուկը.

«Առ փախուցելոյս ապաւինութիւն՝ ոտք քո,

Առ սրացելոյս պատսպարութիւն՝ բազուկ քո...

Առ վշտագնելոյս մխիթարութիւն՝ բաժակ քո,

Առ նեղելոյս ընդարձակութիւն՝ կամք քո» (էջ 367):

«Առ պակուցելոյս պաշտպանութիւն՝ ոգի քո» (էջ 367):

Հատվածը կառուցված է փոխանունության կիրառմամբ: Նրանում կան նաև ԴՄ-ներ, օրինակ՝ **ծածկեալ խաւարաւ մահս** – *մահվան դարպասպարփված*, **նեղեալ ընդարձակութիւն** – *կամազուրկ, թուլակամ*: Յուրաքանչյուր հատված առանձնացվում է իբրև շարահյուսական որոշակի կառույցով կազմված միավոր, օրինակ՝ վերոհիշյալ **Լ** գլխի **Ե** ենթագլուխը կազմված է հետևյալ կաղապարով. հանգման խնդիր, որ սկսվում է *առ* + զեղչված ստորոգյալ՝ *փուր, մեկնիր, պարզիր* և այլ իմաստներով բայեր, որ կառույցում չեն երևում կամ մասամբ են կիրառվում, բայց ենթադրվում է (վերստին էլիպսիսի հետաքրքիր օրինակ է) + ուղիղ խնդիր:

Ոճական տարբեր միավորներով են կառուցված պոեմի գլուխներն ու ենթագլուխները, օրինակ՝ նախդիրների և լեզվական այլ միավորների կուտակումներ տողերի սկզբում, շրջասույթների և հակադրությունների (օքսիմորոն) լավագույն օրինակներ, հեղինակային և արդեն տարածում գտած թևավոր խոսքերի, առածների գործածություններ: Կարևոր ենք համարում նշել, որ.

1. դրանք ինքնաբուխ են և ծնվում են հենց տվյալ խոսքի կառուցման պահին,

2. տվյալ հատվածում այդ միավորները առանձնացվում են իբրև հեղինակային դարձվածային արտահայտություններ,

3. դրանց միջոցով կերտվում է տվյալ հատվածը՝ հաճախ ինքն էլ դառնալով տվյալ բովանդակության արտահայտման փոխաբերույթ՝ փոխաբերական իմաստով մի ամբողջություն:

Նրանցում կա ընդհանուրի և մասնավորի ներդաշնակ կերտվածք, որի համար առանձնացող բազմաթիվ հատվածներից ներկայացնենք **ԻՁ** գլուխը՝ նախապես նշելով մի կարևոր իրողություն. կարծում ենք, որ սրանք պոտենցիալ դարձվածային արտահայտություններ են[97], որոնք դիպվածային են, հեղինակային ու եթե անգամ հետագայում գործառական ընդհանրացում չեն գտել, ապա այդ կենսափիլիսոփայական ներուժը ունեն հենց այս պոեմում: «...Նրա խոհերի և զգացմունքների լեզվական արտահայտության ոճավորման հիմնական տարրը հանդիսանում են ասացվածքները, թևավոր խոսքերը... ամեն մի տողը միաժամանակ մի գեղեցիկ ամբողջական իմաստ արտահայտող ասացվածք է՝ նույնիսկ ժողովրդական ոգով հորինված»[98],– գրում է Մ. Մկրյանը:

Մենք այդ բոլոր միավորները արժևորում ենք իբրև **դարձվածային արտահայտություններ**:

Նարեկացին հրաշալի տիրապետում է բանահյուսական ժանրի ստեղծագործությունների առանձնահատկություններին. այս մասին նա ակնհայտորեն խոսում է **ԻՁ** գլխում: Նա վկայում է, որ շատ հեղինակներ խոսքը հասանելի և տպավորիչ դարձնելու համար ընտրում են բանաստեղծության որոշակի չափ և նույնահանգ տողավարտներ, ինչը ասելիքը ավելի հասանելի է դարձնում: Ինքն էլ է որոշում հետևել այդ սկզբունքին.

«Ուստի եւ բազմեալ իմ ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանաց,

Որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն,

Եւ ես ընդ նոսին նոցին հեծութեամբ, աւաղական ձայնարձակութեամբ

Զանձինս տարածանեմ զվշտակրութիւն» (էջ 344):

*Պար, ակումբ, դաս, երախան* բառերի իմաստների շարքում «Գրաբարի բառարանում» նշվում է *«խումբ»* իմաստը: Թարգմ.՝ «Անցած այն մարդկանց **խմբի գլուխ**, որ ընտրել են բանաստեղծու-

---

[97] **Բադիկյան Խ.**, նշվ. աշխ., էջ 121:

[98] **Մկրյան Մ.**, Հայ հին գրականության պատմություն, Եր., 1976, էջ 555:

թյան լալկանության բովանդակությունն ու միևնույն հանգավորում ունեցող ձևը»:

«Կարգաղրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի՝

Անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի» (էջ 345):

Այս առումով հետաքրքիր դիտարկում է կատարում Գ. Անանյանը՝ նշելով, որ Նարեկացին հստակ հիշատակում է ժողովրդական բանահյուսության **հրաշալի նմուշները՝ թվելյաց** երգերը. «Ուշադիր քննութիւնը ժողովրդական բանահիւսութեան հետ մեծ բանաստեղծի ստեղծագործութեան աղերսների նոր շերտեր եւ եզրեր կը յայտնաբերի՝ հաստատելով այն ճշմարտութիւնը, որ համամարդկային գաղափարները ազգային կեանքի նիւթով ու ձայներով են մարմնաւորում»[99]:

Ո՞րն է հեղինակի ցավը. մեղքերի տակ կքած՝ նա չունի փոխհատուցելու ոչինչ.

«Բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի,

Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբէք յարգի» (էջ 345):

Հեղինակը դարձվածային արտահայտություններում հաճախ է գործածում *արծաթ, երկաթ, պղինձ, ոսկի* բառերը: Բնագրային օրինակներ՝

«Ահա զոր ունիմ **արծաթ** անպիտան՝ ոչ երբէք յարգի

Եւ ո՛չ ընդունելի եւ կամ համարի ի գանձ տէրունի» (էջ 345):

«Պարգեւեա՛, բարերար, զառակն Եսայեայ լուսաւորել առ ճշմարտութիւնն

Մատուցանելով մահու արժանոյս

Ընդ **պղնձոյս գոյի** անարգս ձայնի՝ ինձ **ոսկի շնորհի**,

Ընդ անզարդութեան **երկաթոյս** սեւութեան գունոյս՝

**Պղինձ** պճնելի՝ ցոյցք առաքինութեան, հրաշեկ Լիբանանու» (էջ 251):

«Որ ինձէն իսկ զիս՝ **ոսկեղէն տախտակս խաւսուն**, նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամիդ աստուծոյ» (էջ 389):

---

[99] **Անանեան Գ.**, Նարեկացին եւ ժողովրդական բանահիւսութիւնը, Անթիլիաս-Լիբանան, Առանձնատիպ արտատպուած «Հասկ» Հայագիտական տարեգիրքի նոր շրջանի Զ տարի հատորէն, 1994, էջ 98:

«Անդրանիկ, ըստ սաղմոսողին քան զամենայն
Թագաւոր երկրի, անապական խառնութեամբ
կերպացեալ զմերս ի մարմնի,
ըստ աւրինի հոգւոյ՝ ընդ մարմնոյ,
եւ **ոսկւոյ՝ ընդ հրոյ,**
եւ կամ, յայտնապէս իսկ ասել,
լուսոյ՝ ընդ աւդոյ, ո՛չ փոփոխեալ եւ ո՛չ անջատեալ» (էջ 387):
«Ձե՛րծ ի շղթայիցս, փրկեա՛ ի խեղդմանէս,
Ազատեա՛ ի տագնապէս, քակտեա՛ **ի յերկաթիցս**» (էջ 583):
«Տիղմ՝ ընդ գեղեցկութեան մարգարտի,
**Եւ հող՝ յստակութեան ոսկւոյ,**
Եւ կամ քարինս անարգս՝ ընդ պայծառութեան **արծաթոյ**,
Կամ աւազ ինչ ատամնառու՝ ընդ կակղութեան զանգուածոյ հագի» (էջ 578):
«Թարախ մթերից՝ պատեալ **զերկաթով** գաղտնեացս ծածուկք
Ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս» (էջ 374):

Մարդը, երկնային արքայությունից ընծեռած գանձերը վատնելով, չունի փոխհատուցման ոչինչ: Այս գլուխը ներկայացնում է հոգու անասելի ցավը, որ և ֆիզիկական տառապանքի է վերածվում: «Սուր սուսերաւ սաստից գոյութիւն բնութեանս յաւշատի» (էջ 345): Ներսի այրումի համար կրակի հոմանիշ միավորների համատեղ գործառույթով պատկերը դառնում է տպավորիչ.

«Աներեւոյթ **կրակարան տապոյ** բորբոքմամբ մեծաւ անզովանալի,
Անտեսական իմն **քրայս հալոցաց** սաստիկ եռացմամբ անշիջանելի,
Անզաւրելի դեղոց ջերմութիւն ի յերիկամաց մասունս երկակի» (էջ 346):

**ԻԶ** գլխում գործածված դարձվածքներն են՝

1. **վիհ** բաղադրիչով՝ **վիհ կենաց, վիհ մեղաց.** բնագրային օրինակներ՝ «Յանակնկալս **կենաց վիհէ** արտաքերել ի լոյս անձկալի» (էջ 346):

«Անյայտնելի կործանեալ **ի մեղաց վիհ**» (էջ 345)։

«Անկեալ **ի վիհ** գարշութեան **մեղաց** անդնդականաց ապականութեանց» (էջ 355)։

2. **Բաժակ** բաղադրիչով. բնագրային օրինակներ՝

«Ծաղկեցուցէ՛, պտղաբերեսցէ՛

**Բաժակդ երկնաւոր** արեան կենարարիդ

Ձերկիրս խնամեալ աւուրն լուսոյ» (էջ 640)։

«**Զարտաքնայարդար բաժակս** անմաքուր» (էջ 350)։

«**Զուշին պարտութիւն** յանվքարելեացն բաժակ բարկութեան ի ձեռն առի

Զտարտամութիւն տարակուսանացս՝ իբրև **ճաշակումն մահու**, արբի» (էջ 346)։

«**Անձեռնկալ կապեալ**՝ եղկելիս ի տարակուսի» (էջ 345)։

«Իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ,

ի տապոյ անտի պապակեալ՝ կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ» (էջ 525),

(թարգմ.՝ Ինչպես մեծատամ խղճուկ առակն է ինձ ուսուցանում.

անզոր կլինի տապից պապակիս մի կաթիլ ջուր տալ անճարակությամբ)։

3. **Կտակ, աւանդ, գրաւ** բառերը հեղինակը հաճախ է գործածում իբրև ԴՄ-ի գլխավոր բաղադրիչ՝

«**Գրաւ ի սրտի**՝ գրավադրված սիրտ» (էջ 345)։

«Եւ արդ քանզի ի գլուխ կատարման հասեալ

Սակաւամասնեայ **կտակի** այսր ողբերգութեան

**Յաւանդ անկորուստ** ընդ իս պահելով» (էջ 343)։

4. **Թեւ** բաղադրիչով՝

**Թեւք ողւոյ.** «Եւ վասն զի սլացեալ **ոգւոյս թեւաւք**

Ի թիւս անբաւից ծննդոց մարդկան» (էջ 463)։

**Թևք մտաց**. «Զմտացս արագեալ զթեւս յերեւոյթ իրին ոչ հասի» (էջ 346)։

«Եւ քանզի իբր անհաս, ոչ ըմբռնական այս մեծ զաւրութիւն, արագ սլացմամբ **ի թեւս** թեթեւս **մտաց** պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեւման» (էջ 635)։

«Ոչ անպատսպար մնալ **ի թեւոց** քոց **աւգնութենէ** եւ ոչ զէա-ցեալն ի մեզ աւծութիւն անմաքրապէս ի բաց մերկանալ» (էջ 636):

5. **Ոգի** բաղադրիչով ունի ***շունչ ոգւոյ*** ԴՄ-ն.

«Եւ ***շունչ ոգւոյս*** իմ ընդ քեզ՝

Անբաժանաւորէն կապաւ միացեալ ի մի» (էջ 606):

«Ոչ յառեցի զակն ոգւոյս ի գլուխն իմ կենաց Քրիստոս» (էջ 466):

5. **Գանձ** բաղադրիչով՝ **արքունի գանձ, գանձ տէրունի** (էջ 345) – *երկնային արքայության գանձարանը*:

Նարեկացու «Մատեանը» ակաղձուն է ոչ միայն դարձվածային արտահայտություններով, այլև դարձվածքներով, որոնք գերազան-ցապես հեղինակային են, դիպվածային: Հեղինակը մեծ վարպետու-թյամբ գործածել է նաև գրաբար մատենագրությամբ արդեն վկայ-ված դարձվածքներ:

Պոեմում հաճախադեպ են քրիստոնեական վարդապետության հիմնագաղափարներն ամփոփող բազմաթիվ արտահայտություննե-րը, օրինակ՝

«Եթէ աւրհնութեան բանիւ առ որ մատուցայ՝ լուիցես՛,

Իսկ եթե անիծիւք՝ մի հայեսցիս ընդունել, գթած» (էջ 464):

«Զի փախիցէ ի մարդոյս՝

Զարհուրեալ ի սխրալի եւ յանբաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի,

Որով սրսկեալ միանգամ ՚ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք» (էջ 357)

(թարգմ.՝ «Որպեսզի փախչի մարդուց՝ զարհուրած.

Երկնավոր գառիդ սխրալի անքավ արյան վտակից,

Որով թեպետև սրսկվեցինք մենք միայն մի անգամ,

Բայց մաքրվեցինք մշտնջենապես» (էջ 160):

**Գառն երկնաւոր** ԴՄ-ն խորհրդանշում է Հիսուսին:

«Եւ կամ յո՞րս թարգմանի առած առակին,

Թէ՝ Սիրտ իմաստնոյն՝ ի տան սգոյ,

Եւ սիրտ անմտին՝ ի տան ուրախութեան» (էջ 443):

Սա մեջբերում է Սուրբ գրքից.

«Որ զի հաստիչդ ամենից ի սուրբս բնակես,
Եւ ըստ տարազու սերմանն եւ հնձելն է իրաւացի» (էջ 457)
(թարգմ.՝ «Ճիշտ է նաև այն, թե՝ ինչ-որ ցանես, այն էլ կհնձես», էջ 303):
«Ոչ սերմանեցի արդարութիւն, ըստ բանին Ովսեայ.
Եւ զիա՞րդ հնձեցից եւ ժողովեցից զկենաց պտուղն» (էջ 584):

Յուրաքանչյուր հատված հեղինակը կառուցում է շարահյուսական որոշակի բանաձևումներով, որի արդյունքում գրաբարի շարահյուսության՝ խոսքակառուցման նորմերն ու բացառությունները Նարեկացու պոեմում հանդես են գալիս ամենատարբեր դրսևորումներով՝ իբրև ապացույց ոչ միայն դասական գրաբարի քերականական անսպառ հնարավորությունների, այլև Նարեկացու լեզվագիտական փայլուն իմացության: Մյուս կողմից՝ հեղինակը գեղարվեստական պատկերը կառուցում է ոճական զանազան միջոցների կիրառմամբ: Նրանցում առանցքային տեղ են զբաղեցնում դարձվածային արտահայտությունները. «Գր. Նարեկացու բանահարուստ «Ողբերգութեան» մեջ ասացուածներն ընդարձակուելով ծաւալւում են, անցնելով մի շարք համեմատաբար աւելի երկար տողերի մէջ, մինչեւ որ մտքի մի զորեղ հատուածով, միանալով մի ամբողջութիւն են կազմում, առանց որեւէ կանոնաւորութեան, առանց ձգտման այդ հատուածները նոյնաթիւ տողերից կամ մօտաւորապէս հաւասարաչափ կազմելու: Կան, սակայն, հատուածներ, որոնց մեջ Նարեկեան խօսքը վերածւում է շարահիւսական մի առանձին տեսակի ոտանաւորի»[100]:

Դարձվածքներն ու դարձվածային արտահայտությունները ծնվում են ինքնաբուխ՝ ի վավերումն Նարեկացու անսպառ հույզի և խորը «**մտաց տեսութեան**»:

Դրանց առանձնահատկությունն ու ինքնատիպությունն այն է, որ ունենալով խոսքային առկայացում՝ հարիր տվյալ հատվածի բովանդակությանը, արտահայտում են ընդհանրական իմաստ՝ իբրև

---

[100] **Աբեղյան Մ.,** Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Պէյրութ, 1955, էջ 589:

արգասիք հեղինակի կենսաիմաստության, մարդաճանաչման և քրիստոնեական վարդապետության խորիմացության ու ճշգրիտ արժևորման: Եվ այս ամենի խորքում մեծ մարդասերի ձգտումն է մարդուն հասցնել իր իսկ փրկության աստվածաշնչյան բանաձևմանը. «Ով հաւատացէ, նա կեցցէ»: Դիպվածային հեղինակային ասույթների՝ իբրև դարձվածային արտահայտությունների քննությունը ամբողջացնում է պոեմի ոճաբանական գնահատականը և արժևորում Նարեկացի մտածողի լեզվի արմատական ակունքները, որոնք սկիզբ են առնում ժողովրդական բանահյուսությունից: «Այստեղ ամէն մի տող կարող է հնչել՝ իբրեւ թեւաւոր ասույթ. հազուագիւտ վարպետութեամբ Նարեկացին ջնջում է դարերի անջրպետը»[101]:

Նրանք միշտ արդիական են. այս է «Նարեկի» հավերժության գաղտնիքը:

Ռ. Ղազարյանը գրաբարի դարձվածքների մասին արձանագրում է. «Թւում է, թէ անսպառ են գրաբարի դարձուածքները»: Մենք հավելում ենք՝ նույնքան անսպառ են գրաբարի դարձվածային արտահայտությունները: Դրանք քննելով Գ. Նարեկացու պոեմի ցանկացած գլխում և ենթագլխում՝ արդյունքում արձանագրում ենք.

ա) ինչպես դարձվածքը, այնպես էլ դարձվածային արտահայտությունը ոչ միայն պատկերի և խոսքի կառուցման միջոց են, այլև ծնվում են խոսքակառուցման ընթացքում, իբրև արդյունք նյութի բովանդակության և հեղինակի լեզվամտածողության:

բ) Նարեկացին հեղինակ է բազմաթիվ նորակերտ բառերի, այլև դարձվածքների և դարձվածային արտահայտությունների:

Դարձվածային արտահայտությունները ունեն ընդհանրական (ոչ դավանաբանական) և դավանաբանական բովանդակություն. վերջիններս արտահայտում են քրիստոնեական վարդապետության հիմնագաղափարները: Տիրապետող են հեղինակային դարձվածային արտահայտությունները, որոնք առանձնանում են իմաստային ներուժով, խորքային բովանդակությամբ:

[101] **Ղազինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 143:

Դարձվածային արտահայտությունների վիճակագրությունը ներկայացնելը աննպատակահարմար ենք համարում, քանի որ նրանցով ակաղձուն է պոեմը: Նրանք ևս գերազանցապես հեղինակային են: Նարեկացին սիրում է մեջբերել նաև աստվածաշնչային ասույթները՝ դրանք շաղկապելով իր խոսքին:

Ամփոփելով դավանաբանական երկերում և Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում գրաբարի դարձվածքների և դարձվածային արտահայտությունների քննությունը՝ կարող ենք փաստել.

ա. Բնագրերը ակաղձուն են դարձվածային միավորներով, որոնց իմաստային քննությունը ապացուցում է, որ դասական գրաբարի լեզվական միավորների օրինաչափ համակարգը թույլ է տալիս այնպիսի կապակցությունների ձևավորում, որոնց մի մեծ խումբ պիտի դառնա կայուն և սրանց միջոցով՝ այն կազմող բաղադրիչ միավորների վերաիմաստավորմամբ՝ ԴՄ: Նրանք խորքային գործառույթ ունեն և կազմում են պատկերավոր խոսքի կառուցման անհրաժեշտ բաղադրիչ:

բ. Գրաբարյան դարձվածքների կիրառությունը երկերում պայմանավորված է ինչպես տվյալ բնագրի բովանդակությամբ, գաղափարաբանությամբ, նպատակաուղղվածությամբ, այնպես էլ հեղինակի լեզվամտածողության առանձնահատկությամբ: Այսպես՝ դարձվածքները անհամեմատ շատ են կիրառված սրբախոսական երկերում, քան թղթերում:

գ. Բնագրերում գործածված են ավելի քան 440 դարձվածք. վարքագրական երկերում և վկայաբանություններում գործածված են 127-ը, որոնցից 41-ը վկայված չեն գրաբարի բառարաններում, ներկայացվում և քննվում են առաջին անգամ: Դավանաբանանական թղթերում կիրառված են 62 դարձվածք, որոնցից բառարաններում վկայված չեն 45-ը: Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի շուրջ 35 գլխում կիրառված են 250 դարձվածք, որոնցից 190-ը՝ հեղինակային:

դ. Ըստ խոսքիմասային պատկանելության՝ դավանաբանական երկերում կիրառված դարձվածքները գերազանցապես բայական և

անվանական կառույցներ են: Բայական դարձվածքներում տիրապետող են **առնել, առնուլ, լինել, արկանել, դնել, հարկանել** բաղադրիչով կազմությունները (**աշխատ առնել, առնուլ զհայցումն գթոյն, ի ձեռն առնուլ, քարաձիգ լինել, փքայոյզ լինել, զանձինս արկանել, ի կիր արկանել, ուխտ դնել, դնել ի մտի, բուռն հարկանել, յանձին հարկանել ձեռն** ևն): Անվանական ԴՄ-ներում առանձնանում են նախդրիվ կառույցները, որոնց մեջ գերակշռող են **զ** և **ի** նախդիրներով կազմությունները (**զմարտ պատերազմի, ոչխար ի զենումն**):

ե. Կառուցվածքային առումով դարձվածքները երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ են. վերջիններս հաճախ ձևավորվում են երկբաղադրիչ միավորին որևէ բառի հավելումով, օրինակ՝ **ի բաց ընկենուլ + զքարինս + ի ճանապարհէ** կամ **որոմն չարի** և **սերմանք որոմանց չարի**, **վրիպեցուցանել ի ճանապարհէ + զկորոյս** ևն:

զ. Լինելով պատկերավոր խոսքի կառուցման կարևոր միջոցներ՝ բնագրերում ըստ պատեհի և անհրաժեշտության գործածվում են հոմանիշ և հականիշ դարձվածքներ, ինչպես՝ **փոյթ ունել – փոյթ առնել – փոյթ դնել, դարձուցանել յուղղութիւն – յուղղութիւն դարձուցանել, պատրել ի մոլորութիւն – վրիպեցուցանել ի ճանապարհէ – կուրացուցանել զմիտս, տունկ բարեպտուղ – սերմն բարւոյ պտղոյ, զանձինս արկանել – դնել զանձն,** հականիշ՝ **վրիպեցուցանել ի ճանապարհէ – դարձուցանել յուղղութիւն, յուզել ի բարկութիւն – ցածուցանել զբարկութիւն, չարաթոյն բանք – բան կենաց** ևն:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ագաթանգեղոս, Ագաթանգեղեայ պատմութիւն, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1295-1736:

2. Անանուն, Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկանն, Մատենագիրք հայոց, Զ. դար, Գ. հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 27-49:

3. Աստուածաշունչ մատեան, Հին եւ նոր կտակարանաց, Վիեննա, Ամերիկեան ընկերութիւն գրոց սրբոց, 1929, էջ 1560:

4. Արիստակէս Լաստիվերցի, Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ վարդապետի, Մատենագիրք հայոց, ԺԶ. Հատոր, ԺԱ դար, էջ 493-633:

5. Բաբկեն Ոթմսեցի, Ներսէս Բագրեւանդացի, Յովհաննէս Գաբեղենացի, Մովսէս Ցուրտավեցի, Մովսէս Եղիվարդեցի, Վրթանես Քերթող, Թուղթք, Մատենագիրք հայոց Գ. հատոր, Զ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 113-529:

6. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1980, 1122 էջ:

7. Դաւիթ Ալաւկա Որդի, Կանոնական աւրենսդրութիւն, Մատենագիրք հայոց, ԺԱ. դար, ԺԶ. Հատոր, Երևան, 2012, 675-726 էջ:

8. Դրասխանակերտցի Հովհ., Պատմութիւն Հայոց, Ուսանողի գրադարան, ԵՊՀ հրատ., Երևան, 1996, 397 էջ:

9. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 429-513:

10. Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, 521-764:

11. Կորիւն, Վարք Մեսրոպայ վարդապետի, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 225-272:

12. Ղազար Փարպեցի, Թուղթ, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2377-2394:

13. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201-2376:

14. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1981, Երևանի համալսարանի հրատ., էջ 541:

15. Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց մեծաց, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1743-2123:

16. Պատմութիւն եւ Խրատք Խիկարայ Իմաստնոյ, Գիրք Ա, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1969, էջ 362:

17. Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին հրատ., Ս. Էջմիածին, 2017, 519 էջ:

18. Ս. Գրիգոր Նիւսացի, Տեսութիւն մարդոյն կազմութեան (Յաղագս կազմութեան մարդոյ), Մայր Աթոռ Սբ. Էջմիածին հրատ., Ս. Էջմիածին, 2008, 269 էջ:

19. Սեբեոս,Պատմութիւն, Եր., 1977, 412 էջ:

20. Փավստոս Բուզանդ, Բուզանդարան պատմութիւնք, Մատենագիրք հայոց, Ե. դար, Ա. հատոր, գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 273-428:

## ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

2. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա., Վենետիկ, 1836:

3. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ., Վենետիկ, 1837:

4. Բաղիկյան Խ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, 2002, 734 էջ:

5. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ դարձվածաբանական բառարան, Երևան, 2011:

6. Հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1969:

7. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Նորայայտ բառեր գրաբարում, Երևան, 2007:

9. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Ա հատոր, Երևան, 2000, Բ հատոր, Երևան, 2000:

10. Ղազարյան Ռ., Գրաբարի դարձուածաբանական բառարան, Երևան, 2012:

11. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

12. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009:

## ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆԵՐ

1. Համաբարբառ Ագաթանգեղեայ «Պատմութիւն հայոց» երկի, հհ. Ա-Բ, Երևան, 1973:

2. Համաբարբառ Եզնկայ Կողբացւոյ «Եղծ աղանդոց» երկի, Երևան, 1972:

3. Համաբարբառ Եղիշէի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկի, հ. 1-2, Երևան, 1974, 1978:

4. Համաբարբառ Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկի, Երևան, 1972:

5. Համաբարբառ Ղազար Փարպեցւոյ «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկի, Երևան, 1973:

6. Համաբարբառ Ղազար Փարպեցւոյ «Պատմութիւն հայոց» երկի, հ. 1-3, Երևան, 1975-1978:

7. Համաբարբառ Մովսէս Խորենացւոյ «Պատմութիւն հայոց» երկի, հ. 1-3, Երևան, 1975, 1976:

8. Համաբարբառ Փաւստոս Բիւզանդացւոյ «Պատմութիւն Հայոց» երկի, հ. 1-3, Երևան, 1974-1978:

## ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ., Երևան, 1974, 818 էջ:

2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 699 էջ:

3. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, «Լույս» հրատ., Երևան, 1976, 557 էջ:

4. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, 442 էջ:

5. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., 1984, 371 էջ:

6. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005, 349:

7. Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, 502 էջ:

8. Անանեան Գ., Նարեկացին եւ ժողովրդական բանահիւսութիւնը, Անթիլիաս-Լիբանան, Առանձնատիպ արտատպուած «Հասկ» Հայագիտական տարեգիրքի նոր շրջանի Զ տարի հատորէն, 1994, 12 էջ:

9. Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, 214 էջ:

10. Առաքելյան Վ., Գրաբարի քերականութիւն, «Վիամիր» հրատ., Երեւան, 2010, 416 էջ:

11. Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, 228 էջ:

12. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, 207 էջ:

13. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, 314 էջ:

14. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, 230 էջ:

15. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Երևան, 1990, 86 էջ:

16. Բիւզանդացի Ն., Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, 520 էջ:

17. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, 136 էջ:

18. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2007, 375 էջ:

19. Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում V-XVI դդ., Երևան, 2015, 190 էջ:

20. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, 2011, 272 էջ:

21. Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական ընթերցվածներով, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով Մ. Աբեղյանի, Երևան, 1981, 361 էջ:

22. Համբարձումյան Վ., Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» երկի լեզուն և ոճը, Երևան, 2013, 171 էջ:

23. Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990, 302 էջ:

24. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Երևան, 2016, էջ 118:

25. Ղազինեան Ա., Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական Արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1999, 264 էջ:
26. Մալխասյանց Ս., Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982, 319 էջ:
27. Մանանդեան Հ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, 299 էջ:
28. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., 1990, 406 էջ:
29. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, 502 էջ:
30. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, 248 էջ:
31. Մուրադյան Գ., Հունաբանությունները դասական հայերենում, «Նաիրի» հրատ., Երևան, 2010, 291 էջ:
32. Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, 271 էջ:
33. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, 435 էջ:
34. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1959, 251 էջ:
35. Յովհաննիսեան Լ., Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (Ե դար), Մխիթարեան հրատ., Վիեննա-Երեւան, 2009, 238 էջ:
36. Նարեկացի Գ., Մատեան ողբերգութեան, Երևան, 1980, 1122 էջ:
37. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, 316 էջ:
38. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, 747 էջ:
39. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, 352 էջ:
40. Սուքիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, 294 էջ:
41. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, 58 էջ:
42. Քիպարեան վրդ. Կ., Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, 670 էջ:
43. Քոսյան Վ. Ա., Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, 279 էջ:

44. Քոսյան Վ., Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1990, 493 էջ:
45. Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, 486 էջ:

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Աբաջյան Ա., Հարությունյան Ք., Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» երկի դարձվածքները (կառուցվածքային քննություն), «Աբեղյանական ընթերցումներ 2», Երևան, 2018, էջ 19-30:
2. Աբաջյան Ա., Յուզբաշյան Ա., Դարձվածային միավորները դավանաբանական թղթերում, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, N 1 (31), էջ 51-61:
3. Աբաջյան Ա., Յուզբաշյան Ա., Դարձվածքները և կայուն կապակցությունները» «Վկայութիւն սրբոյն Շուշանկանն» երկում, «Հայագիտության հարցեր, 2019, 2 (17), էջ 183-193:
4. Դիլբարյան Ն., «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ» երկի հայկական խմբագրության դարձվածքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, 2019, էջ 25-35:
5. Դիլբարյան Ն., Բարսեղ Կեսարացու «Գիրք Պահոցի» գրաբար թարգմանության դարձվածքների իմաստակառուցվածքային բնութագիրը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2020, 1(31), 40-50 էջ:
6. Դիլբարյան Ն., Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» գրաբար բնագրի դարձվածքների քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2019, 2(29), էջ 63-78:
7. Հատիտյան Ա., Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունները, «Էջմիածին» հանդես, 1977, N° Ը, էջ 23-32:
8. Հատիտյան Ա., Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի․ ժամանակաշրջանը, կյանքն ու գործունեությունը, «Էջմիածին» հանդես, 1977, N° Ե-Զ, էջ 26-32:
9. Հարությունյան Ք., Գրաբարի եռաբաղադրիչ դարձվածքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 179-193:

10. Հարությունյան Ք., Գրաբարյան ոճերն ու դարձվածքները և դրանց քննությունը հայ լեզվաբանության մեջ, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2015, էջ 107-115:

11. Հարությունյան Ք., Դարձվածքները Փավստոս Բուզանդի «Պատմութիւն հայոց» երկում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 119-125:

## ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Амосова Н. Н., Основы английской фразеологии, Ленинград, ЛГУ, 1963, 208 стр.

2. Аревшатян С., Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Изд.-во АН Арм. ССР, Ереван, 1973, 350 стр.

3. Бабкин А. М., Русская фразеология, ее развитие и источники, М., «Либроком», 2009, 264 стр.

4. Виноградов В. В., Лексикология и лексикография: Избранные труды, М., «Наука», 1977, 312 стр.

5. Дилбарян Н. А., Лексические особенности древнеармянского языка в переводе труда Григория Нисского «Об устроении человека», «Հայագիտության հարցեր», 2019, 2(17), էջ 176-182:

6. Шанский Н. М., Фразеология современного русского языка, М., «Высшая школа», 1985, 160 стр.

7. Abajyan A., Harutyunyan K., Idioms in “The Life of Mashtots” by Koryun, «Բանբեր հայագիտության», 2020, N 1 (22), էջ 193-207.

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

**ՆՀԲ**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, հ.1, 1836, հ. 2, 1837:

**ՄՀԲ**, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009:

**ԳԴԲ**, Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Ա. ԱԲԱՋՅԱՆ, Ն. ԴԻԼԲԱՐՅԱՆ, Ա. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ,**
**Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 25.08.2020:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 18.875:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am